



**ՎԵՐԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

**ՎՇՏԻ ԵՎ ՀՈՒՅՍԻ  
ԽԱՉՄԵՐՈՒԿ**

«Գիգակ պլյուս» հրատարակչություն  
Ստեփանակերտ-2016

ՀՏԴ 821.19-3 Գրիգորյան  
ԳՄԴ 84(5Հ)-4  
Գ 888

Գրիգորյան Վերա  
Գ 888 Վշտի և հույսի խաչմերուկ/ Վ. Գրիգորյան.-  
Ստեփանակերտ: «Դիզակ պլյուս» հրատ.,  
2016.-224 էջ+16 էջ ներդիր:

«Վշտի և հույսի խաչմերուկ»-ը, որը հեղինակի թվով 19-րդ գիրքն է, տաք շնչով գրված հայրենասիրական հողվածներից ու ակնարկներից կազմված մի ժողովածու է, որի ընդհանուր անունը հայրենասիրություն է: Այն նախատեսված է հասարակության լայն խավերի համար ու շատ օգուտ կրերի ռազմահայրենասիրական հարցերով զբաղվողներին, ներկա և ապագա սերունդներին:

ՀՏԴ 821.19-3 Գրիգորյան  
ԳՄԴ 84(5Հ)-4

ISBN 978-9939-1-0234-4

© Գրիգորյան Վերա, 2016

## ԽՄԲԱԳՐԻ ԽՈՍՔ

ԼՂՀ ԱԿԱՅՄ նախագահ Վերա Գրիգորյանը ընթերցողին մատուցեց խոսույն վերնագրով իր հերթական` 19-րդ գիրքը. «Վշտի և հույսի խաչներուկ»... Այն կոչված է ներկա և ապագա սերունդներին ներկայացնելու այն ամենը, ինչն այս կամ այն կերպ առնչվում է ԱԿԱՅՄ նպատակների և գործունեության հետ: Գրքում զետեղված են անհայտ կորած ազատամարտիկների մարտական ուղու մասին տեղական մամուլի («Ազատ Արցախ», «Ստեփանակերտ», «Մարտիկ», «Հայրենյաց պաշտպան» և «Հայաստանի Հանրապետություն» թերթերի) էջերում հեղինակի հրապարակած հոդվածները, ինչպես նաև վերոնշյալ կազմակերպությանն աջակցող լրագրողների, գրողների, առանձին քաղաքացիների հեղինակած ակնարկներն ու դիմանկարները:

Գրքում լայն տեղ է տրված ԱԿԱՅՄ կազմակերպած բազմաբնույթ միջոցառումներին, երկրի ղեկավար այրերի, հանրապետություն այցելած անվանի հյուրերի հետ հանդիպումներին: Գրքի առանցքը, կարելի է ասել, կազմում է երկու գլխավոր հարց` հավատալ ու սպասել Ադրբեյջանի բանտերում գտնվող գերված մեր տղաների վերադարձին, ազատագրված Հայրենիքում էլ ունենալ գոհացնող բնական աճ:

Երկրորդի մասին մասնավորապես ահա թե ինչ է ասում

հեղինակը. «Մեզ շատանալ է պետք, մենք քիչ ենք, համարյա մի բուռ, և ապրում ենք նույնպես մի բուռ երկրում... Այն պահել կարողանալու համար անհրաժեշտ է բազմանալ: Մեր գոհված և անհայտ կորած տղաների փոխարեն նորերը պետք է ծնվեն, և նոր աղջիկներ՝ որպես երկրի ապագա մայրեր... Ու թող նրանց բոլորին շատ ավելի լավ բախտ վիճակվի՝ քան մեզ է վիճակվել: Թող նրանք և իրենց ստեղծածները երկրիս համար ամուր ողնաշար դառնան»:

Ընթերցող, կարդա գիրքը, չես գղջա... Այն ևս մի չափով կընդլայնվի քո գիտելիքներն ու պատկերացումները մեր Ազատամարտի պատմության վերաբերյալ:

**Ռոբերտ ԵՍԱՅԱՆ**

## **ԲԵՐԿՐԱՆՔ ԵՎ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆ՝ ԲՈՒՆՈՐ-ԲՈՒՆՈՐԻՆ**

Այս ցանկության տերը մի մարդ է, մի մայր, ումից բերկրանքը երես է թեքել... 21 տարի առաջ: Միակ որդուն պատերազմում, ուղիղ իմաստով վերցրած, անհայտ կորցրած մայր...

Դաժան վիշտը, սակայն, չի կարծրացրել իմ սիրտը և չի կարծրացնի: Այն առաջվա պես զարկում է ուրախությունից՝ երբ ծանոթներիս, համաքաղաքացիներիս այցելում է հաջողությունը. երբ տղա են պսակում, երբ թոռ է ծնվում, երբ զինվորական ծառայությունից ընտանիքի գիրկ է վերադառնում տան տղան, երբ բնակարան չունեցողը վերջապես ստանում է կամ ձեռք բերում այն, երբ մեկի շրջանավարտ դուստրն ընդունվում է համալսարան... Օրինակներ շատ կարող են բերել, բայց այսքանն էլ է հերիք՝ հասկանալու՝ ինչ են ուզում ասել:

Բոլորիդ, ինչպես նաև ինձ ու իմ մնացյալ ընտանիքին, ուզում են առաջին հերթին խաղաղություն մաղթել, քանզի նրանով է պայմանավորված մնացած ամեն ինչը: Նոր տարում, որն այս անգամ 2012 թվականն է, ցանկանում են, որ իմ փոքրիկ երկրի փխրուն խաղաղությունը վերաճի -վերածվի ամրագույնի և մշտականի: Թող Աստված շատ չհամարի դա՝ տա մեզ...

Ես լավ գիտեմ՝ ինչ ասել է արցունք թափել: Ես դա անում եմ... միայն գիշերը: Որովհետև իմ ցերեկը այլ խնդիր ունի. հոգեպես վերստին դառնալ ուժեղ ու գնալ ԳՈՐԾԻ ետևից, կատարել այն: Գործ՝ հանուն մարտական դիրքերում անհայտ կորած մեր տղաների՝ ազատամարտիկ տղաների հիշատակի և հոգեկան հանգստության. որքան էլ նրանք հեռու լինեն՝ որչափ էլ լուր չունենան մեզնից, իրենց սիրտն ու հոգին կզգան, որ չենք մոռացել, հիշում ենք նրանց ու նաև հոգում ետևում թողած իրենց ընտանիքների մասին:

Ինչպես և ամեն տարի՝ այս Ամանորի նախօրեին էլ ես...

«դռնեղուռ ընկա» չեմ ասի, բայց բազում դռներ, այո, ծեծեցի՝ անհայտ կորածների հատկապես հույժ կարիքավոր ընտանիքների և մանավանդ՝ հիվանդության պատճառով անկողնուն գամված նրանց ծնողների համար ամանորյա օգնություն հայթայթելու, նրանց հասցնելու համար: Ու հասցրի:

Տեսնեի՞ք, թե մման այցից ինչպես են հուզվում մեծ ու փոքրով... Հաղթած երկրի ոչ միայն պետությունը, այլև հասարակությունն է պարտավոր նեցուկ դառնալ տուժածներին: Թող ոչ մի երեխայի աչքին արցունք չերևա: Իսկ թե լինի՝ թող լինի միայն... կոտրված խաղալիքի համար: Իմ աչքով եմ տեսել, թե թախիծով լի ինչպիսի հայացք նետեց անհայտ կորած ազատամարտիկներից մեկի... արդեն թռռը, երբ տեսավ իր թոռնուհուն ամանորյա հանդիսության բերած պապիկին: Բոլորս ենք երեխա եղել ու գիտենք, թե ինչ քաղցրություն ունի իր մեջ պապի հետ շփումը... Պատերազմն այդ երեխայից խլել է մման շփման հնարավորությունը: Հայրը տղայի կողքին էր՝ նկատեց նրա հայացքը ու թափով բարձրացնելով նրան՝ գլուխը թաղեց մանկան գրկում: Հավանաբար, ապրած անհայր մանկությունն էր հիշել և հոր հանդեպ իր մմանօրինակ կարոտը...

Թող ընթերցողս չնեղվի, չասի՝ տոնական օր է, ինչո՞ւ է տխուր բաներից խոսում: Իսկ ո՞վ է ասել, թե տոներին միայն պարել ու ծափ տալ է պետք: Որոշ բաների շուրջ մտածելն էլ չի խանգարում: Մեր կյանքն է, չէ՞, իր պլյուս-մինուսներով, սևով ու սպիտակով, լավով ու վատով, սրտացավությամբ ու անտարբերությամբ: Մի խոսքով՝ ԿՅԱՆՔ: Ուզում եմ ասել՝ թող գնալով մեր կյանքը լավով համալրվի: Նոր տարին դրա լրաբերը դառնա... Ասում եմ՝ մեծ հաշվով վերցված՝ ուշադիր լինենք մեր կողքին ապրողների նկատմամբ: Մեր (ձեր) ուրախությունից, մեր (ձեր) շատից մի փոքրիկ մաս (ջերմ խոսք ու հայացքի տեսքով լինի, թե խաղալիքի կամ ավելի արժեքավոր ինչի) հատկացնենք չունեցողին կամ քիչ ունեցողին: Ընդունված է ասել՝ գեղեցիկը կփրկի աշխարհը, իսկ ես կարծում եմ,

որ այն փրկել կարող է միայն ԲԱՐՈՒԹՅՈՒՆԸ: Այլ խնդիր է՝ որ բարին միշտ էլ գեղեցիկ է լինում... Լինենք բարի՝ նոր տարում և միշտ:

Մեզ շատանալ է պետք, մենք քիչ ենք, համարյա մի բուռ: Եվ ապրում ենք նույնպես մի բուռ երկրում: Այն պահել կարողանալու համար շատանալ է պետք: Մեր զոհված և անհայտ կորած տղաների փոխարեն նոր տղաներ պետք է ծնվեն, և նոր աղջիկներ, որպեսզի՝ երկրի ապագա մայրերը դառնան... Թող ծնվեն, մեծանան, նոր սերնդի մայրը դառնան, և թող նրանց բոլորին՝ ներկա ու գալիք մայրիկներին բոլոր, շատ ավելի լավ բախտ վիճակվի՝ քան մեզ է վիճակվել: Թող նրանք և իրենց ստեղծածները երկրիս համար ամուր ողնաշար դառնան...

Նոր՝ 2012 թվականին բոլոր-բոլորի շեմով թող միայն բերկրանքն ու հաջողությունը ներս մտնեն՝ այնտեղ անփոփոխ քաղաքներում համար:

**Վերա ԳՐԻԳՈՐՅԱՆ**

*ԼՂՀ ԱԿԱՀՄ նախագահ*





## ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ՏԱՐՎԱ ՍԱՀՄԱՆԱԳԾՈՒՄ

***Ամանորյա տոնական միջոցառումները հանրապետությունում սովորաբար տևում են մինչև հունվարի 13-ը:***

Հունվարի 11-ին՝ հին ու նոր տարվա նախաշեմին, ԼՂՀ ԱԿԱՀՄ հուշաթանգարանում տեղի ունեցած հանդիսությունն այն երեխաների համար էր, որոնց հարազատները մարտնչել են հանուն Արցախի ազատության ու ճակատագրի դաժան քմահաճույքով չեն վերադարձել մարտադաշտից: Կազմակերպության նախագահ Վերա Գրիգորյանն ամեն ինչ արել է երեխաներին հաճելի ժամանց պարզևեղու համար: Տոնածառի շուրջ թնդում էին մանուկների երգն ու ծիծաղը, պարն ու արտասանությունը:



Նոր տարվա կապակցությամբ շնորհավորելով բոլորին՝ տիկին Վերան նրանց մաղթեց խաղաղություն, բերկրանք ու հաջողություն: Չուշացավ նաև Չմեռ պապը, ով բարեմաղ-



թանքներից գատ՝ նվերներ ուներ երեխաներին բաժանելու: Կախարդական պարկի նվերների շարքում ոչ միայն քաղցրավենիք, այլև խաղալիքներ ու գրեմական պիտույքներ էին:

Նվերներ ուներ նաև միության նախագահը, որոնց պատրաստմանն աջակցել են ԼՂՀ գերիների և պատանդների, անհայտ կորածների հարցերով զբաղվող պետական հանձնաժողովը, Կրթության և գիտության նախարարությունը, Հայ Ավետարանչական ընկերակցությունը, Հարկային

պետական ծառայությունը: Վ.Գրիգորյանի՝ նրանց ուղղված խոսքը լի էր երախտագիտության զգացումով: «Թող Աստծո աջը միշտ հովանի լինի նրանց, ովքեր իրենց ուշադրության կենտրոնում են պահում մեզ ու մեր խավի ներկայացուցիչներին», - ասաց կազմակերպության ղեկավարը:

**Լատրա ԳՐԻԳՈՐՅԱՆ**

«Ազար Արցախ», 14 հունվարի 2012թ.

## ԳԱՌՆ ՈՒ ԳԱԺԱՆ ՃԱԿԱՏԱԳՐԵՐ

Գառնիկ Ավթանդիլյան, այս անունը մի առանձին սիրով ու ակնածանքով է արտասանվում, ոչ միայն հայրենի Բալուջայում, այլև նրա սահմաններից դուրս, հարևան գյուղերում, ողջ հանրապետությունում:

Ծնվել է 1967-ին, մտավորականի ընտանիքում: Ծնողների չորրորդ զավակն էր, ամենափոքրը: Տասներորդը ավարտել է ծննդավայրում: Հետո ընդունվել և ավարտել է Ստեփանակերտի սովխոզտեխնիկոմը: Ի դեպ, հայրը՝ Հրաչիկը, այս ուսումնական հաստատության գլխավոր անասնաբույժն էր: Հետո ավարտել է ավտոդպրոցը: Իսկ հետո ճանապարհը նրան տարել է Հայաստան, Էջմիածին, ուր անցկացրել է իր զինվորական ծառայությունը Խորհրդային բանակում: Ծառայել է տանկային գնդում, իբրև ավտովարորդ: Ծառայել է... Հաճախակի լսվող սովորական մի բառ, մի բայ: Բայց Գառնիկի պարագայում այս «ծառայելը» գերազանց կարգապահություն ու պատասխանատվություն է նշանակում, կարգ ու կանոնի պահպանում:

Ամեննին էլ զարմանալի չէ, որ ծառայության տարիներին հրամանատարից՝ կապիտան Նիկոլինից մի քանի անգամ շնորհակալագիր, գովասանագիր է ստացել:

Ծառայությունից հետո դարձել է տուն, հարազատ օջախ՝ հոգու խորքում փայփայելով հազար ու մի երազ, երազանք: Մակայն ժամանակի հրամայականը այլ բան է հուշել ու... այդ սիրուն երազները երազ են մնացել: Հանգիստ «շունչ քաշելու» ժամանակ չկար: Եվ օրեր անց հայտնվել է կամավորականների խմբում, գյուղի ինքնապաշտպանության ջոկատում: Մեծակ չէր: Ընկերների, հասակակիցների հետ էր: Ղեկավարը,

հրամանատարը Ռոման էր: Ամիսներ հետո հայտնվում է միլի-  
ցիայի ջոկատում: Հատուկ հրամանագրով, իհարկե: Հրամա-  
նատարը Դադայան Գարիկն էր: Այ այս ջոկատի կազմում  
մարտեր է մղել Ջանհասանում, Խրամորթում, Նախիջևանի-  
կում, մասնակցել է Ադդամի, Ֆիզուլիի, Հորադիզի ուղղություն-  
ներով ծավալված թեժ մարտերին: Վերջին, վերջին մարտը  
մղել է 1994-ի հունվարի 16-ին: Դա եղել է այսպես.

Ջոկատը կռիվներով մոտեցել ու դիրքավորվել է յուխարի  
Ահմեդլի (Կարախանբեյլի) բնակավայրի մոտակայքում: Ամե-  
նուր շառաչում էին արկերը, որոտում թնդանոթները: Տղաները  
քիչ անց նետվում են մարտի, սակայն շուտով հրաման է  
ստացվում հետ քաշվել:

Մարտադադարին պարզվում է, որ զինվորներից երկուսը  
չկան. Գառնիկը և Սպարտակը (վերջինս անհայտ կորած  
ազատամարտիկների հուշաթանգարանի տնօրեն, բոլորիս  
լավ ճանաչ Վերա Գրիգորյանի տղան է): Մտուզվում է ամբողջ  
տեղանքը, բայց անապարդյուն: Տղաները չկան: Հետագայում  
պարզվել է, որ թուրքերը նրանց վիրավոր վիճակում գերեվարել  
և տարել են իրենց հետ: Ո՞ւր, որտե՞ղ հայտնի չէ: Ու մինչ այ-  
սօր մնում է առեղծված: Ոչ ոք ստույգ ոչինչ չգիտի: Մտույզ մի  
բան կա միայն, տարել են բանտի մութ ու խոնավ նկուղներում  
հարցաքննելու, թուրքավարի (իմա՛ գազանաբար) տանջելու,  
ռազմական մի գաղտնիք կորզելու, խաբեությանը թիկունքից  
զարկելու, նշմարվող պարտությունից կատաղած՝ իրենց վրեժն  
առնելու: Սա է հավանական ճշմարտությունը:

94-ից տասնութ տարի է անցել: Ու այդքա՛ն երկար ու ձիգ  
տարիներ եղբայրը՝ Գագիկը, քույրերը՝ Լենորան ու Նաիրան,  
բոլոր հարազատները, համազյուղացիները սպասել ու սպա-  
սում են դեռ: Սպասում են հույսով, կարոտով: Նաև՝ մի վոքը  
հավատով: Ո՞վ գիտի՝ գուցե մի օր «Կարմիր խաչի» միջազգա-

յին մարդասիրական կազմակերպության որոնումների, ջանքերի շնորհիվ Բայիլի (անունն անգամ սարսուռ է պատճառում) բանտախցի ելքի դուռը բացվի ու... հայ մայրերի, քույրերի, հայրերի ու հայրական հոգատարության կարիքն զգացող երեխաների վիշտն ու մորմոքը մի փոքր մեղմվի: Ո՞վ գիտի... Այսպես են մտածում դեռևս մի կերպ ապրող ու տառապող (խորին ցավով ու ավստասանքով նշենք, որ շատ շատերը, այդ թվում նաև Գառնիկի հայրն ու մայրը, բազմաշնորհ Հրաչիկը և բազմավաստակ ուսուցչուհի Անգին Աղաջանյանը, չդիմանալով վշտին ու ծանր, շա՛տ ծանր, հոգեմած ապրումներին, վաղուց արդեն հրաժեշտ են տվել կյանքին՝ սիրասուն որդիների երեսը չտեսած) հարազատները՝ հույս դնելով Բաճրյալի գորակցության ու ողորմության վրա: Բոլորի, բախտակիցների հետ սպասում է նաև Գառնիկի կինը՝ Արեգան, որի միակ սփոփանքն ու մխիթարությունը 16-ամյա որդին է՝ Հրաչիկը (պապի անունն է կրում), խելոք ու հասկացող մի պատանյակ, որ սովորում է ավագ դպրոցի 10-րդ դասարանում: Տարաբախտաբար, այս վերջինիս աշխարհ գալու լուրն անգամ «չհասավ» Անհայտության մեջ մնացած հայ քաջորդուն: Դառն ու դաժան ճակատագիր:

Ճակատագիր, որ բախտ է վիճակվել թալիշցի Վաղինակին ու հռաքաղցի Արտոյին, մարտունեցի Էդիկին ու թաղլարեցի Խաչիկին, շատերին: Այո, անհայտ է սրանցից յուրաքանչյուրի ճակատագիրը, բայց անմահ է անունը, անմահ է մարտական ընկերների կողմից տրված բնութագիրը: Ու, թվում է, այսօր էլ նրանք մեր կողքին են, մեզ հետ, մեր շարքերում: Թվում է, ամեն օր, ամեն ժամ, մենք լսում ենք նրանց ձայնը, զգում նրանց շունչը, տեսնում նրանց սրտերի անհանգիստ տրոփը, նրանց սերն ու կարոտը: Այսպես է: Ոչ ոք չի մոռացվել, ոչինչ չի մոռացվել: Մենք բոլորս հիշում ու պարտավոր ենք հիշելու

զոհված մեր անվեհեր տղաներին, անհայտ կորած մեր ազատամարտիկներին:

Գեղեցիկ են հնչում ռուս ականավոր պոետի Ե.Եվտուշենկոյի տողերը.

*Հիշենք բոլորին՝ անուն առ անուն,  
Եվ հիշենք ցավով.  
Դա մեռածներին պետք չէ, ես գիտեմ,  
Բայց ապրողներին  
Շատ է հարկավոր:*

Լավ է ասված: Ու, թվում է, ավելացնելու ոչինչ չկա: Հավելենք ու ասենք միայն, որ Գառնիկին միշտ հիշում ու նրա մասին սիրով, կարոտով են խոսում նաև նախկին մարտական ընկերները՝ Արթուր Գաբրիելյանը, Վարդան Ավագիմյանը, Սամվել Հայրապետյանը, մյուսները:

Այսպիսին էր Գառնիկը, խիզախ արծիվը մեր լեռնաշխարհի: Չմոռանանք ասել, որ մեծ խղճի, մեծ սրտի տեր էր նա, նաև մեծ ուժի, զորեղ բազկի:

Եղբայրը՝ Գագիկը, պատմում է.

- Մի անգամ Խոջալուի օդանավակայանում (Գառնիկը Երևան պիտի գնար) թուրքերը ուզում են «փորձել, ձեռ առնել» նրան: Մոտենում, խոսեցնում են, մի փոքր հրում ու փորձում ոլորել թևը, բայց... չեն կարողանում: Գառնիկին «շարժել» չի հաջողվում: Թուրքերը կատաղած ու փրփրած հեռու են կանգնում, քթների տակ մրթմրթալով, սպառնալիքներ տալով, էրմանի... դեռ կտեսնենք...

Ու դեռ «տեսնում են» ու նաև մատ թափահարում, բայց... հեռվում թաք կացած, կանանց փեշերի տակ պատսպարված:

Թուրքերի սովորական դարձած սովորական հոխորտանք:

Ի՞նչ արած: Չեն ընդունել, չեն ուզում հաշտվել այն մտքի հետ, որ հայը ապրել ու պիտի ապրի իր հինավուրց հողում,

պատմական Արցախ աշխարհում, Ազատ ու Անկախ Ղարաբաղում, որ եղել ու պիտի շարունակի տերը լինել իր խոխոջուն ամվակների ու գետերի, իր սառնորակ աղբյուրների, օր-օրի շենացող գյուղերի ու քաղաքների, իր ազգային նկարագրի, իր ոչ նախանձելի ճակատագրի:

Ու այս ամենը՝ շնորհիվ հայրենի հողի համար բազում նահատակվածների, շնորհիվ Գառնիկի նման հարյուրավոր անհայտ կորածների, շնորհիվ մեր ժողովրդի ջանքի, եռանդի, ու անպարտելի մեր բանակի, շնորհիվ ի վերուստ հային տրված անկոտրում կամքի ու պայծառ մտքի:

Ասելիքս իմ ուզում եմ ավարտել տաղանդավոր գրողը Հ. Հյուզոյի իմաստուն բառերով.

«Ժողովրդի մեծությունը չի չափվում թվաքանակով, ինչպես որ մարդու մեծությունը չի չափվում նրա հասակով:

...Դժբախտ է այն երկիրը, որ հերոսներ չունի»:

***Միքայել ԲԱԼՅԱՆ***

*Թոշակառու ուսուցիչ*

*«Մարտիկ», 12 ապրիլ 2012թ.*

## ՆՎԻՐՎԱԾ ՇՈՒՇԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ 20-ԱՄՅԱԿԻՆ

Արդեն չորրորդ տարին է՝ ԼՂՀ անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միության նախաձեռնությամբ մայրաքաղաքի հանրակրթական դպրոցներում անց է կացվում հայրենասիրական թեմայով ստեղծագործական շարադրությունների մրցույթ: Այս անգամ ևս Միության նախաձեռնությանն արձագանքեց քաղաքապետարանի կրթության և սպորտի բաժինը:



Ստեփանակերտի հ. 7 դպրոցում ապրիլի 18-ին անցկացված մրցույթը կրում էր «Միրում են քեզ, հայրենիք» խորագիրը և նվիրված էր Շուշիի ազատագրման 20-րդ տարեդարձին: Ստեղծագործական շարադրությունների մրցույթը բարձր մակարդակով կազմակերպելու և անցկացնելու համար քաղաքային համայնքի կրթության և սպորտի բաժնի վարիչի հրամանով նախապես ստեղծվել էր հանձնախումբ՝ բաժնի գլխավոր մասնագետ Գրետա Գրիգորյանի գլխավորությամբ:



Ապրիլի 23-ին ԼՂՀ ԱԿԱՀՄ հուշաթանգարանում տեղի ունեցավ մրցույթի արդյունքների ամփոփման և պարզևատրման արարողություն, որին ներկա էին Ստեփանակերտի քաղաքապետարանի ԿՍ բաժնի վարիչ Կառլեն Մարգարյանը, դպրոցների ուսուցիչներ, աշակերտներ: Մրցանակային տեղեր գրաված և ակտիվ մասնակցություն ցուցաբերած աշակերտները՝ թվով 26 հոգի, ինչպես նաև ԱրՊՀ երեք ուսանողներ (նույնպես մրցույթի մասնակիցներ) արժանացան ԼՂՀ ԱԿԱՀՄ պատվոգրի:

«Մեր նպատակը մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակությանը նպաստելն է, ինչպես նաև՝ Արցախյան պատերազմում ռազմական գործողությունների ժամանակ թշնամու ձեռքն ընկած, նրա կողմից դաժան կտտանքների ենթարկված մեր տղաների հիշատակը վառ պահելը»,- իր խոսքում ասաց միության նախագահ Վերա Գրիգորյանը:

***Լատրա ԳՐԻԳՈՐՅԱՆ***

*26.04.2012թ.*

## ՆՐԱՆՑ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՌԱՋԻՆ ՈՒ ՎԵՐՋԻՆ ՄԱՐՏԵՐԸ ՉԵՆ ՄԻԱՅՆ...

Եվ այնուամենայնիվ, անհայտ կորած ազատամարտիկներից երկուսի՝ Ռազմիկ Թավրիզյանի ու Մարտիկ Խաչատրյանի հիշողության մեջ (եթե, իհարկե, դեռ կենդանի են) Շուշիի ռազմագործողությունը, որի փայլուն հաղթանակով 20 տարի իրավամբ հպարտանում ենք ու կշարունակենք հպարտանալ, թերևս ավելի խորն է նստած, քան ցանկացած ուրիշ մեկի: ***Որովհետև թուրքը նրանց զրկեց ավելիին մասնակցելու և ավելին անելու հնարավորությունից:***



Տղաները ռազմի թոհուրուհի մեջ անհայտ կորան. մեկը՝ հենց բուն Շուշիի ազատագրման, մյուսը՝ Քյոսալարի կրակակետի վերացման ռազմագործողության ժամանակ: Դակատագիրն ինչե՛ր միայն դուրս չթողեց նրանց հիշողությունից, ամենակարևորը՝ որ նրանք, հավանաբար, մինչև վերջ մի կարգին էլ չիմացան, որ Շուշին վերջնականապես դարձավ մերը, իսկ այդ հաղթանակին հաջորդեցին մեծ ու փոքր բազում հաղթա-

նակներ՝ մինչև բաղձալի 1994-ի մայիսի առաջին կեսը, երբ մեր երդվյալ թշնամին ծնկի իջած՝ հրադադար խնդրեց...

Այսօր նա նորից է անցել ռազմաշունչ իր հռետորաբանությանը, որով, սակայն, մեզ զարմացնել, առավել ևս՝ վախեցնել չի կարող: Թող լեզվին տա Իլիամ Ալիևը՝ իր ժողովրդին խոստանալով Ստեփանակերտում և Շուշիում ծածանել Ադրբեջանի դրոշը... Իր նախորդն էլ էր երագում այդ մասին, բայց ամեն երագանք չէ, որ կատարվում է: Հային այլևս ոչինչ չի կարող ոչ խաբել, ոչ էլ հաղթել: Մեր բանակը, մեր տղաները դա թույլ չեն տա:

Մարտիկ Խաչատրյանի մասին ուզում եմ քիչ-ինչ ավելին պատմել: 1974 թվականի մարտին Բաքու քաղաքում ծնված ու տեղի թիվ 100 դպրոցն ավարտած այդ տղան Ստեփանակերտ է տեղափոխվել հայկական ջարդերի պատճառով: Այդ մասին խոսելուց վրիժառության կրակով էին փայլում աչքերը: Ընկերները վկայում են, որ այդ թեմայի շուրջ հանգիստ խոսել չէր կարողանում և այն օրն էր երագում, երբ «կզման Շուշիի վրա»: Նոր էր լրացել տղայի տասնութը, ասում էր՝ քաղաքն ազատագրելուց հետո մի լավ պարելու եմ եկեղեցու հրապարակում...

Իսկ հիմա նորից եմ ուզում անդրադառնալ ասելիքիս վերնագրին... Հենրիխ Հայրապետյանն էլ է Բաքվում ծնվել-մեծացել, ռադիոտեխնիկի մասնագիտություն ստացել: 1988 թվականին ծառայում էր խորհրդային բանակում: Արցախյան շարժման մասին լսելուց եկավ Ստեփանակերտ, մտավ կամավորական ջոկատ... 1991 թվականից կռվել է Շուշիի գումարտակում, մասնակցել մի շարք մարտերի: Երդվյալ հայրենասեր՝ շատ էր հանդուգն ու խիզախ: Նա անհայտ կորավ Ներքին Հռոաթադի ազատագրության մարտում՝ 1994 թվականի ապրիլի 26-ին ... հրադադարից ընդամենը 16 օր առաջ:

Շուշիի ազատագրության մասնակիցներ են եղել նաև Սասուն Դավթյանը, Էդվարդ Դանիելյանը, Սպարտակ Գրիգորյանը, Դավիթ Մարգարյանը... Նրանցից յուրաքանչյուրը հետա-

գայում ևս մասնակցել է բազում մարտերի, որոնցից ամենավերջինը ճակատագրական է դարձել: Ահա թե ինչու, երբ խոսում ենք հայրենասիրության և ձեռք բերված հաղթանակի մասին, իրավունք չունենք չհիշել ու չհիշատակել և նրանց ներդրումն այդ հաղթանակում: Երբ պարզևատրում ենք բոլորին՝ զոհվածներին ու ողջերին՝ չմոռանանք և նրանց մասին... Ախր ինչպե՞ս կարելի է մոռանալ Արկադի (Նապոլեոն) Հայրիյանի նման մարդու կերպարն ու մարտիկի՝ նրա արած-թողածը. մարդ, որին կոտրել չկարողացան անգամ թուրքական զարհուրելի զնդանի կտտանքները: Նրա աճյունը ինքս ստացա Կարմիր կամրջի վրա՝ «չեզոք սահմանագծում», ու հասցրի հարազատներին՝ Վերին Հոռաթաղ: Հպարտությամբ լցված՝ թշնամու կողմից նրա անընկճելիությանը տրված գնահատականից...

Երկու հարյուր երեսունինը զինվոր: Հայրենյաց 239 պաշտպան, որոնք, թող որ տարբեր ժամկետներով, անցան մարտական բազում փորձություններով և արժանացան ամենաձանր հարվածի՝ գերության... Մեզ համար 20 տարի առաջ վերջացավ պատերազմը, իսկ նրանց համար դեռ շարունակվում է... Ու ես վստահ եմ, որ հիմա՝ Մայիսի 9-ին, երբ համայն հայ ժողովրդով տոնում ենք Հաղթանակը, Եռատոնն ենք նշում, նրանցից կենդանի մնացածները ևս ճաղաշարի ետև, իրենց մութ զնդանում, վերհիշում են 1992-ի Շուշին և իրենց՝ այդ փառահեղ ու պատմական մարտի կամ այլ օպերացիաների իրագործման ժամանակ:

Բոլոր արժանավորների կողքին այսօր ու միշտ հիշենք և այդ 239-ին, ձգտենք արժանվույնը մատուցել նրանց հերոսությանն ու տառապանքին: Այդպես միայն արդար կլինի: Որպեսզի վաղվա զինվորը ևս հավատով մտնի ծառայության, արհավիրքի դեպքում էլ անմնացորդ նվիրվի հայրենիքին:

Շնորհավո՛ր բոլորիս Եռատոնը և մեր մեծ Հաղթանակը, որին նվիրում եմ իմ այս բանաստեղծությունը.

Քաղց, ցուրտ, նկուղ`  
Նոյան փրկիչ փառան դարձած:  
Արկով հերկվող Արցախի հող`  
Մի բուռ երկիր... շրջափակված:

Մեր սրբերից չքված հրճվանք.  
Կյանքը վաղուց եղեմական այգի չէր, ո՛չ  
Պատարագի համար թեև այցելում վանք`  
Սար էր ցնցվում  
Լացի ձայնից մեր բարձրագոյն:

Վիշտր փանում ուրքի վրա,  
Վառում էինք... կամքի կրակ:  
Հաղթանակի հույսն էր պահում  
Մեզ` անբաժան կապած իրար:  
Պատերազմում կենաց-մահու  
Մենք` շար փարբեր, բայց ժողովուրդ,  
Չէ՛... ա՛զգ` իրավ,  
Հրամայական զենով հայոց,  
Չոհասեղան ելած արյամբ`  
Կարողացանք հաղթել, այո:

Մենք` անցողիկ, դու` մնայուն...  
Դու` հերիաթի Ծերն իմաստուն`  
Ճանապարհը մեզ ցույց տվող,  
Դու՛, Հայրենիք,  
Դու ես ծնում Նժդեհ, Դրո և Անդրանիկ,  
Եվ կյանքը քեզ նվիրած մեր զավակների...  
Աչքերով ես արդ մեզ նայում:

**Վերա ԳՐԻԳՈՐՅԱՆ**  
ԼՂՀ ԱԿԱԶՄ նախագահ

## ԿԱՆԳՆԱԾ ԵՆՔ ԲԱՆԱԿԻ ԹԻԿՈՒՆՔՈՒՄ

Մայիսյան Եռատոնը հայ ժողովրդի ամենասիրելի, ամենանշանակալից տոներից մեկն է, այն խորհրդանշում է հայության դարավոր երազանքի իրականացումը: Մարդարապատ և Շուշի անունները սրբություն են մեզ համար, Մարդարապատում և Շուշիում կռեցինք մեր պատմական հաղթանակները դարավոր ու երդվյալ թշնամու դեմ: Հայ քաջորդիների թափած արյունը իզուր չանցավ, այդ արյան շնորհիվ նվաճվեցին մեր



անկախությունն ու ազատությունը: Հանուն մեծ նպատակի զոհվեցին մեր շատ քաջարի տղաներ, իսկ մի մասին բաժին ընկած ծանր ճակատագիր՝ գերություն: Նրանց մի մասը, ուրքեր դեռ կենդանի են, հավանաբար, հոգով նույնպես մեր պայծառ տոնի հետ է, չէ՞ որ իրենք ևս մասնակցել են Շուշիի և Էլի շատ բնակավայրերի ազատագրմանը: Գերության մեջ անգամ նման բարի լուրերը հասնում են մարդկանց: Համոզված

ենք՝ նրանք հպարտանում են մեր Եռատոնով՝ ի հեճուկս իրենց դաժան դահիճների: Մեր հաղթանակը համաժողովրդական է: Թե՛ ռազմաճակատում, թե՛ թիկունքում: Բայց ի՞նչ թիկունք, երբ ռազմական գործողությունները ծավալվում էին անմիջապես մեր շուրջը, երբ ճակատային գիծ էր ամբողջ Արցախը: Մենք մեր տունը, մեր այգին, մեր մանկապարտեզը, մեր դպրոցը, մեր մի բուռ հողն էինք պաշտպանում, ահա թե ինչու հաղթեցինք:

Այսօր մեր փառապանծ բանակը 20 տարեկան է: Մենք հպարտությամբ ենք այսօր դուրս եկել փողոց՝ տոնելու մեր դժվար ձեռք բերած Հաղթանակը: Մենք՝ ժողովուրդս, կանգնած ենք մեր բանակի թիկունքին, ժողովուրդն ու բանակը լրացնում են միմյանց, և մեր միասնական կամքի ու վճռականության առջև ոչինչ են հակառակորդի ռազմաշունչ հայտարարությունները: Եթե պետք լինի՝ նորից կանցնենք հաղթանակ տանող ճանապարհով:

Բայց թող, այդքանով հանդերձ, այլևս պատերազմ չլինի, որ բարգավաճեն Հայաստանն ու Արցախը:

Արցախյան պատերազմում Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միության անունից սրտանց շնորհավորում եմ մեր ժողովրդին ու բանակին՝ Եռատոնի առթիվ: Թող բոլորիս գլխավերևում միշտ թևածի խաղաղությունը:

**Վերա ԳՐԻԳՈՐՅԱՆ**  
ԼՂՀ ԱԿԱՀՄ նախագահ  
«Ազատ Արցախ»  
08.05.2012թ.

## ՆՊԱՍՏԵԼ ԶԻՆՃԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ



ԼՂՀ անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միության (ԱԿԱՀՄ) վարչության նախաձեռնությամբ ս.թ. ապրիլի 15-30-ը Պաշտպանության բանակի զորամասերի ժամ-

կետային զինծառայողների միջև անց է կացվել ստեղծագործական շարադրությունների մրցույթ՝ նվիրված Մայիսյան եռատոնին՝ «Ես սիրում եմ քեզ, հայրենիք» թեմայով: Մրցույթի արդյունքներն ամփոփվել են ԼՂՀ պաշտպանության նախարարության և ԱԿԱՀՄ համատեղ հանձնաժողովի կողմից:

Մայիսի 15-ին Միության հուշաթանգարանում տեղի ունեցած պարգևատրման արարողությանը ներկա էին ԼՂՀ պաշտպանության նախարարության ռազմահայրենասիրական դաստիարակության և հասարակական կազմակերպությունների հետ կապերի բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Կարո Համբարձումյանը, Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության և սպորտի բաժնի վարիչ, հանձնաժողովի նախագահ Կառլեն Մարգարյանը, Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ) արցախյան գրասենյակի պատասխանատու Ռոման Պարամոնովը, զինծառայողներ, լրագրողներ, հյուրեր:

Ներկայացնելով մրցույթի արդյունքները՝ Կառլեն Մարգարյանը նշեց, որ եզրափակիչ փուլին մասնակցել են 66 զին-



ծառայողներ՝ թվով 19 զորամասերից: Նրա խոսքերով՝ բոլոր մասնակիցներն էլ իրենց ստեղծագործություններն սկսել են ազգի պատմությունից, և յուրաքանչյուրի մեջ էլ հայրենիքի հանդեպ անափ սերն արտահայտող գեղեցիկ մտքեր կան, որոնք անտարբեր չեն թողել հանձնաժողովի անդամներին: «Մենք ուրախ ենք, որ այսպիսի զինվորներ ունենք: Նման հայրենասիրությամբ տոգորված զինվորները, համոզված ենք, անառիկ կպահեն մեր սահմանները», - ասաց հանձնաժողովի նախագահը: Տեղեկացնենք, որ մրցանակային 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը զբաղեցրել է 9 հոգի (երեքական), 10 հոգի համարվել են ակտիվ մասնակցություն ցուցաբերած:

Ձինծառայողների մոտ հայրենասիրական թեմաներով ստեղծագործական ունակությունները գնահատելու, նրանց կողմից ազգային գաղափարների և հատկապես Արցախյան գոյամարտի դասերն արժևորելու, երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակության դերը բարձրացնելու նպատակով՝ ԼՂՀ պաշտպանության նախարարի հրամանով մրցություն հաղթող ճանաչված և ակտիվ մասնակցություն ցուցաբերած զինծառայողները պարգևատրվեցին պատվոգրերով և արժեքավոր նվերներով: Նախարարի մեկ այլ հրամանով՝ երիտասարդության և Պաշտպանության բանակի զինծառայողների ռազմահայրենասիրական դաստիարակության գործում ունեցած զգալի ավանդի համար ԼՂՀ ԱԿԱՀՄ նախագահ Վերա Գրիգորյանը պարգևատրվեց պատվոգրով և արժեքավոր հուշանվերով:

Նվերներ և պատվոգրեր ուներ հանձնելու նաև Վերա Գրիգորյանը: Կազմակերպության վարչության որոշմամբ՝ Մայիսյան եռատոնի կապակցությամբ ամեն տարի անհայտ կորած ազատամարտիկների մի քանի ընտանիքներ արժանանում են արժեքավոր նվերների: Ավանդույթը չխախտվեց նաև այս տարի: Բացի այդ, կազմակերպության հետ ակտիվ համագոր-

ծակցության համար պատվոգրով պարգևատրվեցին ԿԽՄԿ ներկայացուցիչ Ռոման Պարամոնովը, ինչպես նաև թարգմանիչ Ախմեդ Բարախունը և ֆոտոթղթակից Մայնանդ Շադեն՝ երկուսն էլ Ժնևից:

ԼՂՀ ԱԿԱՀՄ շնորհակալագրով պարգևատրվեցին Պաշտպանության նախարարության ռազմահայրենասիրական դաստիարակության և հասարակական կազմակերպությունների հետ կապերի բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Կարո Համբարձումյանը և Կառլեն Մարգարյանը:

Մատաղ սերնդի հայրենասիրական դաստիարակության գործում հանրակրթական դպրոցների հետ ակտիվ համագործակցության համար, ինչպես նաև Մայիսյան եռատոնի և ծննդյան օրվա կապակցությամբ Վերա Գրիգորյանը պարգևատրվեց քաղաքապետարանի կրթության և սպորտի բաժնի պատվոգրով:

**Լատրա ԳՐԻԳՈՐՅԱՆ**

17.05.2012թ.

## «ՍԻՐՈՒՄ ԵՄ ՔԵՉ, ՀԱՅՐԵՆԻՔ»

Արդեն ավանդույթ է դարձել ԼՂՀ Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միության (ԱԿԱՀՄ) ՀԿ հուշաթանգարանում տարաբնույթ միջոցառումների կազմակերպումը՝ նվիրված Գիտելիքի օրվան, երեխաների պաշտպանության օրվան, մայիսյան Եռատոնին և այլն: 4-րդ տարին է, ինչ մայիսյան Եռատոնին նվիրված շարադրությունների մրցույթին մասնակցում են ոչ միայն մայրաքաղաքի հանրակրթական դպրոցների աշակերտները, այլ նաև՝ զինվորներ՝ պաշտպանության բանակի տարբեր զորամասերից:



«Սիրում եմ քեզ, հայրենիք» խորագրով շարադրության մրցույթին այս տարի մասնակցեցին 66 զինվորներ՝ ԼՂՀ պաշտպանության բանակի տարբեր զորամասերից, որոնցից 19 լավագույն աշխատանքներ խրախուսվեցին օրերս՝ ԱԿԱՀՄ-ում՝ ԼՂՀ պաշտպանության նախարարության հետ համատեղ: 3-ական հոգի զբաղեցրեցին 1-ին, 2-րդ և 3-րդ պատվավոր տե-

դերը, իսկ 10 հոգի համարվեցին գործուն մասնակիցներ: Հուշաթանգարանում տեղի ունեցած պարզևատրման արարողությանը ներկա էին Ստեփանակերտի քաղաքապետարանի ԿՍ բաժնի պետ, հանձնաժողովի նախագահ Կառլեն Մարգարյանը, ԼՂՀ պաշտպանության բանակի սպաներ, Կարմիր Խաչի միջազգային կոմիտեի արցախյան գրասենյակի պատասխանատու Ռոման Պարամանովը, լրագրողներ, անհայտ կորած ազատամարտիկների հարազատներ, հյուրեր:

Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության և սպորտի բաժնի պետ Կառլեն Մարգարյանը, ով հանձնաժողովի նախագահն է, նաև՝ մասնակից ԱԿԱՀՄ բոլոր ծրագրերին, ողջունեց արցախյան հերոսական բանակի սպայական կազմին և ԱԿԱՀՄ ներկայացուցիչներին:

- Մայիս ամիսը նշանավորվում է մի շարք պատմական իրադարձություններով՝ սկսած Ավարայրի ճակատամարտից, Սարդարապատից, մինչ այսօր: Մենք աշխարհին ապացուցեցինք մեր լինելիության հարցը: Ստուգելով շարադրությունները, ես անչափ հպարտություն զգացի, քանզի համարյա բոլոր շարադրությունները սկսվում են ազգի պատմությունից: Կարդալով բոլորը մեկ առ մեկ, ես ևս մեկ անգամ համոզվեցի, որ մեր հայրենիքը գտնվում է հուսալի ձեռքերում, քանզի բոլոր աշխատանքների մեջ էլ՝ սկսած գնահատված 8 միավորից մինչև 19 միավորը, կային «ոսկե հատիկներ», - նշեց Կ. Մարգարյանը, միաժամանակ փառք տալով Աստծուն ու օրհնելով այն մոր արգանդը, ով Արամ Փարսադանյանի նման զինվոր տղա է ծնել, ում հոգում այդքան սեր ու նվիրում կա՝ առ հայրենիք:

Այնուհետև, ՊԲ մայրը Միեր Հարությունյանը հրապարակեց ԼՂՀ պաշտպանության նախարար Մովսես Հակոբյանի հրամանը, ըստ որի՝ ԱԿԱՀՄ նախագահ Վերա Գրիգորյանը պարզևատրվում է՝ Պաշտպանության բանակի զինձառայողների ռազմահայրենասիրական գործում ունեցած զգալի

ավանդի համար՝ պատվոգրով և արժեքավոր հուշանվերով:

ԱԿԱՀՄ նախագահը ևս հանձնեց ԱԿԱՀՄ շնորհակալագրեր՝ քաղաքապետարանի ԿՍ բաժնի պետ Կառլեն Մարգարյանին, Պաշտպանության նախարարության ռազմահայրենասիրական դաստիարակության և հասարակական կազմակերպությունների հետ կապերի բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Կարո Համբարձումյանին, ԿԽՄԿ ներկայացուցիչ Ռոման Պարամանովին, թարգմանիչ Ախմեդ Բարախովին և ֆոտոթղթակից Մայնանդ Շադենին: Կառլեն Մարգարյանը քաղաքապետարանի ԿՍ պատվոգրով և նվերով ևս պարգևատրեց ԼՂՀ ԱԿԱՀՄ նախագահ Վերա Գրիգորյանին՝ մատաղ սերնդի դաստիարակության գործում՝ մայրաքաղաքի հանրակրթական դպրոցների հետ ակտիվ համագործակցության, մայիսյան Եռատոնի և ծննդյան օրվա կապակցությամբ: Մայիսյան Եռատոնի առիթով անհայտ կորած ազատամարտիկների 5 ընտանիքներ նշյալ կազմակերպության որոշմամբ ևս արժանացան արժեքավոր նվերների՝ չխախտելով ավանդույթը:

Ընթերցողներին ներկայացնում ենք «Սիրում եմ քեզ, հայրենիք» խորագրով շարադրության մրցույթում առաջին տեղը գրաված երեք զինվորականների շարադրությունները:

***Լիրա ՂԱԼԱՅԱՆ***

**«Ես սիրում եմ քեզ, հայրենիք»**

Մայիսյան Եռատոնի կապակցությամբ քաղաքապետարանի կրթության և սպորտի բաժնի կողմից հայտարարված «Ես սիրում եմ քեզ, հայրենիք» թեմայով ստեղծագործական շարադրությունների մրցույթում հաղթող են ճանաչվել մի խումբ աշակերտների աշխատանքներ: Դրանցից երեքը ներկայացնում ենք ընթերցողների ուշադրությանը:

\*\*\*

*Այստեղ ամեն քար  
Քարե մարտան է,  
Քարե պարմություն,  
Որ գրել են մեր հերոս պապերը:*  
**Հր. Բեգլարյան**

Ասում են՝ հայրենիքը չեն ընտրում, չէ՞ որ այն քեզ ընծայում է ճակատագիրը: Ճակատագիր, որին ես այնքան երախտապարտ եմ, քանզի կրում եմ դարաբաղի անունը՝ վսեմ ու պարտավորեցնող: Հպարտ եմ, որ կարող եմ բարձրաձայն գոչել.

- Արցախն իմ հայրենիքն է...

Ախր Ղարաբաղն այնքա՛ն ուրիշ է: Այստեղ հողը կարողանում է խոսել՝ պատմելով հայ ռամիկի տքնաջան աշխատանքի մասին: Արցախի արևն այնքա՛ն պայծառ է, հորիզոնը՝ ջինջ, բնությունը՝ զմայլիչ, մարդիկ՝ հյուրասեր ու բարեխիղճ: Եվ այս աստվածային երկրին է, որ թուրքն ուզում էր տիրանալ: Տիրանալ մեր բարբերին ու եկեղեցիներին, մեր մշակույթին ու հոգևոր արժեքներին: Իմ խե՛նթ ժողովուրդ, դու ոտքի ելար ու մարտնչեցիր: Մարտնչեցիր, որ այսօր ազատության սերունդն աղոթի հայերեն, մարտնչեցիր, որ չթուլանաս ու պահպանես քո ազգային արժեհամակարգը: Դու կարողացա՛ր, այո՛, կարողացար ձեռք բերել անկախություն, ստեղծել ամրակուռ բանակ և հայ մնալ:

Քսանամյա անկախություն... Քանի՛ քանիսն ընկան՝ հանուն այդ նպատակի իրագործման: Քանի՛ մոր սիրտ կսկիծից փուլ եկավ, քանի՛ մանուկ գրկվեց ամեն օր հոր գիրկը վազելու հաճույքից: Բայց պետք չէ այլևս սգալ, ո՛չ, մենք դրա իրավունքը չունենք: Մենք մեր հայրենիքի ապագան ենք ու անմեղ գոհերի արժանի հետնորդները:

Հայրենասիրություն... Ինչքա՛ն հասարակ, բայց միևնույն

ժամանակ բազմաբովանդակ բառ է: Ո՞վ է հայրենասերը: Նա՞, ով լքում է Արցախ աշխարհը՝ ավելի հեշտ ու կուշտ ապրելու համար և անընդհատ քննադատում իշխանությանը՝ իրեն արդարացնելու նպատակով: Ո՛չ: Հայրենասերը նա է, ով քրտնաջան աշխատում է՝ հայրենի հողից բերք ստանալու ակնկալիքով: Նա, ով տուն է կառուցում, շենացնում հայրենի քաղաքներն ու գյուղերը, ծառ տնկում, զավակներ ունենում՝ հայրենիքին մատաղ տալու պարտականությամբ:

Երբ մթնշաղն իր թևերով պարուրում է աշխարհը, նստում են մեր այգում, և ինձ այցի են գալիս բազմերանգ անուրջներ, որոնք ինձ տանում են դեպի ապագա: Քայլում են Ստեփանակերտի գեղեցիկ ու լուսավոր փողոցներով ու հաճույք ստանում մարդկանց անհոգ ու բարեժպիտ դեմքերից:

- Ինչո՞ւ են Արցախում մարդիկ այդքան ուրախ:

- Չգիտե՞ք, չէ՞ որ նրանք ունեն միջազգայնորեն ճանաչված հանրապետություն:

Արցախս այնքա՛ն գեղեցիկ է: Ի՛ն հայրենիք, ես պատրաստ եմ իմ մտավոր կարողություններն ընծայել քո բարգավաճման գործին: Ուզում եմ դառնալ այնպիսի մասնագետ, որ կարողանամ ստեղծել քաղաքացիական հասարակություն՝ օրենքի գերակայությամբ, որտեղ ամեն ոք իրեն կզգա ազատ ու ապահով: Վա՛յ այն ազգին, որ չունի ինքնազոհաբերման պատրաստ զավակներ: Պայծառ ապագա եմ փափագում խոցոտված երկրիս համար, աղոթում ու հոգուս բոլոր լարերով աղաղակում.

- Միրու՛մ եմ քեզ, Արցախ աշխարհ...

***Saph ԱՍՐՅԱՆ***

*Մյուսի-ի հ.8 ավագ դպրոցի 12հ.1  
դասարանի աշակերտուհի*

\*\*\*

*Ով որ չի ճանաչում իր  
հայրենիքը, չի կարող սիրել այն:*  
**Գարեգին Նժդեհ**

Իմ երկիրն այն է, որը գալիս է դարերի խորքից, պատերազմներից ու արհավիրքներից ավերված ճամփաներով, խաղաղ ու ստեղծագործ կյանքի ուղիով: Այն երկիրը, որը, ճիշտ է, մի բառ է, բայց այնքան սիրելի ու հարազատ, որ ես այն ազատորեն տեղավորել եմ սրտիս մեջ... Այն երկիրը, որը գալիս է դարերի խորքից ու դեպի գալիք դարերն է գնում:

Անշուշտ, իմ երկիրը Մեծ Հայքի՝ մեր պատմական հայրենիքի չքնաղ բեկորն է՝ լեռների գրկում ծվարած Արցախ աշխարհը, որն այսօր համայն աշխարհին պատմում է իր հերոսական անցյալի մասին, որն այսօր համայն մարդկությանն է ներկայանում իր կոթողներով, իր Գանձասարով ու Ամարասով, իր Դադիվանքով ու Կաչաղակաբերդով, իր անառիկ Շուշիով ու Ամենափրկիչով, իր չքնաղ բնությամբ, իր անկեղծ հյուրասիրությամբ... Հպարտ եմ, որ ապրում եմ Արցախում, որ արժանի եմ արցախցի լինելու, արցախցի կոչվելու պատվին: Արցախահայությունը շատ բանով կարող է հպարտանալ. մի՞թե Ամարասում չեղավ հայոց առաջին դասը, մի՞թե մենք չէինք, որ տասնութերորդ դարում բարձրագրիներ նախադեպը չունեցող ապստամբություն: Եվ մի՞թե մենք չէինք նենգ ու արյունարբու ոսոխին ապացուցողը, որ նա ոչինչ չունի մեր երկրում:

Յուրաքանչյուր արցախցի մի սար է՝ անապակ ու անպարտ: Յուրաքանչյուր արցախցի մշակութային գործիչ է: Չէ՞ որ մեր երակներով մեր նախնիների արյունն է հոսում: Այդ են վկայում մեր եկեղեցիները, վանքերը, հուշարձանները, որոնք անցնողին ներկայանում են իրենց հինգհազարամյա պատմությամբ և հպարտորեն ասում. «Ձգո՛ւյ՛ջ անցիր այստեղով. այս-



տեղ է ինքը՝ ժամանակը, այստեղ է ինքը՝ հավերժությունը»:

Ղարաբաղը կարծես մասունք է, հավիտենականության մասունք, քանզի մենք գիտենք ապրելու և հարատևելու աստվածային գաղտնիքը:

Այսօր մենք ապրում ենք բարգավաճող երկրում, որի յուրաքանչյուր հաղթանակ հպարտություն է ներշնչում: Ինչո՞ւ: Մի պարզ պատճառով, քանի որ ամեն մի շինարարության ավարտ անգամ մեզ համար հաղթանակ է, որովհետև մենք պատերազմների բովով ենք անցել, որովհետև իմ հողի յուրաքանչյուր խոտ, յուրաքանչյուր թիզ ներկված է արյամբ, հերոս ժողովրդի սուրբ արյամբ, ովքեր միայն հաղթելու պայմանով գնացին մահին ընդառաջ... Եվ եղավ այդ սպասված հաղթանակը: Շուշիի ազատագրումը գարնան անձրև եղավ հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցության համար: Այն ստիպեց մեր դարավոր ուսխին հաշվի նստել մեր կամքի հետ, մեր ազատ ու անկախ իրավունքի հետ: Այսօր մենք տեսնում ենք մեր հաղթանակի քսանամյակը: Հաղթանակ, որը ձեռք է բերվել հազարավոր տղաների արյան գնով, հաղթանակ, որի համար շատ թանկ վճարեց հայ ժողովուրդը: Արցախը մանկանում է յուրաքանչյուր նորածնի հետ, երիտասարդանում ու ավելի գեղեցկանում: Յուրաքանչյուր մանկան ծիծաղ նոր ուժ, նոր ոգի է տալիս արցախցուն: Նա դեռ պատրաստ է արարել ու ստեղծագործել:

Ես սիրում եմ քեզ, ի՛նչ Արցախ: Ինձ ծնող, սնո՛ղ մայր, ես սիրում եմ քեզ ամբողջ սրտով, հոգու ամբողջ զորությամբ: Այսօր դու տոնում ես հաղթանակներդ, պարտադրված պատերազմում տարած արժանի հաղթանակներիդ: Եվ այսօր ես ևս մեկ անգամ երդվում եմ դառնալ իմ հայրենիքի արժանի զավակը: Դո՛ւ, իմ սրբազանագո՛ւյն հայրենիք, դեռ կապրես ու կգորանա՛ս, դու դեռ ավելի կբարգավաճես՝ ի հեճուկս թշնամու:

Ես Արցախն եմ: Ես իմ նորանկախ ազգային պետականու-

թյան վեհ դրոշն են, անպարտ խորհրդանիշները, որոնցով այսօր չափվում է մեր մեծությունը աշխարհի հզոր տերությունների կողքին: Ես ինքս կյանքն են, հարատևումը, անմահությունը: Ես նա են, ով միշտ տառապանքի ցավ է ապրել, բայց երբեք չի հուսալքվել: Ես հավերժի ճամփորդն եմ և կշարունակեմ ապրել ու դիմակայել, քանի գեթ մեկ հայ է ապրում այս հողագնդում, այս հավերժական արևի ներքո:

***Լուսինե ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ***

*Սյրելի-ի հ.11 ավագ դպրոցի  
10 հ1 դասարանի աշակերտուհի*

\*\*\*

*Հայրենիքից անուշ ու թանկ  
Ուրիշ ի՞նչ կա երկնքի տակ...*

**Ս. Կապուտիկյան**

Հայրենիքն այն հողն ու ջուրն է, որ մեզ համար կյանքի ակունք է, մեզ ծնողն ու սնողը, պահող-պաշտպանողը:

Ես՝ 1997-ին ծնված աղջնակս, չէի իմանում, որ ծնվել եմ սգավոր, թարմ ու չսպիացած վերքերով հարուստ մի փոքրիկ հողում՝ Արցախում: Ես սիրում եմ քեզ, հայրենիք, իմ Արցախ: Սիրում եմ հրաշալի քո բնությունը՝ հարուստ թարմ օդով, երփներանգ ծաղիկներով, կենդանիներով, թռչունների ուրախ ու զվարթ ծվլոցով: Արցախ, դու հպարտ կանգնած ես քո վանքերով ու եկեղեցիներով, քո սարերով ու քո սահմանամերձ գյուղերով և, ի վերջո, մեծ հայտրդու անունը կրող, քո սիրտը համարվող Ստեփանակերտով: Արցախ, դու տարածված ես այնտեղ, որտեղ եկեղեցիներ են եղել, որտեղ հայն աղոթք է շշնջացել, որտեղ հազարավոր խաչքարեր հայերեն են մրմնջում, տապանաքարերին հայերեն է գրված:

Մենք պետք է գիտակցենք, որ ոչ ոք մեզ համար հարուստ ու

բարեկեցիկ երկիր չի ստեղծի, ուստի մեր սրբազան պարտքն է՝ ամբողջ ազգով լծվել մեր պետության կայացման, զարգացման ու բարգավաճման հայրենանվեր գործին:

Ես սիրում եմ իմ հայրենիքը, քանզի մի ուրիշ աշխարհ է Արցախը, այն հայրենասիրություն ու սխրանք է սովորեցնում, ստիպում է մարդուն մի պահ մտածել իր կյանքի, արած-չարած գործերի մասին, և շատ խիստ մի պատասխանատվություն է դրվում յուրաքանչյուրիս առջև: Չարմանալի այս աշխարհի մարդկանց սխրանքներից սերվեցին իմ քսանամյա անկախ հայրենիքը, նրա հզոր բանակը...

Դարերից եկած անառիկության գաղտնիքներդ քանի անգամ փորձել է կործանել ոտխը դաժան, փորձել է, բայց չի կարողացել, քանզի դու երբեք չես ընկրկում, դու Արցախն ես՝ հին ու միաժամանակ նոր, հակառակորդներիդ համար՝ ընդմիջտ անհաս, որդիներիդ համար՝ օջախ հայրենի:

Իմ հայրենիքն ամենաշքեղն է իր հողով, ջրով, իր հողին ամուր կանգնած, այդ հողը ծաղկեցնող, շենացնող ու լիացնող արցախցիներով:

Ինձ համար իմ հայրենիքը սկսվում է իմ ընտանիքից, բայց շատ հաճախ նաև սահմանափակվում է իմ ընտանիքով, որովհետև ես ահավոր ծանր եմ տանում այն, թե ինչ են անում իմ հայրենիքի հետ:

Մեզանից յուրաքանչյուրը հասկանում է, որ բոլոր ժամանակներում միշտ էլ ինչ-որ բան այնպես չի եղել, սխալներ միշտ էլ ունեցել ենք: Եթե ցավում է սիրտդ, հայրենակից իմ, ուրեմն պետք է շտկել սխալն այդ, դարձի բերել սխալվողին՝ չնոռանալով, որ հայրենիքը մերն է, հողը՝ չծնվածներինը: Բառերն ավելորդ են դառնում, երբ ուզում եմ քեզ ու քո մարդկանց փառաբանել, քո անունն իսկ բավ է՝ վերստին հիշելու և տեսնելու բոլոր բարի գործերդ, հարուստ անցյալդ, փոթորկված ներկադ, հույսերի ու հավատի թագավորության ապագադ:

Շե՛ն մնաս քո շենացող օջախներով, հայրենանվեր, արցա-  
խապաշտ քո ժողովրդով: Արցախ, դու պետք է հպարտանաս  
քո ժողովրդով ու քո զավակներով: Անմահ է քո ժողովուրդը, քո  
զավակները հանուն քեզ ու քո անկախության պատրաստ են  
արյուն թափել և իրենց կյանքը զոհաբերել:

Ես, սովորելով իմ հայրենիքի ու իմ ժողովրդի պատմությու-  
նը, այլ խոսքով, ճանաչելով ինքս ինձ ամբողջ էությանը, մտ-  
քով ու սրտով կապվում եմ իմ մայր հողին, հպարտանում իմ  
ժողովրդի պատմության համար, սքանչանում կերտված ար-  
վեստով, մշակութային անմահ կոթողներով ու գիտությամբ:

Երբ ճանաչում ես ու սիրում քո ժողովրդի պատմությունը, քո  
նախնիների օրինակը քեզ մղում է ինքնագոհության և հերոսա-  
կան սխրանքների, հավատում ես, որ կա ամենաթանկը՝ հայ-  
րենիքը, որին անհրաժեշտության դեպքում պետք է նվիրաբեր-  
վել անմնացորդ և ամբողջ էությամբ:

Ես սիրում եմ քո անկախությունը, բանակը: Սիրո՛ւմ եմ քեզ,  
Ղարաբա՛ղ, սիրո՛ւմ եմ քեզ, դարաբաղցի՛...:

***Նոննա ԳՅՈՒՐՉՅԱՆ***

*Ավ. Իսահակյանի անվան հ. 10  
հիմնական դպրոցի 9-րդ բ  
դասարանի աշակերտուհի  
«Սրտիանակերտ», հունիս 2012թ.*

## ԿԱՐԳԱՑՎՈՒՄ Է ՍԻՐՈՎ ՈՒ... ՑԱՎՈՎ

Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միության հուշաթանգարանի նախագահ Վերա Գրիգորյանը «Ժամանակն իմ մտապատկերում» (թվով 13-րդ) գիրքը կարդացվում է սիրով ու ... ցավով: Նրանում խտացված են մարտի դաշտում, ինչ-ինչ հանգամանքներում անհայտ կորած ազատամարտիկների տարաբախտ ծնողների՝ հայրերի ու մայրերի, քույրերի ու եղբայրների անհուն վիշտը և սիրտ մաշող տխրությունը, ոգու վեհությունն ու կամքի աներերությունը, հզորությունը: Թերթում, կարդում ես գիրքը ու նրա ամեն մի էջում, ասես, հեղինակի սրտի անկանոն տրոփն ես լսում, տասնյակ ու տասնյակ վշտահար մայրերի օրեցօր խամրող, աշնան տերևի նման դալկացող հայացքը տեսնում: Ու այս ամենի հետևում հենց իրեն՝ միևնույն օրդու՝ Սպարտակի վերադարձին հույսով ու կարոտով սպասող իսկական հայուհուն՝ Վերային ես տեսնում, մեծ սրտի ու հոգու տեր մի կնոջ, ով ասի քանի՛-քանի՛ տարի (1994-ի հունվարի 16-ից) փնտրում, որոնում է որդուն, սակայն... ապարդյուն:

Որդին՝ Սպարտակը, որ կռվում էր միլիցիայի ջոկատում, չկա ու չկա: Չկա՛ նաև նրա մարտական ընկերը՝ Գառնիկը, չկա՛ն շատերը (710 հոգի, որից 239-ը՝ ազատամարտիկներ):

Ու ԱԿԱՀՄ նախագահը փնտրում, որոնում է բոլորին՝ նրանց համարելով իր որդիները, իր հարազատները: Որոնում է, թեև գիտի, համոզված է, որ գերիների բանտի երկաթե դուռը փակ են մեր ազատամարտիկների առաջ, փակ են ընդմիշտ: Փակ են և նրանց տերերի քարե սրտերը: Ասել է թե գրեթե (եթե չասենք՝ ընդհանրապես) անհնարին բան է Բաքվի կամ Բայիլի բանտից «դուրս գալը», տուն դառնալը:

Բնական է, մոր համար սա ահավոր ողբերգություն է, դառն ու դաժան ճշմարտություն: Իսկ թե ինչպես է տանում Վերան այս «ճշմարտությունը» ու ինչի է պատրաստ նա՝ բանտային խցի ամուր, շա՛տ ամուր դուռը «բացելու համար», պարզորոշ

երևում է նրա այն խոսքերից.

«Պատրաստ եմ բոքիկ ոտքերով շրջել մեր բոլոր վանքերն ու եկեղեցիները, սրբատեղերը, բարձրանալ նրանց զանգակատները, քաշել զանգերի լեզվակները և ի լուր աշխարհի ասել, պահանջել՝ վերադարձրեք մեր զավակներին... (էջ 69).

Իսկ 107-րդ էջում կան չափածո այսպիսի սրտառուչ տողեր.

*Վշտիս մասին*

*Հազար ու մի երգ կապեցի...*

*Ասա, Տեր իմ, որդուս առջև*

*Բանորի դուռը ե՞րբ կբացվի...*

*Հա՛խմում եմ*

*Դառնության այս բաժակը, բայց...*

*Վե՞րջ չունի այն,*

*Պատրաստ եմ քեզ տալ իմ հոգին,*

*Մի՞նումարիս ե՛րբ տուր միայն...*

Տխուր խոհեր, հիշողություններ արթնացնող այս բառերը բխում են բոլոր այն մայրերի ու հայրերի սրտից, ովքեր դարձել են «սպասման հիվանդներ»:

Այո՛, գրքի շատ ու շատ էջերում թախիժ կա ու տրտմություն, բայց այն իր ամբողջության մեջ յուրօրինակ մի ասք է, իրական մի պատմություն հայ զինվորի, հայ մարդու հայրենասիրության, հերոսական արարքի ու անկոտրում կամքի, հայրենի հողին, հայրենի եզերքին նվիրվածության մասին, մեր Անկախության, Արցախի աշխարհի գեղեցկության, դարերից եկող նրա պատմության, մեր տղաների անձնուրացության, անօրինակ սխրագործության մասին:

Բազմաբնույթ նյութերը, գեղեցիկ ու խոսուն նկարները սա են մեզ հուշում, սա են վկայում: Հիրավի, գրքի բազում էջեր ներծծված են լավատեսությամբ, մեր մեծերի, սահմանը աչալրջորեն պահող մեր զինվորների՝ վաղվա օրվա նկատմամբ ունեցած լուսե հավատով:

«Մեր ժողովուրդը,- կարդում ենք 125-րդ էջում,- մեր սարերի պես անսասան է, ոչ մի ուժ չի կարող նրան շեղել իր եթերից:

Մենք շարունակում ենք ապրել ու ապրելով հիշել անցյալը»:

Այսքան կորուստներով հանդերձ մենք լավատես ենք, և այդ լավատեսությունն է առաջնորդում մեզ դեպի պայծառ ապագա: Իհարկե, նորից կցնծա Արցախ աշխարհը, նորից շուրջպար կբռնի հայ ժողովուրդը, ռազմագերիները տուն կվերադառնան և նրանց ընտանիքներում կթևածեն ուրախությունն ու երջանկությունը և կլինի այն, ինչին երկար տարիներ սպասել ենք մենք: Եկեք հավատանք ու սպասենք...»

Այսպես է մտածում, այսպես է դատում տիկին Վերան, ով, համաձայնեք, իսկապես, մեծ սիրտ ունի ու ազնիվ հոգի, ազնիվ երազանքներ ու հաճելի ակնկալիքներ:

«Ժամանակը՝ իմ մտապատկերում»՝ գիրքը «լույս աշխարհ է եկել» ամիսների, տարիների համառ ու տքնաջան աշխատանքի շնորհիվ: Հեղինակը պրպտել, «քրքրել է» արխիվները, նորից ու նորից ճշգրտել ականատեսների, Արցախյան գոյամարտի մասնակիցների հուշերն ու գրառումները, վկայություններն ու պատումները:

Գրքի ամեն մի տողում պարզ խոսքերի, ենթատեքստերի մեջ ամբողջացված է մարդկային ճակատագրերի խորունկ ու դժվարին ընթացքը:

Ամենակարևորը՝ ծավալով ոչ այնքան մեծ (ընդամենը 135 էջ ունի) գրական-վավերագրական այս երկը մեծապես կարող է նպաստել աճող սերնդին հայրենասիրական ոգով դաստիարակելու վեհ ու պատվաբեր գործին: Այն օգտակար կարող է լինել թե՛ դպրոցական նստարանին նստած աշակերտին, թե կռիվների բովով անցած զինվորականին, հայոց բանակում ծառայող մարտիկին: Ես այս համոզմանն եմ: Ուստի, խորհուրդ եմ տալիս բոլորին, անպայման կարդալ:

**Միքայել ԲԱԼՅԱՆ**

*թոշակառու ուսուցիչ*

*«Մարտիկ», մայիս 2012թ.*

## «ՍԻՐՈՒՄ ԵՄ ՔԵՉ, ՀԱՅՐԵՆԻՔ»

Քո կապույտ երկինքն ու արևը վառ,  
Արևահարված քո լեռները պիրկ`  
Երկրի կարոտով վառվելու համար:

Սիրում եմ տեգիդ ամրությունն այն կուռ,  
Որ հազար տարով ճոճվում է օդում  
Եվ արձակելով արհավիրք ու հուր`  
Թշնամու զորքին մահ է հաղորդում:

Իմ սուրբ հայրենիք, և ինձ եմ սիրում  
Միայն քո որդին լինելու համար,  
Արևագանգուր դուստրերիդ խնդուն  
Եվ որդիներիդ բազուկները քար:

Քեզնով է ծաղկում զարունը այգուս.  
Մայրական սեր ես, հայրական օրհնանք,  
Ապագան ներկող փարոսը հոգու  
Ու որդուս համար պատվաբեր կյանք:

Եվ պաշտում եմ ես քո ռազմի աստծուն,  
Որ պայքարում է իր իսկ բախտի դեմ  
Ու հաղթում նրան, ու անկեղծ ցնծում  
Եվ հուշարձաններ կանգնեցնում շքեղ:

Եվ տաճարներ է նվիրում երկնին,  
Որ ապրի ազգը ու հավատը հար.  
Ու հայրենիքի գիտակցումն ուժգին  
Դառնում է դեպի փրկիչ ճանապարհ:



Ես սիրում եմ քեզ, իմ սուրբ հայրենիք՝  
Կանաչ դաշտերիդ թախիժը անծայր,  
Հպարտ լեռներիդ լռությունը սեզ  
Ու քո փրկության ուղիները վառ:

Այժմ ես զինվորն եմ քո փառքի,  
Քո զորուժի մասնիկն անասան,  
Դարերով եկած սուրբ հավատքի  
Ու քո ծաղկուն ներկայի վկան:

Ես զինված եմ սիրով ու կամքով,  
Իմ կյանքով՝ քո կյանքի համար,  
Երեք ծովերի երազանքով  
Ու գալիքներով արևավառ...

**Արամ ՓԱՐՍԱԳԱՆՅԱՆ**

*Թիվ 25918 զորամասի հակաօդային դիվիզիոնի  
10-րդ հակաօդային մարտկոցի 2-րդ հաշվարկի  
հրամանատար, սերժանտ*

## «ՍԻՐՈՒՄ ԵՄ ՔԵԶ, ՀԱՅՐԵՆԻՔ»

Հայրենիքի հանդեպ տածած սերն աշխարհի ամենավեհ և նվիրական զգացմունքն է: Յուրաքանչյուր ոք յուրովի է հասկանում իր դերն ու կարևորությունը մայր հայրենիքի նվիրյալների շարքում: Եվ հայրենիքի մեջ գտնվող մարդկային տարբեր զարգացվածության աստիճանավորման տարբեր ճյուղերի վրա գտնվող տարատեսակ մարդիկ հայրենիքը կարող են սիրել լոկ իրենց կրթվածության մակարդակին համապատասխան: Անհատը կարող է սիրել իր հայրենիքը միայն և միայն այն դեպքում, երբ կարողանա գիտակցել իր գոյության և սեփական կյանքի գեղեցիկ շարունակության իմաստը: Անձամբ ես գտել եմ իմ հայրենիքը սիրելու և գնահատելու, նրան անմասն նվիրվելու բոլոր պատճառները: Ես հայրենիքս տեսնում եմ իմ տան, ընտանիքիս և հարազատներիս մեջ: Այդ պատճառով էլ առանձնապես տարբերություն չեմ տեսնում հայրենիքիս և ընտանիքիս մեջ: Ես հպարտ եմ իմ հայրենիքով, նրա բնությամբ, հայ ժողովրդի պայքարի ոգով և արարելու ու կատարյալին ձգտելու կամքով: Իմ հայրենիքի մի բուռ հողն անգամ թանկ է ինձ համար, քանզի այդ հողն է պատճառն ամենի, որ հայն իր օրում քուն-դադար չունի: Հողն է ստիպում հային աշխատել ու քրտինք թափել, նաև՝ պայքարել ու մի բուռ հողը արյամբ ներկել: Այդ մի բուռ հողն է, որ մահվան մահճում ընկած մարտիկը սեղմում է ամուր՝ մի վերջին ճիգով: Մի բուռ հող, սակայն իր մեջ՝ մեծ խորհուրդ, արարելու կամք և բուռբուռ հողից կազմած մի երկիր, չքնաղ բնօրրան, գորեղ արծվաբույն: Ինչպե՞ս կարող եմ չսիրել նման չքնաղ մի երկիր, ուր բնությունն իր ողջ հմայքով, բնական շուքով, հարազատի պես

հետևում է քեզ և հոգատար մոր բարի ձեռքերով բարիք է բերում՝ աշնան գույներով: Իմ հայրենիքը սիրում եմ քարով, քանդված մատուռով, բազում վանքերով, հնուց մնացած սուրբ խաչքարերով, դարերից եկած բազում վերքերով և սուր ու հրից հազիվ պահպանված մեր մատյաններով: Ես հասկանում եմ, որ նվիրվել եմ իմ հայրենիքին անմասն սիրով, և հայրենիքս հարազատ մոր պես իմ փոքրիկ սրտում հպարտ կանգնած է՝ որպես վեհության ու սուրբ հավատքի գորեղ մարմնացում: Ես ամեն մի պահ պատրաստ եմ լինել աննկուն պաշտպան իմ հայրենիքին և գոհվել հանուն գորեղ հավատքի: Ու եթե հանկարծ լինեմ վիրավոր լքված մի դաշտում, ես չեմ հապաղի շշմուռ թեկուզ մի վերջին անգամ՝ ես սիրում եմ քեզ, իմ հայրենիք:

***Մերուժան ԱՀԱՐՈՆՅԱՆ***

*Թիվ 59703 Ձ/Մ 15-Հ-Վ  
գինձառայող շարքային*



## «ՍԻՐՈՒՄ ԵՄ ՔԵԶ, ՀԱՅՐԵՆԻՔ»

Կանաչ լանջն ի վեր, ձեռք ձեռքի տված, բարձրանում էին պապն ու թոռը: Նեղ արահետի երկու կողմերում տարածվել էին ցորենի հուռքի արտերը: Իսկ կանաչի մեջ ժպտում էին կարմիր կակաչները:

- Ո՞ր մեկն է իմ զավակը,- մտածում էր պապը: Քայլում էր



մտահոգ ծերունին, մինչդեռ թռն արդեն թողել էր պապի ձեռքն ու թռչկոտելով մոտենում էր մեկ՝ այս, մեկ՝ այն կակաչին: Հասնում էր նրանց, պոկում, մեկիկ-մեկիկ մոտեցնում շուրթերին, համբուրում ու փունջ կազմում: Սեկի մոտ նա երկար կանգնեց, պտտվում էր շուրջը, հրճվում, ուրախանում, փոքրիկ թաթիկներով վեր էր բարձրացնում կակաչի թեք ընկած գլխիկը, ձգում ու մատնելով՝ պահում, որ արևի շողերն ընկնեին ճիշտ նրա սևաթույր սրտի մեջ: Փոքրիկի խաղը հրաշալի էր: Բնության չնաշխարհիկ հանդիպում իրականության հետ: Կակաչի բաժակից երկու կաթիլ մարգարտյա ցող

ներքև ընկավ, ներծծվեց հողի մեջ՝ առաջացնելով փոքրիկ փոսիկ: Փոքրիկն այնքան էր պտտվել ծաղկի շուրջը, որ ոտնահետքերն արդեն խառնվել էին: Կակաչն էլ չէր դիմանում նրա խաղին, կարծես ուզում էր ճչալ ու պատմել իր մասին:

- Միրելի՛ փոքրիկ, այստեղ՝ ուր ես ծնվել եմ, հողը շատ չոր էր ու ճաքճքված: Արևն ամեն օր իր շողերով այրում էր ծիլ ու սերմ: Հողն սպասում էր իր մշակին, բայց նա չէր գալիս, խռովել էր կարծես: Բայց եղան ուժեղ մարդիկ, մաքրեցին այս հողը մոլախոտերից, ու այն սկսեց շնչել ու ժպտալ: Հազարավոր ոտնահետքեր մաքրվեցին, ետ շարտվեցին թշնամու գրոհայինները: Տնքաց ու մռնչաց հողը, մռնչացին և նրա զավակները: Կյանքի ու արյան գնով պահվեց այն ու ջրվեց, սիրով խնամվեցին հողի սերմերը՝ մարդկային կարմիր արյունով: Եվ քանի որ հողն ամեն ինչ ներծծեց իր մեջ, մենք՝ որպես վկա ընկածների, կակաչների տեսքով հառնեցինք:

- Հիշեցե՛ք մարդիկ, այստեղ ահա արյուն է թափվել, ու կյանք է հատվել՝ թերատ, կիսատ և խոցված: Թերթերիս սևն էլ դա է վկայում:

Պապն արդեն հասել էր թռռանը և հայացքը չէր կտրում բլրի վրա տեղադրված հուշադրյուրից: Կակաչները կարծես ճիշտ ժամանակին գտան իրենց տիրոջը՝ սև մարմարի վրա կարմիր կակաչներ:

- Պապ, իսկ ինչո՞ւ հայրիկը չի խոսում:

- Խոսում է, թռռնիկս: Նա ասում է, որ ինքը, սիրելով ինձ ու քեզ, սիրելով այս հողն ու հայրենիքը, թափեց իր արյունն ու գնաց հավերժության ճամփով: Նա քո մե՛ջ է, քեզանով նաև քո թռռան մե՛ջ կլինի:

Արևն արդեն իր տաք շողերով գուրգուրում էր թռռած կակաչի թերթիկները: Նրանք շնչում էին:

- Ես սիրում եմ քեզ, հայրենի՛ք:

Դեռ փոքր էի ես՝ հինգ-վեց տարեկան: Պապիս գրկի մեջ նս-

տած՝ մանկան հրճվանքով կատակում, անվերջ խաղում էի ես, ու թվում էր ինձ աշխարհը հանդես: Բայց ա՛յ քեզ զարմանք. պապիս ոտքերին, բազկին առնական տեսնում եմ վերքեր, վերքեր անսահման: Ու հարց եմ տալիս կասկածով նրան.

- Այդ ի՞նչ է պապիկ, քեզ շո՞ւնն է կծել ու զորեղ մարմինդ խոր վե՞րք բացել:

Ժպտում է պապս թոռանն իր անգետ, ու ժպիտն իսկույն չքվում է անհետ:

- Հիտլերն է կծել, որդիս, Հիտլերը, որ կարծում էր իրեն աշխարհի տերը:

- Բայց ների՛ր, պապի՛կ, որ չեմ հասկանում՝ ի՞նչ է Հիտլերը, ի՞նչ՝ նրա տերը:

Ծանր հառաչում է պապս.

- Մեծ չարագործ էր Հիտլերն անիրավ: Եվ զիտե՞ս, որքան մարդիկ նա կերավ:

- Հետո՞, հետո՞ պապիկ,- շունչս կտրվելով՝ հարցնում եմ ես: Նա էլ թե.

- Անմեղ մարդկանցից մի բանակ կազմվեց, այնժամ Հիտլե-րը եղավ գահընկեց:

Անցան տարիներ, դպրոց գնացի, ուսում ստացա, գրքեր կարդացի ու նոր հասկացա և շատ զարմացա: Եվ իզուր չէ, որ պոետ մի սրբազան կոչել է նրան «ամենազազան»: Լսեցի պապիս, տխրեցի և մտքումս երդվեցի, որ մեծանամ, ես դրանց հե-րը պիտի անիծեմ:

Պապս այսօր ութսուն տարեկան է: Շուրջ քառասուն տարի մեր գյուղի դպրոցում դասավանդել է, դպրոցի տնօրենն է եղել և շատ հարգված մարդ: Ես իմ վետերան պապից իմ հայ ժո-ղովրդի մասին շատ բան եմ իմացել: Այդ ինչքա՛ն թշնամի ես ունեցել, իմ հա՛յ ժողովուրդ, իմ հի՛ն Հայաստա՛ն, չարչարված երկիր, հավերժ խոշտանգված բազում փորձություններում: Իմ չքնա՛ղ երկիր, դու եղեո՞ն տեսար, Մումգայի՛թ, Բաքո՛ւ, բայց

քեզ չկոտրեց և ոչ մի հարված պայքարում քո վեհ:

Երբ ինձ հայոց բանակ էին ճանապարհում, պապիս երդվեցի դառնալ իսկական զինվոր և անճնացորդ նվիրումով ծառայել հայրենիքիս: Երդվեցի զինվորականի բարձր ու ազդու առողանությամբ: Պապս հուզված գրկեց ինձ ու ասաց.

- Գնա՛ թռռնիկս և ապացուցի՛ր քո զինվոր լինելը:

Այսօր ես ավարտելով բուհը, անցել եմ ծառայության իմ չքնաղ Ղարաբաղում, որը գիշեր ու զօր սպասում է իր մորը՝ սրտում անթեղած իրեն հասցրած խորը վերքերը, սպասում է, որ մի գեղեցիկ օր Հայաստանին կմիանա քաջակորով Արցախը:

Ես հիացած եմ Ղարաբաղով. այդքան խտացված գեղեցկություն մի փոքրիկ տարածքում: Ուզում եմ սահմանից այն կողմ թառած շուն թուրքին գոռալ, բարձրաձայն հայիոյել, որ նա իմանա և համոզվի, որ Արցախը չի տեսնի:

Մեր պապերը, հերոսներն անհավասար մարտում հավատացել են իրենց պայքարի հաղթանակին:

Այսօր կարևորն ընկածների հիշատակը լավ գործերով, աշխատանքային և ստեղծագործական հրաշալի նվաճումներով զարդարելն է:

Ես ինձ, իմ զինվորներին կոչ եմ անում՝ այսուհետ առավել զգաստ ու աչալուրջ լինել: Իմ սիրելի՛ հայրենիք, որքան հասակս ավելանում է, այնքան ես քեզ ավելի եմ կարոտում և վստահաբար համոզվում՝ սիրում եմ քեզ, հայրենիք:

**Արեն ՄՈՍԻՆՅԱՆ**

*Թիվ 36534 գ/մ-ի 5-րդ ՀԳ-ի*

*13ՀՎ-ի 3-րդ ՀԳ-ի 2ՀԶ-ի հրամանատար, սերժանտ*

*«Սրեպիանակերտ», 30 մայիսի 2012թ.*

## ՏՈՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

**Հունիսի 1-ը Երեխաների պաշտպանության միջազգային օրն է, օրվա կապակցությամբ Սյունիականների քաղաքապետարանը, ինչպես նաև Կարբեր կազմակերպություններ նախաձեռնել էին մի շարք միջոցառումներ:**

Քաղաքապետարանի մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության բաժնի նախաձեռնությամբ Ստ.Շահումյանի անվան պուրակում տեղի ունեցած միջոցառմանն իրենց մասնակցությունն էին բերել քաղաքային համայնքին կից գործող մշակույթի օջախները՝ արվեստի դպրոցը, մշակույթի տունը, երաժշտական դպրոցի և մանկական ստեղծա-



գործական կենտրոնի սաները: Տոնի կապակցությամբ երեխաներին շնորհավորեց նշյալ բաժնի վարիչ Նարինե Դադայանը՝ նրանց մաղթելով անհոգ և առողջ մանկություն, կապույտ ու խաղաղ երկինք: Միջոցառմանը մասնակցած 100-ից



ավելի երեխաների համար քաղաքապետարանը նվերներ էր պատրաստել:

Տոնական միջոցառումներից անմասն չմնաց ԼՂՀ անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միությունը: Ամեն տարի կազմակերպությունը յուրահատուկ ձևով է նշում Երեխաների պաշտպանության միջազգային օրը: Վաղ առավոտից բազմամարդ էր Միության գրասենյակը, հավաքվածներից մեծ մասը երեխաներ էին:

Տոնի կապակցությամբ շնորհավորելով երեխաներին՝ ԼՂՀ ԱԿԱՀՄ նախագահ Վերա Գրիգորյանը նրանց մաղթեց խաղաղ ու երջանիկ մանկություն: «Շատերն այսօրվա ազատության և անկախության համար նվիրել են մարդու համար ամենաթանկը՝ կյանքը: Եվ դա արել են գիտակցաբար, հանուն ազգի և Արցախի, որ միշտ կանգուն մնա մեր լեռնաշխարհը և որպեսզի դուք՝ երեխաներդ, ապրեք, ստեղծագործեք, կարողանաք գիտելիքներ ձեռք բերել, դառնալ հասարակության, մեր ազգի համար պիտանի մարդիկ: Եղեք արժանի հետնորդները ավագ սերնդի, ջերմորեն սիրեք ու պահպանեք մեր հայրենիքը՝ անկրկնելի Արցախ աշխարհը», - իր խոսքում ասաց Վերա Գրիգորյանը:

Ի պատասխան՝ երեխաներն իրենց շնորհակալական խոսքում հավաստեցին սերն առ Հայրենիք, երդվեցին կիսատ չթողնել ավագների սկսած գործը:

Եկավ ցանկալի պահը: Տիկին Վերան նախօրոք պատրաստած նվերները հանձնեց երեխաներին:

Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների անունից շնորհակալական խոսք ասաց Էվելինա Միրզոյանը: «Մենք երախտապարտ ենք տիկին Վերային, որ անուշադրության չի մատնում մեր ընտանիքներին՝ լինի տոն կամ սովորական օր: Մա ևս մի սփոփանք է մեզ համար», - ասաց նա:

**Լամրա ԳՐԻԳՈՐՅԱՆ**  
«Ազատ Արցախ», 2 հունիսի 2012թ.

## ԵՐԵՒԱՆԵՐԸ ՄԵՐ ԱՊԱԳԱՆ ԵՆ

«Մենք պաշտում ենք մեր երեխաներին, նրանք մեր կյանքի ծաղիկներն են և երբեք առիթը բաց չենք թողնում մեր սերն ու զգացմունքներն արտահայտելու նրանց հանդեպ», - ասաց ԼՂՀ անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միության նախագահ Վ.Գրիգորյանն՝ ավելացնելով, որ անհայտության ուղին բռնած իր տղան ամուսնացած չէր և ժառանգ չուներ, բայց անկախ ամեն ինչից, ամեն տարի այս օրը ձգտում է հնարավորության սահմաններում ուշադրություն հատկացնել պատերազմից տուժած ընտանիքներում հասակ առնող երեխաներին: Հունիսի 1-ին՝ Երեխաների պաշտպանության միջազգային օրը, խաթարված մանկություն ունեցող 100-ից ավելի երեխաների համար հաճելի անակնկալ է մատուցվել ԼՂՀ ԱԿԱՀՄ գրասենյակում: Միության նախագահ Վ.Գրիգորյանի նախաձեռնած այդ քայլը դրվատելի և կարևոր է ոչ միայն նրանով, որ երեխաները ուշադրության կենտրոնում են, այլ նաև նրա համար, որ ծնողագուրկ, հաշմանդամ և անհայտ կորած ազատամարտիկների հարազատների երեխաներ են: Երեխաներ, որոնք մեր հասարակության մեջ առավել շատ են ուշադրության կարոտ:

ԱԿԱՀՄ գրասենյակում նվերները հանձնեց միության նախագահ Վերա Գրիգորյանը՝ նրանց հետ միասին ապրելով հրճվանք ու ուրախություն:

Իսկ երեխաներն իրոք որ ուրախ էին, դա մի լուսավոր պահ էր նրանց համար: Նրանց կյանքից դառնացած և ժամանակից շուտ հասկացող դարձած աչքերում ուրախություն էր փայլում, երբ իրենց փոքրիկ ձեռքերով վերցնում էին նվերները: Ինչ

խոսք, նվերներն այս անգամ փոխադարձ էին: Երեխաներն իրենց հերթին երգ ու ասմունքով ամբողջական դարձրին օրվա խորհուրդը՝ իրենց ուրախությամբ վարակելով նաև մեծահասակներին:

Երեխաների համար հունիսնեկյան նվերները պատրաստվել էին Միության ջանքերով: Չնայած ֆինանսական սուղ պայմաններին, այնուամենայնիվ, միության անդամները գտնում են, որ հունիսի 1-ը տարվա լավագույն տոներից մեկն է, և իրենք չեն կարող մատաղ սերնդին զրկել այդ փոքրիկ ու միաժամանակ նաև վարակիչ ուրախությունից:

**Երազ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**  
«Մարտիկ», հունիս 2012թ.

## ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐ ԵՐԵՒԱՆԵՐԻՆ՝ ԱԿԱՀՄ-ՈՒՄ

Հունիսի մեկին՝ երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրը, տոնական տրամադրություն էր տիրում Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միության հուշաթանգարանում: Հերթական անգամ երեխաների համար անակնկալ էր պատրաստել ԱԿԱՀՄ նախագահ Վերա Գրիգորյանը, ով արդեն 14-րդ տարին է, ինչ կազմակերպում է նմանօրինակ միջոցառումներ: Հարկ է հիշատակել, որ տարին երեք անգամ՝ հունիսի մեկին, սեպտեմբերի մեկին՝ Գիտելիքի օրը և, իհարկե, Ամանորին միության նախագահ Վերա Գրիգորյանն անակնկալներ է մատուցում երեխաներին՝ նվերների տեսքով: Հունիսի մեկին մի խումբ երեխաներ ներկայացել էին իրենց մայրերի, տատիկների կամ այլ հարազատների հետ, որոնց թվում կային ոչ միայն անհայտ կորած ազատամարտիկների, այլև՝ ռազմագերիների, զոհված քաջորդիների երեխաներ ու նրանց հարազատներ՝ թվով 115 հոգի: Նվերները ձեռք էին բերվել ԱԿԱՀՄ միջոցներով:

Ողջույնի խոսքով հանդես եկավ Վերա Գրիգորյանը, ով շնորհավորեց բոլոր երեխաներին՝ ցանկանալով նրանց ուրախ ու խաղաղ մանկություն:

- Թո՛ղ, այլևս պատերազմ չլինի, այսուհետ ապրենք, արարենք ու կառուցենք խաղաղ պայմաններում,- բարեմաղթեց նա:

Անհայտ կորած ազատամարտիկի այրի Էվելինա Աղաջանյանը, ով ներկայացել էր իր 2 թոռների հետ, շնորհավորեց բոլոր երեխաների տոն օրը՝ մասնավորապես նշելով.

- Ամեն տարի հավաքվում ենք այս գողորիկ վայրում, նախ՝

հարգանքի տուրք մատուցելով անհայտ կորած մեր ազատամարտիկների հիշատակին, այնուհետև, մեծ ուրախությամբ նշելով երեխաների իրավունքների պաշտպանության օրը: Երեխաները մեր կյանքի նպատակն են, և յուրաքանչյուր ծնող իր բալիկի լույս աշխարհ գալով՝ լուսավոր հույսեր է կապում նրա հետ՝ ստեղծելով այն ամենը, ինչը կնպաստի առողջ սերնդի դաստիարակությանը: Այս երեխաները մեր վաղվա օրվա հաջողության գրավականն են և իրենց անհայտ ճակատագրերով՝ հայրերի ու պապիկների կիսատ թողած գործի շարունակողը: Ես պատգամում եմ բոլոր ծնողներին՝ իրենց երեխաներին դաստիարակել հայեցի, նրանց մեջ սերմանել հայրենասիրություն, հարգանք՝ դիմացինի նկատմամբ և ընկերասիրություն: Թո՛ղ կյանքում նրանք լինեն նպատակասլաց և ամենուրեք սրբացնեն ու վառ պահեն իրենց օջախի ու հայրենիքի անունը,- իր խոսքն ավարտեց նա:

**Արևիկ ԲԱԲԱՅԱՆ**

*«Սրբեփանակերպ», հունիս 2012թ.*

## «ԵՍ ՍԻՐՈՒՄ ԵՄ ՔԵԳ, ՀԱՅՐԵՆԻՔ»

Ինչպես հայտնի է, ԼՂՀ «Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միություն» (ԱԿԱՀՄ) հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ ապրիլի 15-30-ը ՊԲ զորամասերի ժամկետային զինձառայողների միջև անցկացվել է ստեղծագործական շարադրությունների մրցույթ, որը նվիրված էր Մայիսյան եռատոնին: «Ես սիրում եմ քեզ, հայրենիք» թեմայով շարադրությունների մրցույթի արդյունքներն ամփոփվել են ԼՂՀ պաշտպանության նախարարության և ԱԿԱՀՄ ՀԿ համատեղ հանձնաժողովի կողմից: Մրցույթի եզրափակիչ փուլին մասնակցել են 19 զորամասերից 66 զինձառայողներ:



Մայիսի 15-ին ԼՂՀ ԱԿԱՀՄ ՀԿ թանգարանում տեղի ունեցավ «Ես սիրում եմ քեզ, հայրենիք» թեմայով ստեղծագործական շարադրությունների մրցույթում հաղթող ճանաչված, մրցանակային տեղեր գրաված և ակտիվ մասնակցություն ունեցած զինձառայողների փոփոխական խումբի անդամների ֆոտոպատկեր:

ցած զինձառայողների պարգևատրման արարողություն: Այն բացեց, ներկաներին ողջունեց ԼՂՀ ԱԿԱՀՄ ՀԿ նախագահ Վերա Գրիգորյանը, կարևորելով նման միջոցառումների անցկացումը բանակ-հասարակություն կապի հետագա ամրապնդման, զինձառայողների ստեղծագործական ունակությունները դրսևորելու հնարավորություն տալու առումներով:

Ստեփանակերտի քաղաքապետարանի ԿՍ բաժնի պետ Կառլեն Մարգարյանը ևս կարևորեց Եռատոնին նվիրված միջոցառումների շարքում ստեղծագործական շարադրությունների մրցույթի անցկացումը, իր հիացմունքն արտահայտեց զինձառայողների հայրենասիրական զգացմունքների արտահայտման այդ յուրօրինակ ձևի և հատկապես շարադրություններ գրողների անկեղծ խոսքի հանդեպ, մեջբերումներ անելով հաղթածների գործերից:

Այնուհետև հրապարակվեց ԼՂՀ պաշտպանության նախարար, գեներալ-լեյտենանտ Մ. Հակոբյանի հրամանը՝ Մայիսյան եռատոնին նվիրված «Ես սիրում եմ քեզ, հայրենիք» թեմայով ստեղծագործական շարադրությունների մրցույթի արդյունքների մասին: Հրամանում մեկ անգամ ևս կարևորվում է զինձառայողների մոտ հայրենասիրական թեմաներով ստեղծագործական ունակությունների գնահատումը, նրանց կողմից ազգային գաղափարների և հատկապես Արցախյան գոյամարտի դասերն արժևորելը, երիտասարդության ռազմա-հայրենասիրական դաստիարակության դերը բարձրացնելը: Այնուհետև, համապատասխան պատվոգրով ու թանկարժեք նվերներով պարգևատրվեցին 1-ին տեղ գրաված սերժանտ Արամ Փարսադանյանը, շարքային Արեգ Ասրաբյանը և շարքային Գարիկ Խաչատրյանը: Երկրորդ տեղ գրաված սերժանտ Արեն Մոսիսյանը, եֆրեյտոր Արմեն Մխչյանը ու շարքային Մերուժան Ահարոնյանը և երրորդ տեղ գրաված սերժանտ Մասիս Զարգարյանը, սերժանտ Մերյոժա Ավետիսյանը, եֆ-

րեյտոր Տիգրան Խաչատրյանը ևս պարզևատրվեցին համապատասխան պատվոգրերով և թանկարժեք նվերներով:

Պատվոգրով պարզևատրվել են նաև մրցույթին ակտիվորեն մասնակցած և լավ արդյունքներ ցուցաբերած 10 զինծառայողներ: ԼՂՀ պաշտպանության նախարարի հրամանով Արցախի երիտասարդների և ՊԲ զինծառայողների ռազմահայրենասիրական դաստիարակության գործում ունեցած զգալի ավանդի համար պատվոգրով և արժեքավոր հուշանվերով պարզևատրվեց նաև ԼՂՀ ԱԿԱՀՄ ՀԿ նախագահ Վերա Գրիգորյանը: Դրանք հանձնեց ԼՂՀ ՊԲ ռազմահայրենասիրական դաստիարակության և հասարակական կազմակերպությունների հետ կապերի բաժնի ավագ սպա, փոխզնդապետ Կ. Համբարձումյանը: Կազմակերպության նախագահը պատվոգրեր հանձնեց նաև ԱԿԱՀՄ–ի հետ համագործակցող անձանց, այդ թվում Կ.Մարգարյանին և փոխզնդապետ Կ. Համբարձումյանին:

Վ.Գրիգորյանը մի հաճելի առաքելություն ևս իրականացրեց, պարգևներ հանձնելու անհայտ կորած ազատամարտիկների հարազատներին:

Միջոցառումն ավարտվեց, անջնջելի հետք թողնելով հայրենիքի պաշտպանների հիշողության մեջ և դրական լիցքեր հաղորդելով նրանց՝ իրենց հայրենանվեր ծառայության մեջ չթերանալու ու հաջողություններ արձանագրելու համար:

*«Մարտիկ», 2 հունիսի 2012թ.  
/ս.լ./*



**ԱՄԵՆԱՅՆ ՎՃՌԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ ՊԻՏԻ ՇԱՐՈՒՆԱԿԵՆՔ  
ՍԿՍԱԾ ԳՈՐԾԸ. ՍԱ Է ՕՐՎԱ ԽՈՐՀՈՒՐԳԸ**



Արդեն տասնչորս տարի հունիսի 29-ը մեր հանրապետությունում նշվում է որպես Հայրենիքի համար նահատակվածների ու անհայտ կորածների հիշատակի օր:

Ամեն տարի այդ օրը ԼՂՀ անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միությունը (ԱԿԱՀՄ) միջոցառումներ է կազմակերպում՝ ընդգրկելով ոչ միայն կազմակերպության անդամներին, այլև երկրի իշխանություններին, մտավորականությանն ու հասարակական կազմակերպություններին: Օրը նշելու նպատակով Արցախի էին ժամանել հյուրեր Հայաստանից (ներկայացուցիչներ քույր կազմակերպությունից), Ֆրանսիայից:

Ինչպես արդեն տեղեկացրել ենք՝ օրվա կապակցությամբ և անհայտ կորած ազատամարտիկներին իրենց հարզանքի տուրքը մատուցելու նպատակով հունիսի 29-ին Հուշահամալիր այցելեցին Արցախի Հանրապետության նախագահ Բակո Մահակյանը, Ազգային ժողովի խոսնակ Աշոտ Դուլյանը, Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, կառավարության անդամներ, բարձրաստիճան սպաներ, անհայտ կորած ազատամար-

տիկների հիշատակը հավերժացնող խաչքարին ծաղիկներ և ծաղեպսակներ դրեցին:

Ինչ խոսք, ցանկացած պատերազմ արհավիրք է, անդառնալի կորուստներ, մարդկային բազում անհայտ ճակատագրեր: ԼՂՀ ԱԿԱՀՄ տվյալներով Արցախում անհայտ կորածների թիվը հասնում է 710-ի, որից 239-ը՝ զինծառայողներ (մնացածը խաղաղ բնակիչներ են): Հայ ժողովուրդը երախտագիտությամբ է հիշում նրանց, ովքեր իրենց անզնահատելի ավանդը բերեցին Արցախի պետականաշինության գործում: Այդ օրը Հուշահամալիրի մոտ տեղի ունեցած հավաքն ասվածի լավագույն վկայությունն է. բոլորը եկել էին երախտագիտության, խոնարհումի խոսքեր ասելու հարազատներին, հիշելու նրանց անուններն ու գործերը, հոգեպես հաղորդակցվելու քաջորդիների հետ: «Համոզված ենք, որ դուք ձեր որդիների անորոշ ճակատագրերի համար լացող մայրեր ու հարազատներ չեք միայն, այլ նաև թիկունք՝ մեր պետությանն ու բանակին, և ներկա ու ապագա սերունդները ձեր աղոթքների զորությամբ ու զորակցությամբ կշարունակեն մեր ազատամարտի նվիրյալների հերոսական պայքարն ու այն կհասցնեն վերջնահանգրվանին», - իր խոսքում ասաց ԼՂՀ ՊՆ ռազմահայրենասիրական դաստիարակության բաժնի ավագ սպա, գնդապետ Կարո Համբարձումյանը: Նա նշեց, որ 1993թ. մարտին ԼՂՀ պաշտպանության պետական կոմիտեի նախաձեռնությամբ ստեղծվել է ռազմագերիների, պատանդների և անհայտ կորածների հարցերով զբաղվող պետական հանձնաժողով, որը սկսել է համագործակցել ԵԱՀԿ առաքելության, Կարմիր խաչի միջազգային կոմիտեի և «Բժիշկներ առանց սահմանի» կազմակերպության հետ: Որպես բարի կամքի արտահայտություն՝ հանձնաժողովի նախաձեռնությամբ 1994թ. աղբբեջանական կողմին հանձնվեցին 160 ռազմագերի և 248 խաղաղ

բնակիչ: 1996թ. մայիսին, առաջնորդվելով «Բոլորը՝ բոլորի դիմաց» սկզբունքով՝ ԼՂՀ-ն ադրբեջանական կողմին հանձնեց ևս 64 ռազմագերի: Այնուհետև ամեն տարի հայկական կողմը շարունակել է գերիների հանձնումն ու փոխանակումը:

ԼՂՀ ԱԿԱՀՄ նախագահ Վերա Գրիգորյանի ելույթը ցատում էր, բողոք և ընդվզում՝ ուղղված միջազգային հանրությանը, ադրբեջանական իշխանություններին: «Ընդունված կարգ է՝ պատերազմի ավարտից հետո, անկախ դրա արդյունքներից, կողմերն առաջնահերթ խնդիրների շարքում լուծում են տալիս մարդասիրական հիմնախնդիրներին, որոնցից առաջինը հենց գերիների փոխանակումն է,- իր ելույթում նշեց Վ. Գրիգորյանը: - Այդ է վկայում աշխարհում տեղի ունեցած պատերազմների օրինակը: Սակայն նույնը չեղավ Արցախյան պատերազմից հետո: Չեղավ, որովհետև Ադրբեջանը մեզ համար ոչ միայն լավ հարևան, այլև քաղաքակիրթ թշնամի դուրս չեկավ: 1994թ. հրադադարից հետո ԼՂՀ-ն, առանց հապաղելու ու առանց նախապայմանի, հետ վերադարձրեց ադրբեջանցի գերիներին, այնինչ, հակառակ կողմն առաջօր ոչ մի համարժեք քայլ այդ հարցում չի ցուցաբերել՝ անընդհատ պնդելով, որ իրենց մոտ չկան հայ ռազմագերիներ: Թե՛ ռազմական գործողությունների տարեգրությունը և թե՛ փաստերը վկայում են հակառակը: Լավ ճանաչելով մեր հակառակորդին՝ բոլորս էլ հասկանում ենք, որ արգելափակման վայրերում տանջամահ են արվել գերի ընկած շատ հայ մարտիկներ, քանզի չի եղել նրա ձեռքը բռնող ուժ, չեն ձեռնարկվել միջազգային պարտադրանքի գործուն միջոցներ: Այդ դեպքում որտե՞ղ են մեր տարաբախտ զավակների աճյունները, ինչո՞ւ մեզ չեն հանձնում նրանց մասունքները: Թող գոնե դա արվի՝ որպես մարդասիրական կամքի ուշացած արտահայտություն...»: Միության նախագահը շնորհակալություն հայտնեց ԼՂՀ կառավա-

րությանը՝ կազմակերպությանը հնարավորինս աջակցելու համար, և այն բարեգործական կազմակերպություններին ու առանձին անհատներին, ում բարոյական կամ նյութական աջակցությանն են արժանացել երբևէ: Միության վարչությունը ձգտում է իր ուշադրության կենտրոնում պահել հատկապես անկողնուն գամված՝ խնամքի, հոգածության, նույնիսկ բարի խոսքի կարիք զգացող անդամներին: Շատերը ոչ այնքան ծերությունից, որքան՝ ծանր վշտին չդիմանալով՝ հեռացել են կյանքից:

Արցախի թեմի առաջնորդի խոսքը ոչ միայն սփոփանք էր, այլև կոչ՝ հարազատ ժողովրդին: «Անհասցե չեն մեր անհայտ կորած ազատամարտիկները. առաջին հասցեն հայրենի հողն է և այս հուշակոթողը: Մենք չգիտենք՝ ում ինչ է սպասվում, բայց մի բան հստակ գիտենք՝ մենք բռնել ենք ճշմարիտ, արժանապատիվ ուղի: Մենք ոչ միայն հայրենիքի պաշտպաններ ենք, այլև արդարության զինվորներ: Այսօր այստեղ ենք՝ մեկ անգամ ևս ուխտելու, որ ամենայն վճռականությամբ պիտի շարունակենք առաջ տանել մեր սկսած գործը: Եվ տանելու ենք ու նաև՝ հաղթելու ենք», - ասաց Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը:

Վերջում Հայ Առաքելական եկեղեցու սպասավորների մասնակցությամբ Արցախի թեմական առաջնորդը կատարեց ոգեկոչման արարողություն:

## **ՏԱՌԱՊԱՆՔԸ, ՀԻՐԱՎԻ, ԱԶԳՈՒԹՅՈՒՆ ԶԻ ՃԱՆԱԶՈՒՄ**

Հիշատակի օրվան նվիրված միջոցառումների շրջանակում նույն օրը ԼՂՀ ԱԿԱՀՄ գրասենյակում տեղի ունեցավ միության նախագահ Վերա Գրիգորյանի «Հուշամատյան-2» գրքի շնորհանդեսը:

Գրքում ընդգրկված են 2008-2011թթ. ԼՂՀ ԱԿԱՀՄ հուշամատյանում կատարված գրառումները, որոնք վկայություններ են այն իրողության, որ Արցախյան պատերազմում անհայտ կորած ազատամարտիկների հարազատների վիշտը ոչ միայն համազգային է, այլև՝ համամարդկային: «Հուշաթանգարան այցելածների գրառումներում այնքան յուրատիպ, անկեղծ ու անպաճույճ մտքեր են արտահայտված, որ գիրքը կարելի է կարդալ մի շնչով: Դրանցում արտացոլված է ոչ միայն տղաների կորստյան վիշտը, այլև հայի ոգու ամրությունն ու ապագայի հանդեպ հավատը», - իր խոսքում ասաց պատմական գիտությունների թեկնածու Մհեր Հարությունյանը: Նրա կարծիքով՝ հուշամատյանը կունենա շարունակություն, քանզի հուշաթանգարան այցելողները նույնպես կլինեն անվերջ:

Գրքի մասին իրենց սրտի խոսքն ասացին ու Վերա Գրիգորյանի կատարած աշխատանքը բարձր գնահատեցին «Զինվոր» համակարգող խորհրդի անդամ Ժ. Մեսրոպյանը, «Ծիրանավոր» ՀԿ նախագահ Ա. Դավթյանը, «Երիտասարդության կամք» ՀԿ նախագահ Ա. Գրիգորյանը, «Անմար կրակներ» ՀԿ նախագահ Ա. Բարխուդարյանը՝ Հայաստանի Հանրապետությունից, Ժ. Բաղդասարյանը՝ Լիոն քաղաքից (Ֆրանսիա), ով անհայտ կորած Ալինա Բաղդասարյանի քույրն է (Մարադա գյուղից): Կազմակերպության վարչության որոշմամբ Վ. Գրիգորյանը շնորհակալագրեր հանձնեց նրանց:

**Լատրա ԳՐԻԳՈՐՅԱՆ**  
03.07.2012թ.

## ՈԳԵԿՈՉԵԼՈՎ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՏՈՒՆ ՉԳԱՐՉԱԾ ՀԱՅՈՐԳԻՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԸ

Արդեն 14-րդ անգամն է, ինչ Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միությունը Արցախի պետական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդիսավորությամբ ոգեկոչում է ազատամարտում ծավալված ռազմագործողությունների ժամանակ զոհված ու անհայտ կերած զինվորների հիշատակի օրը:

Այդ կապակցությամբ հունիսի 29-ին Ստեփանակերտի հուշահամալիրում՝ անհայտ կորած մարտիկների հիշատակին տեղադրված խաչքար-հուշարձանի մոտ էին հավաքվել ազատամարտիկների հարազատներ, պետական այրեր, քաղաքական, հասարակական կառույցների պատասխանատուներ, արցախյան պատերազմի սպաներ: Պատերազմից տուն չվերադարձած տղաների հիշատակը հարգելու համար հուշահամալիր էին այցելել նաև ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը, Ազգային ժողովի ղեկավար Աշոտ Ղուլյանը, Հայ Առաքելական եկեղեցու Արցախի հոգևոր թեմի առաջնորդ Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը՝ ովքեր ծաղիկներ դրեցին հուշարձանի պատվանդանին:

Ուղիղ 20 տարի առաջ, 1992-ի հունիսի 29-ին, հերթական ծանր ու դժվարին ռազմագործողությունն իրականացնելիս «Արարո» ջոկատը հայտնվել էր դժոխսային շրջափակման մեջ: Ջոկատը Հասանդայա բնակավայրի մոտ հերոսաբար մղված վերջին մարտում կորցրել էր իր կազմի ավելի քան 2 երրորդին: Նրանցից յուրաքանչյուրը մարտի ժամանակ իրեն դրսևորել էր որպես խիզախ ու համարձակ, գաղափարապես հասուն, մեծ ուխտի երդվյալ զինվոր: Ավաղ, հարազատներն առ այսօր հավատով պահում են նրանց ճամփան, իսկ տղերքն ուշանում են...

Հատկանշական է, որ «Արաբո» ջոկատի 79-ը անհայտ կորածներից 29-ը արցախցիներ են հանդիսանում: Նրանց ծնողներից, հարազատներից շատերը չեն հուսալքվում և շարունակում են իրենց փնտրտուքը: Մարտակերտցի Ժորա Կարապետյանը, ու զույգ տղաները՝ Արմենն ու Կամոն անհետացել են դաժան կռվում, չի հուսալքվում, իսկ Ժենյա Մնացականյանը, ում Արտակ և Սպարտակ որդիներն են արժանացել նույն դաժան ճակատագրին, ամեն առավոտ մոմ է վառում և աղոթում նրանց համար: Միայն հատ ու կենտ տղաների է հաջողվել հրաշքով փրկվել: Թե այդ օրը ինչպիսի դաժան ճակատագրի են դատապարտվել երդվյալ մարտիկները, մղձավանջային տեսիլների մասին ցավով են հիշում նրանց ընկերները՝ Էլբրուս և Էվադիկ Բուդաղյանները, Գիմո (Գմիտրի) և Արշավիր Գրիգորյանները, որոնք ամեն տարի այցելում են Ստեփանակերտի հուշահամալիր՝ խոնարհվելով մարտական ընկերների հիշատակի առաջ, ծաղիկները դնում խաչքար-հուշարձանին:

«Այսօր մեզ այստեղ է բերել բոլորիս ընդհանուր ցավը, անհայտ կորած մեր տղաների՝ զերության զնդանում ցավը հաղթահարելու և բարոյական պայքարը շարունակելու նպատակը: Թշնամուն չի հաջողվի կոտրել ոչ ազատության մեջ գտնվողներիս, և ոչ էլ նրանց կամքը,- իր խոսքում ասաց Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միության նախագահ Վերա Գրիգորյանը: - Կյանքը երբեք կանգ չի առնում: Այն մշտապես առաջ է շարժվում՝ երկրի 20-ամյա հաջողություններին ու հոգսերին զուգահեռ: Բայց այն կարոտը, որ կուտակվել է անհայտ կորածների հարազատների սրտերում, բառերով արտահայտել հնարավոր չէ»...

Իր գլխավորած կազմակերպության, անհայտ կորած ազատամարտիկների հարազատների անունից Վ. Գրիգորյանը շնորհակալություն հայտնեց ԼՂՀ նախագահ Բակո Սահակ-

յանին՝ «Արարո» ջոկատի տղաների սխրանքը բարձր գնահատելու ու նրանց մարտական պարգևների արժանացնելու համար:

Հիշատակի օրվա առթիվ իր խոսքում ԼՂՀ պաշտպանության բանակի ներկայացուցիչ, գնդապետ Կարո Համբարձումյանը, վստահեցնելով, թե հերոս տղաների առաքելությունը երբեք չի մոռացվի, միաժամանակ իր վրդովմունքը հայտնեց այն առնչությամբ, որ որպես մարդասիրական, բարի կամքի դրսևորում, հայկական կողմն առ այսօր թվով 164 ազերի զինվորներ և 240 քաղաքացիներ է վերադարձրել հակառակորդին, մինչդեռ «փոխհատուցումը» միանգամայն աննշան է եղել ադրբեջանցիների կողմից: Արցախի հոգևոր թեմի առաջնորդ Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, ավստասանք հայտնելով անհայտության մեջ գտնվող հայորդիների համար, այն միտքը հայտնեց, որ «գոցված ճամփաները մի օր անպայմանորեն կբացվեն և տղաները կվերադառնան հարազատ օջախներ»: Սրբազանը վերջում պատարագ մատուցեց անհայտ կորած ազատամարտիկների հիշատակին:

Նույն օրը «Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միություն» կազմակերպության նստավայրում կայացել է կառույցի ղեկավար, անհայտ կորած ազատամարտիկի մայր Վերա Գրիգորյանի «Հուշամատյան-2» նոր գրքի շնորհանդեսը:

*Մեի.լրատվություն  
«Հայրենիք», 04.07.2012թ.*



## ՀՈՒՅՄՆ ՈՒ ՀԱՎԱՏԸ ԳԵՌ ՉԵՆ ՀՈԳՆԵԼ

***Ամեն քարի հունիսի 29-ին խնկարկվում է հայրենիքի համար նահապատկածների և անհայտ կորած ազատամարտիկների հիշատակը:***

Հիշատակի օրվա պետական վավերացումն է, որ նորակախ պետությունն ամեն ինչ անում է, որպեսզի հիշվեն բոլոր նրանք, ովքեր հայրենյաց կանչով փառավորեցին իրենց անունն ու գործը, դարձան հաղթանակի ավետաբերներ, իսկ անհայտ կորած ազատամարտիկների հարցում հնարավորինս աշխատում են պարզորոշություն մտցնել նրանց ճակատագրում:

Այդ տղաների համար հայրենիքի ազատագրությունը գերնպատակ էր: Արյան կանչով հանուն գալիք բոլոր սերունդների երջանկության ու պայծառ ապագայի նրանք չվարանեցին փրկության գոհասեղանին դնելու ամենաթանկը...

Անհայտ կորած ազատամարտիկների սպասման ծանր ու հոգեմաշ տարիներն ապրող հարազատների համար սպասումն ու տոկալը ոչ այլ ինչ է, քան հող հայրենիի կանչով գոյամարտի հորձանուտը նետված և հերոսացած հարազատների ընդհատված խիզախումի շարունակում, ապրելակերպով ու գործելաոճով նրանց նվիրական գաղափարների ու իղձերի մարմնավորում: Եվ տարիներն ինչքան էլ անցնում են, այնուամենայնիվ, նրանց հույսն ու հավատը չի հոգնում: Մայրական սրտի համար պարզապես դժվարընկալելի է, որ այսքան տարի հետո անհայտության հորիզոններում հայտնված իրենց զավակներն ու հարազատները հնարավոր է որ ողջ չլինեն...

Հետպատերազմյան այս փխրուն հրադադարի տարիներին

մենք մեզ և աշխարհին ապացուցեցինք, որ գուր չէին գոհողություններն ու արյունը հանուն մի այնպիսի սրբազան գործի, ինչպիսին է հայրենիքի պաշտպանությունը: Միայն նորանոր հաղթանակներով ու պետականաշինության գործընթացով կարող ենք սրբագործել նրանց թափած արյունը: Արյուն, որ գին չունի, սակայն փրկագինն է Ազատության և Անկախության ուղին բռնած ժողովրդի համար:

Մեր երկիրը ժամանակակից, ժողովրդավարական ու ճանաչված դարձնելու համար այսօր իրենց ջանքերն են ներդնում նաև գոհված և անհայտ կորած ազատամարտիկների հարազատները՝ հաստատական ու վճռական ընթանալով դեպի ազատ, անկախ ու հզոր հայրենիք կերտելու գաղափարը:

**Երազ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

*«Մարտիկ», 25 հունիս 2012թ.*

## **ՔԱՆԻ ԴԵՌՆ ԶԻՆՎՈՐԳ ԿԼԻՆԻ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԶԱՎԱԿԳ, ԴՈՒ ԱՆՊԱՐՏ ԿԼԻՆԵՍ, ՀԱՅՐԵՆԻՔ**

Երբ խոսում ենք պատերազմական պայմաններում անհայտ կորածի մասին (մանավանդ՝ եթե նա ոչ թե դիրքում գտնվող զինվոր է եղել, այլ՝ խաղաղ բնակիչ), թվում է՝ ասելու քիչ բան կլինի...բայց դա լուր թվում է: Իսկ իրականում բավական է խորանաս մարդու անհայտ կորչելու... հանգամանքներում, որպեսզի հայտնագործես ցնցող իրողություններ՝ բացահայտելով այն ճշմարտությունը, որ զինվորը միայն դիրքում զենքով կանգնածը չէ. կա այլ կարգի «զինվորություն» էլ՝ ում զենքն իր... լեզուն է և պահվածքը: Եթե այն բարձր պահվածք է բարեկամի համար, ուրեմն՝ անմատչելի պիտի լինի թշնամու համար...Եվ ուրեմն՝ նման մարդը, ով էլ լինի մասնագիտությամբ, նաև զինվոր է, հերոս զինվոր: Այս մտքերը պաշարեցին ինձ վերջերս, երբ, անգամ չգիտեմ՝ որերո՞րդ անգամ, նայեցի Ալվինա Բաղդասարյանի՝ մեր հուշաթանգարանում գտնվող նկարին:

...Ես նրան էի նայում քրոջ՝ Ժոզեֆայի հետ միասին, որը Ստեփանակերտ էր ժամանել հեռավոր Լիոնից (Ֆրանսիա), որտեղ նրան նետել է դաժան ճակատագիրը. Արցախից հեռացել է բռնագաղթի ալիքին...

Ժոզեֆան Արցախ էր ժամանել՝ Անհայտ կորած ազատամարտիկների Հիշատակի և Սպասումի օրվա ամենամյա հանդիսությանը մասնակցելու համար: Տարի առաջ էլ մյուս քույրը՝ Էլզան էր նույն Լիոնից ներկայացել նշած օրվան...Մասնագիտությամբ բժշկուհի է Ժոզեֆան: Նրան ուղեկցում էր հա-

մագյուղացի Ժաննա Պետրոսյանը, որը Ալվինայի աշակերտուհիներից է... Այնպիսի մանրամասներ պատմեց ուսուցչուհու մասին, որը տարիների ընթացքում հազարավոր պատանի մարադացիների քիմիա-կենսաբանություն է դասավանդել, որ օրեր շարունակ չէի կարողանում հոգեկան հանգիստ գտնել...

Ալվինան ահավոր Սպանդի օրը գերված և թուրքական գերությունում անհայտության դատապարտված 34 մարադացիներից մեկն է: Ժաննան ինձ ու ժողովային էր վերապատմում այն ամենը, ինչ ժամանակին լսել էր նույնպես գերության մեջ հայտնված՝ նույնպես մարադացի Ռիտա Կարապետյանը, որին հետո հաջողվել է ազատվել գերությունից: Բայց մինչ Ռիտայի վկայությանը հասնելը, կուզենայի ընթերցողին ներկայացնել Վաստակավորի ուսուցիչ Ալվինայի Բաղդասարյանի նկարագիրն՝ ըստ Ժաննայի:

- Մեզ համար նա պաշտելի մարդ էր: Այո, այո, նախ՝ մարդ, հետո՝ ուսուցիչ: Նրա մեջ խտացած էին մարդկային ամենալավ գծերը: Նա իրենից տեսակ էր ներկայացնում. միայն բարեմասնություններով օժտված մարդու տեսակ, որպիսին հավադեպ է պատահում կյանքում: Գոնե ինքս նրա նման երկրորդին չեմ հանդիպել... Մարդկանց հարեհաս լինելը, օգնելը նրա համար կեցության թիվ 1 կանոնն էր, ազնիվ խոսք: Իսկ ինչպիսի՞ հայրենասեր սիրտ էր բաբախում նրա կրծքի տակ: Երբ Մարադան օրուգիշեր պաշտպանում էին մեր տղաներն ու ամուսինները, և չկար, չէր հերիքում ոչ ուտելիք, ոչ ծխախոտ, ընկեր Բաղդասարյանն իր ռոճիկով, չգիտես որտեղից ու ինչպես՝ գտնում-գնում էր կենսականորեն անհրաժեշտ մթերքները (այն դաժան ու լարված օրերին տղամարդկանց համար, այո, ծխախոտն էլ էր մտել դրանց կարգը), ջոկատայիններին

ապսպրում՝ անպայման կգաք ու կճաշեք մեր տանը: Բոլորին: Երկհարկանի ընդարձակ տուն ուներ, և ծառայեցնում էր ընդհանուր գործին, մեր պայքարին:

Ժաննան հուզվում է, ձայնը դառնում է կերկերուն: Հուզված ենք և մենք: Այսինքն՝ ավելի շատ՝ ես, որովհետև Ժողեֆան, բնականաբար, լավ գիտեր այդ ամենի մասին: Ժողեֆան: Նա ավելի շատ տարված էր սիրելի քրոջ լուսանկարով. նայում էր այնպես, որ օդում կարող էիր ընթերցել մտքերը. «Բարև, քույրիկ, տեսնո՞ւմ ես՝ եկել եմ, եկել եմ քեզ հանդիպելու, քո Օրը՝ այստեղ լինելու... Մենք ձեզ երբեք չենք մոռանա, սիրելիս»:

Ռիտա Կարապետյանի պատմածից:

Որպես պատանդներ (իրականում՝ գերիներ) մեզ միասին էին պահում: Ալվինան ոսկե ատամներ ուներ, աքցանը տվեցին ձեռքն ու պահանջեցին ...սեփական ձեռքով մեկիկ-մեկիկ հանել սեփական ատամները: Լավ իմանալով հանդերձ, թե ինչ է հետևելու իր մերժմանը, Ալվինան «ձեռնոց նետեց» գազաններին. «Չեզ ոսկե ատամներ են պետք՝ ինքներդ հանեցեք»: Եվ նրանք հանեցին...

Ալվինան ձայն չէր հանում, ու դա ավելի էր կատաղեցնում նրանց: Մեկն ատրճանակը հանեց ու նրա ծունկին նշան բռնելով՝ հարցրեց.

- Ասա, Ղարաբաղն ո՞ւմն է:

- Ղարաբաղը հայինն է,- արյան փրփուրը բերնին՝ հաստատուն ձայնով պատասխանեց ուսուցչուհին:

- Չենդ կտրի, դանջող, նորից եմ հարցնում՝ ո՞ւմն է Ղարաբաղը:

- Ղարաբաղը միշտ էլ եղել է հայինը՝ հայինն էլ կմնա,- արյուն թքելով՝ գոչեց Ալվինան: Այդ պահին էլ հնչեց կրակոցը...

Ալվինայի ծունկը փշրվել էր, արյունը վարար հոսում էր վեր-  
քից...

Ես այլևս չկարողացա տիրապետել ինձ, ճշոցով նետվեցի  
նրա կողմը, թեև ոչնչով օգնել չէի կարող, չէին թողնի, բայց  
թուրք գազանները ինձ ևս ծեծելով՝ քարշ տվին, տարան ուրիշ  
սենյակ: Պատի մյուս կողմից էլ, սակայն, ինձ հասանելի էր  
հա՛ կրկնվող հարցը՝ հը, հիմա կասե՞ս ճիշտը, թե ումն է Ղա-  
րաբաղը... և՛ նույն պատասխանը. հայի՛նն է, սրիկաներ, հա-  
յի՛նը: Հետո էլի հնչեց կրակոց...բայց թե դա ինչ էր նշանա-



կում՝ արդյոք, երկրորդ ոտքին էին կրակել, թե՞...չկարողացա  
ոչինչ պարզել: Ինձ ուրիշ վայր տեղափոխեցին...

Այդպես ահա: Եվ մեր թանգարանում ուղիղ 710 անհայտ  
կորածի դիմանկար կա...

710 անձնական գործ:

710 կենսագրություն՝ ավա՛ղ, սեղմ ու համառոտ: Ո՛վ կա-

սի, թե գերության ու անհայտության փշոտ գրկում նրանցից յուրաքանչյուրի հետ ինչեր են պատահել-պատահում... Ինչեր են հաղթահարել-հաղթահարում...

710 անհայտ կորածներ, որոնցից 239-ը՝ համազգեստ կրող զինվորներ էին, մյուսները՝ խաղաղ բնակիչներ: Ինձ թույլ չեն տա կասկածել, որ 710-ին էլ կարելի է յուրատիպորեն զինվոր կոչել՝ հայրենյաց հողի անդավաճան զինվոր՝ պատրաստ կրելու, տանելու ամեն չարչարանք՝ ի անուն Արցախի հայեցիության...

Մարաղան հայերը հեշտ չեն հանձնել: Եվ ի՞նչ հանձնելու մասին է խոսքը, երբ գյուղը գտնվում էր գազանի հենց քթի տակ, գազանի բերնին... Մարաղան պաշտպանելով նահատակվեցին ինքնապաշտպանական ջոկատի անդամներ Գագիկ Ավանեսյանը, Միշա Գաբրիելյանը, Լեռնիկ Գալստյանը, Վանյա Հարությունյանը, Վանյա Հովհաննիսյանը, Ալիկ Ավագիմյանը, Վարդան Հարությունյանը, Կիմա Բաղդյանը, Կամո, Շամո, Գագիկ Սարգսյանները և ուրիշներ: Վերջին զինվորի մահից հետո տեղի ունեցածը մարդկային լեզուն ի զորու չէ ներկայացնել... Քրոնոլոգիան սարսեցուցիչ է: Նրանց, ում հաջողվել է հրաշքով փրկվել կոտորածից կամ վերադառնալ գերությունից, նրանց՝ ցեղասպանության ականատեսների պատմածներն ի մի բերելով անգամ անհնար է թվում լիովին ներկայացնելն այն ամենը, ինչ տեղի է ունեցել ապրիլյան այն ահավոր օրը, երբ թուրքը մտավ գյուղ:

Թո՛ւրքը՝ գազանացած երկոտանին, գազանացած ասունը: Կտոր-կտոր արված մարմիններ, կրակի ճարակ դարձրած՝ ածխացած մարմիններ, պղծված օրիորդներ... Յոթ տասնյակը բոլորած Նորա Ստեփանյանի գանգը փշրել էին, ուղեղը շաղ

տվել հողին: Համո Առաքելյանը երկար տարիներ հարևան Միր-բաշիրում էր աշխատել՝ թուրքերի գյուղտեխնիկան նորոգել, անգամ նրան՝ 90 տարեկանին շխնայեցին, Բորիկ Վարդանյանը ջրբաշխ էր աշխատում՝ թուրքերի պլանտացիաներին ոռոգման ջուր բաց թողնում, նրա գլուխը կտրել-տարել են իրենց հետ, մարմնի վրա երկտող թողել. «Ջրաբաշխման արդարություն էիր ուզում՝ ստացիր»...

Ի՞նչ գիտենք մենք պատանդների մասին: Այն մասին, թե նրանցից ով է մահացել և ով է դեռ տառապում գերության մեջ: Ի՞նչ անեն նրանք, ում տառապանքի, ինչպես նաև սեփական պահվածքի ճշմարտության մասին վկայող՝ Ռիտայի նման փրկված բախտակիցներ չունեն: Անհայտության շղարշի տակ է նրանց ճակատագիրը՝ մեզ համար անհասանելի մանրամասներով: Եվ սակայն մենք գիտենք, որ նրանք հայ են, ուրեմն և՛ հայի համբերությամբ ու արժանապատվությամբ են տանում բոլոր զրկանքները, կտտանքներն՝ այնպես, ինչպես դրանց արժանապատվորեն դիմակայում էր Ալվինա Բադդասարյանը, որի մասին է կարծես ասված, թե...՝ առյուծին էզ ու արու չի լինում: Մի՞թե նա՝ Ալվինան. նորանկախ ու հաղթած երկրի մայրը, վաստակավոր ուսուցչուհին իր կերպարով, գուցե արդեն... հետմահու, արժանի չէ կառավարական պարզևի: Ես այս մասին բարձրաձայնում եմ՝ խոնարհաբար առաջարկելով, որ հենց այդպես էլ արվի: Թե՞ Սոսեի ու նրա նմանների մասին միայն լավ երգել գիտենք: Ալվինան իր կերպարով չի զիջում հայոց պատմության ոչ մի հերոսուհու, ոչ էլ «կոսմոդեմ-յանսկայաների»... Համաձայն չեք:

Հաշմանդամության հասած՝ կաթված տարած 84-ամյա Ժոզեֆան, ձեռնափայտին հենված, դժվարանում է ուղիղ նայել



ֆոտոօբյեկտիվին. նրա հայացքն, իր մեջ ամբարած բոլորի ցավը, ուղղված է մնում ցուցավահանակներին տեղադրված նկարներին... Դու հանգիստ եղիր, Ժոզեֆա, Ալվինայի նկարի մոտ չեն թառամելու ծաղիկները. մենք դրանք միշտ փոխարինելու ենք թարմերով... Եվ իմացիր. Արցախն անկոտրում է, Արցախը միշտ կմնա Արցախ՝ քանի դեռ կունենա Ալվինայի նման դուստրեր:

Իսկ դու, սիրելի ընթերցող, երբ էլ որ լսես «անհայտ կորած ազատամարտիկ» և «հայ պատանդ» բառակապակցությունները, մի պահ հիշիր այս ամենի մասին... Հիշիր անհայտ կորած «արաբոյականներին», քաջ հետախույզ Հենրիկ Հայրապետյանին, Բայիլի բանտում տանջամահ արված՝ բայց մինչ վերջ թուրքի, այսպես կոչված, ողորմածությանը չհանձնված Արկաղի (Նապոլեոն) Հայրիյանին, որի գոնե աճյունը վերադարձավ հայրենիք... «Խաղաղ բնակիչ» բուժքույր Նադյային հիշիր, ուսուցչուհի Ալվինային և մյուս բոլորին, որոնք մեզ հետ «խոսում» են իրենց անհայտության հեռվից, բայց ոչ՝ անհայտության լեզվով. խոսում են հայերեն, տառապում ... հայերեն: Համբերության կոչիր նրանց՝ ովքեր դեռ կենդանի են, և անմահության՝ նահատակվածներին:

Ողբանք մեռելոց՝ կոչենք ապրողաց: Այսպես ասած՝ «տեր ու ծառայով», այսինքն՝ Ժողովրդովի:

**Վերա ԳՐԻԳՈՐՅԱՆ**  
*ԼՂՀ ԱԿԱԶՄ նախագահ,  
անհայտ կորած ազատամարտիկի մայր*

**ՀՈՒՆԳԱՐԻԱՆ ՊԵՏՔ Է ՈՒՂՂԻ ԻՐ ՍԽԱԼԸ,  
ՄԱՐԳԱՍՊԱՆԸ՝ ԼԻՈՎԻՆ ԿՐԻ ՊԱՏԻԺԸ**

*Ինչ-որ մեկն ասել է աշխարհում ամենաքանկ կապիտալը մարդն է: Ըհշտ է: Մի պահ պարկերացնենք մոլորակն առանց մարդու... Աստուծո սրեղծած առանձնյակներից չէ որ միայն նրան է փրված գիտակցություն: Ասել է թե՛ գիտակցված գործունեություն, գիտակցված սեր, գիտակցված...արելություն նաև: Գժբախարաբար այո: Բայց եթե արդար է փվյալ մարդու արելությունը՝ միջված է չարի ճանապարհը փակելուն, ուրեմն ավելորդ չէ: Միանգամայն ուրիշ բան է պաթոլոգիայով պայմանավորված արելությունը. մի զգացում, որ ծառայում է Մարանային ոչ թե Աստուծուն...*

Ռամիլ Սաֆարովի սրտում բուն դրած ատելությունը՝ ատելություն պարզապես մարդու հայ տեսակի դեմ, ծագում է հիվանդ արմատից: Սպանել քնած մարդուն: Մարդ՝ որին, որոշակի իմաստով վերցված, կարելի է կոլեգա կոչել, մարդ՝ որի կյանքը դեռ առջևում էր: Ոչ, ադրբեջանցի ճիվաղը լոկ մի անձի չէ, որ գրկել է ապրելու իրավունքից՝ խաչ է քաշել նաև այն թռռների և ծոռների բազմության վրա՝ մի ամբողջ գերդաստան հայ մանուկների վրա, որոնց նախապապը... Գուրգեն Մարգարյանն էր լինելու՝ եթե կենդանի մնար: Կոնկրետ ես՝ անհայտ կորած զինվորի մայրս, այս լույսի տակ եմ առնում խնդիրը:

Մենք մեր զավակներին կորցրինք պատերազմում, իսկ մահը մարտի դաշտում գրեթե «բնական» երևույթ է: Սակայն խաղաղ օրով, այն էլ՝ երրորդ՝ չեզոք երկրում, եվրոպական արժեքներ դավանող երկրում, մարդուն սպանելը ազգային պատկանելության համար, իրոք, ճիվաղային գազանություն է: Ինչպե՛ս կարելի է արդեն իսկ ցմահ դատապարտված գազանին,

որի տեղը միայն վանդակն է, ազատ արձակել: Հունգարիայի կառավարությունը, ինչ ձևով էլ որ արդարանալու լինի, քրեական հանցագործի արտահանձնումով հենց դրա ուղին է բացել, Սաֆարովին ազատություն պարգևողը Հունգարիան էր՝ անուղղակիորեն, Ադրբեջանի նման պետությունից ախր և հատկապես նրա այսօրվա դեբիլ նախագահից ուրիշ ինչի՛ կարելի էր սպասել... Հազիվ թե Եվրոպայի երկրներին հայտնի չեն Հայոց ցեղասպանության արմատները և այն, որ սաֆարովների նմանների հոգում ամրակայված ցեղասպանության վիրուսն է պատճառ քստմների սպանությունների:

Մինչև ե՛րբ է «դեղին սատանան» քանդելու մարդկային լավագույն արժեքների հիմքը: Մինչև որտե՛ղ է ոտնակոխ արվելու արդարությունը: Ես տարբերություն չեմ տեսնում 1988-ի սումգայիթյան զոհերի և Գուրգենի միջև: «Սումգայիթը» Օրենքի կողմից պատժի չարժանացավ, բայց Գուրգենի դեպքում, հազարի՛ց մեկ, գործեց, վերջապես, Արդարության օրենքը. Սաֆարովը դատապարտվեց ցմահ ազատազրկման՝ օտար երկրի բանտում պատիժը կրելու վճռով:

Ընդամենը 6 տարի անց նրա արտահանձնումն Ադրբեջանին և վերջինիս նախագահի չափ չիմացող լկտիությունը (ցմահ դատապարտված մարդասպանին ընդունել հերոսի նման և տալ մայրի կոչում- այդաստիճան՝ ցինիզմ) չպետք է հանդուրժի արդարության գաղափարը դավանող ոչ մի երկիր, միջազգային ոչ մի կառույց, ոչ մի անհատ:

Ինձ նույնիսկ թվում է, թե այդ սպանությունն՝ ավարտի իր սցենարով, հատուկ կազմակերպված է եղել՝ որոշակի նպատակով: Բորբոքել Հայաստանին, մղել չմտածված գործողությունների՝ դրանից բխող հետևանքներով: Թե՞ պատմությանը հայտնի չեն նման դեպքեր, հիշենք թեկուզ սերբ թագաժառանգ Ֆրանց Ֆերդինանդի սպանությունը, որն առաջին համաշխարհային պատերազմի ծագման պատրվակ ծառայեցվեց...

Ինչո՞ւ հենց հիմա տեղի ունեցավ արտահանձնումը, տեսնված քան է, կամ՝ հաճա՞խ է պատահում, որ մեկ մարդու համար, այն էլ՝ հանցագործի, երկիրը 3 միլիարդ եվրո վճարի...

Այդ ո՞ւմ, կամ ավելի ճիշտ՝ ո՞ր, փողերն է այդպես շռայլում Իլիամ Ալիև: Այն դեպքում, երբ Ադրբեջանի կեսը քաղցած է քնում-վեր կենում... Բա միլիոնավոր փախստականների անտուն-անմիջոց վիճակի մասին են հա՛ փողհարում միջազգային ատյաններում, նաև՝ ուր պատահի (ամեն տեղն էլ ձեռք է տալիս իրենց), այդ միլիարդները նրանց բարեկեցությանը ծառայեցնելու փոխարեն ինչո՞ւ են թալանում հարազատ շարքային հարկատուներին: Մարդասպաններ աճեցնելու և բազմացնելո՞ւ համար...

Այսօր յուրաքանչյուր հայի պարտքն է զսպվածություն դրսևորել, ինչը չի նշանակում աչք փակել տեղի ունեցածի առջև: Մենք բոլորս՝ երկու հայկական պետություններում ապրողներս, պետք է միջազգային պատկան բոլոր մարմիններից համառորեն ու հետևողականորեն պահանջենք վերստին իր տեղը դնել անմաքուր ձեռքով «պատից հանված քարը»:

Մաֆարովը պետք է լիովին կրի իր պատիժը:

Որպեսզի նախադեպը չուներ ղեկավար չկրկնվի ոչ մի տեղ, չվերածվի նման նոր հանցագործությունների գործոնի:

**Վերա ԳՐԻԳՈՐՅԱՆ**  
«ԼՂՀ ԱԿԱԶՄ» հ/կ նախագահ

## ՄԵԳԱԼԸ՝ ՍՓՈՓԱՆՔ ՀԱՐԱԶԱՏՆԵՐԻՆ



ԼՂՀ անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միությունն (ԱԿԱՀՄ) արդեն ունի իր ոսկեգօծ՝ «Հայրենիք և հավատ» վերտառությամբ մեդալը: Այն ստեղծվել է կազմակերպության

վարչության անդամների մտահղացմամբ և երկրի իշխանությունների աջակցությամբ՝ ի հիշատակ Արցախյան պատերազմում անհայտ կորած զինծառայողների:

Նոյեմբերի 1-ին՝ միության ստեղծման 14-րդ տարեդարձի կապակցությամբ, այդ մեդալով պարգևատրվեցին անհայտ կորած ազատամարտիկների մի խումբ հարազատներ և պաշտոնատար անձինք:

ԼՂՀ անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարանում կազմակերպված միջոցառմանը ներկա էին Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավար, Անվտանգության խորհրդի քարտուղար Մարատ Մուսայելյանը, ԼՂՀ ՊԲ հրամանատարի ԱՀՏԱ գծով տեղակալ, գեներալ-մայոր Անդրանիկ Մակարյանը, Ազգային անվտանգության ծառայության պետ, Անհայտ կորածների, ռազմագերիների, պատանդների և քաղաքացիական անձանց հարցերով զբաղվող հանրապետական հանձնաժողովի նախագահ Վիկտոր Քոչարյանը, ԱԺ աշխատակազմի ղեկավար Գարիկ Ժամհարյանը, Ստեփանակերտի քաղաքապետ Սուրեն Գրիգոր-

յանը, քաղաքապետարանի կրթության և սպորտի բաժնի վարիչ Կատլեն Մարգարյանը, հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

Հուշաթանգարանում հավաքվածների մեծ մասն անհայտ կորածների հարազատներ էին, նրանք, ովքեր ճակատագրի բերումով արդեն երկու տասնամյակ վիշտը հոգում անթեղած՝ աչքները ճամփին հույսով սպասում են... Եվ որքան ուժ ու կորով կա այդ նարդկանց մեջ, որ կարողանում են նման պահերին հավաքվել, միմյանց շնորհավորել, սփոփանքի խոսքեր ասել...

Օրվա կապակցությամբ ներկաներին ողջունեց գեներալ-մայոր Անդրանիկ Մակարյանը: Նա համբերություն մաղթեց բոլորին և Պաշտպանության բանակի հրամկազմի անունից խոստացավ ամեն ինչ անել՝ արյան գնով ձեռքբերված հաղթանակը պահելու-պահպանելու համար:

Հայրենիքի պաշտպանության համար մղված մարտերում կյանքը նվիրաբերած, մարտական գործողություններին անմիջականորեն մասնակցած անհայտ կորած ազատամարտիկների մի խումբ հարազատներ պարզևատրվեցին «Հայրենիք և հավատ» մեդալով, քսան հոգու էլ հանձնվեց ՀՀ պաշտպանության նախարարության՝ ՀՀ զինված ուժերի կազմավորման 20-ամյակի հուշամեդալ: Միության ստեղծման 14-րդ տարեդարձի կապակցությամբ ԼՂՀ պաշտպանության նախարարության կողմից նաև պատվոգրեր հանձնվեցին անհայտ կորած ազատամարտիկների մի խումբ հարազատների, իսկ միությունն էլ որպես նվեր հեռուստացույց ստացավ ԼՂՀ պաշտպանության նախարարության կողմից:

ԼՂՀ ԱԿԱՀՄ «Հայրենիք և հավատ» մեդալին արժանացան հանրապետության մի խումբ պաշտոնյաներ, ովքեր մեծապես աջակցել են միության նպատակային ծրագրերի իրա-

կանացմանը: Իհարկե, մեծագույն աջակցությունն ու սատարումը պետության կողմից են: Նույն մեղալով պարզևատրվեց Հայաստանի Հանրապետության «Զինվոր» ՀԿ համակարգող խորհրդի նախագահ Մարգարիտա Խաչատրյանը, ով վաղուց հարազատ մարդ է կազմակերպության անդամների համար: Վերջինիս խոսքերով՝ ապրողների համար գոհվածների շիրիմները մխիթարություն են, իսկ անհայտ ճակատագիր ունեցող ազատամարտիկների հարազատների ցավն ամոքել անհնարին է: «Մենք երբեք մեր տղաներին բացակա չենք դնում, նրանք հավերժի ճամփորդներ են», - ասաց Մարգարիտա Խաչատրյանը:

Անհայտ կորած ազատամարտիկ Սլավիկ Միրզոյանի կնոջ՝ Էվելինա Աղաջանյանի խոսքն ուղղված էր հանրապետության իշխանություններին. «Մենք գոհ ենք մեր երկրի ղեկավարներից մեր հանդեպ ցուցաբերվող ուշադրության համար: Գլուխ ենք խոնարհում բոլոր գոհվածների շիրիմների առաջ: Սակայն մի բան պետք է լավ հասկանալ՝ անհայտության քողի տակ ապրելը չափազանց ծանր է... Տեր կանգնենք մեր տղաների ճակատագրերին՝ սա է մեր խնդրանքը»:

«Հայրենիք և հավատ» մեղալով պարզևատրվածների թիվն այսքանով չի սահմանափակվի: ԼՂՀ ԱԿԱՀՄ նախագահ Վերա Գրիգորյանը ներկաներին իրազեկեց, որ մեղալին կարժանանան անհայտ կորած բոլոր ազատամարտիկների հարազատները:

**Լատրա ԳՐԻԳՈՐՅԱՆ**  
«Ազար Արցախ», նոյեմբեր 2012թ.

## ՄԵԳԱԼՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ԱԿԱՀՄ-ՈՒՄ

Նոյեմբերի 1-ին ԼՂՀ անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միությունում կայացավ մեղալիների պարզևատրման արարողություն, որին ներկա էին ԼՂՀ նախագահի աշխատակազմի ղեկավար Մարատ Մուսայելյանը, ԱԺ նախագահի աշխատակազմի ղեկավար Գարիկ Ժամհարյանը, Ստեփանակերտի քաղաքապետ Սուրեն Գրիգորյանը, անհայտ կորածների, ռազմագերիների, պատանդների և քաղաքացիական անձանց հարցերով զբաղվող հանրապետական հանձնաժողովի նախագահ Վիկտոր Քոչարյանը, ԼՂՀ պաշտպանության բանակի սպայական կազմից ներկայացուցիչներ, լրագրողներ, անհայտ կորած ազատամարտիկների հարազատներ, հյուրեր ՀՀ-ից:

Բացման խոսքով հանդես եկավ ԼՂՀ ԱԿԱՀՄ նախագահ Վերա Գրիգորյանը, ով ներկաներին իրազեկեց միության ստեղծման օրից առ այսօր կատարված աշխատանքների մասին՝ կարևորելով այն փաստը, որ շնորհիվ պետության աջակցության, իրականացվել է ևս մեկ երազանք՝ «Հայրենիք և հավատ» մեղալ ստեղծելու ծրագիրը, որի շնորհիվ Անհայտ կորած ազատամարտիկների հարազատները նույնպես արժանացան մեղալիների, ինչը նրանց համար սրտի ևս մեկ սփոփանք կլինի:

ԼՂՀ պաշտպանության նախարարության ՊԲՀ ԱՀՏԱ գծով տեղակալ, զեներալ-մայոր Անդրանիկ Մակարյանը պաշտպանության բանակի անունից ողջույնի խոսք հղեց ներկաներին՝ բոլոր որդեկորույս ծնողներին ցանկանալով համբերություն և վստահեցրեց ցանկանալով համբերություն և վստահեցրեց, որ իրենց որդիների արյան գնով ձեռք բերած հաղթանակն այսօրվա զինվորը կպաշտպանի ցանկացած զնով: Այ-



նուհետև, ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի հրամանով, ՀՀ պաշտպանության նախարարության 20-ամյակի մեղալով պարգևատրվեցին 20 հոգի, 10 հոգի ԼՂՀ ՊԲ նախարար Մովսես Հակոբյանի հրամանով արժանացան պատվոգրի: ԼՂՀ ԱԿԱՀՄ հիմնադրած «Հայրենիք և հավատ» մեղալով պարգևատրվեցին 20 հոգի ևս:

ԱԿԱՀՄ նպատակային ծրագրերի իրագործմանը մեծապես աջակցելու համար, ԼՂՀ անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միության «Հայրենիք և հավատ» մեղալով պարգևատրվեցին նաև պետական մի շարք այրեր՝ ԼՂՀ նախագահի աշխատակազմի ղեկավար Մարատ Մուսայելյանը, ԼՂՀ պաշտպանության նախարարության ՊԲՀ ԱՀՏԱ գծով տեղակալ, գեներալ-մայոր Անդրանիկ Մակարյանը, ԼՂՀ անհայտ կորածների, պատանդների և քաղաքացիական հարցերով զբաղվող հանրապետական հանձնաժողովի նախագահ Վիկտոր Բոչարյանը, Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության և սպորտի բաժնի պետ Կառլեն Մարգարյանը, «Զինվոր» ՀԿ-ների համակարգող խորհրդի նախագահ Մարգարիտա Խաչատրյանը, այլոք: ԼՂՀ ՊԲ նախարարի հրամանով պարգևատրվեց նաև ԱԿԱՀՄ նախագահ Վերա Գրիգորյանը, ինչպես նաև միությանը հանձնվեց հեռուստացույց: Խոսք հնչեցրեցին միջոցառման մի խումբ մասնակիցներ: «Զինվոր» ՀԿ նախագահ Մարգարիտա Խաչատրյանն իր բախտակիցներին ցանկացավ համբերություն:

Վերա Գրիգորյանը միջոցառումը եզրափակեց իր կողմից գրված քառատողով՝ նշելով թող իմ բախտակից կանայք լինեն տան դռները մշտապես բաց ու սպասումով քնող վերջին մայրերը:

**Լիրա ՂԱԶԱՐՅԱՆ**

*«Ստեփանակերտ», նոյեմբեր 2012թ.*

## ՈՉ ՈՔ ՉԻ ՄՈՌԱՑՎԵԼ

Վերջերս հերթական անգամ կայացավ ԼՂՀ անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միության հանդիպումը Հայաստանի հանրապետությունից Արցախ ժամանած ռազմահայրենասիրական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

Այդ օրը ԱԿԱՀ միությունը իր հարկի տակ հյուրընկալել էր «Երիտասարդական կամք» և «Անմար կրակներ» ռազմահայրենասիրական կազմակերպությունների ներկայացուցիչներին, որոնց հետ համագործակցությունը արդեն բարի ավանդույթ է դարձել:

Միության նախագահ Վերա Գրիգորյանի ուղեկցությամբ Հայաստանից ժամանած բարեկամները եղան անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարանում, հետաքրքրվեցին անհայտ կորած ազատամարտիկների որոնման ուղղությամբ կատարվող աշխատանքներով, նրանց հարազատների, ինչպես նաև միության գործունեության առնչվող հարցերով: Ինչպես նշեցին հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները, իրենց կողմից կատարող քայլերը թելադրված են սրտի խորքից և, ընդհանրապես, այցելել Արցախ ու չհիշել մեր Ազատամարտում անհայտ կորածներին, անբարոյական կլիներ: Դրանով իրենք կրկին անգամ փաստում են, որ ոչ ոք չի մոռացվել, ոչինչ չի մոռացվել:

Հյուրերը դատարկաձեռն չէին եկել, ԱԿԱՀՄ գրասենյակում տեղի ունեցած հանդիպման ժամանակ նրանք նվերներ հանձնեցին շուրջ երկու տասնյակ անհայտ կորած ազատամարտիկների հարազատներին: Վերջիններս ի սրտե երախտագիտություն հայտնեցին իրենց նկատմամբ ցուցաբերվող վերաբերմունքի համար, նշելով, որ նման հոգատարությունը իրենց

հույս է ներշնչում, որ վիշտը հոգում անթեղած սպասեն, թե մի օր էլ կհայտնվի իրենց արևը:

Իր հերթին ԼՂՀ ԱԿԱՀՄ նախագահ Վ.Գրիգորյանը միության 14-րդ տարեդարձի և միության հետ սերտ համագործակցության համար «Անմար կրակներ» ՀԿ նախագահ Ասյա Բարխուդարյանին և «Երիտասարդության կամք» ԵՀԿ նախագահ Աննա Գրիգորյանին պարգևատրեց միության «Հայրենիք և հավատ» ոսկեզօծ մեդալով: Իսկ անհայտ կորած ազատամարտիկ Վարուժան Բաբայանի ծննդյան 50-ամյակի կապակցությամբ նրա եղբորը՝ Ռոբերտ Բաբայանին հեռուստացույց նվիրեց: Ռազմահայրենասիրական կազմակերպությունների ներկայացուցիչները Արցախ այցի շրջանակներում ՊԲ զինծառայողներին իրենց զորակցությունը հայտնելու և նրանց առօրյանին, խնդիրներին ու ձեռքբերումներին ծանոթանալու նպատակով նախատեսել են այցելություններ Պաշտպանության բանակի տարբեր զորամասեր:

**Հրայր ՓԱՇԱՅԱՆ**

*«Մարտիկ», 10-17 նոյեմբեր, 2012թ.*

## ԳՈՒՔ ՀԱՅՏՆԻ ԱՆՈՒՆ, ՍԱԿԱՅՆ ԱՆՀԱՅՏՈՒՄ

Նոյեմբերի 1-ին ԼՂՀ անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միության Հուշաթանգարանի դահլիճում տեղի էր ունեցել միջոցառում՝ նվիրված ԱԿԱՀՄ ստեղծման 14-ամյակին, որին ներկա էին ԼՂՀ նախագահի աշխատա-



կազմի ղեկավար Մարատ Մուսայելյանը, Ստեփանակերտի քաղաքապետ Սուրեն Գրիգորյանը, Պաշտպանության բանակի հրամանատարի անձնակազմի հետ տարվող աշխատանքների գծով տեղակալ, գեներալ-մայոր Անդրանիկ Մակարյանը, ԼՂՀ Արհմիությունների ֆեդերացիայի նախագահ Արա Ղահրամանյանը, այլ հարգարժան այրեր և անհայտ կորած ազատամարտիկների ծնողներ ու հարազատներ:

Միջոցառումը բացեց ԱԿԱՀՄ-ի նախագահ Վերա Գրիգորյանը, նա ներկա ծնողներին ու հարազատներին խնդրեց զինվել հավատով ու համբերությամբ և նշեց, որ նրանք ամեն ան-

գամ միջոցառում կազմակերպելիս միշտ հիշում են ոչ միայն անհայտ կորած մեր ազատամարտիկներին, այլ նաև նրանց ընտանիքներին: Այնուհետև խոսքը տրվեց ՊՆ ԱՀՏԱ գծով տեղակալ, գեներալ-մայոր Ա.Մակարյանին, ով իր հերթին շնորհակալություն հայտնելով մայրերին և նրանց հարազատներին ասաց. «Որ ոչ ոք երբեք չի մոռացվի, որ այն հողը՝ ուր մենք այսօր խաղաղ ապրում ենք, ոչ միայն զոհված ազատամարտիկների, այլ նաև նրանց շարքերում եղած անհայտ կորածների շնորհիվ է, որ նրանք միշտ մեր կողքին են ու միայն հայը կարող է չմոռանալ նրանց»:

Այնուհետև իր հուզիչ տողերով ելույթ ունեցավ Հայաստանի Հանրապետության «Զինվոր» կազմակերպության նախագահ Մարգարիտա Խաչատրյանը, նա ասաց. «Որ մենք բացակա չենք դնում մեր անհայտ կորածներին, և շատ դժվար է ունենալ մի այնպիսի կորուստ, որը չունի ոչ հետք, ոչ հասցե... նա շեշտեց, որ պատվով մահը ավելի կարևոր է, քան անպատիվ ապրելը...»:



Վերջում ԱԿԱՀՄ-ի «Հայրենիք և հավատ» մեղավոր պարզևատրվեցին միության անդամներ, ծնողներ, հարազատներ ու ներկա գտնվող այրերից մի քանիսը: 20 հոգի էլ պարզևատրվեցին ՀՀ Պաշտպանության նախարարության մեղավներով, 10-ը՝ ստացան պատվոգրեր, իսկ միությանը նվիրվեց հեռուստացույց ու Վերա Գրիգորյանին էլ պարզևատրեցին ՀՀ ՊՆ մեղավոր:

Միջոցառումը եզրափակելով տիկին Գրիգորյանը ասաց. «Ամեն ինչ ունենալով սկիզբ, ունի և ավարտ, սա կյանք է և այն լի է տառապանքով ու ցնծությամբ, պարտությամբ ու հաղթանակով, իսկ մենք՝ հայերս ուժեղ ազգ ենք և միշտ հաղթանակով ենք դուրս գալիս, զինվենք հավատով ու ապրենք սիրով»:

Մի քանի օր անց՝ նոյեմբերի 7-ին, ԱԿԱՀՄ-ի 14-ամյակը շնորհավորելու եկան նաև «Անմար կրակներ» և «Երիտասարդության կամք» հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ Ասյա Բարխուդարյանը և Աննա Գրիգորյանը: Դա նրանց հերթական այցն էր Ստեփանակերտ:

Նրանք հաճախ են նման հանդիպումներ ունենում նաև Երևանի ռազմավարժական ուսումնարանի սաների մասնակցությամբ՝ Արցախում: Նշված ՀԿ-ների ներկայացուցիչներն այս անգամ եկան Ղարաբաղ, որպեսզի նվերներ բաժանեն անհայտ կորած ազատամարտիկների 20 ծնողներին և հարազատներին, որից հետո Ասյա Բարխուդարյանը և Աննա Գրիգորյանը պարզևատրվեցին ԱԿԱՀՄ-ի «Հայրենիք և հավատ» մեղավներով:

Վերջում լավեցին թե հյուրերի, և թե ներկաների կողմից շնորհակալական ու հավատով լցված հոգու խոսքեր:

**Արմինե ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

«Արհմիություններ», նոյեմբեր 2012թ.

2013թ.

**ԱՄԱՆՈՐՅԱ ՀԱՆՂԵՄ՝ ԱՆՀԱՅՏ ԿՈՐԱԾ  
ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՀԱՐԱԶԱՏՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Տարիներ շարունակ ԼՂՀ անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միությունը մոռացության չի մատնում անհայտություն կոչվող դաժան ճակատագրին արժանացած ազատամարտիկների ընտանիքներին: Ամեն ինչ անում է հասակ առնող մատաղ սերնդին գեթ մի փոքր ուշադրություն դարձնելու համար:

Այս տարի նույնպես ԼՂՀ անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միության կազմակերպած ամանորյա հանդեսին հրավիրված էին մասնակցելու նաև գոհված ազատամարտիկների հարազատների և Արցախյան պատերազմի վետերանների թվով 130 երեխաներ:

Ամանորյա հեքիաթային հանդեսի փոքրիկ հյուրերին միության մեծ սրահում դիմավորեց Չյունանուշը: Իր ջերմ բարեմաղթանքներով նա երեխաներին հրավիրեց շրջան կազմելու տոնաձառի շուրջ՝ պարելու, ուրախանալու և անհամբերությամբ սպասելու Չմեռ պապիկի ժամանելուն: Իսկ տարեմուտի տոնախմբության ընթացքում այնքան սպասված Չմեռ պապն եկավ և հեքիաթային տրամադրություն ստեղծեց սրահում՝ երեխաներին հրավիրելով երգի ու ասմունքի:

Չմեռ պապիկի ներկայությունն առանձնակի ոգևորություն առաջացրեց երեխաների շրջանում, ամեն մեկը փորձում էր հնարավորինս էլ ավելի լավ դրսևորել իր կարողությունները՝ նվերներ ստանալու համար:

Ինչ խոսք, ամանորյա այս հանդեսը մեծ ուրախություն պատճառեց անհայտ կորած ազատամարտիկների, նահա-

տակների հարազատների ու վետերանների փխրուն ու վիրավոր հոգիներով երեխաներին:

Այն յուրօրինակ լիցք ու ավյուն հաղորդեց նրանց: Ավյուն, որն իրենք կրելու են ողջ տարվա ընթացքում, և որի համար էլ ամանորյա հանդեսի կազմակերպիչ, ԼՂՀ անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միության նախագահ Վ. Գրիգորյանն իր անսահման շնորհակալությունը հայտնեց բոլոր բարերարներին՝ միջոցառմանը օժանդակելու համար:

Ամանորյա հանդեսի հովանավորներն էին Գերիների, պատանդների, անհայտ կորածների և քաղաքացիական անձանց հարցերով զբաղվող հանձնաժողովը, ԼՂՀ կրթության և գիտության նախարարությունը, Հայ ավետարանչական ընկերակցությունը և ԼՂՀ հարկային պետական ծառայությունը:

**Երազ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

*«Մարտիկ», 1 հունվար 2013թ.*



## ՔԱՌԱՍՈՒՆ ՏԱՐԻ՝ «ՆԱՎԻ» ՎՐԱ

Հարց.

- Մարդուն ճանաչում են ինչո՞վ: Անուն-ազգանվա՞մբ, ծագումով ու տոհմի պատմությա՞մբ...

Պատասխան.

- Նաև դրանցով:

Այդ դեպքում, ուրեմն... առաջին հերթին ինչո՞վ:

Գործո՞վ:

Այն ամենով, ինչ նա արել է իր կարճ կամ երկար կյանքում: Մարդու կերպարը, էությունն ու արժեքը փնտրեք, այո, նախ և առաջ իր կատարած գործում:

Ու ես փնտրեցի: Փնտրեցի, որովհետև շատ տարիներ առաջ էի բախտ ունեցել ծանոթանալու Ռախսա Առստամյանի հետ, սակայն հետագայում, թեև ապրում ենք նույն քաղաքում՝ փոքրիկ Ստեփանակերտում, յուրաքանչյուր ծանոթի մտադաշտում պահելու անհրաժեշտությունը կամ էլ հնարավորությունը չունենալու պատճառով՝ առանձնապես չխորացա, այսպես ասեմ՝ ճանաչման գործընթացում...

Բայց ահա վերջերս մեր, կարելի է ասել՝ պատահական մի հանդիպում ինձ մղեց դա անելուն, որի ժամանակ էլ իմացա, որ արդեն 40-րդ տարին է աշխատում է որպես բուժբույր...

Ինձ համար հաճելի էր այդ հանդիպումը, և մեր գրույցը մեկնարկ վերցրեց մի շատ հաճելի թեմայից. վերհիշեցինք՝ ինչ հանգամանքներում ենք ծանոթացել միմյանց: Ծնվել էր անդրանիկ ու միակ տղա զավակս՝ Սպարտակը, և Ռախսան, որպես տեղամասային բուժբույր, պարտավոր էր պարբերաբար այցելել արդեն տանը գտնվող նորածնին... Նրա դուրեկան ձայնն ու մասնագիտական նուրբ վերաբերմունքը առաջին իսկ րոպեներից գերեց ինձ: Ամսեամիս թափ առնում՝ մեծանում էր որդիս, դրան զուգընթաց էլ՝ շարունակվում բուժքրոջ

այցելությունները: Երբ նկատեցի, որ նա նույնքան ուշադիր է և հոգատար բոլոր փոքրիկների և նրանց մայրերի նկատմամբ, հարգանքս բուժքրոջ հանդեպ կրկնապատկվեց:

Չեմ թաքցնի. մի կարճ պահ տխուր նոտա էլ գրանցվեց մեր գրույցում՝ կապված «մեր» երբեմնի նորածնի՝ Արցախյան պատերազմում անհայտության բախտի արժանանալու փաստի հետ: Հուզվեցի, երբ վաստակաշատ բուժքույրը խորը հոգոց հանեց և ասաց.

- Այնքան լավ եմ հասկանում քեզ, Վերա: Ախր մայրական տազնապով ու սպասման տառապանքով այն ժամանակ թաթախված ենք եղել բոլորս՝ Արցախի մայրերը... Մեկ-մեկ նույնիսկ զարմանում եմ՝ մտածելով, թե ինչպես ենք կարողացել այնքանի միջով անցնելով՝ պահել մեր սրտի պարզությունն ու արիությունը, դիմադրել, հաղթահարել: Արմենս, որ ընդամենը տասնվեց տարեկան էր և արդեն առաջին կուրսի ուսանող՝ ֆիդայական ջոկատ գնաց... Պատերազմի ողջ ընթացքում ես էլ էի ապրում սպասման մեջ. դիրքից կենդանի տո՞ւն կգա որդիս: Նրա ամեն գնալուց հետո նույն միտքն էր բորբոքվում ուղեղիս մեջ. Աստված այս անգամ էլ կխնայի նրան... Հույսդ չկորցնես, Վերա, Աստված մեծ է, գուցե մի օր սրտիդ ուզածը կտա քեզ...

Ես ուրախ եմ, որ Աստված մինչև վերջ պահել-պահպանել է այսօր ապրող բոլոր նախկին ազատամարտիկներին և նրանց թվում՝ Ռախայի որդի Արմեն Առստամյանին՝ հայրենիքի ոչ միայն արժանի պաշտպանին, այլև շատ խելոք ու զարգացած հայ երիտասարդին: Պատերազմից հետո նա ավարտել է Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարության ռազմական համալսարանի ադյունկտորան, պաշտպանել գիտական թեզ: Այժմ քաղաքական գիտությունների թեկնածու, փոխգնդապետ Արմեն Առստամյանը բաժնի պետի պաշտոն է զբաղեցնում ՀՀ Զինված ուժերի գլխավոր շտաբում:

Ճիշտ է ասված՝ պտուղը ծառից հեռու չի ընկնում: Արամայիս և Ռաիսա Առստամյանների մյուս զավակներից Արսենին արցախցիներին երկար ներկայացնելու հարկը թերևս չկա, որովհետև ամեն երեկո նա ինքն է շատերին ներկայացնում... Արցախի հանրային հեռուստատեսությամբ: «Գոյամարտի» Արսենն է, այո, որն այդ ծրագիրը վարել է ուղիղ յոթ տարի՝ 2000-ից մինչև 2007 թվականը, իսկ հետո աշխատել Հանրայինու: Լուրերի բաժնի գլխավոր խմբագիրն է: Քույրը՝ բանասիրական ֆակուլտետի շրջանավարտ Քրիստինեն էլ առաջին կարգի մասնագետ է ԼՂՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում:

Ինչպես առանձին վերցրած մարդուց, այնպես էլ ամբողջական ընտանիքից հատկապես բախտորոշ ժամանակաշրջանում կյանքը քննություն է ընդունում: Կեցցեն այն ընտանիքներն ու անհատները, որոնք կարողանում են պատվով դուրս գալ այդ քննությունից: Նմաններից մեկն էլ Ռաիսա Առստամյանի ընտանիքն է և Ռաիսան ինքը: 17 տարի (1972-1989) տեղամասային բուժքույր աշխատելուց հետո նա տեղափոխվել է մանկական հիվանդանոցի պոլիկլինիկա ու մինչ այսօր աշխատում է ակնաբուժական կաբինետում:

- Պատերազմի տարիներին մենք գործում էինք վիրաբուժականի հետ մեկտեղ: Վիրաբույժը Էդվարդ Ստեփանյանն էր: Բոլորի համար էլ ծանր օրեր էին: Գիտե՞ս, մեծահասակների հետ աշխատելն, ինձ թվում է, համեմատաբար հեշտ է, քան՝ մանուկների ու դեռահասների... Այն երկու տարում ամեն ինչ էլ տեսել ենք, ամեն կարգի վիրավորվածություն և այլն: Բոլորն էլ գիտեն, թե որքան նուրբ օրգան է աչքը ու թե ինչքան դժվար է տանել նրա ցավը, ու եթե այդ ցավի կրողը հասուն մարդը չէ, որը, ցանկության դեպքում, գուցե կարող է լուռ տանել տառապանքը, վիճակն այլ է փոքրիկի մոտ: Բուժաշխատողը տարիների ընթացքում, անշուշտ, վարժվում է հիվանդի ցավի հետ,

բայց հո սիրտը քարից չէ... Հանգիստ տանել հատկապես փոքրիկ մարդու տառապանքը հնարավոր չէ: Չզիտեմ, այսօր էլ դեռ ես այդ զգացողությունն եմ ունենում, հատկապես՝ ծանր դեպքերի ժամանակ:

Բուժքույր Առստամյանի լուսանկարը տասը տարի եղել է «Պատվո տախտակի» վրա: Դեռ խորհրդային տարիներին նրա մասին բարի խոսք է ասել մարզային «Խորհրդային Ղարաբաղ» թերթը: Ռախսան, տարբեր տարիների, սկզբում՝ մանկական բուժհիմնարկի գլխավոր բժշկի, հետո էլ՝ վերակազմավորված բուժմիավորման գործադիր տնօրենի կողմից արժանացել է գովասանագրերի՝ մասնագիտությանը գրագետ տիրապետելու, ամենօրյա պարտականությունները բարեխղճորեն կատարելու համար:

Նրան հարցնում եմ՝ ինչի՞ շնորհիվ է հաջողվել 40 տարի մնալ բուժքրոջ իր բարձրության վրա, ի պատասխան՝ լսում.

- Ինչ մասնագիտության տեր լինելուց անկախ, կարծում եմ, «գաղտնիքը» մեկն է. մասնագիտությանդ ակունքներից չկտրվելը... Մասնագետը պետք է մշտապես աշխատի «իր վրա»՝ եղածին նոր գիտելիքներ գումարի, խորացնի կարողությունները, եթե իրեն շարունակական կրթություն ստանալու հնարավորություն է ընձեռվում (իսկ մեր հանրապետության բոլոր բուժքույրերն ունեն դրա հնարավորությունը), անպայման օգտվի նրանից:

Մայիսի 12-ը նաև քո օրն է, Ռախսա Առստամյան, ու ես սրտանց շնորհավորում եմ քեզ: Մաղթում եմ առողջություն և հետագա հաջողություններ՝ ի շահ քո ընտանիքի, մեր ժողովրդի, մեր պետության:

**Վերա ԳՐԻԳՈՐՅԱՆ**  
*ԼՂՀ ԱԿԱԿՄ նախագահ*

«ՀԱՅՐԵՆԻՔ»

Մուրեն Աղամյանի առաջիկա հոբելյանին ընդառաջ \_\_\_\_\_

### ՄԻ ՆԿԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Բոլորում էր պապիս կյանքի 100-րդ տարին: Նրան՝ Աթունց Կուքանին (Գրիգոր Ծատրյան), չգիտեի ինչու, բոլորը Փոքրիկ էին ասում: Մի անգամ հարցրի՝ ինչո՞ւ է այդպես, ախր դու հաղթանդամ ու բարձրահասակ մարդ ես... Պապս ժպտաց.

- Երբ ջահել էի, աշխատում էի Ստեփանակերտի՝ այն ժամանակ Ստեփան Շահումյանի անունը կրող գոովետտեխնիկումում՝ որպես տեխնիկումին կից տնտեսության ավագ: Ֆայտոն ունեի, որով տնտեսության մեջ մտնող հինգ գյուղի (Խնածախ, Փահլուր, Ջամիլու, Բալուջա, Մեթիշեն) ֆերմաների կաթը տանում էի վերամշակման հանձնում Ստեփանակերտի կաթի գործարանին: Աշխատանքից տուն վերադառնալուց գյուղի երեխաներին նստեցնում էի կառքն ու ման ածում կենտրոնական փողոցով: Նինգյունց Աղաջանն էլ- գրող Հայկ Խաչատրյանի մասին լսած կա՞ս, Աղաջանը նրա քրոջ պատրոնն էր- հա, էս Աղաջանը թե՛ այ Կուքան, ի՞նչ էս կպել էդ փոքրիկներից, պոկ չես գալիս: Տնաշեն, ոնց որ թե դու էլ ես փոքրիկ ...Էդ էր, որ էդ էր, բալա, Փոքրիկ փոտ անունը կպավ մնաց: Ոչինչ, վատ բանի համար չեմ տվել...

Ահա այդ պապս մեռնելուց մի քանի օր առաջ կանչեց ինձ ու մի փաթեթ տալով՝ իրեն հատուկ կատակախառն տոնով ապսպրեց.

- Էս ամանաթը, Վերա բալա, կպահես: Գիտեմ, թաքուն նեյ-նիմներ ես գրում...վայ թե մի օր էլ գրող-ջնջող էլ դառնաս, որ չեղավ՝ կտաս Եղիշի Էմմային,- խոսքը մեր դպրոցի տնօրեն

Եղիշե Ավագյանի տիկնոջ՝ գրականության շատ սիրված ուսուցչուհու մասին էր,- մի գիրուղավթարում դնի...

Բացեցի՝ կուստոմսն էր ու մի լուսանկար: Հասկացա, որ «գիրուղավթարը» վերաբերում է լուսանկարին. Ստեփանակերտի գոովետտեխնիկումի 1935 թվականի շրջանավարտներն էին պատկերված այնտեղ՝ կրթօջախի դեկավարության և մյուս պատասխանատու աշխատողների հետ: Դեմքերից մեկն ինձ ծանոթ թվաց: Հարցրի՝ ո՞վ է: Փոքրիկը նույն տոնով թե՛ անգրագե՞տ ես, նկարի տակը կարդա, կիմանաս: Կարդացի. «С. АДАМЯН: сек.ВЛКСМ»: Նորից հարցրի. «Հա, բայց ո՞վ է»: Թե՛ մեծ աղջիկ ես, չե՞ս լսել Սուրեն Ադամյանի մասին: Ախր շատ որ չասեմ, երևի ամբողջ Սովետական Միությունն է ճանաչում նրան: Ճարտարի կոլտնտեսության նախագահն է: Գիտե՞ս արդեն քանի տարի... Իմաստուն մարդ է: Նրա նման արտադրության հրամանատար դժվար կճարվի: Չափելուց էլ խելքով շաղախված էր... Տեխնիկումի կոմերիտկազմակերպության քարտուղարն էր: Խիստ բնավորություն ուներ, բայց տեսնեի՛ր, թե ուսանողների հետ ինչպես է լեզու գտնում: Լավ մարդկանց հետ էի աշխատում, բալա, ուժեղ մարդկանց...

Ամոթ էլ է ասելը, բայց կյանքի հորձանուտում մոռացա այդ փաթեթի մասին ու միայն բոլորովին վերջերս, երբ մի փաստաթուղթ էի փնտրում իմ պահոցում, ձեռքս ընկավ այն: Ունկերումս ասես նորեն հնչեց պապիս ձայնը... Գրեթե անմիջապես էլ հիշեցի, որ այս տարի լրանում է Սուրեն Ադամյանի ծննդյան 100 տարին և որ պետական մակարդակով որոշված է տոնել այդ հոբելյանը: Մտածեցի. իսկ հետաքրքիր է, հոբելյարի տանը կա՞ այս լուսանկարից: Չանգեցի որդուն՝ Վաչե Ադամյանին, պարզվեց՝ չկա: Լուսանկարը նրան հետաքրքրել էր, եկավ մեզ մոտ՝ ԱԿԱՀՄ գրասենյակ: Հուզվեց երիտասարդ հորը «տեսնելով»: Հանկարծ մատը դնելով «պապիս» վրա՝ գոչեց.

«Այս մարդուն ես տեսած կամ: Սա...սա Փոքրիկն է: Նա նույնիսկ մի քանի անգամ եղել է մեր տանը»: Ասացի՝ հորական պապս է, իմ աղջկական ազգանունը Ծատրյան է: Ահագին զրուցեցինք: Հոր նման լրջամիտ ու քչախոս որդին որոշ բաներ պատմեց նրա մասին...

Նրա գնալուց հետո հասկացա, որ պարտավոր եմ պատմել այդ լուսանկարի մասին՝ առաջին հերթին ի հիշատակ մեծն արցախցու և ապա՝ «գիրուդավթարին» վերաբերող պապիս պատվիրանը վերջապես կատարած լինելու համար: Այն ժամանակ պապս, որ զուրկ չէր պատկերավոր մտածողությունից, շատ բան է պատմել ինձ: «Եղել է ժամանակ, բալա, երբ ճարտարցիներից ոմանք տանիքի քիթեղն էլ են քանդել վաճառելու՝ ընտանիքի հացն ապահովելու համար... Ալիբալին էլ փշոտ-տատասկոտ բիյանա դաշտ էր: Սուրենը նախագահ դարձավ և իսկական հեղափոխություն արեց ինչպես գյուղում, այնպես էլ գյուղացիների հոգեբանության մեջ: Հիմա այդ կոլխոզը միլիոններ է, Միությունում առաջիններից մեկը: Եվ այդ ամենը՝ Սուրեն Ադամյանի խելքի ու կամքի շնորհիվ: Ասեմ քեզ՝ շատ հեռատես մարդ է: Շատ էլ հայրենասեր: Ալիբալին նա ոչ միայն ծաղկեցրեց, այլև անվերադարձ հայացրեց: Ի՞նչ ես զարմացած նայում, չգիտեի՞ր, որ հողն էլ կարող է խոսել հայերեն: Բա ասում ես գրականություն ես սիրում՝ ու Համո Սահյանին չե՞ս կարդացել՝ հայերեն են խոսում սարերդ, հայերեն են խոսում դարերդ... Սուրենը Ալիբալին սովորեցրեց խոսել հայկական ծիրանի ու դեղձի լեզվով... Գիտե՞ս ինչ այգիներ է հիմնադրել էնտեղ»:

Մենք՝ հայերս, արցախցիներս պարտավոր ենք պահել պահպանել մեր հողի ծնած ու սնած լավագույն զավակների հիշատակը և այն փոխանցել սերնդե-սերունդ: Նրանցից յուրաքանչյուրը մեր դժվարին պատմության գործող անձերից է

եղել ու երիցս արժանի է դրան: Ես ամենևին հակված չեմ մտածելու, թե իմ այս փոքրիկ հողվածով նոր էջ եմ բացելու Սուրեն Ադամյանի նման մտքի ու գործի հսկայի նկարագրին, բայց և չեմ կասկածում, որ այս հին լուսանկարի պատմությունը, որը նրա ապրած կյանքի մի կարճ շրջանի էպիզոդն է ներկայացնում, որոշակի շտրիխ կարող է հաղորդել նրա դիմանկարին: Մենք թվաքանակով «փոքր ածու» ենք, և արցախցու մեր տեսակն առավել ևս սրբություն պետք է համարի նախնայաց հետ կապված ամեն մի մասունք, ամեն վկայություն...

Սուրեն Հարությունովիչը չի մահացել, կենդանի է իր կատարած գործով, անվամբ ու հեղինակությամբ: Նրա նման մարդը միայն կարող էր ի պատասխան Հեյդար Ալիևի լկտի նկատման՝ թե Ադամյանը միայն մի բանի է ձգտում՝ աշխարհին հավատացնել, թե հայերն այս հողում եղել են միշտ, երեսին հանդուգն շարտել. «Ոչ մի անհրաժեշտություն չկա այդ մասին աշխարհին հավատացնելու»:

Եվս մեկ գնահատում: Նկատի ունենալով Ղարաբաղյան պատերազմը, ԼՂՀ պաշտպանության ներկայիս նախարար և Ս.Ադամյանի համագյուղացի Մովսես Հակոբյանն ասել է. «Ողջ արևելյան ուղղության տնտեսական ու մարդկային ռեսուրսների համար մենք առաջին հերթին մեծապես պարտական ենք Սուրեն Ադամյանի ռազմավարական իմաստնությունը, մի մարդու, որը 40 տարի նախագահել է Ճարտարում»: Լուսանկարն առիթ դարձավ, որպեսզի ես կարդայի երկու լավ գիրք. Համլետ Հարությունյանի «Նախագահը», որում Սուրեն Ադամյանը ներկայացված է ժամանակակիցների հուշերում, ու Եղիշե Աստվածատրյանի «XX դար. կյանքի հորձանուտում» ինքնակենսագրական հուշապատումը, որտեղ նույնպես պատշաճ տեղ է հատկացված Սուրեն Ադամյանին: Երկուսում էլ հիանալիորեն բացահայտված են արտադրության, թող այս-



պես ասեմ՝ մարշալի և Արցախի հայեցիության անդավաճան զինվորի հզոր կերպարը:

Իսկ պատմությունս ավարտել եմ ուզում Ջորի Բալայանի «Մուրեն Ադամյանի գումարտակը» վերնագրով հողվածից քաղած մի պարբերությամբ, որը հաստատում և հավաստում է Ադամյանի մշտակենդանությունը. «Ղարաբաղյան շարժման ամենասկզբում, երբ վերջապես բաց մամուլում բացահայտվեց սադրիչ Ալիևի իսկական կերպարը, երբ Կևորկովը վճռվեց Արցախից ու հայտնվեց Ադրբեջանի բանտերում, Ճարտարի հենց կենտրոնում, զբոսայգու կանաչի մեջ, մարտաշարքում կանգնած էր իր սաներին ռազմի դաշտ ճանապարհող Ադամյանը»:

**Վերա ԳՐԻԳՈՐՅԱՆ**  
«Սրեփանակերտ», 2013թ.

## ՀՈՒՅՍԸ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Ամեն մի սկիզբ ունի ավարտ, սակայն կյանքի անորոշությունը ներսից խեղդելով մարդուն, թողնում է հույսով լի ու աչքը ճամփին այն անավարտ թվացող սպասումին, ինչով այսօր ապրում են մեր անհայտ կորած ազատամարտիկների հարազատները: Նրանք ապրում են գիշերները դուռ չփակելով, այն հույսով, որ ուր է կծեծեն դուռը, և կասեն. «Վերջապես, ես եկա մամ...ես իմ տունը եկա»:

Մեր մտերմիկ գրույցում, մի փոքր իսկ նրանց վիշտը սփռվելով, գրույց ունեցա Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միության նախագահ Վերա Գրիգորյանի հետ:

*- Ե՞րբ և ի՞նչ հանգամանքներում սպեղծվեց Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների (ԱԿԱՀՄ) միությունը:*

- Ժամանակավոր զինադադարից հետո գնում էինք Ստեփանակերտում տեղաբախշված «Կարմիր խաչի» միջազգային կառույց, կառավարություն, մի խոսքով ամենուր, որտեղից որ հույս ունեինք մեր հարազատներից ու որդիներից լուր ստանալ: Այն ժամանակ մենք բանակցություններ էինք վարում մեր ներքին գործերի նախարարության հետ, ով այդ տարիներին Մոսկվա էր մեկնում մեզ համար լուր բերելու, այն ժամանակ Ռուսաստանի դաշնությունից եկողները պայմանավորվում էին որոնման հարցերով զբաղվել...

Այս ամենի արդյունքում՝ 1996թ. 76 թուրք փոխանակվեց հակառակ կողմին, մեր 42 հայի դիմաց, դա մեծ ուրախություն էր, բայց մեր աչքերը նրանց մեջ փնտրում էին մեր որդիներին, որոնց մենք դեռևս շարունակում ենք սպասել...

Պայմանավորվածություն կար, որ կողմից որ գերի հայտնվեր մեկ այլ հողում, անպայման տեղեկացնել Կարմիր խաչին:

Այդ սպասումներով էլ լի, շատ դժվար պայմաններում, 1998թ. հոկտեմբերի 10-ին, ստեղծվեց անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միությունը՝ ԱԿԱՀՄ հասարակական կազմակերպությունը:

**- Ինչպիսի՞նն է Հայաստանի և Արցախի ԱԿԱՀՄ-ների համագործակցությունը, և ուրիշ նմանարիպ ինչ կազմակերպությունների հետ եք համագործակցում:**

- Ամեն տարի մենք Հայաստանից ունենում ենք հյուրեր, որոնց համար մեր պատմական թանգարանը միշտ էլ հետաքրքրություն է ներկայացնում: Համագործակցում ենք ՀՀ ԱԿԱՀՄ հետ և միշտ էլ սերտ կապի մեջ ենք:

**- Ինչպես հայրնի է, դուք նաև համագործակցում եք Հայաստանի համաևուն կառույցի, ռազմագերիների ու անհայր կորածների հանրապետական հանչնաժողովի և «Կարմիր խաչի» միջազգային կոմիտեի հետ: Ի՞նչ է արվել, և ի՞նչ առաջընթաց կա մինչ այսօր:**

- Թշնամին բնականաբար դաժան է իր կեցվածքով ու դրվածքով, մենք՝ հայերս գոնե խիղճ ունենք, հավատ և սրբություն ունենք, մենք չենք կարող գերի ընկած թշնամուն դաժանաբար տանջել կամ լռել ու նրանց մասին չհայտնել ուր որ պետք է, ինչը չի անում հակառակորդը:

Ինչ մնում է «Կարմիր խաչին». այս 15 տարիների ընթացքում տարին մի քանի անգամ մեր անհայտ կորածների հարազատներին ցուցաբերում է օգնություն: Այժմ Կարմիր խաչի կողմից գործում է մի ծրագիր՝ օպտիմալ միկրոտնտեսական, ինչի միջոցով նրանք օգնություն են ցուցաբերում շրջաններում մեր անհայտ կորածների հարազատներին՝ նրանց տալով կաթնասուններ, հագուստ և այլ պարագաներ:

Պետությունը տարին երեք անգամ իր ֆինանսական օգնությունն է ցուցաբերում, բնակարաններ է տրամադրել անտունների, վատթար պայմաններում գտնվող մի շարք բնակարանների վերանորոգմամբ է զբաղվել և այլն: Պաշտպանության

բանակի օգնության շնորհիվ սրտային հիվանդությամբ տառապող անհայտ կորածների հարազատներից մի քանիսը բուժում են ստացել: Միության միջնորդության շնորհիվ ՀՀ «Ջերմուկ» և «Արզնի» առողջարաններում իրենց բուժումն ու հանգիստն են ստանում անհայտ կորածների հարազատները:

**- Ի՞նչ աջակցություն է ցուցաբերում ԱԿԱՀՄ-ն իր անդամներին:**

- Ինչպես նշվեց, առողջարաններում լինելու, ինչքան մեր հնարավորությունները թույլ է տալիս, նյութական օգնություն ենք ցուցաբերում անկողնուն գամված հիվանդ հարազատներին, շնորհավորում ենք հոբելյարներին, նվերներ ենք տալիս նրանց ընտանիքներում ամուսնացող զավակներին: Մեր հարգանքի տուրքն ենք մատուցում մահացած հարազատների գերեզմաններին՝ ծաղկեպսակներով ներկայանալով: Տոն օրերին, հավաքվում ենք, շնորհավորում, կիսվում և հույսով լի իրար հրաժեշտ տալիս կրկին: Ունենք ֆիլմադարան, և շատ հաճախ մեր զինվորները հավաքվում են մեզ մոտ՝ ֆիլմեր դիտելու:

Արդեն հինգերորդ տարին է, ինչ կազմակերպում ենք «Հայրենիքի պաշտպան» թեմայով շարադրությունների մրցույթ, վերջում պարգևատրում հաղթողներին: Մի խոսքով, մենք իրար հետ ամեն անգամ հանդիպելով կիսում ենք մեր ապրումները և հույսներս երբեք չենք կորցնում, որ մի օր մեր երազը կդառնա իրականություն՝ մեր հարազատները կվերադառնան իրենց օջախները:

**- Միությունում քանի՞ անհայտ կորածներ են գրանցված և քանի՞սն են ազատամարտիկներ:**

- Գրանցված են թվով 710 անհայտ կորածներ, որոնցից 239 ազատամարտիկներ են:

**- Ինչպե՞ս որոշվեց ԱԿԱՀՄ հիշատակի օրը նշել հունիսի 29-ին:**

- 1999թ. «Տոն և հիշատակի օրերի» մասին ԼՂՀ օրենքում

լրացում կատարելու մասին և ԱԺ նախագծում պաշտոնապես հրատարակվեց ԱԿԱՀՄ-ի հիշատակի օր, իսկ ՀՀ-ում՝ 2000թ.:

**- Ինչպես մեզ հայտնի է, դուք նաև հանդիսանում եք որպես մի շարք գրքերի հեղինակ...**

- Այո, մոտ օրերս կլինի նաև նոր գրքի շնորհանդես՝ ևս 19-ված ու ամփոփված մեր սպասումներով ու հույսերով...

**- Ուրիշ ի՞նչ կուզենայիք ավելացնել:**

- Ինչպես գիտեք, մենք մեր իշխանությունների շնորհիվ ստեղծել ենք մեր՝ «Հայրենիք և հավատ» մեդալը, որով պարգևատրում ենք մեր միության հարազատներին և նրանց, ովքեր մեր հույսերն ու սպասումները կիսելով մեզ հետ, համագործակցում և արժանի գործ են անում մեզ համար: Սակայն կա մի բայց, որն ինձ ավելի է հուզում, կուզենայի, որ մեր պատերազմում անհայտ կորած, իրենց մարտական զենքը ձեռքին կռված մեր տղերքը ևս պետության կողմից պարգևատրվեն մեդալներով, որովհետև այս անորոշության մեջ գոյատևելով մենք մեր սիրտն ու կյանքն ենք տվել մեր հայրենիքին, մեր որդիները, որոնցից ամեն մեկն իր մոր միևնույն հոգին էր, շունչը, հույսը...

**- Դուք լինելով մայր, ապրելով և ունենալով այդ ծանր վիշտը, չե՞զ ինչպե՞ս է հաջողվում դիմանալ. գուցե՞ ամեն մի զինվորի աչքերում չե՞զ ծանոթ հայացքն է, որ ուժ է տալիս...**

- Իհարկե, ամեն մի զինվորիս ես մոր պես եմ մոտենում, ամեն մեկի մեջ իմ որդուն եմ տեսնում... և օրեցօր աճող հույսն է, որ ինձ ուժ է տալիս... (երկար լռությունից հետո, արցունքները խեղդելով)... ՄԻԱՅՆ ԹԵ ԳԱՆ:

**Արմինե ԱՔՐԱՀԱՄՅԱՆ**

«Արհմիություններ», 16-30 հունիսի 2013թ.

**ՄԱՅՐԱՔԱՂԱՔՈՒՄ ՆՇՎԵՑ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԱՄԱՐ  
ՆԱՀԱՏԱԿՎԱԾՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՅՑ ԿՈՐԱԾ  
ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐԸ**

Հունիսի 29-ին՝ հայրենիքի համար նահատակվածների և անհայտ կորած ազատամարտիկների հիշատակի օրվա կապակցությամբ, Ստեփանակերտի քաղաքային Հուշահամալիրը կրկին բազմամարդ էր:

Անհայտ կորած ազատամարտիկի հիշատակին կանգնեցված խաչքարին ծաղիկներ և ծաղկեպսակներ են դրել ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը, Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, Ազգային ժողովի խոսնակ Աշոտ Դուլյանը, վարչապետ Արա Հարությունյանը, պաշտոնատար այլ անձինք, հյուրեր Հայաստանից, անհայտ կորած ազատամարտիկների հարազատներ:

Դեռևս 1991 թվականից Ադրբեջանի բանտերն ու մեկուսարանները լցված էին հազարավոր հայերով: 1992-ին, երբ ընթանում էր պատերազմը, հակամարտության երկու կողմերում հայտնվեցին ռազմագերիներ: 1993 թվականի մարտին՝ ԼՂՀ պաշտպանության կոմիտեի նախաձեռնությամբ, ստեղծվեց ռազմագերիների, պատանդների և անհայտ կորածների հարցերով զբաղվող պետական հանձնաժողով, որը համագործակցում էր ԵԱՀԿ առաքելության, «Բժիշկներ առանց սահմանների» կազմակերպության և Կարմիր խաչի միջազգային կոմիտեի հետ: Տարիների որոնողական աշխատանքները շատ դեպքերում արդյունք չեն տվել, իսկ տանջալից սպասումը շարունակում է հալածել մարդկանց: Անհայտ կորած ազատամարտիկի ծնողին մնում է միայն սպասել, միայն հուսալիք էլ ունենալով նշեց ԼՂՀ ՊՆ ՌՀԴ և ՀԿՀԿ բաժնի պետ, գնդապետ

Բարեղամ Մուրադյանը:

Հավաքվածների առջև ելույթ ունեցավ նաև միջոցառման կազմակերպիչ, ԼՂՀ անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միության նախագահ Վերա Գրիգորյանը:

Մենք մեր սնշակած ծրագրերի օգնությամբ հնարավորինս աջակցում և սատարում ենք անհայտության գրկում գտնվողների ընտանիքներին, ինչը մեզ հաջողվում է՝ մեր պետության, կառավարության, բարերարների, մի շարք հասարակական կազմակերպությունների աջակցության շնորհիվ,- ասաց նա: Վ.Գրիգորյանը նաև անհանգստություն հայտնեց՝ առ այն, որ տարիներն անցնում են, իսկ հակառակորդի անմարդկային, ժխտողական քաղաքականության պատճառով չի հաջողվում գտնել և տուն վերադարձնել իրենց զավակներին:

Ունեցած տեղեկություններն անգամ չի հաջողվում ծառայեցնել ցանկալի նպատակին, քանի որ մեր թշնամին մնում է նույն դաժանն ու վտանգավորը: Մեզ մնում է բազմապատկել ուշադրությունն անհայտ կորածների ընտանիքների հանդեպ և շարունակել սպասել ու հուսալ՝ գուցե կփոխվեն ժամանակները, կփոխվեն դիրքորոշումներն, ու լույս կբացվի տղաների համար,- նշեց նա:

Հուզիչ էր նաև անհայտ կորած ազատամարտիկ Վարուժան Բաբայանի եղբայր Ռոբերտ Բաբայանի ելույթը, որում մասնավորապես ասվում էր. «Արցախյան պատերազմից անցել է մոտ 20 տարի, դա հաղթական պատերազմ էր, բայց ինչպես ցանկացած պատերազմում, այստեղ ևս առանց զոհերի և տուժածների չեղավ՝ նկատի ունեմ մարտերում անհայտ կորած ազատամարտիկներին, որոնց թիվն անցնում է 200-ից: 20 տարին սպասումի համար քիչ ժամանակ չէ: Գնալով նոսրանում է անհայտ կորած տղաների վերադարձին սպասող ծնողների և հարազատների թիվը: Բացառված չէ, որ մեր ռազմա-

գերիներից շատերին էլ չեն խնայել ո՛չ ժամանակը, ո՛չ ծեծն ու տառապանքը, այդուհանդերձ, տարբեր տեղեկություններից ելնելով, կարծում ենք, որ թե բանտերում, թե անհատ անձանց հսկողության տակ, նրանց մի մասը դեռևս կենդանի է՝ հայրենիքի և տնեցիների հանդեպ կարոտով լեցուն»:

Ռոբերտ Բաբայանը, դիմելով իշխանության ներկայացուցիչներին, հորդորեց օգտագործել ամենաչնչին հնարավորությունը՝ անհայտ կորածների ճակատագիրը պարզելու համար:

Իսկապես, արցախյան գոյամարտի տարիներից բավականին ժամանակ է անցել, բայց անհայտ կորածների ընտանիքները դեռևս շարունակում են հավատալ հրաշքի և ամեն օր սպասում են իրենց հարազատների վերադարձին:

Տեղեկացնենք, որ նույն օրը, ԼՂՀ ԱԿԱՀՄ թանգարանում տեղի ունեցավ միության նախագահ Վերա Գրիգորյանի «Սակավ «Ես»-ի և շատ «Մենք»-ի մասին» գրքի շնորհանդեսը:

***Կարինե ՍԱՖԱՐՅԱՆ***

*29 հունիս 2013թ.*



## ՀՈՒՅՄԻ ՈՒ ՍՊԱՍՈՒՄԻ ՔՍԱՆ ՏԱՐԻՆԵՐ

Հունիսի 29-ը հանրապետությունում նշվում է որպես Արցախյան պատերազմում անհայտ կորած ազատամարտիկների հիշատակի օր: Ամեն տարի այդ օրը ԼՂՀ անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միությունը տարաբնույթ միջոցառումներ է կազմակերպում՝ ընդգրկելով ոչ միայն կազմակերպության անդամներին, այլև երկրի իշխանություններին, մտավորականությանն ու հասարակական կազմակերպություններին:

Հիշարժան օրվա կապակցությամբ անհայտ կորած ազատամարտիկներին իրենց հարգանքի տուրքը մատուցելու նպատակով հունիսի 29-ին Ստեփանակերտի հուշահամալիր այցելեցին Արցախի Հանրապետության Նախագահ Բակո Սահակյանը, ԱԺ խոսնակ Աշոտ Դուլյանը, վարչապետ Արայիկ Հարությունյանը, Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, կառավարության անդամներ, բարձրաստիճան սպաներ, անհայտ կորած ազատամարտիկների հարազատներ:

Հուշահամալիրում կառուցված անհայտ կորած ազատամարտիկների հիշատակը հավերժացնող խաչքարին ծաղիկներ և ծաղկեպսակներ դրվեցին երկրի իշխանությունների, ԼՂՀ պաշտպանության նախարարության, Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի, առանձին գերատեսչությունների ու հասարակական կազմակերպությունների կողմից:

Երկուստեք նշվել է երկու հայկական պետությունների միջև այս ոլորտում համագործակցության խորացման անհրաժեշտությունը և դրա համար բոլոր հնարավորությունների առկայությունը:

Հանդիպմանը մասնակցում էին ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար Սպարտակ Թևոսյանը, ԼՂՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի նախագահ Լևոն Մնացականյանը:

Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի տեղեկատվության գլխավոր վարչության պետ Դավիթ Բաբայանը:

Ինչ խոսք, ցանկացած պատերազմ արհավիրք է, որի ժամանակ անխուսափելի են ցավալի իրողությունները. անդառնալի կորուստներ, մարդկային բազում անհայտ ճակատագրեր... Նման վիճակում են նաև Արցախ աշխարհի մեր շատ հայրենակիցներ: Արցախյան շարժման հենց սկզբից սադրանքների ու ահաբեկությունների հետևանքով խոշոր փրկագներ կորզելու նպատակով ադրբեջանական կողմից գրանցվեցին մարդորսության, պատանդներ պահելու առաջին դեպքերը: 1991թ. արդեն ադրբեջանական բանտերն ու մեկուսարանները լցված էին հազարավոր հայերով: 1992թ., երբ ընթանում էր պատերազմը, հակամարտության երկու կողմերում հայտնվեցին նաև ռազմագերիներ: 1993թ. մարտին ԼՂՀ Պաշտպանության պետական կոմիտեի նախաձեռնությամբ ստեղծվեց ռազմագերիների, պատանդների և անհայտ կորածների հարցերով զբաղվող պետական հանձնաժողով, որն սկսեց համագործակցել ԵԱՀԿ առաքելության. Կարմիր խաչի միջազգային կոմիտեի և «Բժիշկներ առանց սահմանի» կազմակերպության հետ: Տարիների որոնողական աշխատանքները շատ դեպքերում արդյունք չեն տվել, իսկ տանջալի սպասումը հալածում է մարդկանց: Ուրիշ էլ ի՞նչ էր մնում անել նրանց՝ քան սպասել, միայն սպասել ու հուսալ... Չնայած հույսի ճանա-

պարհին շատ սրտեր են բեկվել, շատ երագներ են անկացել, շատ ծրագրեր անիրագործելի մնացել: «Մեր տղաները գնացին մաքուր ու անբիծ կյանք արարելու համար և մնացին անհայտության ճանապարհներին: Սակայն նրանց միայն ճակատագրերն են անհայտ, նրանք միշտ մեզ հետ են, մեր սրտերում ու մեր հիշողության մեջ: Ողջ են, թեև մեր կողքին չեն, ողջ են, քանզի մահը վկայող գերեզման չունեն»,- հուշահամալիրում տեղի ունեցած հավաքի ժամանակ բացման իր խոսքում ասաց ԼՂՀ ՊՆ ռազմահայրենասիրական դաստիարակության և հասարակական կազմակերպությունների հետ կապերի բաժնի պետ, գնդապետ Բարեղամ Մուրադյանը: Ապա դիմելով անհայտ կորած ազատամարտիկների հարազատներին՝ նա շարունակեց. «Համոզված ենք, որ ձեր որդիների անհայտ ճակատագրերի համար դուք լացող մայրեր ու հարազատներ չեք միայն, այլ նաև թիկունք եք մեր պետությանն ու բանակին: Եվ ներկա ու ապագա սերունդները ձեր աղոթքների զորությամբ ու ձեր զորակցությամբ կշարունակեն մեր ազատամարտի նվիրյալների հերոսական պայքարը ու կհասցնեն վերջնահանգրվանին»,- իր զեկուցման մեջ ԼՂՀ անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միության նախագահ Վերա Գրիգորյանը նշեց, որ հոկտեմբերի 10-ին լրանում է միության ստեղծման 15-րդ տարեդարձը և այդ տարիների ընթացքում կազմակերպությունն իր իսկ կողմից մշակված ծրագրերի միջոցով փորձել է աջակցել, սատարել անհայտության մեջ հայտնված ընտանիքներին: Դա հաջողվել է հանրապետության իշխանությունների, բարեգործ ձեռներեցների, որոշ հասարակական կազմակերպությունների ու բարի կամքի տեր մարդկանց, մասնավոր անձանց օժանդակության շնորհիվ, ասաց զեկուցողը: Այսօր միությունն ունի «Հայրենիք և հավատ» անունը կրող իր մեդալը, որով պարգևատրվում են

ռազմաճակատի առաջին գծում կռված և անհայտ կորած տղաների ծնողներն ու կազմակերպության ծրագրերի իրագործմանը շարունակաբար նպաստող անհատները: Վ. Գրիգորյանն իր երախտագիտությունը հայտնեց Կարմիր խաչի միջազգային կոմիտեի Ստեփանակերտի գրասենյակի անցյալ ու ներկա ղեկավարներին՝ միության հետ սերտ համագործակցության համար: Այդուհանդերձ՝ ԼՂՀ ԱԿԱՀՄ նախագահն իր և անհայտ կորածների հարազատների անհանգստությունը հայտնեց առ այն, որ տարիներն անցնում են, իսկ հակառակորդի անմարդկային ու ժխտողական քաղաքականության պատճառով չի հաջողվում գտնել և տուն վերադարձնել իրենց զավակներին: Նույնիսկ ունեցած տեղեկությունները հնարավոր չի լինում ծառայեցնել իրենց նպատակին, քանզի թշնամին եղել և մնում է նույն դաժանն ու վտանգավորը: «Նման իրավիճակում մնում է բազմապատկել մեր և ձեր ուշադրությունը անհայտ կորածների ընտանիքների հանդեպ և շարունակել սպասել ու հուսալ: Գուցե կփոխվեն ժամանակները, կփոխվեն և դիրքորոշումները, և մի լույս կծագի տղաների համար», - նման լավատեսական նոտայով իր ելույթը ավարտեց Վերա Գրիգորյանը:

«Քսան տարին սպասողի համար քիչ ժամանակ չէ: Գնալով նոսրանում է անհայտ կորած տղաների վերադարձին սպասող ծնողների, մյուս հարազատների թիվը: Ամենայն հավանականությամբ, ոչ միայն նրանց, բացառված չէ, որ մեր ռազմագերիներից շատերին չեն խնայել ոչ ժամանակը, ոչ ծեծն ու տառապանքը: Այդուհանդերձ՝ տարբեր տեղեկություններից ելնելով, կարծում ենք, որ բանտերում և անհատ անձանց հսկողության տակ դեռ կենդանի է նրանց մի մասը՝ հայրենիքի և տնեցիների հանդեպ կարոտով լեցուն», - իր ելույթում ասաց անհայտ կորած ազատամարտիկ Վարուժան Բաբայանի եղբայր

Ռոբերտ Բաբայանը: Նա խնդրանքով դիմեց հավաքին ներկա պետական այրերին օգտագործել ամենաչնչին իսկ հնարավորությունը պարզելու անհայտ կորած ազատամարտիկների ճակատագիրը:

Արցախի հոգևոր թեմի առաջնորդի խոսքը ոչ միայն սփոփանք էր, այլև կոչ՝ հարազատ ժողովրդին: «Անհասցե չեն մեր անհայտ կորած ազատամարտիկները, առաջին հասցեն դա հայրենի հողն է և այս հուշակոթողը: Մենք չգիտենք ում ինչ է սպասվում և ինչ պիտի սպասվի, բայց մի բան հստակ գիտենք՝ մենք բռնել ենք ճշմարիտ, արժանապատիվ ուղի: Մենք ոչ միայն հայրենիքի պաշտպաններ ենք, այլև արդարության զինվորներ: Այսօր այստեղ ենք մեկ անգամ ևս ուխտելու, որ ամենայն վճռականությամբ պիտի շարունակենք առաջ տանել մեր սկսած գործը», - ասաց Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը: Նրա գլխավորությամբ կատարվեց ոգեկոչման արարողություն:

Կարմիր խաչի միջազգային կոմիտեի ԼՂՀ առաքելության ղեկավար Նիկոլաս Ֆլետսին լրագրողների հետ զրույցում ասաց. «Հակամարտությունից քսան տարի է անցել և, կարելի է ասել, առանձնակի տեղաշարժ չկա անհայտ կորածներին գտնելու առումով: Բայց վերջերս մենք մի ընտանիք ենք գտել, որը ապրում է Բաքվում և այժմ հնարավորություն կա շփվել հեռախոսով և պայմանավորվել հանդիպման մասին», - ասաց Նիկոլաս Ֆլետսին:

Հիշարժան օրվան նվիրված միջոցառումների շրջանակում նույն օրը ԼՂՀ ԱԿԱՀՄ գրասենյակում տեղի ունեցավ Վերա Գրիգորյանի «Սակավ՝ «Ես»-ի և շատ՝ «Մենք»-ի մասին» գրքի շնորհանդեսը, որը հեղինակի թվով 15-րդն է: Ներկա էին Արցախի գրական ընտանիքի անդամներ, մտավորականներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Գրքի վերնագիրն արդեն իսկ ընթերցողին ներկայացնում է ասելիքի լեյտմոտիվը: Բանաստեղծ Մոկրատ Խանյանի գնահատմամբ՝ գիրքն ունի հայրենասիրության կրակ և արժանի է ուշադրության ոչ թե որպես ապրած օրերի խտացում, այլ որպես ժամանակագրություն: Այնտեղ զետեղված յուրաքանչյուր ոտանավոր բորբոքված է նորանկախ երկրի ներկայի ու ապագայի հոգսով, նրա՝ որքան երիտասարդ, նույնքան էլ փառապանծ բանակի և բարձր կամային ժողովրդի ամենակարևոր ձեռքբերումով, համազգային մեծագույն նպատակի՝ «փոքր ածուն» մեծի վերածելու փափագով:

Իրենց ելույթներում գրքի ծնունդը շնորհավորեցին ԱրՊՀ ռեկտոր Ստեփան Դադայանը, ԼՂՀ ԱԱՄ վարչության անդամ Ալվարո Շեկյանը, ԱԺ սոցիալական ոլորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Արամ Գրիգորյանը:

Միջոցառման ժամանակ ԼՂՀ ԱԿԱՀՄ նախագահ Վերա Գրիգորյանը կազմակերպության ծրագրերի իրագործմանն աջակցելու համար ռեկտոր Ստեփան Դադայանին պարգևատրեց «Հայրենիք և հավատ» և «Զինվոր հայրենյաց» մեդալներով:

**Լատրա ԳՐԻԳՈՐՅԱՆ**  
«Ազատ Արցախ», 2 հուլիսի 2013թ.

## ՍՊԱՍՈՒՄԻ ԵՐԿԱՐ ՃԱՆԱՊԱՐՀ

Արցախյան հայրենական պատերազմը իր խորը հետքն է թողել հայ ազգի հոգում ու դեռ չունենալով մեր անհայտ հերոսներից ստույգ տվյալներ, արցախցին չի նահանջում և հույսով սպասում է անհայտ կորած մեր ազատամարտիկների տուն-դարձին...

ԼՂՀ տոների և հիշարժան օրերի մասին օրենքում նշված է նաև Հայրենիքի համար նահատակվածների և անհայտ կո-



րածների հիշատակի օրը՝ հունիսի 29-ը: Այդ օրն իրենց հարգանքի տուրքը մատուցելու համար Ստեփանակերտի հուշահամալիր էին եկել ԼՂՀ Նախագահ Բակո Սահակյանը, Աժ խոսնակ Աշոտ Դուլյանը, վարչապետ Արա Հարությունյանը, Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարզև արքեպիսկոպոս Սարտիրոսյանը, պաշտոնատար այլ անձինք և անհայտ կորած ազատամարտիկների հարազատներ: Հուշահամալիրում տեղ գտած անհայտ կորած ազատա-

մարտիկների խաչքարը ևս մեկ անգամ օրհնվեց Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյանի կողմից, նա իր օրհնանքի խոսքն ասաց բոլոր նրանց հարազատներին ու աղոթեց անհայտ կորած ազատամարտիկների ներկա վիճակի համար, ասելով որ մեր հույսը միշտ կա, և ուր էլ որ լինեն՝ միշտ խաղաղ հոգով լինեն: Ելույթ ունեցավ նաև ԱԿԱՀՄ նախագահ Վերա Գրիգորյանը, որից հետո ներկաներին հրավիրեց միության հուշաթանգարան, իր՝ թվով 15-րդ «Մակավ «Ես»-ի և շատ «Մենք»-ի մասին գրքի շնորհանդեսին, որի ժամանակ ելույթ ունեցան ԱԺ սոցիալական ոլորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Արամ Գրիգորյանը, ԱրՊՀ ռեկտոր Ստեփան Դադայանը պրոֆեսոր, բանաստեղծ Սոկրատ Խանյանը և ուրիշներ:

Շնորհանդեսի բացման խոսքում Ս. Խանյանը, մանրակրկիտ ներկայացրեց գրքի ամբողջ էությունը: «Մակավ «Ես»-ի և շատ «Մենք»-ի մասին գրքում ներկայացված է հայրենասիրության կրակով բորբոքված ոտանավորներ, հույսով սպասումով մոր կարոտ, և հայկական փառապանծ բանակի տղաներին ուղղված ձոն ու մոր օրհնանք:

Գրքի տպագրությունը հովանավորել է «Ավան» ՓԲԸ նախագահ Ալեք Բաղդասարյանը:

ԱԿԱՀՄ նախագահը միջոցառման ժամանակ միության ծրագրերի իրագործմանն աջակցելու համար ԱրՊՀ ռեկտոր Ստեփան Դադայանին պարգևատրեց «Հայրենիք և հավատ» ու «Զինվոր հայրենյաց» մեդալներով:

**Ա. ԱՐԱՎԱՅԱՆ**

*«Արհմիություններ», 01-15 հուլիսի 2013թ.*



## ԻՆՉՔԱՆ ԷԼ ԵՐԿԱՐԻ ՍՊԱՍՈՒՄԸ, ՀՈՒՅՄՆ ՈՒ ՀԱՎԱՏԸ ՄՆԱԼՈՒ ԵՆ ԱՆՍԱՍԱՆ

Հունիսի 29-ին, ինչպես վերջին 14 տարիներին անընդմեջ կարելի էր ականատես լինել, Ստեփանակերտի հուշահամալիրը նորից մարդաշատ էր: Անհայտ կորած ազատամարտիկների հիշատակի օրը այս անգամ հարգելու էին եկել հանրապետության նախագահ Բ. Սահակյանը, Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, վարչապետ Ա. Հարությունյանը, ԱԺ նախագահ Ա. Դուլյանը ԼՂՀ ՊԲ բարձրաստիճան սպաներ և այլ պաշտոնատար անձինք, հասարակության ներկայացուցիչներ, զինվորականներ, անհայտ կորած ազատամարտիկների հարազատներ: Նախ ծաղիկներ ու ծաղկեպսակներ տեղադրեցին անհայտ կորած ազատամարտիկների հիշատակին նվիրված խաչքարի պատվանդանին, ապա տեղի ունեցավ հանարահավաք, որը բացեց և վարեց պաշտպանության նա-



խարարության ռազմահայրենասիրական դաստիարակության և հասարակական կազմակերպությունների հետ կապի բաժնի պետ, գնդապետ Բ.Մուրադյանը: Նա նշեց, որ Արցախյան շարժման հենց սկզբից սաղրանքների ու ահաբեկչության ալիքի վրա, խոշոր փրկագին կորզելու նպատակով, աղբբեջանական կողմից ձեռնարկվեցին մարդորսության և պատանդներ պահելու փորձեր: Իսկ արդեն 1991 թ. աղբբեջանական բանտերն ու մեկուսարանները լցված էին հարյուրավոր հայերով: 1992 թ., պատերազմի սաստկացմանը զուգահեռ, հակամարտության երկու կողմերում հայտնվեցին ռազամագերիներ:



Հասունացած խնդիրներին լուծումներ գտնելու նպատակով 1993 թ. մարտին ԼՂՀ պաշտպանության կոմիտեի նախաձեռնությամբ ստեղծվեց ռազամագերինների, պատանդների և անհայտ կորածների հարցերով զբաղվող պետական հանձնաժողով, որը սկսեց համագործակցել ԵԱՀԽ առաքելության, Կարմիր խաչի միջազգային կոմիտեի և այլ կազմակերպություններ:

րի հետ: «Տարիների որոնողական աշխատանքները շատ դեպքերում արդյունք չեն տվել,- փաստում է գնդապետ Բ. Մուրադյանը,- իսկ տանջալից սպասումը հալածում է մարդկանց:

Ուրիշ էլ ի՞նչ է մնում անել նրանց՝ անհայտ կորած ազատամարտիկների ծնողներին ու հարազատներին: Միայն սպասել և հուսալ: Թեև հույսի ճանապարհին շատ սրտեր են բեկվել, շատ երագներ են անէացել, շատ ծրագրեր են մնացել անիրագործելի»:

Այնուհետև, դիմելով անհայտ ճակատագիր ունեցող մեր հայրենակիցների մայրերին, հարազատներին, գնդապետ Բ. Մուրադյանը նշեց, որ կրկին ներկայացել են հուշակոթողի մոտ երախտագիտության, խոնարհումի ու սփոփանքի խոսքեր ասելու նրանց, հիշելու անհայտ կորած ազատամարտիկների անուններն ու գործերը, հոգեպես հաղորդակցվելու նրանց հետ: Եվ եզրափակելով խոսքը, ՊՆ Ռ-ՀԳ և ՀԿՀԿ բաժնի պետն ասաց. «Համոզված ենք, որ Ձեր որդիների անորոշ ու անհայտ ճակատագրերի համար դուք լացող մայրեր չեք, իսկ սերունդները Ձեր աղոթքների գործությամբ ու ձեր զորակցությամբ կշարունակեն մեր ազատամարտի նվիրյալների հերոսական պայքարը ու կհասնեն դրա տրամաբանական վերջնահանգրվանին:

ԼՂՀ անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միության նախագահ Վերա Գրիգորյանը նշեց, որ կազմակերպությունը տարբեր ծրագրերով սատարում է անհայտության մեջ հայտնվածների ընտանիքներին՝ պետության, կառավարության, բարեգործ ձեռներեցների, որոշ հասարակական կազմակերպությունների, բարի կամքի տեր մասնավոր անձանց օժանդակության շնորհիվ: Այդ ձեռնարկներից նշեց «Հայրենիք և հավատ» մեդալի ստեղծումը, որով պարզևատրվում են ռազմաճակատի առաջին գծում կռված և անհայտ կո-

րած տղաների ծնողները և կազմակերպության ծրագրերի իրականացմանը շարունակաբար նպաստող անհատները:

Վ.Գրիգորյանը հատուկ երախտագիտություն հայտնեց Կարմիր խաչի միջազգային կոմիտեի Ստեփանակերտի գրասենյակի անցյալ ու ներկա բոլոր ղեկավարներին՝ ԱԿԱՀՄ-ի հետ սերտորեն համագործակցելու համար:

ԱԿԱՀՄ նախագահը նաև մայրերի անհանգստությունը հայտնեց, որ տարիներն անցնում են, իսկ մեզ, հակառակորդի անմարդկային ժխտողական քաղաքականության պատճառով, չի հաջողվում գտնել և տուն վերադարձնել մեր զավակներին: «Ունեցած տեղեկություններն անգամ չի հաջողվում ծառայեցնել ցանկալի նպատակին, որովհետև թշնամին ետ չի քաշում դաժանության ու անմարդկայնության երկաթե վարագույրը,- մասնավորապես շեշտեց Վ. Գրիգորյանը և ավելացրեց,- նման իրավիճակում մնում է բազմապատկել բոլորիս ուշադրությունը անհայտ կորածների ընտանիքների հանդեպ և շարունակել սպասել և հուսալ: Անհայտ կորածի եղբայր Ռոբերտ Բաբայանը դիմելով ներկաներին, ասաց, որ գնալով նոսրանում է անհայտ կորած տղաների վերադարձին սպասող ծնողների, մյուս հարազատների թիվը: Ամենայն հավանականությամբ ու, ցավոք, ոչ միայն նրանց... Բացառված չէ, որ մեր ռազամագերիներից շատերին էլ չեն խնայել ոչ ժամանակը և ոչ էլ դաժան ծեծն ու տառապանքը: Այդուհանդերձ, տարբեր տեղեկություններից ելնելով՝ կարծում ենք, որ բանտերում թե անհատների հսկողության տակ դեռ ողջ է անհայտ կորածների մի մասը՝ լեցուն հայրենիքի և տնեցիների հանդեպ կարոտով»: Այնուհետև, դիմելով պետական այրերին և ցավոտ խնդրի հետ այս կամ այն չափով առնչություն ունեցող գերատեսչությունների ղեկավարներին, անհայտ կորած ազատամարտիկների հարազատների անունից նա խնդրեց օգտագոր-

ծել ամենաչնչին իսկ հնարավորությունը՝ պարզելու անհայտ կորածների ճակատագրերը և աջակցելու նրանց անսիրտ հակառակորդի ճանկերից հետ բերելու գործին: Իսկ վերջում Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միության անդամների անունից Ռ. Բաբայանը հավաստիացրեց. «Արդի լարված իրավիճակում, որտեղ շատ են մեր փոքրիկ երկրի առջև, հայտնված մարտահրավերները, մենք ինչպես պատերազմի տարիներին, կանգնած ենք և միշտ կանգնած կմնանք ձեր կողքին, մեր հարազատ պետության, կառավարության և ժողովրդի կողքին»:

Արցախի թեմի առաջնորդ Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանի օրհնությամբ կատարվեց հոգևոր կարգ:

Այնուհետև ԼՂՀ ԱԿԱՀՄ գրասենյակում տեղի ունեցավ Վ.Գրիգորյանի «Սակավ՝«Ես»-ի և շատ՝ «Մենք»-ի մասին» բանաստեղծությունների գրքույկի շնորհանդեսը:

Հիրավի, ինչքան էլ երկարի անհայտ կորած ազատամարտիկների սպասումը, հույսն ու հավատը մնալու են անսասան...

**Մ. ԱՀՅԱՆ**

*«Մարդիկ», 26 հուլիս 2013թ.*

**ԳԻՏԵԼԻՔԸ ՁԵՆՔ Է, ՈՐԸ ԿՐԱԿՈՒՄ Է  
ԵՎ ԿԱՐՃ, ԵՎ ԵՐԿԱՐ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՎՐԱ**

Աշնան թավշե ամսի առաջին օրը՝ սեպտեմբերի 1-ը, որ համարվում է Գիտելիքի օր, ի գորու է մանկության ու պատանեկության քաղցր հուշեր արթնացնել մեծ կյանք մտած, աշխատանքային կենսագրություն կուտակած, կարծում եմ, ցանկացած մարդու մոտ...

Մեզնից ո՛վ չի առաջին անգամ քիչ-ինչ վախվորած մտել առաջին դասարան, տարիների շարունակ «կոխ բռնել» մեկը մյուսից հետաքրքիր, տվյալ անձի համար հեշտ կամ դժվար առարկաների հետ, հանրակրթական դպրոցն ավարտելուց հետո էլ հուզվել, աղջիկներից ոմանք գուցե նաև արտասվել...

Հիշեցեք, ապա, թե ձեզ դասավանդած ուսուցիչները քանի՛ անգամ կլինեն հիշեցրած՝ լավ սովորեցեք, երեխաներ, գիտելիքը զենք է կյանքում, այն ձեզ կօգնի վերելքներ հաղթահարել: Ով անսացել է նրանց խորհրդին, ով՝ ոչ, և վերջինս, վստահ եմ, հետո առիթ է ունեցել զղջալու ծուլանալու համար...

Գիտելիքի օրվա առթիվ սրտանց շնորհավորելով մեր աշակերտներին և ուսանողներին, կուզենայի նրանց հարց տալ. ի՞նչ եք կարծում, եթե չլինեին ճշգրիտ գիտությունների գծով մեր երիտասարդ մասնագետները, որոնք պատերազմի տարիներին բանեցնում էին մեր հրետանին, տանկերը, ինքնաթիռները և այլն, ի՞նչ կլինեի մեր վիճակը, կկարողանա՞ր արցախահայությունն իրեն բռնափաթաթված դաժան փորձությունից ելնել հաղթանակով: Ինձ թվում է, որ այսօրվա (վաղն էլ՝ վաղվա) աշակերտներն իրենք պետք է այս հարցը տան իրենց ու գտնելով ճիշտ պատասխան՝ լուրջ վերաբերվեն ուսմանը:

Ամեն երկիր, ամեն պետություն ուժեղ է ամենից առաջ իր մարդկանցով. նրանց ընտրած հավատամքով, ձեռք բերած գիտելիքներով: Որքան շատ ուսյալ ու կարող մարդիկ ունենա երկիրը, այնքան կգարգանա նրա տնտեսությունը, կբարձրանան մարդկանց բարեկեցությունն ու մտահորիզոնը, անհաղթ կլինի բարձրակարգ կադրերով համալրված նրա բանակը: Ժամանակակից աշխարհում ամեն հաջողության հիմք գիտելիքն է:

Եվ սակայն, միայն գիտելիք կուտակելով չի ավարտվում խնդիրը: Երկրորդ հարցն այստեղ այն է, թե մասնագիտություն ստացած շրջանավարտը որտե՞ղ է աշխատելու, ո՞ւմ է նվիրելու իր իմացությունը, ուժն ու կարողությունը. հարազատ երկրին, թե՞ դրսի աշխարհին: Ի վերջո, գաղտնիք չէ, որ մտավորականության մի զգալի մասը ձգտում է ապրել ու աշխատել այնտեղ, որտեղ իրեն ավելի բարձր են վճարում: Դրանում չես էլ կարող մեղադրել մարդուն, որովհետև ամեն ոք էլ ուզում է, որ ինքն ու իր ընտանիքն ապրեն ինքաբավ կյանքով: Դրանից էլ ծագում է կադրերին համապատասխան աշխատանքով (այսինքն՝ ըստ իրենց մասնագիտության) ապահովելու խնդիրը, որի ի կատար ածողը երկրի կառավարությունն է: Մեր Արցախում այդ հիմնախնդրի լիովին լուծման համար, ավաղ, դեռ ժամանակ է պետք, իսկ մինչ այդ տիրող իրավիճակից ելնելով՝ հայրենիքը թողնելն ու օտար ափերում հեշտ կյանք փնտրելը նույնպես լավագույն խորհուրդը չէ: Որպեսզի դա տեղի չունենա, կամ գնալով ոչ թե աճի՝ այլ նվազի, երկրի իշխանություններն ու պատկան կազմակերպությունները պետք է ամեն գնով նրանց տեղում ամրացնելու հնարավորություններ ստեղծեն, հատկապես՝ ձեռքից չտան արդեն կայացած ու երկրին օգուտ

բերող կարող ու ձուլված կադրերին: Որովհետև եթե գիտելիքը զենք է, ապա գիտելիքի տերն էլ երկրի զինվորն է՝ զինվորական ուսադիրնելով լինի թե առանց ուսադիրի...

Մեր չքնաղ երկրամասի՝ դպրոց թե համալսարան հաճախող բալիկներ, ձեզ զինեցեք համբերությամբ՝ գիտելիքների աշխարհը նվաճելու համար: Հանրակրթական դպրոցի աշակերտին ես կհամեմատեի մարաթոնյան վազքի դուրս եկած մարզիկի հետ, որին առջևում սպասում են հոգնեցնող կիլոմետրերը: Հավատացեք՝ որքան դժվար լինի դրանք հաղթահարելը, այնքան քաղցր է լինելու հաղթանակի բերկրանքը...

Բոլորիդ մաղթում եմ կամք ու հաջողություն՝ ի շահ ձեզ, ձեր ընտանիքների ու մեր ընդհանուր երկրի:

**Վերա ԳՐԻԳՈՐՅԱՆ,**

*«Ազատ Արցախ»*

*31 օգոստոսի 2013թ.*





## ՄԵՐ ԳԼԽԱՎՈՐ ՏՈՂԸ

Ի սկզբանե մեր նպատակն այլ էր՝ վերամիավորվել մայր Հայաստանի հետ, ու մեր բազմահազարանոց հանրահավաքներում վանկարկվող կարգախոսն էլ «Միացում»-ն էր...

Մակայն մեր խաղաղ ու օրինական խնդրանք-պահանջը ոչ այն երկրի ղեկավարները հասկացան, որում ապրում էինք վերջին 70 տարում, ոչ էլ այն հանրապետությունը, որի երկաթե գրպանն էին բռնի խցկել մեզ ու պահում այդքան ժամանակ...



Ադրբեջանը դարձավ ոչ միայն ընդդիմախոս կողմ, այլև սկզբում Սումգայիթում, ապա իրեն հասու բոլոր հայաշատ վայրերում հեղեց հայկական մեր արյունը: ԽՍՀՄ-ի վերջնական փլուզումը և Ադրբեջանի՝ լիովին ինքնիշխան հանրապետության վերածվելը մեզ ստիպեցին վերամիավորման փոխարեն մեր տաք գլխին կապել անկախության «գլխաշորը»...

Օրենքն ու բանականությունը հուշում էին, որ դա է պատե-

բազմից խուսափելու միակ ճանապարհը, բայց ուրիշի հողերի հաշվին «հայրենիքի» տեր դարձած ինքնակոչ «ազերին», որ նույն թուրքն է, խնդիրը, մեկ է, հասցրեց պատերազմի: Մեր բազկի ուժը փրկեց մեզ նրա պարտադրած՝ մեզ համար հայրենափրկիչ այդ պատերազմում, ու փառք Աստծո, որ այդպիսին եղավ 7 տարվա մեր պայքարի... հարաբերական ավարտը:

«Այս աշխարհի ուժեղները» հիմա էլ դեռ ինչպես հարկն է մեզ չեն հասկանում: Ավելի շուտ՝ չեն ուզում հասկանալ, որովհետև նրանցից յուրաքանչյուրը մեր տարածաշրջանում իր շահերն ունի և այլևայլ լոգունգներով քողարկելով նպատակը՝ կուլխների հետև պայքարում է հենց դրանց համար: Մենք դա վաղուց և լավ ենք հասկացել: Բայց թող նրանք էլ այն ճշմարտությունը հասկանան, որ չենք թեքվելու մեր ընտրած ճանապարհից, ու վաղ թե ուշ՝ աշխարհն ստիպված կլինի ընդունել երկու ելքերից որևէ մեկը. ընդունել և օրինապես ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (Արցախ) ինքնիշխան իրավունքը կամ Հայաստանի Հանրապետության կազմ մտնելը: Երրորդ ուղի, երրորդ լուծում մեզ համար գոյություն չունի:

Գոյություն չունի նախ և առաջ այն պատճառով, որ նույն երկրում թուրքի հետ հայի ապրելու անհնարինությունն ապացուցվել է դարերով, իսկ վերջին պատերազմում՝ հատկապես, ու եթե չլինեին պատմության դժխեմ վայրիվերումները, նման համակեցություն հայը երբեք էլ չէր հանդուրժի, հանգամանքները միշտ էլ բռնացել են նրա կամքի ու ցանկության վրա... Ու երկրորդ՝ որ Արցախի մերօրյա անկախության համար մենք բավականին թանկ ենք վճարել՝ մեր լավագույն զավակների կյանքի և արյան գնով: Ուստի, ետ շրջել պատմության անիվը չենք կարող թողնել: Շարժման տարիներին և կոնկրետ Ազատամարտում զոհված այնքան տղաներ ունենք և՛ բանտերի ու կոտանքների բաժին դարձած 239 ազատամարտիկներ... որ համաձայնվել ձեռք բերածը վերստին կորցնելու մտքի հետ,

ըստ իս, չի համաձայնվի ոչ մի հայ:

Մեր անկախությունը պահելու համար մենք ունենք լույ մեկ ուղի. ուժեղացնել մեր բանակը և զարգացնել երկրի տնտեսական հզորությունը՝ չանտեսելով հանդերձ ժողովրդավարական երկիր ունենալու և ժողովրդավարության պահանջները չկոխկրտելու անհրաժեշտությունը:

Արցախը փոքր երկիրը շարունակում է իր փոքրիկ՝ բայց վստահ քայլերն անել անկախության ճանապարհին: Կյանքը, թեև դժվարությունների հետ զուգակցված, այսպես թե այնպես առաջ է գնում, և բոլորս հույս ենք պահում, որ աշխարհը մի օր, վերջապես կհասկանա ու ճանաչի մեր անկախությունը: Եվ որքան շուտ՝ այնքան լավ և՛ մեզ համար, և՛ աշխարհի, որովհետև գուցե թե այդպես մի փոքրիկ տարածաշրջան ևս դուրս կգա «թեժ կետերի» ցուցակից...

**Չորավիզ լինենք Արցախի առաջընթացին, ինչը նշանակում է՝ զորավիզ լինենք ինքներս մեզ:**

**Վերա ԳՐԻԳՈՐՅԱՆ**

«ԱԿԱՀՄ» /կ/ նախագահ  
«Ազատ Արցախ», 31 օգոստոսի 2013թ.



## ԼՂՀ ԱԿԱՀՄ -Ն 15 ՏԱՐԵԿԱՆ Է

Հոկտեմբերի 10-ին Ստեփանակերտի մշակույթի և երիտասարդության I պալատում կազմակերպված միջոցառմանը ներկա էին Արցախի հոգևոր թեմի առաջնորդ Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, ԱԺ նախագահ Աշոտ Դուլյանը, վարչապետ Արա Հարությունյանը, բարձրաստիճան ալ պաշտոնյաներ, հասարակական կազմակերպության ներկայացուցիչներ, հյուրեր:



Պատերազմի ավարտից անցել էր 4 տարի, բայց գերիներից քչերին էր հաջողվել վերադառնալ հայրենի եզերք, մյուսների մասին տեղեկություններ ստանալու, նրանց տեղը պարզելու և տուն վերադարձնելու համար 1998 թվականին ցավից ու հուսահատությունից ծնունդ առավ արցախյան ազատամարտում անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միու-

թյունը, որի նպատակը չի փոխվել առ այսօր, քաջ մարտիկների հարազատները մշտաբուն սպասում են նրանց վերադարձին:

Ոչ միայն պատերազմը, այլև հրադադարից հետո հաստատված խաղաղությունը ցույց տվեց, որ մենք գործ ունենք, դժբախտաբար, աննախադեպ նենգ ու ռիսակալ, միջազգային կարգ ու կանոնն անտեսող հակառակորդի հետ,- նշեց ԼՂՀ ԱԿԱՀՄ նախագահ Վերա Գրիգորյանը հավելելով,- տղաների ազատությանը հասնելուց բացի, գործունեության ստանձնած բոլոր ուղղություններում ԱԿԱՀՄ 15 տարիները եղել են նպատակադրված նիշերին և արժեքներին հասնելու տարիներ, որոնց հասել ենք ոչ միայն սեփական ուժերով, այլև պետության ու կառավարության, հայ մեծ ու փոքր բարեգործների, հասարակական կազմակերպությունների բարոյական ու նյութական աջակցության շնորհիվ:

ԱԿԱՀՄ ծրագրերը շատ են ու բազմատեսակ, ծրագրեր, որոնք կյանքի են կոչվում և կազմակերպության ուժերով, և այլ կազմակերպությունների հետ համատեղ:

Տարիներ շարունակ կազմակերպությունը բուժման կարիք ունեցողների համար ձեռք է բերել առողջարանային, իսկ երեխաների համար հանգստի ուղեգրեր: Ամեն տարի՝ որպես կանոն, նշվում է անհայտ կորած ազատամարտիկների երեխաների Ամանորը, երեխաների պաշտպանության միջազգային օրը, անհայտ կորած ազատամարտիկների հիշատակի օրը, նոր ուսումնական տարին, ընտանիք կազմողների հարսանիքները, ծնունդները, բնակարանամուտը: 2006 թվականը նշանավորվեց 3 նորությամբ՝ բացվեց գրադարան, որը կրում է «Մարտական խաչ առաջին աստիճանի» շքանշանակիր, ան-

հայտ կորած ազատամարտիկ Կարոտ Սկրտչյանի անունը, բուժկետ և ռազմահայրենասիրական կարիներտ: Վերա Գրիգորյանը հաճախ է լինում զորամասերում, որտեղ ցուցադրվում են փաստավավերագրական ֆիլմեր, և զինվորներին նվիրում է կազմակերպության և իր հեղինակած գրքերից:

Այս 15 տարիների ընթացքում կազմակերպությունը հրատարակել է 17 գիրք, կուտակել՝ 316 փաստավավերագրական ֆիլմ նվիրված Արցախյան պատերազմի ժամանակ անհայտ կորած 239 ազատամարտիկներին: Միջոցառումը համեմված էր նաև շնորհավորական խոսքերով:

«Չինվոր համակարգող խորհրդի» նախագահ Մարգարիտա Խաչատրյանն իր խոսքում համբերություն, ուժ և կորով մաղթեց հայ մայրերին.

Երբևիցե բացակա մի դրեք, հայրենիքն արցունքով չենք պահելու, մենք պիտի լինենք միասնական ու համախմբված, որպեսզի դարանակարված թշնամին երբևիցե մեր բախկին բացակա չդնի:

ԱԿԱՀՄ 15 ամյակը շնորհավորելու էր եկել նաև քույր կազմակերպության նախագահ ՀՀ ԱԿԱՀՄ նախագահ Ռիմա Առաքելյանը:

Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյանն իր խոսքում անդրադարձավ հերոս ծնած մայրերի նկարագրին, նրանց առաքելությանը.

Հայոց մայրերի ուսերին միշտ ամենածանր բեռն է ընկնում: Հերոսներին լույս աշխարհ են բերում մայրերը: Նրանք են դաստիարակում, օրհնում, մարտի դաշտ ուղարկում և նրանք են, որ համբերությամբ միշտ սպասում են իրենց զավակի վերադարձին: Ցանկացած մարդու համար կարևոր է թե մխիթա-

րությունը, թե գոտեպնդումը հայրենասիրության ոգով: Կարծում եմ Ձեր ամենակարևոր ներդրումը Ձեր պատվախնդիր կեցվածքն է:

Գովեստի է արժանի ֆոտոլրագրող Ռասալ Փոլարդի մտահղացումը, ով «Արցախի երիտասարդության զարգացման կենտրոնի» աջակցությամբ Բրիտանիայում դրամահավաք է կազմակերպել: Հավաքված գումարը կտրամադրվի ԱԿԱՀՄ-ին նպաստելով միության հետագա ձեռնարկումների իրականացմանը:

Նշենք, որ միության կողմից 2012 թվականին ստեղծված «Հայրենիք և հավատ» մեդալով պարգևատրվեցին անհայտ կորած ազատամարտիկների հարազատներ ու բարեգործներ:

Միջոցառումը համեմված էր հայրենասիրական ու մարտական երգերով:

**Արևիկ ԲԱԲԱՅԱՆ**  
*«Մարտիանակերպ»*  
12 հոկտեմբեր, 2013թ.



**«ԵՐԿՈՒ ԾԱԿԱՏԻ ԶԻՆՎՈՐԸ». ԱՅՍ ԱՆԳԱՄ՝  
ՈՍՏԻԿԱՆՆԵՐԻ ՍԽՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Հոկտեմբերի 30-ին ԼՂՀ Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միության հուշաթանգարանում տեղի ունեցավ Վերա Գրիգորյանի «Երկու ճակատի զինվոր» գրքի շնորհանդեսը: Այս գիրքը գալիս է լրացնելու Արցախյան գոյամարտի կարևոր մի հատված: Արցախյան ազատագրական պատերազմը պայքարի կոչեց համայն հայությանը: Բնակա-



նաբար, այդ պայքարից անմասն չմնացին նաև ոստիկանները, և ի ուրախություն մեր հայ ոստիկանների, Վերա Գրիգորյանի այս գիրքը նրանց նվիրումի, հաղթանակների և հուշերի մասին է պատմում:

Հեղինակի անկեղծ ու անկաշկանդ գրույցը նրանցից 48-ի հետ է, ովքեր ի թիվս մյուսների, մարտական գործողությունների գործուն մասնակիցներ լինել չի կարող, քանի որ նրանք բո-



լորն էլ ծառայում էին մի նպատակի համար:

Պատերազմի տարիներին ներքին գործերի նախարարության մամլո հաղորդագրություններում հաճախակի անդրադարձ էր կատարվում ռազմաճակատի տարբեր հատվածներում ոստիկանների կողմից պարբերաբար կատարվող աշխատանքների մասին: Այս ամենի վերաբերյալ իր կարծիքն է արտահայտել ԼՂՀ և ՀՀ գրողների միության անդամ, արձակա-



գիր, Արցախի ժուռնալիստների միության վարչության նախագահ Կիմ Գաբրիելյանը:

Մի այսպիսի զարմանալի բան կար. երբ ոստիկանները խրամատում էին խոսում էին հանցավորության դեպքերի և դրանց դեմ պայքարի մասին, իսկ երբ գալիս էր իրենց հերթապահությունն ավարտելու պահը և նրանք պիտի գնային ու շարունակեին իրենց ծառայությունը, սկսում էին մտածել իրենց ընկերների մասին, ովքեր ճակատում էին: Այսինքն, նրանց միտքը միշտ զբաղված էր. մեկ մտածում էին կանխել բոլոր

հանցագործությունները, մեկ էլ իրենց ընկերների ապահովության մասին: Այս գիրքը մեզ շատ բան կարող է տալ, քանի որ այստեղ մեր ընկերների անցած դաժան ուղին է: Ես համակուշադրությամբ կուսումնասիրեմ այս նորընծա գիրքը և հրապարակավ կարտահայտեմ իմ կարծիքը,- ասաց Կիմ Գաբրիելյանը:

«Երկու ճակատի զինվոր» գիրքը տպագրել է «Սոնա» գրահրատարակչությունը, որի հիմնադիրն ու ղեկավարն է անվանի գրող, հրապարակախոս և լրագրության գրական ընտանիքի նահապետ Մաքսիմ Հովհաննիսյանը: Նա գրքում հանդես է եկել մուտքի խոսքով. «Հանրությանն առաջարկվող այս գրքում շատ էջեր ինձ համար անսպասելի էին ու հայտնություն: Վերջերս այլ առիթով հանդիպեցի ոստիկանության գնդապետ, ԼՂՀ ոստիկանապետի տեղակալ Մխիթար Գրիգորյանի հետ: Նա մի քանի դրվագներ պատմեց այն գործողություններից, որոնք իրականացվել են մեր ոստիկանների կողմից: Դրանք, իրոք, հերոսական էին իրենց խիզախությամբ:

- Բայց մեր հանրությանը շատ բան հայտնի չէ,- նշեցի ես:

Մենք չենք կարող բարձրաձայնել ծառայողական գաղտնիությունը,- գրուցակիցս ձեռքերը լայն տարածեց, ու ես հասկացա, որ հասարակության անտեղյակությունը բոլորիս բացթողումն է»:

Ես խոնարհումի խոսք ունեմ ասելու ոչ միայն Վերա Գրիգորյանին, այլ բոլոր նրանց, ում շնորհիվ գիրքը տեսքի է բերվել: Այս գիրքն ընթերցելուց հետո միայն հասկացա, որ ես շատ քիչ բան գիտեմ ոստիկանների, նրանց կատարած աշխատանքների մասին: Առանձնահատուկ հուզումնք է պատում, երբ կարդում ես անհայտ կորած ոստիկանների մասին: Գուցե հուզականության աղբյուրն ինքը՝ հեղինակն է՝ Վ. Գրիգորյանը, ում միևնուճարը գերեվարվել է թշնամու կողմից, Վերա Գրի-

գորյանը հենց ինձ տեսավ,- նշեց Նվարդ Ավագյանը՝ հավելելով գրքում նկարագրվում է մեր ոստիկանների արի ոգին, որի շնորհիվ անվախ՝ կռվի դաշտ էին ելել մեր պաշտպանները: Միանգամայն գնահատում եմ Վերա Գրիգորյանի աշխատանքը, նա առաջիններից է, ով անդրադարձ է կատարել ոստիկանների աշխատանքին և մեծարել այն՝ մի գրքում զետեղելով 48 ակնարկ, թեկուզ պատերազմին մասնակցել են 716 հոգի (Վերա Գրիգորյանն իր գրքի վերջին հատվածում բոլորին անուն առ անուն նշել է): Բայց նշեմ նաև, որ գրքում զետեղված 48 ոստիկանները, պատմելով իրենց մարտական ուղու մասին, հիշատակել են իրենց զինընկերների անունները, պատմել՝ նրանց կատարած աշխատանքների մասին: Վերա Գրիգորյանը ջանասիրաբար հարցազրույց է վերցրել 48 ոստիկաններից բոլորին տալով նույն հարցը, թե ո՞րն է եղել իրենց ամենատրախ և ամենատխուր օրը պատերազմի տարիներին: Գրառել է 48 հոգու պատասխան՝ միմյանցից բավականին տարբեր, բայց ներքին երանգով նման, որովհետև այլ կերպ կարծիքը,- ասաց Կիմ Գաբրիելյանը: Վերջինս խոստովանեց, որ մեծ ցանկություն ունի որոշ ժամանակ անց հագեցած ու բովանդակալից ֆիլմ պատրաստելու:

Ժամանակին շատ կադրեր ունեի, որոնք անձամբ ես էի նկարահանել, բայց ցավոք, դրանց օրիգինալ տարբերակները չեն պահպանվել: Սա շատ դժվար աշխատանք է, բայց եթե առաջարկս ողջունվի իրավասու մարմինների կողմից, ապա ես պատրաստ եմ այն իրագործել: Այդ ֆիլմը հետագայում կարող ենք համարել «Երկու ճակատի զինվոր» գրքի շարունակությունը,- հավելեց նա:

Շատ հետաքրքիր էր լսել ոստիկանության վետերանների կարծիքները: Առաջինը, ով ցանկություն հայտնեց արտահայտվելու և կիսվելու իր մտքերով Վոլոդյա Ստեփանյանն էր:

Վերջինիս խոսքը հակիրճ էր.

Ոստիկաններն առաջին իսկ օրվանից պայքարի մեջ էին մտել, և սխալված չեմ լինի, եթե ասեմ, որ ամենադժվարին աշխատանքներից էր ոստիկանների աշխատանքը, նրանք և որպես զինվոր էին, և որպես ոստիկան: Այստեղից էլ «Երկու ճակատի զինվոր» վերնագիրը:

Ղարիբ Հարությունյանն այս գրքի հերոսների շարքում է (ԼՂՀ ոստիկանության ամենահին աշխատողներից է): Նա ևս ներկա էր գրքի շնորհանդեսին:

Բոլորիս հայտնի է, որ ոստիկան լինելն ամենապատասխանատու աշխատանքներից է: Անհրաժեշտ է նրանց ընդունել որպես բարեկամ, այլ ոչ թե թշնամի: Նրանց շնորհակալ աշխատանքը Վերա Գրիգորյանին դրդեց գրել հենց ոստիկանների, նրանց կատարած աշխատանքների մասին: Շնորհակալություն եմ հայտնում այդպիսի զիրք գրելու համար: Մեր հետագա սերունդներին, կարծում եմ, կհետաքրքրի այս աշխատանքը,- նշեց նա:

Առանձնահատուկ հուզմունք է պատում, երբ կարդում ես անհայտ կորած ոստիկանների մասին: Գուցե հուզականության աղբյուրն ինքը՝ հեղինակն է՝ Վերա Գրիգորյանը, ում մի նունճարը գերեզման է թշնամու կողմից: Կարծում եմ՝ ուրիշ հեղինակներ ևս հանդես կգան՝ իրենց գնահատականներով ու լրացումներով,- նշեց նա: Ամենավերջում խոսք ասաց գրքի հեղինակ Վերա Գրիգորյանը.

- Նախ և առաջ խորին շնորհակալություն եմ հայտնում ԼՂՀ ոստիկանության պետ Կամո Աղաջանյանին գրքի մտահղացումը խրախուսելու և այն հովանավորելու համար: «Երկու ճակատի զինվոր» գիրքը թվով 17-րդն է, բայց նաև հավելեմ, որ ոչ գրողների միության և ոչ էլ՝ ժուռնալիստների միության անդամ եմ,- ասաց նա:

Գրքի հեղինակն ավելացրեց, որ համամիտ է Կիմ Գաբրիելյանի առաջարկությանը, և որ ինքը ևս կարող է օգնել ֆիլմի պատրաստման աշխատանքներին:

Օրը 4-ից 5 անգամ ոստիկաններին անհանգստացնում էի, փաստերը՝ ճշտում, հուզող հարցերի պատասխանները՝ գրառում: Այսպիսի գրքի հրատարակման միտքն ինձ տարիներ շարունակ հետապնդում էր, դա կարող են հաստատել ոստիկանները՝ ի դեմս պարոն Ռոբերտ Շաֆերյան,- հավելեց նա:

Միջոցառման ընթացքում Վերա Գրիգորյանը ԼՂՀ ոստիկանության պետ Կամո Աղաջանյանին պարզևատրեց «Հայրենիք և հավատ» մեդալով, իսկ կազմակերպության հատուկ շնորհակալագրով պարզևատրվեց Մխիթար Գրիգորյանը:

Վերջում իրականացվեց ավանդական զինեձոնի արարողությունը:

***Լուսինե ԱՂԱԶԱՆՅԱՆ***

*«Սրբեփանակերպ»*

*11 նոյեմբեր 2013թ.*

**ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ՆՎԻՐՎԱԾ «ԱՆՀԱՅՏ ԿՈՐԱԾ  
ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՀԱՐԱՁԱՏՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ»  
15-ԱՄՅԱԿԻՆ**

Հոկտեմբերի 10-ին Ստեփանակերտի մշակույթի և երիտասարդության պալատում տեղի ունեցավ «Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միության» ստեղծման 15-ամյակին նվիրված միջոցառում: Միջոցառմանը ներկա էին ԼՂՀ ԱԺ նախագահ Աշոտ Դուլյանը, ԼՂՀ վարչապետ Արա Հարությունյանը, Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարգև արքեպիսկոպոս Սարտիրոսյանը, բարձրաստիճան պաշտոնյաներ, անհայտ կորած ազատամարտիկների ծնողներ, հարազատներ, մարտական ընկերներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, հյուրեր:

Արցախյան ազատամարտը հաղթանակի բերկրանք պատճառելուց բացի անասելի կորստի ցավ է տվել հարյուրավոր



ընտանիքների: Պատերազմում ոչ միայն զոհվեցին, այլև անհայտ կորան հարյուրավոր ազատամարտիկներ ու խաղաղ բնակիչներ: Հարյուրավոր ազատամարտիկների ու խաղաղ բնակիչների հարազատներ առ այսօր ապրում են վերադարձի հույսով:

Դժվար է ներկայացնել այն ապրումները, որ ունեն անհայտ կորածների ծնողները, կանայք ու երեխաները: Դռան ամեն մի թակոց նրանց համար հույս է, ամեն զանգ նրանց համար հավատ է, որ իրենց զավակը, ամուսինը, հայրը վերադառնալու է տուն: 1993 թվականին ԼՂՀ Պաշտպանության կոմիտեի նախաձեռնությամբ ստեղծվեց ռազմագերիների, պատանդների և անհայտ կորածների հարցերով զբաղվող պետական հանձնաժողով, որը համագործակցում էր ԵԱՀԿ առաքելության, «Բժիշկներ առանց սահմանի» կազմակերպության և «Կարմիր խաչի միջազգային կոմիտեի» հետ: Տարիների որոնողական աշխատանքները արդյունք չատ դեպքերում չէին տալիս, իսկ տանջալից սպասումը հալածում էր մարդկանց: Պատերազմի տարիներին և դրանից հետո, երբ անհայտ կորած ազատամարտիկների հարազատները ճիգեր էին գործադրում պարզելու տղաների ճակատագիրը, պարզ դարձավ, որ նրանց բոլորին միավորող կառույց է պետք: Եվ ահա հրադադարից չորս տարի անց 1998 թվականին որոշեցին ստեղծել հասարակական կազմակերպություն, որը կմիավորեր և կհամակարգեր իրենց ջանքերը: Բարձր էր պետության, եկեղեցու, հասարակական կազմակերպությունների, անհատների դերն այսքան տարիների ընթացքում, որոնք քաջ գիտակցելով, որ դեռ պետական մակարդակում չատ անելիքներ կան, այնուհանդերձ իրենց հոգատարությամբ ու ջերմ վերաբերմունքով մենակ չեն թողնում այն ընտանիքներին, որոնց աչքը ճանապարհին է: Արդեն 15 տարի է, ինչ նրանց միավորում է «Անհայտ կորած

ազատամարտիկների հարազատների միությունը», որն իր մշակած ծրագրերի միջոցով հնարավորինս սատարում է անհայտության մեջ գտնվող ազատամարտիկների ընտանիքներին, հարազատներին: Միության նպատակներն ու ձգտումները անփոփոխ են. անկախ ամեն ինչից սպասել տղաների վերադարձին, պարզել նրանց ճակատագիրն ու սատար կանգնել ընտանիքներին: Միության նպատակներից էր նաև նյութական և բարոյական աջակցության ցուցաբերումը: Մեկուկես տասնամյակ գործող հասարակական կազմակերպության անցած ուղին ներկայացրեց կազմակերպության ղեկավար Վերա Գրիգորյանը: - «Քանի դեռ կան մեր և ձեր անհատական, իսկ միասին վերցրած՝ ժողովրդական հիշողությունը, կան ու կլինեն նաև մեր տղաները թեկուզ հակառակորդի ճիրաններում: 1998թ. հոկտեմբերի 10-ին ծնունդ առավ մեր կազմակերպությունը, ծնունդ առավ ցավից ու հուսահատությունից: Այսօրը առիթ է ևս մեկ անգամ հիշելու և խոնարհվելու բոլոր նրանց հիշատակի առաջ, ովքեր իրենց անձնագոհության, նվիրումի և հերոսական ոգու շնորհիվ կերտեցին մեր հաղթանակը:

Մկիզբը դժվար էր, սակայն ընդհանուր առմամբ հաջողվել է համախմբել անհայտ կորածների հարազատներին: Միության մասնաճյուղերն առ այսօր վարկածներ ու տեղեկություններ են հավաքում անհայտ կորածների գտնվելու վայրի մասին: Գրասենյակի հատուկ պահարանների դարակներում տղաների կենսագրություններն են, յուրաքանչյուրի մղած վերջին մարտի վայրն ու անհայտանալու իրավիճակը բացահայտող այլ փաստեր: Միության ունեցած տվյալներով պատերազմի տարիներին և դրանից հետո 730 արցախցի է անհայտ կորել, որից 239 ազատամարտիկ: Միության հիմնադրման և գործունեության 15-ամյակի կապակցությամբ ուղերձներ են հղել ՀՀ



և ԼՂՀ Պաշտպանության նախարարներ, գեներալ-լեյտենանտ Սեյրան Օհանյանը և Մովսես Հակոբյանը:

Օրինանքի խոսքով հանդես եկավ ՀԱԵ Արցախի թեմի առաջնորդ Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը: «Կազմակերպության գործունեությունը պետք է նպաստի այն հերոսական ուղու անշեղ ընթացքին, որ ի սկզբանե դրվել է 1988 թվականին: Հայոց մայրերի ուսերի վրա է միշտ ընկնում, ընկել և ընկնելու է ամենածանր բեռը: Հերոսներին լույս աշխարհ են բերում հայոց մայրերը, նրանք են դաստիարակում, նրանք են օրհնում, նրանք են մարտի դաշտ ուղարկում և նրանք են, որ համբերությամբ միշտ սպասում են իրենց զավակների վերադարձին: Ցանկացած մարդու համար շատ կարևոր է թե մխիթարությունը, և թե գոտեպնդումը հայրենասիրության ոգով: Եվ ես կարծում եմ, որ ձեր ամենալավագույն ներդրումը, որ դուք անում եք, դա ձեր պատվավոր, պատվախնդիր կեցվածքն է, որ ամենալավ հայրենասիրական ձևով է դաստիարակում մեր մատաղ սերնդին՝ վիշտը՝ սրտում, պատիվը՝ դեմքին:

Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միության հետ կողք կողքի քայլում է քույր կազմակերպությունը՝ ՀՀ ԱԿԱՀՄ-ը: 15-ամյակին նվիրված միջոցառմանը ներկա էր նաև ՀՀ ԱԿԱՀՄ միության նախագահ Ռ-ինա Առաքելյանը, ՀՀ «Զինվոր» ՀԿ նախագահ Մարգարիտա Խաչատրյանը:

Հնչեցին շնորհավորանքներ, եղան պարզևատրումներ: Մեր մայրերիս մաղթում եմ համբերություն, ուժ, կորով: Երբևիցե բացակա մի դրեք, մենք արցունքով հայրենիքը չենք պահի,- իրելությունն ճշեց Մ. Խաչատրյանը,- Մենք պիտի լինենք միասնական, պիտի լինենք համախմբված, որպեսզի դարանակալած թշնամին երբեք մեր տղաներին բացակա չդնի:

Միության տարբեր ծրագրերին մասնակից ու աջակից են Արցախի տարբեր հասարակական կազմակերպությունները:

Արցախի զարգացման երիտասարդության կենտրոնի աջակցությամբ ֆոտոլրագրող Դասել Պոլարդը Բրիտանիայում դրամահավաք է կազմակերպել միության հետագա ձեռնարկումներին աջակցելու նպատակով: Միջոցառման ընթացքում ներկաներին ցուցադրվեց «Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միության» անցած 15-ամյա գործունեությունը լուսաբանող վավերագրական ֆիլմ: ԱԿԱՀՄ «Հայրենիք և հավատ» մեդալներով են պարգևատրվել անհայտ կորածների հարազատներ ու բարեգործներ, մարդիկ, ովքեր իրենց գործունեությամբ մեծ ներդրում ունեն և ամեն կերպ աջակցում են միությանը: Անցած 15-ամյա ճանապարհը նաև հետագա ծրագրերը նախանշելու առիթ էր, այդ աշխատանքները շարունակաբար կուղղվեն անհայտ կորածների ճակատագրերի հստակեցմանը:

**Լիլիթ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**  
*«Հայրենյաց պաշտպան»*  
*նոյեմբեր 2013թ.*



## ԳԻՐՔ, ՈՐ ՀՈԳՈՒ ՊԱՀԱՆՁ ԷՐ ՈՒ ՀՈԳՈՒ ՊԱՐՏՔ...

«Երկու ճակատի զինվորը» այսպես է կոչվում Վերա Գրիգորյանի հեղինակությամբ լույս տեսած գիրքը, որում ներկայացված է Արցախի ոստիկանների ներդրումն ազգային-ազատագրական պայքարին: Հոկտեմբերի 30-ին ԼՂՀ անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարանում տեղի ունեցավ գրքի շնորհանդեսը, որին ներկա էին ոստիկանության համակարգի աշխատողներ, հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներ, անհայտ կորած ազատամարտիկների հարազատներ:

Նախքան միջոցառումն սկսվելը մեկ բուպե լռությամբ հարգվեց Արցախյան պատերազմում զոհված ոստիկանների հիշատակը:

Արցախի ազատության և անկախության պայքարին զինվորագրվել էին բոլորը՝ զինվորականը, բանվորը, գյուղացին, ուսուցիչը, բանաստեղծը, քահանան... Այդ պայքարից անմասն չեն մնացել ոստիկանները, որոնք Շարժման առաջին իսկ օրից կանգնեցին ժողովրդի կողքին, բացման խոսքն այսպես սկսեց պատմաբան Միեր Հարությունյանը: Օրինապահ մարմինների հարյուրավոր ներկայացուցիչներ ազատամարտի տարիներին հանդես էին գալիս երկու ճակատում մի կողմից կատարում իրենց կանոնադրական գործառույթները, մյուս կողմից՝ ռազմալի մարտական գործողությունների առավել թեժ կետերում բանակի հետ միասին գրոհները հետ մղում, ժամանակավորապես գերված բնակավայրերն ազատագրում: Ներքին գործերի համակարգի 716 աշխատողներ մասնակցեցին մարտական գործողություններին, 34 հոգի իրենց կյանքը դրեցին հայրենիքի զոհասեղանին, իսկ 7 հոգու բաժին ընկավ գերության ու անհայտության ծանր ճակատագիրը: Մ. Հարությունյանի խոսքերով՝ գիրքը վերոնշյալ բոլոր իրադարձու-

թյունների վերախմաստավորումն է: Այնտեղ կան այն ոստիկանների վկայությունները, ովքեր դրանց անմիջական մասնակիցն ու ականատեսն են եղել: Անշուշտ, բոլորին հնարավոր չէր ընդգրկել մի գրքում. հեղինակն անկեղծ ու անկաշկանդ զրույց է ունեցել նրանցից 48-ի հետ, որոնք, ի թիվս մյուսների, մարտական գործողությունների մասնակիցներ են, բացահայտում են հենց հարուստ ներաշխարհը, հայրենասիրական բարձր ոգին: Յուրաքանչյուրի կյանքի դրվագները հայրենիքին ծառայելու չհորինված պատմություններ են: Ընդհանուր առմամբ «Երկու ճակատի զինվոր» գիրքն իր ծննդով երևույթ է և գալիս է լրացնելու Արցախյան զոյամարտի կարևոր մի հատված, այս միտքն էր ընդգծվում ելույթ ունեցողներից յուրաքանչյուրի խոսքում:

Այն, որ շնորհակալ գործ է կատարել Վերա Գրիգորյանը, առաջինը փաստեց գրքի խմբագիր Նվարդ Ավագյանը: Նրա խոսքերով՝ հեղինակը փաստորեն խիզախ ու պատասխանատու մի գործ, որը հաջողվել է նրան՝ շնորհիվ իր համառության ու աշխատասիրության: Միայն փաստերի հավաքագրումը, ինչպես ասաց Նվարդ Ավագյանը, բավականին աշխատատար, տքնաջան գործ է:

Գրքի ծնունդը ողջունեցին և շնորհավորանքի խոսք ասացին Արցախի ժուռնալիստների միության նախագահ Կիմ Գաբրիելյանը, ոստիկանության վետերաններ Վուրդյա Ստեփանյանը, Ղարիբ Հարությունյանը, ԼՂՀ ոստիկանապետի տեղակալ Մխիթար Գրիգորյանը և ուրիշներ:

Կիմ Գաբրիելյանը երկար տարիներ՝ ինչպես պատերազմական, այնպես էլ հետպատերազմյան, աշխատել է ոստիկանության համակարգում և բազմիցս լուսաբանել է նրանց ծառայությունը ռազմադաշտում, հանցավորության դեմ պայքարում: Նրա կարծիքով ոլորտի աշխատողները, բարձր պահելով համազգեստի պատիվը, փառապանծ ուղի են անցել, և

գիրքը նույնիսկ ինչ-որ տեղ ուշացած է ու դեռ թարմացման, լրացման կարիք ունի: Որպես առաջարկություն Կ. Գաբրիելյանը ներկայացրեց հետագայում թեմային անդրադառնալու համակարգի մասին բովանդակալից ֆիլմ պատրաստելու գաղափարը, հատկապես երբ ինքն անձամբ բավականին կադրեր ունի պահպանած:

Գրքի լույսընծայման գործին՝ փաստերի տրամադրման ու դրանց ճշտման, հավաքագրման առումով մեծապես աջակցել է ոստիկանությունը:

Նրա խոսքերով գրքի լույսընծայմամբ հանրությանը հայտնի դարձավ ոստիկանության կատարած հայրենամարտի աշխատանքը, որի մասին չէին կարող բարձրաձայնել համակարգի աշխատողները, որպես ծառայողական գաղտնիություն: Գիրքը մեկ անգամ փաստում է, որ մեր հաղթանակը ժողովրդի միասնության արդյունքն է, ասաց Մ. Գրիգորյանը միաժամանակ ընդգծելով, որ այն ծավալով չի կարող լրիվությամբ արտացոլել ոստիկանության կատարածը: Նա կոչ արեց համակարգի աշխատողներին գրել, ներկայացնել իրենց հուշերը, տեսածն ու զգացածը ու դրանք պահ տալ պետական արխիվին: «Եթե նույնիսկ այսօր էլ չարվի, ժամանակի ընթացքում ուսումնասիրողների համար դրանք լավագույն փաստեր ու նյութեր կհանդիսանան իրական պատմությունը գրելու համար:

Գրքի մասին իր տեսակետը հայտնեց արձակագիր Մաքսիմ Հովհաննիսյանը: «Ես ուզում եմ խոնարհումի խոսք ասել բոլոր նրանց, ովքեր օգնել են գրքի կայացմանը,- ասաց նա: Մինչ այդ որքա՞ն քիչ բան գիտեինք մեր ոստիկանների արածի մասին: Կարդում ես, ու թվում է՝ դետեկտիվ վեպ ես ընթերցում: Եվ այնքան հետաքրքիր ու լավ է շարադրված, այնքան հերոսականություն կա այդ շարադրվածի մեջ... Ու այդպես ես հասկացա, որ մեր այս միլիցիան ուրիշ բան է:

Հիրավի, գիրքն առաջին վարձն է, և բնական է, որ պակասություններ ունենա, որոնք գուցե հաջորդ հրատարակություններում լրացվեն: Գուցե նաև ուրիշ հեղինակներ հանդես գան՝ իրենց գնահատականներով ու լրացումներով:

«Այս գրքին կյանք տալն ինձ համար հոգու պահանջ էր ու հոգու պարտք նաև այն պատճառով, որ միակ որդիս էլ ոստիկան էր,- իր խոսքում ասաց Վերա Գրիգորյանը: - Նա երագում էր պատերազմից հետո ստանալ իրավաբանական կրթություն՝ շարունակելու ծառայությունը ոլորտում, բայց դաժան մարտերից մեկում առաջին գծից անհայտացավ... Այնպես որ այս գիրքը գուցե թե նույնիսկ քիչ-ինչ ուշացած, հարգանքի տուրք է ԼՂՀ ոստիկանության այն ավանդին, որ ունեցել է սրբազան պատերազմում:

«Երկու ճակատի զինվոր» գրքի մտահղացումը խրախուսելու և հովանավորելու համար ԼՂՀ ԿԱ ոստիկանության պետ Կամո Աղաջանյանը պարզևատրվեց ԼՂՀ ԱԿԱՀՄ «Հայրենիք և հավատ» մեդալով:

**Լատրա ԳՐԻԳՈՐՅԱՆ**  
«Ազար Արցախ», 2 նոյեմբերի 2013թ.

## ԱԿԱՀՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ 15 ՏԱՐԵԿԱՆ Է

Ստեփանակերտի երիտասարդության և մշակույթի պալատում հոկտեմբերի 10-ին նշվեց ԱԿԱՀՄ ՀԿ-ի 15-ամյակը, որին ներկա էին, ԱԺ նախագահ Ա. Դուլյանը, ԼԳՀ վարչապետ Ա. Հարությունյանը, Արցախի թեմի առաջնորդ Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, միության հետ համագործակցող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, պաշտոնատար անձինք, զինվորականներ և հյուրեր: Միջոցառման սկզբնամասում մասնակիցների ուշադրությանը ներկայացվեց միության 15-ամյա գործունեության մասին պատմող կարճամետրաժ փաստագրական ֆիլմը, որին հաջորդեց անհայտ կորած ազատամարտիկի մայր, ԱԿԱՀՄ հասարակական կազմակերպության հիմնադիր - նախագահ Վերա Գրիգորյանի ելույթը: Ողջունելով ներկաներին նա ներկայացրեց միության գործունեությունը և շնորհակալություն հայտնեց 15 տարիների ընթացքում իրենց հետ համագործակցող և աջակցող պետական այրերին, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին:

Միջոցառմանը վերոհիշյալ կազմակերպությունների անդամները հանդես եկան իրենց շնորհավորական և սփոփանքի խոսքով: Նրանք իրենց ելույթներում կարևորելով կազմակերպության գործունեությունը, հայտնեցին ապագայում ևս համագործակցելու և աջակցելու իրենց պատրաստակամությունը: ԱԿԱՀՄ հասարակական կազմակերպության 15-ամյակին նվիրված միջոցառմանը ՊԲ ռազմահայրենասիրական դաստիարակության և հասարակական կազմակերպությունների հետ կապերի բաժնի պետ, գնդապետ Բ. Մուրադյանը հրապարակեց ՀՀ պաշտպանության նախարար Ս. Օհանյանի և ԼԳՀ պաշտպանության նախարար, ՊԲ հրամանատար, գեներալ-լեյտենանտ Մ. Հակոբյանի ուղերձները: Միջոցառման վերջում իր շնորհավորանքի և օրհնանքի խոսքն ասաց Արցախի թեմի առաջնորդ Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը:

*«Մարտիկ», 4-11 հոկտեմբերի 2013թ.*

## ԱՅՍՏԵՂ ՄԵՁ Է ՓՈԽԱՆՑՎՈՒՄ ՆՐԱՆՑ ՄԱՐՏԱԿԱՆ ՈԳԻՆ

Հայրենիքի մերօրյա պաշտպանները հաճախ են լինում ԼՂՀ զոհված ազատամարտիկների հարազատների և Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միություններում, հատկապես դրանց կից գործող թանգարաններում, որտեղ ոչ միայն ցուցանմուշների, մասունքների և այլ



կարգի տեղեկությունների կարելի է ծանոթանալ իմանալ մեր ավագ եղբայրների ու հայրերի մարտական ուղու մասին, այլ նաև հայրենասիրության ու պարտքի զգացողության դասեր ստանալ: Օրերս առիթ ունեցանք լինելու անհայտ կորած ազատամարտիկների թանգարանում, որտեղից ստացած տպավորություններն ուզում են ներկայացնել որպես այդ օջախի գոյության արժևորման ու երախտագիտության արտահայտություն:



Անցած հազարամյակի ութսունականների վերջին և իննսունականների սկզբին հայ ժողովուրդը հայտնվեց մի այնպիսի բախտորոշ իրավիճակում, ինչպիսին պատերազմն է, որի սկսելուն պես հազարավոր հայորդիներ առանց երկմտելու սլացան մասնակցելու հայրենի հողի համար մղվող մարտերին: Այդ բարձր ու վեհ գործի համար զինվորագրվել էին մեծ ու փոքր բոլորը, բանվորը, գյուղացին, ուսուցիչը, բժիշկը, դեռահասը, քահանան, որոնք գնացին կռվի ու իրենց քաջության ու հայրենասիրության շնորհիվ տոնեցին հաղթանակ, բայց, ցավոք, հաղթանակն այդ ունեցավ թանկ գին. գոհվեցին տղաներից շատերը, 239 հոգի էլ պատերազմի թոհուրոհի մեջ կորան անհայտ:

Անհայտ կորածների հարազատները ճիգ էին գործադրում պարզելու համար տղաների ճակատագիրը: Հրադադարի հաստատումից 4 տարի անց՝ 1998թ. նրանք որոշեցին ստեղծել հասարակական կազմակերպություն միավորելու և համակարգելու համար իրենց ջանքերը, ինչպես նաև նյութական ու բարոյական աջակցություն ցույց տալու միմյանց, և ըստ այդմ էլ 1998թ. հոկտեմբերի 10-ին ցավից ու հուսահատությունից ծնունդ առավ ԱԿԱՀՄ կազմակերպությունը: Գունարված հիմնադիր համագումարի ժամանակ կազմակերպության նախագահ ընտրվեց անհայտ կորած ազատամարտիկ Սպարտակ Գրիգորյանի մայրը՝ բարձր կամային հատկանիշների տեր Վերա Գրիգորյանը:

Հիմնադրման առաջին իսկ պահից կազմակերպությունը ձեռնամուխ եղավ մի շարք խնդիրների կատարմանը: Կազմակերպության անդամները տիկին Վերայի գլխավորությամբ, լինում էին հանրապետության տարբեր շրջաններում, հայթայթած նյութական միջոցները անհայտ կորածների հարազատներին բաժանելու համար: Միության որոնողական աշխատանքների արդյունքում գրասենյակի հատուկ պահարանի

դարակներում տեղ գտան տղաների կենսագրությունները, յուրաքանչյուրի մղած վերջին մարտի վայրն ու իրավիճակը բացահայտող տեղեկությունները:

Օրեցօր միությունը նոր ծրագրերի էր ձեռնամուխ լինում: Որոշվեց կառուցել հարազատների սպասումն ու տղաների հիշատակը խորհրդանշող հուշարձան, ավելի ուշ՝ նաև հուշաթանգարան: Միության անդամների եռանդուն աշխատանքի արդյունքում 2004թ. հունիսի 29-ին տեղի ունեցավ հուշարձանի և միաժամանակ հուշաթանգարանի բացումը:

Ամեն տարի կազմակերպությունը բուժման կարիք ունեցողների համար ձեռք է բերում առողջարանային ուղեգրեր: ԱԿԱՀՄ-ը մեծ հանդիսավորությամբ է նշում անհայտ կորածների երեխաների ամանորյա տոնը, Հունիսի 1-ը, նոր ուսումնական տարին, ընտանիք կազմողների հարսանիքները:

2006 թվականը ԱԿԱՀՄ-ի համար եղավ բեղմնավոր տարի, բացվեցին գրադարան, բուժկետ և ռազմահայրենասիրական կարիներտ: Իր հերթին ԱԿԱՀՄ ղեկավարն այցելում էր զորամասեր՝ հայրենիքի պաշտպանների համար ցուցադրելու տանելով կազմակերպության ստեղծած և կուտակած շուրջ 320 փաստագրական ֆիլմերից, նրանց նվեր տալով նույն թեմատիկայով իր հեղինակած 16 գրքերից: 2008թ. կազմակերպությունը լույս ընծայեց «Հուշամատյան», 2009-ին՝ «Կարոտ, հե՛յ, Կարոտ» գրքերը, որոնցից վերջինը նվիրված է «Մարտական Խաչ» 1-ին աստիճանի շքանշանակիր Կարոտ Մկրտչյանին, ով դաժան մարտերից մեկում կորել է անհայտ: 2011թ. լույս է տեսել «Ժամանակն իմ մտապատկերում», «Հուշամատյան-2», 2013-ին՝ «Սակավ «ես-ի» և շատ «մենքի» մասին ու «Քողը ետ քաշած գրառումներ» գրքերը:

2012թ. հանդես գալով նոր նախաձեռնությամբ՝ ԱԿԱՀՄ-ը թողարկեց «Հայրենիք և հավատ» մեդալը, որով պարգևատրում է մարտական գործողությունների ժամանակ անհայտ կո-

րած ազատամարտիկների ընտանիքներին, գերությունից վերադարձած ազատամարտիկներին և նրանց, ովքեր պարբերաբար աջակցում են կազմակերպության ծրագրերի իրականացմանը:

ԱԿԱՀՄ-ն շատ նպատակներ է առաջադրել, բայց այդ նպատակներից գերագույնը մեկն է միայն՝ տղաների ճակատագրերի պարզումը:

Շատ և բազմազան են ԱԿԱՀՄ-ի նպատակալաց աշխատանքները, որոնց մասին կարելի է պատմել անդադար, բայց ինչպես Վերա Գրիգորյանն է հակիրճ բնորոշել 15 տարիների իրենց գործունեությունը, «Տղաների ազատությանը հասնելուց բացի, գործունեության մնացած բոլոր ուղղություններով ԱԿԱՀՄ-ի 15 տարիները եղել են նպատակադրած նիշերին, արժեքներին հասնելու տարիներ, որոնց հասել ենք ոչ թե ամառի անապատում, լոկ սեփական ուժերով, այլ մեր պետության ու կառավարության, մեզ հասկացող հասարակության, հայ մեծ ու փոքր բարեգործների և բազում հասարակական կազմակերպությունների բարոյական ու նյութական աջակցության շնորհիվ»:

Հաճելի էր իմանալ, որ թանգարանում հաճախ են լինում ոչ միայն տարբեր ստորաբաժանումների անձնակազմերը, այլ նաև դպրոցականները և ուսանողները, որոնք արիության դասեր են ստանում այստեղ: Հիրավի, այստեղ մեզ է փոխանցվում նրանց՝ մեր քաջերի մարտական ոգին, խթանելով մեզ արժանապատվորեն շարունակելու նրանց գործը և անառիկ պահելու մեզ վստահված հայրենի եզերքը:

**Վահագն ՀԱԿՈՔՅԱՆ**

«Մարտիկ», 18-25 հոկտեմբերի, 2013թ.

**ԱՐՅԱԽՅԱՆ ԱԶԱՏԱՄԱՐՏԻՆ ԼՂՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԻՄԱՍՏԱՎՈՐՈՒՄԸ**

Հոկտեմբերի 30-ին ԼՂՀ ԱԿԱՀՄ ՀԿ նախաձեռնությամբ ԼՂՀ անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարանում տեղի ունեցավ Վերա Գրիգորյանի «Երկու ճակատի զինվորը» գրքի շնորհանդեսը: Գիրքը նվիրված է ազատագրական պայքարին Արցախի ոստիկանների ունեցած ավանդին, որը ներկայացված է շուրջ հինգ տասնյակ ականատեսների և մարտական գործողությունների մասնակիցների վկայությունների ու հուշերի, ինչպես նաև արխիվային նյութերի հիման վրա ստեղծված փաստագրական նյութի, այդ թվում լուսանկարների տեսքով: Գրքի խմբագիր Նվարդ Ավագյանի, Ժամանակին ներքին գործերի գերատեսչության մամուլի ծառայության ղեկավար Կիմ Գաբրիելյանի, ոստիկանության վետերաններ Վոլոդյա Ստեփանյանի, Ղարիբ Հարությունյանի, Արտյուշա Մադաթյանի, ԼՂՀ ոստիկանության պետի տեղակալ Մխիթար Գրիգորյանի, գրող-հրապարակախոս Մաքսիմ Հովհաննիսյանի ելույթներում արժևորվեց նման թեմայով ու բովանդակությամբ գրքի հրատարակումը, անդրադարձ կատարվեց ոստիկանության մասնակցությանն Արցախյան պատերազմին, հիշատակվեց զոհված ու անհայտ կորած ոստիկանների անմար գործը և երախտագիտության խոսք ասվեց գրքի հեղինակի՝ Վերա Գրիգորյանի և հրատարակչական-ստեղծագործական կազմի վերաբերյալ:

Վերջում Վերա Գրիգորյանը նշեց, որ իր որդին ոստիկան է դարձել 1993 թ. օգոստոսին և որպես այդպիսին կատարել իր մարտական առաջադրանքը,- որի ժամանակ էլ անհայտ կորել

է: Ուստի, նա ԼՂՀ ոստիկանների և ընդհանրապես ՆԳՆ համակարգի մասնակցությունը Արցախի ազատագրական պայքարին իմաստավորեց լուսաբանելու: Նրա այդ նախաձեռնությունը աջակցություն է գտել ԼՂՀ ոստիկանապետ գեներալ-մայոր Կ. Աղաջանյանի կողմից և որի հովանավորությամբ էլ տարիների ընթացքում ստեղծված գիրքը լույս է տեսել, դառնալով ոստիկանության անցած ուղու տարեգրության ստեղծման անդրանիկ փորձը:

***Մեկ ԱՀՅԱՆ***

*25 հոկտեմբերի - 1 նոյեմբերի 2013թ.*



## ԱՄԱՆՈՐՅԱ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԱԿԱՀՄ ՀՈՒՇԱԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ

Ամենատարբեր միջոցառումների անցկացումը ԼՂՀ ԱԿԱՀՄ-ում բարի ավանդույթ է դարձել: Միությունում մի առանձնակի ակնածանքով են վերաբերվում երեխաների համար ամանորյա հանդեսների կազմակերպմանը: Հունվարի 10-ին ԱԿԱՀՄ հուշաթանգարանում երեխաներին հեքիաթային անմոռաց պահեր պարզեց 16-րդ ամանորյա հանդեսը: 16



տարի շարունակ ԱԿԱՀՄ նախագահ Վերա Գրիգորյանը իր հոգու պարտքն է համարում մանուկներին ժպիտ, ուրախություն և նվերներ պարզելը, ուստի նախաձեռնում և կազմակերպում է ամանորյա հանդեսներ, ձգտելով չկրկնել նախորդ տարիների բեմադրերը: Չմեռ պապն ու Չյունանուշիկը եկել էին երեխաների ամանորյա երազանքները կյանքի կոչելու,

նրանց գեղեցիկ ասմունքն ու կատարումներն ունկնդրելու, հանելուկներ առաջադրելու, նվերներ բաժանելու... Հուշաթանգարանի ցուցասրահը նախօրոք հարմարեցվել էր հանդեսի անցկացման համար, գեղեցիկ զարդարվել, իսկ տոնածառը իր չքնաղ տեսքով բոլորի ուշադրության կենտրոնում: Հնչում էր երգ ու պարը, երեխաները հաճույքով արտասանում էին ոտանավորներ, գտնում Չմեռ պապի ու Չյունանուշիկի հանելուկների պատասխանները, իսկ անհայտ կորած ազատամարտիկների հարազատները և հյուրերը հրճվում էին երեխաների զվարթ ճիչերի ու ծիծաղի նթնուրտով:

Բացման խոսքում ԼՂՀ ԱԿԱՀՄ նախագահ Վերա Գրիգորյանը ողջունեց և շնորհավորեց միջոցառման մասնակիցներին ՆՈՐ տարվա և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ: «Մուտք ենք գործել հրեղեն ձիու տարի, որը մուրազի, երազանքների իրականացման խորհրդանիշ է,- իր ելույթում, մասնավորապես, ասաց Վ. Գրիգորյանը,- ձին նաև ուժի ու կորովի, իմաստության խորհրդանիշ է: Սիրելի երեխաներ, ձեզ մաղթում եմ աշխարհի ամենալավն ու բարին, տա աստված, որ ձեր հարազատները հրաշքով ազատվեն գերությունից ու վերադառնան հարազատ օջախները: Միշտ լինեք առողջ և առույգ, հրեղեն ձիու տարին թող լինի ձեր մուրազների, մանկական երազանքների իրականացման, խաղաղության, առողջության և հաջողությունների տարի»:

Ամանորյա նվերներ ստանալուց հետո, երեխաները ուրախ և երջանիկ գնացին իրենց օջախները, հավատալով, որ հրաշքներ լինում են և մի օր էլ տեղի կունենա իրենց հարազատների վերադարձի հրաշքը:

Ամանորյա նվերների պատրաստմանն աջակցել են Ան-

հայտ կորածների, ռազմագերիների, պատանդների և քաղաքացիական անձանց հարցերով զբաղվող հանրապետական հանձնաժողովը, Հայ ավետարանչական ընկերությունը, ԼՂՀ կրթության և գիտության նախարարությունը, որոնց ԱԿԱՀՄ նախագահ Վերա Գրիգորյանը խորին շնորհակալություն ու մեծ երախտագիտություն հայտնեց, քանզի այդ աջակցությունը հնարավորություն է ընձեռնել թեկուզ մի փոքրիկ սփոփանք գտնել անհայտ կորած ազատամարտիկների, փոխանակված ռազմագերիների և վիրավոր ազատամարտիկների համար, որոնց Մարտակերտի, Ասկերանի և Շուշիի շրջաններից ժամանած հարյուր վաթսույն թռռների ամանորյա հանդեսը հիշվելու է դեռ երկար...

***Մեր ԱՀՅԱՆ***

*«Մարտիկ», 8-17 հունվար 2014թ.*





## ՄԻՋՈՑԱՌԻՄ ՕՐՎԱ ՀՐԱՄԱՅԱԿԱՆՈՎ

Ավանդույթի համաձայն, Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միության (ԱԿԱՀՄ) թանգարանում արդեն 16 տարի շարունակ կազմակերպվում են տարաբնույթ միջոցառումներ օրվա հրամայականով: Հերթականը նվիրված էր Ամանորին և Սուրբ ծննդյան տոներին, ինչը կայացավ 2014 թվականի հունվարի 10-ին: Գեղեցիկ զարդարված տոնածառի շուրջը հավաքվել էին մեծ ու փոքր, ուլքեր անհամբերությամբ



ու մեծ ոգևորությամբ կանչում էին Չմեռ պապին ու Չյունանուշին: Չուշացավ հրաշքը, ներս մտան վերջիններս լի ուսապարկերը ծանր-ծանր դնելով գետնին լեփլեցուն տարբեր նվերներով: Փոքրիկներից ամեն մեկը ջանում էր ինքն առաջինը երգել, արտասանել, հանելուկներ ասել ու պարել Չմեռ պապի ու Չյունանուշիկի համար, որպեսզի արժանանար նվերի, իսկ նվերներ, նշենք, որ պատրաստված էր բոլորի՝ թվով 160

երեխաների համար: Ինչպես ԱԿԱՀՄ նախագահ Վերա Գրիգորյանը նշեց իր բացման խոսքում, նվերների հարցում իրենց Միությանն աջակցել էին անհայտ կորածների, ռազմագերիների, պատանդների և քաղաքացիական անձանց հարցերով զբաղվող հանրապետական հանձնաժողովը, Հայ ավետարանչական ընկերակցությունը և ԼՂՀ ԿԳ նախարարությունը, ինչի առիթով Վ. Գրիգորյանն իր խորին շնորհակալությունն ու երախտագիտությունը հայտնեց:

Բացման խոսքում Վ. Գրիգորյանը նախ շնորհավորեց փոքրիկներին:

Միբեյիներս, շնորհավորում եմ բոլորիդ Ամանորի և Սուրբ ծննդյան տոների կապակցությամբ: Չին ուժ ու կորով, իմաստության խորհրդանիշ է: Ցանկանում եմ ձեզ աշխարհում ամենալավն ու բարին, և որ ամենագլխավորն է, թող տա Աստված, այս տարում ձեր պապիկները հրաշքով ազատվեն ու վերադառնան ձեր օջախները: Միշտ լինեք առողջ, աշխույժ ու անհոգ կյանքով մեծանաք,- իր խոսքում մասնավորապես բարեմաղթեց Վերա Գրիգորյանը:

Նշենք, որ նվերներ ստացան ոչ միայն մայրաքաղաքի, այլև շրջանների անհայտ կորած ազատամարտիկների, փոխանակված ռազմագերիների և վիրավոր ազատամարտիկների թոռնիկներ:

**Լիրա ՂԱԶԱՐՅԱՆ**

*«Միբեյիանակերպ»*

*հունվար 2014թ.*

06.02.2014

Հունվարի 31-ին անհայտ կորած ազատամարտիկի եղբայր Ռոբերտ Բաբայանի «Արմատների երթը» գրքի շնորհանդեսն էր ԼՂՀ ԱԿԱՀՄ հարկի տակ: Ներկայացնելով գրքի բովանդակային ու գաղափարական նպատակադրումները, շնորհանդեսը վարող տողերիս հեղինակը նկատեց սերունդների հաջորդականության արտացոլումը, նախնիների հիշարժան գործերի ու պատգամների միջոցով երիտասարդությանը դաստիարակելու մեծ ներուժն ու անցյալի հիշատակները հավերժացնելու Ռ. Բաբայանի հաջողված փորձը:

Նշվեց նաև, որ գրքի հեղինակի ոճը հետաքրքիր է, շարադրանքը՝ զերծ ավելորդաբանություններից, ասելիքը կուռ է և դյուրըմբռնելի, ինչը գրքի ընթերցումը դարձնում է հաճելի:

Գրքի խմբագիր, արձակագիր, բանաստեղծուհի, լրագրող Նվարդ Ավագյանի խոսքերով Ռոբերտ Բաբայանը թղթին է հանձնել տասնամյակների ընթացքում կուտակված, հասունացած մտքերը, զարգացնելով այնպիսի վեհ գաղափար, ինչպիսին արմատների հավերժականության խորհուրդն է, նախնյաց հանդեպ հնուց անտի տաժվող ակնածանքը, պաշտամունքի հասնող հավատը և նրանց շարունակողը լինելու ապագա սերունդների առաքելությունը: Կարմիր թելի պես անցնում են հայրենասիրությունն ու ազգապահպանությունը ոչ միայն որպես գաղափար, այլ նաև կենսակերպ, գոյատևման գրավական: Հեղինակին հաջողվել է յուրօրինակ կերպով բացահայտել արցախցու կերպարն ի դեմս բազմաթիվ գործող անձանց, նրանցից յուրաքանչյուրի հոգեբանական առանձնահատկությունների հետաքրքիր շեշտադրումներով, անցյալի դեպքերի վառ ու կենդանի վերարտադրությամբ:

«Լարաբաղ» թիմի վետերան ֆուտբոլիստ, ԼՂՀ փաստաբանների պալատի փաստաբան Վ. Իշխանյանը, ընթերցելով Ռ. Բաբայանի «Արմատների երթը» գիրքը, բերկրանքի ու հա-

ճույքի բազում պահեր է ապրել: Նրա խոսքերով նման գրքերի մասին են ասում, թե գրված են դարերի ու սերունդների համար: Նա համոզված է, որ գրքի դրական հերոսներն ընթերցողին մղում են աշխատանքային և մարտական սխրանքների: «Ընկերոջս» անհայտ կորած ազատամարտիկ, լեզենդար ֆուտբոլիստ, «Ղարաբաղ» թիմի ավագ Վարուժան Բաբայանին վերաբերվող էջերը կարդացի մի քանի անգամ,- ասաց Վ. Իշխանյանը,- ինձ կլանել էին ոչ միայն նրա հերոսական կյանքն ու գործունեությունը, այլև հիանալի բանաստեղծությունները, որոնք լցված են բարությանը, ջերմությանը, լույսով ու սիրով»:

Ընթերցողներից Սլավիկ Հայրապետյանը պարզ ու անպաճույճ խոսքերով ներկայացրեց գրքի արժանիքները և ուշագրավ կողմերը, շեշտելով, որ այդ ստեղծագործության նշանակությունը դժվար է գերազնահատել: Գիրքն արժևորեց նաև Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնի տնօրեն Արմեն Հովսեփյանը:

ԼՂՀ ԱԿԱՀՄ նախագահ Վերա Գրիգորյանի համոզմամբ՝ «Արմատների երթը» պետք է ոչ միայն կարդալ, այլ նաև ուսումնասիրել: Եվ նա այդպես էլ արել է, ստանալով գեղագիտական հաճույք, ապրելով հուզմունքի ու հպարտության շատ պահեր, ընկնելով հուշերի գիրկը: Ըստ Վ. Գրիգորյանի գիրքը պատմական հրապարակախոսության փայլուն նմուշ է, շաղախված բարձրարվեստ գեղարվեստական խոսքով: Ընթերցողին զարմացրել են կերպարների բազմազանությունն ու դեպքերի տպավորիչ նկարագրությունները: «Գիրքը գրված է սերունդների համար,- ասաց Վ. Գրիգորյանը,- և ունի քաջակորով երիտասարդություն, հայրենիքի իսկական պաշտպաններ դաստիարակելու առաքելություն»:

Ամփոփելով, կարող ենք հավելել, որ Ռոբերտ Բաբայանն ապրած օրերն ու իրական դեպքերը ներկայացնելով, հե-

տաքրքիր էջեր է նվիրել Արցախյան պատերազմի մասնակիցներին, ուշագրավ նրբագծեր ավելացնելով մեր ոչ հեռու անցյալի տարեգրությանը:

Ռոբերտ Բաբայանի երկրորդ գիրքն ընթերցվում է հետաքրքրությամբ, մեկ շնչով և կարող է բավարարել ընթերցողի գեղագիտական ու գրական պահանջները:

**Մեր ԱՀՅՆ**  
«Մարտիկ»

### **ԿԱՅԱՑԱՎ ՌՈՒԲԵՐՏ ԲԱԲԱՅԱՆԻ «ԱՐՄԱՏՆԵՐԻ ԵՐԹԸ» ԳՐՔԻ ՇՆՈՐՀԱՆՎԵՍԸ**

Օրերս ԱԿԱՀՄ հուշաթանգարանում կայացավ անհայտ կորած ազատամարտիկի եղբայր, մասնագիտությամբ պատմաբան Ռոբերտ Բաբայանի «Արմատների երթը» գրքի շնորհանդեսը: Նշենք, որ «Արմատների երթը» գրողի թվով երկրորդ գիրքն է, առաջինը «Երկխոսություն՝ տարածության և ժամանակի միջով», լույս է տեսել վերջերս:



Արմատների երթի թեմատիկան հայրենասիրությունն է և ազգապահպանության գաղափարը: Այն աչքի է ընկնում հայի արցախյան տեսակի յուրատիպ բացահայտմամբ, կերպարների լայն ընդգրկումով և նրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունների հետաքրքիր շեշտադրումներով:

Ըստ պատմաբան, «Կաճառ» գիտական կենտրոնի տնօրեն Սիեր Հարությունյանի տեսակետի, ողջունելի է գրողի հերթական գրքի տպագրությունը, քանզի այն կազմված է բարեխղճորեն, ունի բովանդակություն, որտեղ զետեղված է մի քանի սերունդների կերպարների յուրօրինակ խտացումը, ու ամենագլխավորը, որ ներկայացված փաստերն անցել են գրողի սրտի միջով ու նստվածք տված մտորումներ են:

Ներկաների հետ գրքի վերաբերյալ իր խոսքը հայտնեց նաև գրքի խմբագիր Նվարդ Ավագյանը:

Այս գիրքը զուտ գեղարվեստական գրականություն չէ, բայց դրանից չի նվազում գրքի արժեքը: Հեղինակին ես գիտեմ որպես բազմիմաց մարդ ինֆորմացիայի մեծ կուտակումով: Միանգամից ասեմ, որ գիրքն ի սկզբանե խմբագրելու կարիք չուներ, քանզի նման գրքի վրա խմբագիրը քիչ գործ ունի կատարելու: Սա այնպիսի երկ է, որ հայրենասիրություն քարոզելուց զատ, մարդկային առաքինություն է քարոզում: Ուսումնասիրելով գիրքը, ընթերցողը զգում է, թե ինչ ահավոր բան է մատնությունը, սուտը, կեղծիքը: Մի խոսքով, դժվար առաքելություն, որ հաջողվել է ի կատար ածել հեղինակին: Ես պատիվ եմ համարում ինձ համար լինել այս գրքի խմբագիրը,- նշեց Նվարդ Ավագյանը հավելելով փառք Աստծո, որ արմատի զգացողությունը շատ կարևոր է, ինչն արծարծման նյութ է դարձրել Ռոբերտը:

Ն. Ավագյանը Ռոբերտ Բաբայանին ցանկացավ բեղուն գրիչ: Արտահայտվեցին նաև ընթերցասեր հասարակայնության ներկայացուցիչներ Արմեն Հովսեփյանը, Ալավիկ Հայրապետյանն ու փաստաբան Վազգեն Իշխանյանը: Ա. Հով-

սեփյանի կարծիքով՝ գրքի հեղինակը հանդես է եկել որպես նուրբ հոգեբան խորաթափանց նկարագրությամբ: Նրա խոսքերով՝ «Արմատների երթը» կունենա հաղթական երթ, քանզի այն միաժամանակ ապտակ է ուղղված «հարևան» բարբարոսներին: Իսկ Սլավիկ Հայրապետյանի խոսքերով, ով գրողին համարում է «քայլող հանրագիտարան», Ռոբերտը դեռ շատ բան ունի ամբարած իր հոգում, որ պիտի հայտնի ընթերցասեր հասարակայնությանը:

ԱԿԱՀՄ նախագահ Վերա Գրիգորյանի տեսակետով «Արմատների երթը» ոչ թե պետք է կարդալ ու անցնել, այլև՝ ուսումնասիրել, քանզի նույնն արեց ինքը և հուզմունքի ու հպարտության շատ պահեր ապրեց ընկնելով հուշերի գիրկը: Այն պատմական հրապարակախոսական փայլուն մտուշ է շաղախված բարձրարվեստ գեղարվեստական խոսքով: Գիրքը գրված է սերունդների համար: Այն կոչված է ունենալու պատմական առաքելություն դաստիարակելու հայրենիքի իսկական պաշտպաններ:

Վերջում հանդես եկավ նաև հեղինակը, ով ներկայացրեց նախ մման երկ ստեղծելու շարժառիթը, և իհարկե, ի սրտե շնորհակալություն հայտնեց բոլոր նրանց, ովքեր այս կամ այն ձևով նպաստել են իր երկրորդ գրքի լույս ընծայմանը:

Գիրք, որը, հուսով եմ, ընթերցողին մեկ անգամ ևս մտածել կտա այս աշխարհ գալու իր առաքելության մասին, հատկապես, մատաղ սերնդին սիրել կտա հայրենիքն ու նրա հետ կապված ամեն ինչ,- խոսքն այսպես եզրափակեց Ռոբերտ Բաբայանը:

Կայացավ գրքի շնորհանդեսը, վերջում գինեձոնի արարողակարգը: Ու ինչպես Մհեր Հարությունյանը նշեց, դատելով հնչեցված կարծիքներից, ենթադրել կարելի է, որ գրողը հասել է իր նպատակին:

**Լ.Ղ.**  
*«Ստեփանակերտ», փետրվար 2014թ.*

## **ԳԻՐՔԸ՝ ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ**

ԼՂՀ ԱԿԱՀՄ հարկի տակ հաճախակի են կազմակերպվում գրքերի շնորհանդեսներ: Հունվարի 31-ին անհայտ կորած ազատամարտիկի եղբայր Ռոբերտ Բաբայանի «Արմատների երթը» գրքի շնորհանդեսն էր: Ներկայացնելով գրքի բովանդակային ու գաղափարական նպատակադրումները շնորհանդեսը վարող տողերիս հեղինակը նկատեց սերունդների հաջորդականության արտացոլումը, նախնիների հիշարժան գործերի ու պատգամների միջոցով երիտասարդությանը դաստիարակելու ստեղծագործության մեծ ներուժն ու անցյալի հիշատակները հավերժացնելու Ռ. Բաբայանի հաջողված փորձը: Նշվեց նաև, որ գրքի հեղինակի ոճը հետաքրքիր է, շարադրանքը զերծ է ավելորդաբանություններից, ասելիքը կուռ է և դյուրըմբռնելի, ինչը գրքի ընթերցանությունը դարձնում է հաճելի:

Գրքի խմբագիր, արձակագիր, բանաստեղծուհի, լրագրող Նվարդ Ավագյանի խոսքերով Ռոբերտ Բաբայանը թղթին է հանձնել տասնամյակների ընթացքում կուտակված, հասունացած մտքերը զարգացնելով այնպիսի վեհ գաղափար, ինչպիսինն է արմատների, մեր բարբառով ասած տակռի հավերժականության խորհուրդը, նախնյաց հանդեպ հնուց անտի տածվող ակնածանքը, պաշտամունքի հասնող հավատը նրանց շարունակողը լինելու ապագա սերունդների առաքելությունը: Կարմիր թելի պես անցնում են հայրենասիրությունն ու ազգապահպանությունը ոչ միայն որպես գաղափար, այլ նաև կենսակերպ, գոյատևման գրավակյան: Հեղինակին հաջողվել է յուրօրինակ կերպով բացահայտել արցախցու կերպարը ի դեմս բազմաթիվ գործող անձանց, նրանցից յուրաքանչյուրի հոգեբանական առանձնահատկությունների հետաքրքիր շեշ-



տաղրումներով, անցյալի դեպքերի վառ ու կենդանի վերարտադրությամբ:

«Ղարաբաղ» թիմի վետերան ֆուտբոլիստ, ԼՂՀ փաստաբանների պալատի փաստաբան Վ. Իշխանյանը, ընթերցելով Ռ. Բաբայանի «Արմատների երթը» գիրքը բերկրանքի ու հաճույքի բազում պահեր է ապրել: Նրա խոսքերով մեծ գրքերի մասին են ասում, թե գրված են դարերի ու սերունդների համար: Նա համոզված է, որ գրքի դրական հերոսներն ընթերցողին մղում են աշխատանքային ու մարտական սխրանքների: «Ընկերոջս՝ անհայտ կորած ազատամարտիկ, լեզենդար ֆուտբոլիստ, «Ղարաբաղ» թիմի ավագ Վարուժան Բաբայանին վերաբերվող էջերը կարդացի մի քանի անգամ, - ասաց Վ. Իշխանյանը,- ինձ կլանել էին ոչ միայն նրա հերոսական կյանքն ու գործունեությունը, այլև հիանալի բանաստեղծությունները, որոնք լցված են բարության, ջերմության, լույսով ու սիրով»:

Ընթերցողներից Սլավիկ Հայրապետյանը պարզ ու անպաճույճ խոսքերով ներկայացրեց գրքի արժանիքները և ուշագրավ կողմերը շեշտելով, որ այդ ստեղծագործության նշանակությունը դժվար է թերագնահատել: Գիրքն արժևորեց նաև Ստեփանակերտի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնի տնօրեն Արմեն Հովսեփյանը: Նա մասնավորապես ասաց, որ գրքի հեղինակը հանդես է եկել որպես գրող, պատմաբան, նրբանկար, հոգեբան, ինքնատիպ մտածող-իմաստասեր: «Ինձ հիացրել ու զարմացրել են գրքի հերոսների կերպարների խորաթափանց նկարագրությունները անսպասելի բացահայտումները, գործող անհատականությունների ոգու շարժը», - խոստովանեց Ա. Հովսեփյանը: Նա համոզմունք հայտնեց, որ «Արմատների երթը» կունենա հաղթական երթ, որովհետև այնտեղ վարպետորեն ցույց է տրված հայ ժողովրդի, ի մասնավորի, Արցախի զավակների ոգու ամրությունն ու

վեհությունը, գործելակերպը, աներեր կամքը անընկճելիությունը, բարոյությունը, կենսունակությունը: Բանախոսն ստեղծագործության դերը կարևորեց ներկա ու ապագա սերունդների ռազմահայրենասիրական դաստիարակության գործում:

Գրքի կարևոր առաքելություններից նկատվեց այն, որ միաժամանակ ապտակ է հասցնում մեր թշնամի հարևաններին, նրանց վատ քարոզիչներին, պատմության կեղծարարներին: Գրքում տեղ գտած գործողությունների և դեպքերի իրապատումը բացահայտում է անհանդուրժող հարևանների իրական, ավագակա բարոչարագործ դեմքերը, նրանց կատարած սև գործերը:

ԼՂՀ ԱԿԱՀՄ նախագահ Վ. Գրիգորյանի համոզմամբ «Արմատների երթը» պետք է ոչ միայն կարդալ, այլ նաև ուսումնասիրել: Եվ նա այդպես էլ արել է ստանալով գեղագիտական հաճույք, ապրելով հուզմունքի ու հպարտության շատ պահեր, ընկնելով հուշերի գիրկը:

Ըստ Վ. Գրիգորյանի գիրքը պատմական հրապարակախոսության փայլուն նմուշ է շաղախված բարձրարվեստ գեղարվեստական խոսքով: Ընթերցողին զարմացրել են կերպարների բազմազանությունն ու դեպքերի տպավորիչ նկարագրությունները: «Գիրքը գրված է սերունդների համար, - ասաց Վ. Գրիգորյանը,- և ունի քաջակորով երիտասարդություն, հայրենիքի իսկական պաշտպաններ դաստիարակելու առաքելություն»:

Գրքի հեղինակը կենսունակությունը: Բանախոսն ստեղծագործության դերը կարևորեց ներկա ու ապագա սերունդների ռազմահայրենասիրական դաստիարակության գործում:

Գրքի կարևոր առաքելություններից նկատվեց այն, որ միաժամանակ ապտակ է հասցնում մեր թշնամի հարևաններին, նրանց վատ քարոզիչներին, պատմության կեղծարարներին: Գրքում տեղ գտած գործողությունների և դեպքերի իրապա-

տումը բացահայտում է անհանդուրժող հարևանների իրական, ավագակաբարոչարագործ դեմքերը, նրանց կատարած սև գործերը:

Գրքի հեղինակը կարևորել է մեր հակառակորդի դեմ հայ քաջորդիների մղած հերոսական պայքարը: Ցնցող պատկեր է, օրինակ, տեղի ինքնապաշտպանության մարտում ծանր վիրավորված գնդացրորդ աշխարհագորայինի աներևակայելի սխրանքը, երբ չի հեռանում դիրքից, այլ պատռում է շապիկը, թոնրահացն ամուր կապում ճեղքված ու արյունահոսող որովայնին և մինչև մայրամուտ շարունակում զարկել թշնամուն, մինչև վերջին շունչը... Հերոսականության նույն ոգին էր տիրում մերօրյա ազատամարտում Արցախյան պատերազմի տարիներին: Հեղինակը նկարագրել է իր եղբայր Վարուժանի և նրա ընկերների ջանքերը հակառակորդի զենքերով կասեցնելու հակառակորդի առաջխաղացումը Չլդրանի ռազմավարական ուղղությամբ:

Ամփոփելով կարող ենք հավելել, որ Ռոբերտ Բաբայանը, ապրած օրերն ու իրական դեպքերը ներկայացնելով, հետաքրքիր էջեր է նվիրել Արցախյան պատերազմի մասնակիցներին հետաքրքիր նրբագծեր ավելացնելով մեր ոչ հեռու անցյալի տարեգրությանը:

Ռոբերտ Բաբայանի երկրորդ գիրքն ընթերցվում է հետաքրքրությամբ, մեկ շնչով և կարող է բավարարել ընթերցողի գեղագիտական ու գրական պահանջները: Այն նաև երիտասարդ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության լավ միջոց է և, այդ առումով, հուսով ենք կունենա գործնական-կիրառական նշանակություն:

**Մ.ԱՀՅԱՆ**

«Մարտիկ», հունվար 2014թ.

## «ԻՆՉ ԲԱՅԱԿԱ ՉՂՆԵՔ...»



Լրացավ ԼՂՀ «Մարտական խաչ» առաջին աստիճանի և ՀՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանակիր Կարոտ Մկրտչյանի ծննդյան 50-ամյակը, որի կա-

պակցությամբ ԼՂՀ ԱԿԱՀՄ հուշաթանգարանում մարտի 2-ին տեղի ունեցավ հանդիսավոր միջոցառում, որին ներկա էին նրա հարազատները, մարտական ընկերները, ազատամարտիկներ, զինծառայողներ, զոհված և անհայտ կորած ազատամարտիկների հարազատներ, դպրոցականներ: Հ. Սահյանի «Ինձ բացակա չղնեք» բանաստեղծությամբ տրվեց միջոցառման մեկնարկը:

Այն ցերեկույթի հաղորդավար, ՊԲ կրտսեր սերժանտ Վահագն Հակոբյանի շուրթերից հնչեց նոր խորհրդով առլեցուն անհայտ կորած ազատամարտիկի հանդեպ սպասման պարունակներով:

1990-92-ին Կ. Մկրտչյանը մասնակցել է ՀՀ Տավուշի, Նոյեմբերյանի և ԼՂՀ Շահումյանի, Ասկերանի շրջանների, Գետաշենի ենթաշրջանի ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին:

Կարոտի մարտական ընկեր Արմեն Գալստյանն իր խոսքում երանի տվեց այն ժողովրդին, ով իր ծոցից ծնունդ տվեց իրական հերոսների աստղաբույլին ու դրանց թվում՝ Կարոտին ու Պետոյին:

Կարոտն ուզում էր ժամ առաջ հասնել Ղարաբաղ, Շահում-

յանի շրջանում մարտական խմբեր էր պատրաստում այն գիտակցությամբ, որ Շահումյանն Արցախի հյուսիսային դարպասն է և այն կորցնելը հղի է անկանխատեսելի հետևանքներով: Տեսնելով նրա նվիրվածությունն ու ռազմական տաղանդը Շահեն Մեդրյանը նրան նշանակում է Բուզլուխ-Մանաշիղ գյուղերի մարտական խմբերի ընդհանուր հրամանատար: Պոլիտեխնիկ կրթությամբ հրամանատարը, մշակելով Գետաշենի օպերացիան, զարմացրել էր բոլորին, շատերը չէին հավատում, որ ռազմական կրթություն չունեցող այդ երիտասարդը բնածին տաղանդով էր օժտված:

ԼԳՀ ՀՅԴ Կենտրոնական կոմիտեի ներկայացուցիչ Դավիթ Իշխանյանն իր ելույթում նշեց, որ չնայած ինքը պատերազմի ժամանակ չի մարտնչել Կարոտի կողքին (նրանք պատերազմական տարբեր ուղղություններում էին), բայց Կարոտն, ըստ նրա, ուղեցույց աստղի պես է, նա մեր բոլորիս հերոսն է, մեր ներկան է ու մեր ապագան: Կարոտը մարմնավորվում է Պետոյով, Հրաչով, Դուշման Վարդանով, այն բոլոր գաղափարական ընկերներով, ովքեր հայրենիքին անձնվիրաբար ծառայելու օրինակ են հանդիսացել ու շարունակելու են իրենց օրինակով սերունդներ դաստիարակել: Բանախոսի կարծիքով, ամենամեծ զենքը գաղափարի զենքն է, իսկ տավորիկցի Կարոտն այն կրում է իր զենքերի մեջ:

Օրվա հերոսի մարտական ընկերոջ՝ Դանիել Գրիգորյանի հուշերում Կարոտը մնացել է որպես իսկական հերոսի տիպար: Նրա անհայտ ճակատագիրը երիցս համախմբել է ջոկատի տղաներին և, զինվորագրվելով Շուշիի առանձնակի գումարտակին, երդվել են երբեք չընկրկել հակառակորդի առաջ ու իրենց երդումը պահել են մինչև վերջ, մինչև զինադադար:

Միջոցառման մասնակիցները դիտեցին Սամվել Թադևոսյանի «Խոնարհ հերոսներ» ֆիլմաշարի «Կարոտ» տեսաֆիլմը, որի բացառիկ կադրերը նկարահանվել էին նաև Շահումյանում ու Գետաշենում: Ֆիլմին հաջորդած իր խոսքում սցե-

նարի հեղինակ և ռեժիսոր Սամվել Թադևոսյանն ասաց. «Ղա-  
րաբաղում, թե Եռաբլուրում սրբացած հերոսները մեր հաշ-  
վետվությունն են հայրենիքի առջև: Այդ նրանք Արցախը վե-  
րադարձրին Հայաստանին: Փառք այն տղաներին, որ սրբա-  
ցան ու սրբացրին մեր հողը, եկան իրենց կյանքով փակելու  
մեր դարավոր վերքերը, սպիացնելու դարերով կորսվածի ցա-  
վը»:

Իր ելույթում ԱԿԱՀՄ նախագահ Վերա Գրիգորյանը պատ-  
մեց Կարոտի հարազատների ու մարտական ընկերների հետ  
իր հանդիպումների մասին և արտասանեց Կարոտին ձոնված  
իր բանաստեղծությունը: Նա նաև «Հայրենիք և հավատ»  
հուշամեդալներով պարգևատրեց Կարոտի եղբորը՝ Ղուկաս  
Սկրտչյանին, մարտական ընկերներ Արմեն Գալստյանին,  
Սամվել Թադևոսյանին, Դանիել Գրիգորյանին, իսկ կազմա-  
կերպության շնորհակալագրով ՊԲ զինծառայող Վահագն  
Հակոբյանին կազմակերպության հետ ակտիվ համագործակ-  
ցության համար:

ՊՆ ռազմահայրենասիրական դաստիարակության և հա-  
սարակական կազմակերպությունների հետ կապերի բաժնի  
պետ, գնդապետ Բարեղամ Մուրադյանն իր հերթին Կարոտի  
հարազատներին, մարտական ընկերներին ու բոլոր ներկանե-  
րին հավաստիացրեց, որ Արցախի համար նահատակված ոչ  
մի հայորդի չի մոռացվել և չի մոռացվի:

Կարոտի եղբայրը՝ Ղուկաս Սկրտչյանը, շնորհակալություն  
հայտնելով եղբոր հիշատակը հավերժացնելու համար, ասաց,  
որ իր ընտանիքը հպարտ է, որ նաև Կարոտի շնորհիվ է ամուր  
Արցախի հողը:

Միջոցառման ընթացքում հնչեցին հայրենասիրական եր-  
գեր, իսկ դպրոցականներն ասմունքեցին:

**Միրվարդ ՄԱՐԳԱՐՅԱՆ**

«Ազատ Արցախ», 4 մարտի 2014թ.

ԼՂՀ ԱԿԱՀՄ հարկի տակ հաճախակի են կազմակերպվում գրքերի շնորհանդեսներ: Հունվարի 31-ին անհայտ կորած



ազատամարտիկի եղբայր Ռոբերտ Բաբայանի «Արմատների երթը» գրքի շնորհանդեսն էր: Ներկայացնելով գրքի բովանդակային ու գաղափարական նպատակադրումները՝ շնորհանդեսը վարող տողերիս հեղինակը նկատեց սերունդների հաջորդականության արտացոլումը, նախնիների հիշարժան գործերի ու պատգամների միջոցով երիտասարդությանը դաստիարակելու ստեղծագործության մեծ ներուժն ու անցյալի հիշատակները հավերժացնելու Ռ. Բաբայանի հաջողված փորձը: Նշվեց նաև, որ գրքի հեղինակի ոճը հետաքրքիր է, շարադրանքը զերծ է ավելորդաբանություններից, ասելիքը կոտ է ե ոչուրըմբռնելի, ինչը գրքի ընթերցանությունը դարձնում է հաճելի:

Գրքի խմբագիր, արձակագիր, բանաստեղծուհի, լրագրող Նվարդ Ավագյանի խոսքերով (Ռոբերտ Բաբայանը թղթին է

հանձնել տասնամյակների ընթացքում կուտակված, հասունացած մտքերը՝ զարգացնելով այնպիսի վեհ գաղափար, ինչպիսին է արմատների, մեր բարբառով ասած՝ տակոի հավերժականության խորհուրդը, նախնյաց հանդեպ հնուց անտի տածվող ակնածանքը, պաշտամունքի հասնող հավատը ե նրանց շարունակողը լինելու ապագա սերունդների առաքելությունը: Կարմիր թեփ պես անցնում են հայրենասիրությունն ու ազգապահպանությունը ոչ միայն որպես գաղափար, այլ նաև կենսակերպ, գոյատևման գրավական: Հեղինակին հաջողվել է յուրօրինակ կերպով բացահայտել արցախցու կերպարը՝ ի դեմս բազմաթիվ գործող անձանց, նրանցից յուրաքանչյուրի հոգեբանական առանձնահատկությունների հետաքրքիր շեշտադրումներով, անցյալի դեպքերի վառ ու կենդանի վերարտադրությամբ:

«Ղարաբաղ» թիմի վետերան ֆուտբոլիստ, ԼՂՀ փաստաբանների պալատի փաստաբան Վ. Իշխանյանը, ընթերցելով Ռ. Բաբայանի «Արմատների երթը» գիրքը, բերկրանքի ու հաճույքի բազում պահեր է ապրել: Նրա խոսքերով մնան գրքերի մասին են ասում, թե գրված են դարերի ու սերունդների համար: Նա համոզված է, որ գրքի դրական հերոսներն ընթերցողին մղում են աշխատանքային և մարտական սխրանքներ] «Ընկերոջս՝ անհայտ կորած ազատամարտիկ, լեգենդար ֆուտբոլիստ, «Ղարաբաղ» թիմի ավագ Վարուժան Բաբայանին վերաբերվող էջերը կարդացի մի քանի անգամ, - ասաց Վ. Իշխանյանը ինձ կլանել էին ոչ միայն նրա հերոսական կյանքն ու գործունեությունը, այլև հիանալի բանաստեղծությունները, որոնք լցված են բարության, ջերմության, լույսով և սիրով»:

Ընթերցողներից Սլավա Հայրապետյանը պարզ ու անպաճույճ խոսքերով ներկայացրեց գրքի արժանիքները և ուշագրավ կողմերը՝ շեշտելով, որ այդ ստեղծագործության նշանա-



կությունը դժվար է թերագնահատել: Գիր արժևորեց նաև Ստեփանակերտի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնի տնօրեն Արմեն Հովսեփյանը: Նա մասնավորապես ասաց, որ գրքի հեղինակը հանդես է եկել որպես գրող, պատմաբան նրբանկար, հոգեբան, ինքնատի մտածող-իմաստասեր: «Ինձ հիացրել ու զարմացրել են գրքի հերոսների կերպարների խորաթափանց նկարագրությունները, անպասելի բացահայտումները, գործող անհատականությունների ոգու շարժը», - խոստովանեց Ա. Հովսեփյանը: Նա համոզմունք հայտնեց, որ «Արմատների երթը» կունենա հաղթական երթ, որովհետև այնտեղ վարպետորեն ցույց է տրված հայ ժողովրդի, ի մասնավորի, Արցախի զավակների ոգու ամրությունն ու վեհությունը, գործելակերպը, աներեր կամքը ու ապագա սերունդների ռազմահայրենասիրական դաստիարակության գործում: Գրքի կարևոր առաքելություններից նկատվեց այն, որ միաժամանակ ապտակ է հասցնում մեր թշնամի հարևաններին, նրանց վատ քարոզիչներին, պատմության կեղծարարներին: Գրքում տեղ գտած գործողությունների և դեպքերի իրապատումը բացահայտում է անհանդուրժող հարևանների իրական, ավազակաբարո չարագործ դեմքերը, նրանց կատարած սև գործերը:

ԼՂՀ ԱԿԱՀՄ նախագահ Վ. Գրիգորյանի համոզմամբ «Արմատների երթը» պետք է ոչ միայն կարդալ, այլ նաև ուսումնասիրել: Եվ նա այդպես էլ արել է՝ ստանալով գեղագիտական հաճույք, ապրելով հուզմունքի ու հպարտության շատ պահեր, ընկնելով հուշերի գիրկը:

Ըստ Վ. Գրիգորյանի՝ գիրքը պատմական հրապարակախոսության փայլուն նմուշ է՝ շաղախված բարձրարվեստ գեղարվեստական խոսքով: Ընթերցողին զարմացրել են կերպարների բազմազանությունն ու դեպքերի տպավորիչ նկարագրությունները: «Գիրքը գրված է սերունդների համար,-

ասաց Վ. Գրիգորյանը,- և ունի քաջակորով երիտասարդություն, հայրենիքի իսկական պաշտպաններ դաստիարակելու առաքելություն»:

Ցնցող պատկեր է, օրինակ, Տեղի ինքնապաշտպանության մարտում ծանր վիրավորված զնդացրորդ աշխարհագրաբանի աներևակայելի սխրանքը, երբ չի հեռանում դիրքից, այլ պատռում է շապիկը, թոնրահացն ամուր կապում ճեղքված ու արյունահոսող որովայնին և մինչև մայրամուտ շարունակում զարկել թշնամուն, մինչև վերջին շունչը... Հերոսականության նույն ոգին էր տիրում մերօրյա ազատամարտում՝ Արցախյան պատերազմի տարիներին: Հեղինակը նկարագրել է իր եղբայր Վարուժանի և նրա ընկերների ջանքերը՝ հակատանկային զենքերով կասեցնելու հակառակորդի առաջխաղացումը Չլդրանի ռազմավարական ուղղությամբ:

Ամփոփելով՝ կարող ենք հավելել, որ Ռոբերտ Բաբայանը, ապրած օրերն ու իրական դեպքերը ներկայացնելով, հետաքրքիր էջեր է նվիրել Արցախյան պատերազմի մասնակիցներին՝ հետաքրքիր նրբագծեր ավելացնելով մեր ոչ հեռու անցյալի տարեգրությանը:

Ռոբերտ Բաբայանի երկրորդ գիրքն ընթերցվում է հետաքրքրությամբ, մեկ շնչով և կարող է բավարարել ընթերցողի գեղագիտական ու գրական պահանջները: Այն նաև երիտասարդ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության լավ միջոց է և, այդ առումով, հուսով ենք՝ կունենա գործնական-կիրառական նշանակություն:

**Մ.ԱՀՅԱՆ**

«Մարտիկ»

Թիվ 3-4, 24 հունվարի-7 փետրվարի 2014թ.

## ՆՎԻՐՎԱԾ ԿԱՐՈՏ ՄԿՐՏՉՅԱՆԻ 50-ԱՄՅԱԿԻՆ

Օրերս ԼՂՀ Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միության թանգարանում տեղի ունեցավ Արցախի ազատագրության համար զինված պայքարի առաջամարտիկներից մեկի՝ Կարոտ Սկրտչյանի ծննդյան 50-ամյակին նվիրված հանդիսավոր միջոցառում: ՊԲ ռազմահայրենասիրական



դաստիարակության և հասարակական կազմակերպությունների հետ կապի բաժնի ու ԱԿԱՀՄ-ի համատեղ ջանքերով անցկացված միջոցառումը կոչված էր նպաստելու երիտասարդների ռազմահայրենասիրական դաստիարակությանը և մերօրյա հերոսների կենսագործունեության վերաիմաստավորմանը: Ժամանել էին Կարոտ Սկրտչյանի հարազատները, մարտական ու գաղափարական ընկերները, մտավորականներ, մայրեր, զինծառայողներ ու հասարակության ներկայացուցիչներ: Կարոտ Սկրտչյանի մարտական ընկերները դրվագներ պատմեցին ազատագրական պատերազմի տարիներից, արժևորեցին գաղափարի մարտի կի ապրած կյանքը և մնայուն գործը: Ռեժիսոր Սամվել Թադևոսյանի «Խոնարհ հերոսներ» ֆիլմաշարի հերթական «Կարոտ» տեսաֆիլմի ցուցադրումը շնորհիվ նրա բովանդակային ու գաղափարական հագեցվածության և

դաստիարակության և հասարակական կազմակերպությունների հետ կապի բաժնի ու ԱԿԱՀՄ-ի համատեղ ջանքերով անցկացված միջոցառումը կոչված էր նպաստելու երիտասարդների ռազմահայրենասիրական դաստիարակությանը և մերօրյա հերոսների կենսագործունեության վերաիմաստավորմանը: Ժամանել էին Կարոտ Սկրտչյանի հարազատները, մարտական ու գաղափարական ընկերները, մտավորականներ, մայրեր, զինծառայողներ ու հասարակության ներկայացուցիչներ: Կարոտ Սկրտչյանի մարտական ընկերները դրվագներ պատմեցին ազատագրական պատերազմի տարիներից, արժևորեցին գաղափարի մարտի կի ապրած կյանքը և մնայուն գործը: Ռեժիսոր Սամվել Թադևոսյանի «Խոնարհ հերոսներ» ֆիլմաշարի հերթական «Կարոտ» տեսաֆիլմի ցուցադրումը շնորհիվ նրա բովանդակային ու գաղափարական հագեցվածության և

հերոսի կենսագործունեության ամողջական նկարագրության, ունեցավ տպավորիչ ազդեցություն ու ավարտվեց բուռն ծափահարություններով: Ոգևորիչ էր նաև ֆիլմի հեղինակ և ռեժիսոր Ա. Թադևոսյանի խոսքը, որում խորհմաստ գնահատական կար մերօրյա ազատամարտի յուրաքանչյուր նվիրյալի գործին և կոչ երիտասարդներին՝ մշտաբթուն պահելու մեր ազգի ոգեղեն զենքերը, հայրենասիր թյան գաղափարը:

Բոլոր ելույթ ունցողները միակարծիք է Կարոտ Սկրտչյանի սխ ըագործության վերախմաստավորման և երիտասարդությանը նրա օրինակով դաստիարակելու և ոգևորելու անհրաժեշտության մասին, բարձր գնահատեցին նրա ծնողների և հատկապես որդու վերադարձին սպասող հոր՝ Հովհաննես Սկրտչյանի գործնական-առարկայկան հայրենասիրությունը ոչ միայն նախնյաց պատգամներով որդի դաստիարակելու, այլ նաև հետագայում ճակատագրի անողոք հարվածներից հետո անգամ արիությունը պահպանելու և բարոյական վեհ նկարագիրն անխաթար պահելու առումով:

ԼՂՀ ԱԿԱՀՄ նախագահ Վերա Գրիգորյանի ջերմ խոսքերն անտարբեր չթողեցին և ոչ մեկին, իսկ Կարոտ Սկրտչյանին նվիրված նրա չափածո ստեղծագործությունը ընդունվեց ծափահարություններով: Միության նախագահը նաև հաճելի առաքելություն է իրականացրել «Հայրենիք և հավատ» մեղալների հանձնելով Կարոտ Սկրտչյանի մարտական ընկերներին: Կարոտ Սկրտչյանը, մարմնավորելով հայոց եռամիասնության խորհուրդը, դարձավ Սփյուռք-Հայաստանի Հանրապետություն-Արցախ անխախտ երրորդության գաղափարական մարտիկը իր օրինակով ևս մեկ անգամ փաստելով, որ Հայրենիքի նվիրյալների շնորհիվ է նվաճվում ազատությունը և երաշխավորվում ազգային պետականության կերտումն ու հարատևումը:

***Մեկը ԱՀՅԱՆ***

*«Մարտիկ», 21 փետրվարի-7 մարտի 2014թ.*

## ԱՎԱՆԴԱԿԱՆ ՄՐՅԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ

Շուրջ վեց տարի է, ինչ ԼՂՀ ԱԿ ԱՀ Մ նախաձեռնությամբ (Պաշտպանության բանակի և Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության և սպորտի բաժնի աջակցությամբ) Մալիսյան եռատոնի կապակցությամբ անց է կացվում ստեղծագործական շարադրությունների մրցույթ:



«Հայրենիքը ամուր ձեռքերում», «Հայկական բանակը խաղաղության պատվար», «Անխոցելի հայրենիք» վերտառությամբ ստեղծագործական մրցույթին մասնակցել են Ստեփանակերտի հանրակրթական դպրոցների սաները, ՊԲ զինվորներն ու ուսանողները:

Մալիսի 16-ին ԱԿԱՀՄ գրասենյակում տեղի ունեցավ մրցանակների հանձնման արարողություն: ԱԿԱՀՄ նախագահ Վերա Գրիգորյանը միության պատվոգրերով ու հուշանվերներով պարգևատրեց ոչ միայն մրցանակալին տեղեր զբաղեց-

րած զինժառայողներին ու աշակերտներին, այլև նրանց ուսուցիչներին: Շնորհավորելով պարզևի արժանացած քսանյոթ մասնակիցներին տիկին Գրիգորյանը նրանց ստեղծագործությունները որակեց հուզիչ ու տպավորիչ բառերով և վստահություն հայտնեց, որ ունենք հայրենյաց արժանի պաշտպաններ, իսկ ապագան հուսալի ձեռքերում է:

Մրցանակներ հանձնվեցին նաև Ստեփանակերտի քաղաքապետանանի կրթության և սպորտի բաժնի կողմից: Քաղաքապետարանի աշխատակազմի կրթության և սպորտի բաժնի զվհավոր մասնագետ Գրետա Գրիգորյանի հավաստմամբ մասնակիցների շարքում օրեցօր առավել մեծ ակտիվություն է նկատվում: Այս տարի մասնակիցներից շատերը գրել են ՊԲ ժամկետային զինժառայող Արմեն Հովհաննիսյանի սխրագործության մասին: Ըստ տիկին Գրիգորյանի չնայած Արմենի եղերական մահն անչափ ցավալի է, սակայն աշակերտների արձագանքը, նրանց կարծիքներն ու վերլուծությունները հույս ու հավատ են ներշնչում առ այն, որ մեծանում է արժանի սերունդ:

Պարգևատրումներ եղան նաև ԼՂՀ պաշտպանության նախարարի կողմից: Հուշանվերներն ու գրքերը հաղթողներին հանձնեց ՊՆ ռազմահայրենասիրական դաստիարակության և հասարակական կազմակերպությունների հետ կապերի բաժնի պետ, գնդապետ Բարեղամ Մուրադյանը: Ի դեպ, նա իր խոսքում նաև նշեց, որ հայրենիքին նվիրյալ ու արժանի սերունդ է մեծանում՝ ի դեմս աշակերտների:

Միջոցառմանը ներկա ԼՂՀ կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանը ներկաներին ուղղված իր խոսքում կարևորեց նման մրցույթների կազմակերպումն ու անցկացումը, մատնանշեց աշակերտների և զինժառայողների իմաստասիր ստեղծագործական արժարժումներն ու շնորհակալություն

հայտնելով բոլոր մասնակիցներին վստահություն հայտնեց, որ մատաղ սերունդը նույն ակտիվ կենսադիրքով ու պահվածքով պահելու-պահպանելու է Հայրենիքը: Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության և սպորտի բաժնի վարիչ Կառլեն Մարգարյանն իր հերթին կարևորելով նմանատիպ ռազմահայրենասիրական միջոցառումների դերն ու նշանակությունը գովաբանեց հայ պարմանուն ու պարմանուհուն, նրանց, ովքեր հայրենիքի պաշտպանության համար վաղ տարիքից կրում են պատասխանատվություն և այն համարում իրենց պատվի գործը լավագույնս տեղյակ լինելով նաև սեփական հայրենիքի ու ժողովրդի պատմությանը: Ապա Կ. Մարգարյանը ակտիվ նախաձեռնողականության համար նվերներ հանձնեց ԱԿԱՀՄ նախագահ Վերա Գրիգորյանին ու քաղաքապետարանի գլխավոր մասնագետ Գրետա Գրիգորյանին:

***Սիրվարդ ՄԱՐԳԱՐՅԱՆ***

*«Ազար Արցախ», մայիսի 17, 2014թ.*



## ՓՈԽԸՄԲՈՆՄԱՆ ՄԹՆՈԼՈՐՏՈՒՄ

Նոյեմբերի 5-ին խորհրդարանի խոսնակ Աշոտ Գուլյանն այցելել է ԼՂՀ անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միության գրասենյակ: Հանդիպման ընթացքում քննարկվել են կազմակերպության համար օրախնդիր հարցեր:

Շնորհակալություն հայտնելով ԱԺ նախագահին այցելության, կազմակերպությանը սատարելու և նրա խնդիրներին ականջալուր լինելու պատրաստակամության համար, ԱԿԱՀՄ նախագահ Վերա Գրիգորյանը ներկայացրեց կազմակերպության հիմնախնդիրները: Վ. Գրիգորյանի կողմից նշվեց նաև, որ վերջերս Ֆրանսուա Օլանդ- Սերժ Սարգսյան հանդիպման ընթացքում ևս շոշափվել է անհայտ կորածների



հիմնախնդիրը: Հիմնախնդիր, որն այդպես էլ չի գտնում իր հանգուցալուծումը հայտնի պատճառներով. հենց Ադրբեջանն էլ հանդիսանում է դրա հիմնական խոչընդոտը: Այնուհետև Վ.



Գրիգորյանն ԱԺ նախագահի ուշադրությունը հրավիրեց անհայտ կորածների կարգավիճակի, նրանց պարզևատրումների խնդրին, որից հետո ներկայացրեց սոցիալական բնույթի մի շարք մտահոգություններ: Վ. Գրիգորյանը խորհրդարանի խոսնակի ուշադրությունը հրավիրեց վերջերս լույս տեսած իր հեղինակած «Քողը ետ քաշած գրառումներ» գրքի ռուսերեն և անգլերեն թարգմանության նպատակահարմարության վրա: Ա. Ղուլյանը խոստացավ ծանոթանալ բովանդակությանը, փաստագրական տվյալների հավաստիությանն ու իրավացիությանը և համապատասխան որոշում կայացնել: Ա. Ղուլյանն իր հերթին կարևորելով նման հանդիպումների անհրաժեշտությունը, միաժամանակ նշեց, որ եթե հանդիպումները ուշ-ուշ են տեղի ունենում, ապա միայն օբյեկտիվ պատճառներով, աշխատանքային ծանրաբեռնվածության պատճառով:

Լսելով Միության նախագահի ու վարչության անդամների ելույթներն ու դիտարկումները՝ ԱԺ նախագահը խոստացավ սեղմ ժամկետներում քննարկել ներկայացված առաջարկությունները և համատեղ ջանքերով գտնել լուծման բանալիները: Նրա կողմից առաջարկվեց մարտական ընկերների ու հրամանատարների ջանքերն ու ականատեսների վկայությունները ի մի բերելով ամբողջացնել յուրաքանչյուր անհայտ կորածի մարտական ուղին, ինչն էլ իր հերթին թույլ կտա պետական պարզների ներկայացնելու, գնահատելու ժամանակ ելնել իրեղեն ապացույցներից, փաստերից և փաստարկներից:

Կիսելով անհայտ կորած ազատամարտիկների հարազատների մտահոգությունը, ԱԺ նախագահը խոստացավ հնարավորինս սատարել նրանց կողմից բարձրացված հարցերին: Նա կիսեց նաև անհայտ կորածների հարազատների այն մտահոգությունը, որ իրենց զավակները հավուր պատշաճի գնահատված չեն: Նա ուշադրությամբ ունկնդրեց Միության

անդամների դիտարկումները վերջինիս առնչությամբ:

Բարձրացված սոցիալական հարցերի առնչությամբ ևս ԱԺ նախագահը խոստացավ տարբերակներ գտնել: Ակտիվ գործունեության համար շնորհակալություն հայտնելով Միության նախագահին ու կազմակերպության անդամներին Ա. Ղուլյանը համոզմունք հայտնեց, որ ԱԿԱՀՄ-ն այսուհետ ևս իր գործունեությամբ ու հասարակական դաշտում իր ակտիվությամբ գործելու է ի փառս հայրենիքի և անելու է հնարավորը մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության գործն առավել բարձր հիմքերի վրա դնելու ուղղությամբ:

Հանդիպման ավարտին ԱԿԱՀՄ նախագահ Վ. Գրիգորյանը կազմակերպության ծրագրերին սատարելու և համագործակցության համար Միության «Հայրենիք և հավատ» մեդալով պարգևատրեց Ա. Ղուլյանին:

Իր հերթին ԱԺ խոսնակն Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների Միությանը պարգևատրեց Ղարաբաղյան շարժման 25-ամյակին նվիրված հուշամեդալով:

***Սիրվարդ ՄԱՐԳԱՐՅԱՆ***

*06.11.2014*

## ՎԵՐԱԳԱՐՉԻ ՍՊԱՍՈՒՄՈՎ

Հոկտեմբերի 10-ին ԼՂՀ ԱԿԱՀՄ-ի 16-րդ տարեդարձին նվիրված հանդիսավոր միջոցառման ժամանակ նախագահ Վ. Գրիգորյանը ներկայացրեց կատարված աշխատանքները անհայտ կորած ազատամարտիկների հարազատներին



աջակցելու, երիտասարդ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակությանը նպաստելու, տարբեր միջոցառումներ կազմակերպելու ուղղությամբ: Ասկերանի և Հաղրուքի մասնաճյուղերի ղեկավարներ Է. Աղաջանյանը և Ֆ. Գասպարյանը ներկայացնելով տեղերում կատարված աշխատանքները ոգևորիչ խոսք ասացին իրենց որդիների վերադարձին սպասող ծայրերին: Վաղվա օրվա հանդեպ հավատ արտահայտեցին նաև Շուշիի Խ. Աբովյանի անվան հիմնական դպրոցի տնօրեն Ն. Նալբանդյանը, «Մայրություն» ՀԿ նախագահ Հ. Միքայելյանը, ով նաև Միության մեդալով պարգևատրեց Վ. Գրիգորյանին, «Հայրենյաց պաշտպան» ԵՀԿ նախագահ Հ. Մնացականյանը, ԼՂՀ ՊՆ ՌՀԳ և ՀԿՀԿ բաժնի սպա, կապի-

տան Ն. Աբաղյանը, քաղաքապետարանի ԿՄՍ բաժնի պետ Կ. Մարգարյանը:

Համար 12 հիմնական դպրոցի սաների գրական-գեղարվեստական մոնտաժը բավական տպավորիչ էր ու բովանդակալից: Կազմակերպիչ Ա. Բաղդասարյանի, Ն. Հայրիյանի մեղավաջան աշխատանքը, փաստորեն, պտուղներ տվեց: Դպրոցի տնօրեն Է. Գաբրիելյանի ելույթը հուզիչ էր, բայց լեցուն վաղվա հանդեպ հավատով: Այնուհետև տեղի ունեցավ պարզևտրման արարողություն: Եզրափակիչ ելույթ ունեցավ ԿԽՄԿ Ստեփանակերտի գրասենյակի ղեկավար Թովմաս Հալեն, ով հավաստիացրեց, որ կազմակերպությունը կանի հնարավորն անհայտ կորածների վերաբերյալ տեղեկություններ հավաքելու և օգնության ձեռք մեկնելու համար: Միջոցառման մասնակիցները հույս հայտնեցին, որ մայրերի սպասումը կվերջանա իրենց տղաների ու հարազատների վերադարձով...

**Մ. ԱՀՅԱՆ**

*«Մարտիկ», 21 հոկտեմբերի - 4 նոյեմբերի 2014թ.*



## ՆՐԱՆՔ ՀԵՐՈՍՆԵՐ ԵՆ

Հոկտեմբերի 11-ին Ստեփանակերտի Շիրվանգաղե փողոցում տեղի ունեցավ միջոցառում: Այն նվիրված էր լեգենդար ֆուտբոլիստ, Ղարաբաղի թիմի ավագ, անհայտ կորած ազատամարտիկ Վարուժան Գետրգիի Բաբայանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի հանդիսավոր բացման արարողությանը: Ներկա էին թաղի հարևաններն ու ֆուտբոլային ըն-



կերները հանրահայտ մարզիչ, ազատամարտիկ, գնդապետ Ռազմիկ Պետրոսյանի գլխավորությամբ: Ֆուտբոլիստների ու մարտական ընկերների անունից ելույթ ունեցավ փաստաբան Վազիֆ Իշխանյանը, ով կարճ ու տարողունակ ձևով ներկայացրեց Վարուժանի անցած մարզական ու ռազմական ուղին, մարդկային դրական որակներն ու հատկությունները, նրա կատարած գործերի վեհությունը:

Հարևանների անունից հանդես եկած Սլավա Հայրապետ-

յանն արժևորեց Վարուժանի կատարածի հասարակական նշանակությունը, ցույց տվեց, որ նման վառ անհատականությունները դարեր ի վեր մեր ժողովրդի համար եղել են խորհրդանիշ, իրենց ապրած գիտակցական կյանքով ու պայքարով օրինակ ծառայել ապրողների համար, ոգեշնչել նրանց, մղել հաղթանակների:

Իր ելույթում Արցախում հայտնի ֆուտբոլիստ ու Շարժման ակտիվիստ Ռազմիկ Պետրոսյանը շեշտեց Վարուժանի որպես ֆուտբոլիստի ու մարտիկի, խաղաղաշտում ու ռազմաղաշտում կատարածի մեծությունը, հավերժությունը՝ միաժամանակ հույս արժանվույն կգնահատեն թիմի պատվավոր ավագի ծառայությունները հայրենական ֆուտբոլի հանդեպ և երկրի պաշտպանության գործում:

Վերջում ելույթ ունեցավ Վ. Բաբայանի եղբայր Ռոբերտը: Նա մասնավորապես նշեց. «1997թ. Ղարաբաղի թիմի ֆուտբոլիստները զարմանահրաշ մարզական սխրանք կատարեցին: Ընդամենը 4.4 հազար կմ հողատարածք և 130-140 հազար հայազգի բնակչություն ունեցող ԼՂԻՄ-ի թիմը կարողացավ ծնկի բերել, նուկաուտի ենթարկել հայկական հողերում արհեստականորեն ստեղծված մոտավորապես 100 հազար կմ և 6-7 միլիոն բնակչություն ունեցող խորհրդային Ադրբեջանի ֆուտբոլային կառույցին, դարձավ հանրապետության չեմպիոն:

Հայտնելով, որ իշխանությունները ըստ այդ անսպասելի, սենսացիոն թվացող, բայց օրինաչափ հաղթանակը մի անգամ ևս ապացուցեց, որ ազգի ուժը ոչ թե քանակի, այլ ամենից առաջ նրա որակի միասնության մեջ է: Թիմի հաղթանակի շնորհիվ արցախցին ամրապնդեց ազերիների ատելի գաղութային լծից վերջնականապես ազատագրվելու վճռականությունը:

Եկավ 1988 թվականը: Արցախահայությունը ոտքի ելավ ազատագրական պայքարի: 1987-1991թթ. մարզական սխրանքներ հեղինակած լեգենդար Ղարաբաղ թիմի խաղացողներն ու Արցախի ֆուտբոլային ընտանիքի համար բոլոր անդամները ոտքի ելան պաշտպանելու հարազատ երկրամասը միլիտարիստական Ադրբեջանի ավազակային ագրեսիայից ու իրենց սուրը պատվով դրեցին պատյան: Լեգենդար ֆուտբոլիստները ռազմաճակատի տարբեր հատվածներում ևս սխ-



րանք կատարեցին: Կաշվե գնդակի վարպետ խաղացողներն ու ֆուտբոլային ընտանիքի անդամները ունեցան նաև կորուստներ մի քանի հոգի նահատակվեցին, մի քանիսն էլ վիրավորվեցին, իսկ Վարուժանն էլ անհայտ կորավ:

Հարգելի ներկաներ,- կերկերաց Ռոբերտի ձայնը,- ես մեծ շնորհակալություն եմ հայտնում Վարուժանի ընկերներին՝ լեգենդար ֆուտբոլիստներին, որոնք Կառլեն Միմոնյանի նա-

խաճեռնությամբ ու ղեկավարությամբ հեղինակեցին այս հուշատախտակը և նվիրեցին մեր ընտանիքին, Շիրվանգաղե փողոցին, Ստեփանակերտի և ԼՂՀ հասարակությանը: Նման հուշատախտակները խիստ անհրաժեշտ են մեր հասարակությանը, որովհետև դրանք կոչված են նոր լիցք հաղորդելու այսօրվա և վաղվա սերունդների ինքնագիտակցությանն ու ռազմահայրենասիրական դաստիարակությանը, մասսայականացնելու ֆուտբոլն ու սպորտի մյուս մարզաձևերը և մեր ժողովրդի պատմական հիշողությունը հարստացնելու նոր գույներով ու մանրագծերով:

Փառք ու պատիվ հայրենիքի համար բոլոր նահատակվածներին, անհայտ կորած ազատամարտիկներին, վիրավորներին ու պարզապես բոլոր նրանց, ովքեր զենք վերցրին ու մեր երկրամասը պաշտպանեցին ատելի, լկտի ոստիներից: Նրանք բոլորն էլ հերոսներ են...

***Յուլիա ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***

*«Մարտիկ», 21 հոկտեմբերի-4 նոյեմբերի 2014թ.*



## ՀԱՆԳԻՊՈՒՄ ԼՂՀ ԱԺ ՆԱԽԱԳԱՀ ԱՇՈՏ ԳՈՒԼՅԱՆԻ ՀԵՏ

Նոյեմբերի 5-ին Աժ խոսնակ Աշոտ Գուլյանն այցելեց ԼՂՀ անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միության գրասենյակ: Հանդիպման ընթացքում քննարկվեցին կազմակերպության համար օրախնդիր հարցեր:



Այցելությունների, կազմակերպությանը սատարելու և նրա խնդիրներին ականջալուր լինելու համար ԱԿԱՀՄ նախագահ Վերա Գրիգորյանը շնորհակալություն հայտնեց Աժ նախագահին ներկայացնելով կազմակերպության հիմնախնդիրները՝ նշելով նաև, վերջերս Ֆրանսուա Օլանդ - Սերժ Սարգսյան հանդիպման ընթացքում ևս շոշափվել է անհայտ կորածների հիմնախնդիրը: Հիմնախնդիր, որն այդպես էլ չի գտնում իր հանգուցալուծումը՝ հայտնի պատճառներով, հենց Ադրբեջանն էլ հանդիսանում է դրա հիմնական խոչընդոտը:

Անհայտ կորած ազատամարտիկների հարազատներին Աժ

նախագահը ներկայացրեց բոլոր այն հանգամանքները, որոնց կատարման դեպքում միայն կարող են հասնել արդյունքի: Խոսքն անհայտ կորածներին իրենց սխրագործությունների համար պարգևատրելու մասին է: Խորհրդարանի խոսնակը կիսեց նաև ԱԿԱՀՄ անդամների այն մտահոգությունը, որ անհայտ կորածները հավուր պատշաճի գնահատված չեն: Նրա կողմից առաջարկվեց վերջիններիս մարտական ընկերների ու հրամանատարների ջանքերն ու ականատեսների



վկայություններն ի մի բերելով ամբողջացնել յուրաքանչյուր անհայտ կորածի մարտական ուղին, ինչն էլ իր հերթին թույլ կտա պետական պարգևների ներկայացնելու, գնահատելու ժամանակ ելնելու իրենց ասպացույցներից, փաստերից ու փաստարկներից: Նա ուշադրությամբ ունկնդրեց Միության անդամների դիտարկումները այդ կապակցությամբ:

ԱԿԱՀՄ նախագահն անդրադարձավ նաև պատմաբան Ռոբերտ Բաբայանի սոցիալական և ընտանեկան պայմաններին: Վերջինս ունի երեք եղբայր. Վարուժան Բաբայանն ան-

հայտ կորած է: Նա հանրությանը հայտնի է որպես ֆուտբոլիստ: Ռաֆիկ Բաբայանը մահացել է, իսկ մյուս եղբայրը հաշմանդամ է (թոշակը կազմում է ընդամենը 25000 դրամ): Վերա Գրիգորյանը կազմակերպության բոլոր անդամների անունից խնդրեց Ռոբերտ Բաբայանին օգնել՝ գտնելու իր մասնագիտությամբ որևէ աշխատանք, որպեսզի ընտանիքը կարողանա գոյատևել:

Բարձրացրած սոցիալական հարցերի առնչությամբ Աժ նախագահը խոստացավ տարբերակներ գտնել: Ակտիվ գործունեության համար շնորհակալություն հայտնելով միության նախագահին ու կազմակերպության անդամներին՝ Ա. Դուլյանը համոզմունք հայտնեց, որ ԱԿԱՀՄ-ն գործելու է ի փառս հայրենիքի և անելու է հնարավորը մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության գործն առավել բարձր հիմքերի վրա դնելու ուղղությամբ:

Հանդիպման ավարտին ԱԿԱՀՄ նախագահ Վ. Գրիգորյանը կազմակերպության ծրագրերին սատարելու և համագործակցության համար «Հայրենիք և հավատ» մեդալով պարգևատրեց Ա. Դուլյանին: Իսկ Աժ խոսնակն Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միությանը պարգևատրեց Դարաբաղյան շարժման 25 ամյակին նվիրված հուշամեդալով:

***Լուսինե ԱՂԱՉԱՆՅԱՆ***

*«Սրեփանակերպ», 11 նոյեմբերի 2014թ.*

## ԼՂՀ ԱԿԱՀՄ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Արցախահայության ազգային-ազատագրական պայքարի, Արցախին պարտադրված պատերազմի տարիներին անհայտ կորած ազատամարտիկների սխրագործություններն արժևորելու, ինչպես նաև ԼՂՀ ԱԿԱՀՄ-ի նպատակային ծրագրերի իրագործմանը բարեգործական հիմունքներով աջակցած անձանց մեծարելու նպատակով հիմնել ԼՂՀ ԱԿԱՀՄ հասարակական կազմակերպության «Հայրենիք և հավատ» մեդալ:

2. ԼՂՀ ԱԿԱՀՄ վարչության նախագահին մեկամսյա ժամկետում մշակել և հաստատման ներկայացնել ԼՂՀ ԱԿԱՀՄ «Հայրենիք և հավատ» մեդալի պատկերագիրը և նախագիծը, պարզևատրման վկայականի նախագիծը, ճշտել մեդալի թողարկման ֆինանսատնտեսական պայմանները:



## ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՇՏՊԱՆ՝ ՕՐԵՆՔԻ ԵՎ ԿԱՐԳՈՒԿԱՆՈՆԻ ՊԱՀԱՊԱՆՆԵՐԸ

Կա մի արտահայտություն, որ նույն հաջողությամբ կարելի է վերագրել ինչպես իմաստասիրական՝ այնպես էլ ժողովրդական մտքին, ամեն ինչ ընկալվում է համեմատության մեջ: Ազատությունն ու ազատամտությունը, բարությունը, անշահախնդրությունը, պատասխանատվության զգացումը... Այդ



դեպքում ինչու չէ՝ նաև հայրենասիրությունը: Դրանցից յուրաքանչյուրի, իսկ հատկապես՝ վերջինի պարագայում մի մարդու արածը կարող է շատ լինել, մյուսինը՝ քիչ, որովհետև ամեն մեկին կյանքը տալիս է իր հնարավորությունը... Սակայն դրանց չի կարելի եզրակացնել, թե մեկն ավելի է հայրենասեր, քան՝ մյուսը:

Ասվածով հանդերձ՝ կա մարդկային հավաքականության մի տեսակ, թվային առումով փոքրաթիվ մի հանրություն, որի յուրաքանչյուր միավորին հայրենասիրության ջիղը, կասեի, փո-

խանցվում է հոր արյան ու մոր կաթի հետ միասին. և դա արցախցին է: Պատմության հոլովություն մեկ անգամ չէ, որ ապացուցվել է նրա հայրենասիրության խորությունը: Ամենատիպական և ամենաթարմ ապացույցը տվեց նորօրյա ազգային ազատագրական շարժումը, ապա և՛ պատերազմի խրամատները...Խրամատներ, որոնք գուցե դեռ չեն «մոռացել» հանուն հաղթանակի և մեր ոստիկանների ստացած վերքերն ու թափած արյունը:

Ինձ համար՝ ում բախտ է վիճակվել ամբողջական գրքով ներկայացնել մեր ոստիկանության ներդրումն Արցախյան պատերազմում (ամբողջական գրքով, այո, բայց, ցավոք, ո՛չ ամբողջական ընդգրկմամբ, ինչն, ըստ իս, հնարավոր էլ չէ), յուրատեսակ հայտնագործություն էին՝ պատերազմի մասնակից ոստիկաններից շատերի հետ հանդիպումներին տեղի ունեցած զրույցները, որոնք ծնունդ են տվել արցախցի Ոստիկանի հավաքական կերպարին: Նրանք սովորաբար «հայտնվում» էին այնտեղ, որտեղ իրադրությունն առավել սրված էր լինում, և բանակը լրացուցիչ ուժի կարիք էր զգում: Ոստիկանի առաջին գործը կարգուկանոնի պահպանումն է թիկունքում, բայց մերոնք ստիպված էին և՛ ծառայել երկու՝ ճակատում... Եվ մի՞թե այդ պատերազմում կար թիկունք. ժամանակի մեր չորսուկես հազար քառակուսի կիլոմետրի վրա, կարելի է ասել, ճակատն ամենուր էր...

Թող ներեն ինձ վետերանները. այս անգամ իրենց երախտաշատ սերնդի մարտական դրվագների մասին չէ, որ պատմելու են (ասում են՝ երկու անգամ գետի նույն ջուրը մտնել չես կարող...), կա ևս մեկ կարևոր խնդիր. թե ոստիկանական...որչափ արժանի սերունդ է դաստիարակվում երկրի համար: Խոսքը երիտասարդ կամ համեմատաբար երիտասարդ սերնդի մասին է, նրանց՝ ում ձեռքում է այսօր, եթե Աստված չանի, նորից պատերազմ լինի...երկու ճակատի զինվոր դառնալու

Էստաֆետը: Որ այդպիսիք կան, և որ նրանք շատ են, կասկած չկա: Կյանքը յուրաքանչյուր սերնդի իր բաժին լոգարիթմն է տալիս...

Նա, ով սովոր է իրեն վատահված գործի նկատմամբ պատասխանատվության բարձր մակարդակ ապահովելուն, մարտական կեցվածքի տեր է խաղաղ պայմաններում էլ: Մեր ոստիկանության շարքերում ծառայում են և շատ կանայք, որոնցից յուրաքանչյուրը, պատկերավոր ասած, մեծ մեխանիզմի մաս լինելով՝ ապահովում է նրա հարմարաբերված ու անխափան աշխատանքը: Հանգամանքների բերումով ես «աշխատանքային» շփման շատ առիթներ եմ ունեցել ոմանց հետ ու հիացել նրանց մասնագիտական իմացությամբ, գործի հանդեպ պարտաճանաչությամբ, ոստիկանության աշխատողին վայել կեցվածքով, ինչու չէ՝ նաև զուտ մարդկային որակներով. դիմացիներն պահանջված ուշադրությունը հատկացնելու, հուզող հարցի լուծմանը նպաստելու ցանկությամբ և այլ գնահատելի հատկանիշներով: Նրանցից մի մի խումբ ժամանակ առաջ այցելել էր ԼՂՀ Անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարան, և այսպես ասած՝ ոչ պաշտոնական մթնոլորտում ընթացած մեր զրույցից ես հասկացա, պատկերացրի, թե որքան դժվար է կնոջ համար նման համակարգում աշխատելն՝ ընտանիքի բեռը միաժամանակ ուսած: Հարգենք ու գնահատենք ուսադիրներ կրող բոլորին, առավել ևս՝ «թույլ սեռի» ներկայացուցիչներին, որոնք իրականում ուժեղ են ու կամային: Թող երբեք չխաթարվի նրանց խաղաղ ծառայությունը, թող ամուսին կամ որդի չուղարկեն ռազմաճակատ...

Շնորհավորենք Արցախի ոստիկաններին՝ գեներալից մինչև վերջին շարքայինը՝ իրենց մասնագիտական Օրվա առթիվ, նրանց՝ մաղթենք խաղաղ և... առանց օրինախախտների երկիր:

***Վերա ԳՐԻԳՈՐՅԱՆ***

## «ՀԱՆՈՒՆ ԱՐՑԱԽԻ» ՀԿ-Ն ՀԱՆԳԻՊՈՒՄ ՈՒՆԵՑԱՎ ԱԿԱՀՄ ԱՆԳԱՄՆԵՐԻ ՀԵՏ

Ամանորին ընդառաջ՝ շնորհավորանքներով, բարեմաղթանքներով, նվերներով ու պատվոգրերով, դեկտեմբերի 26-ին անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միու-



թյան հուշաթանգարան էին այցելել ԱԺ-ին կից երիտասարդական խորհրդարանի և «Հանուն Արցախի» երիտասարդական հասարակական կազմակերպության մի խումբ անդամներ: Երիտասարդների նախաձեռնած նախատոնական այդ հանդիպմանը ներկա էին նաև ներկայացուցիչներ զոհված ազատամարտիկների հարազատների միությունից: Անհայտ կորած ազատամարտիկների, ինչպես նաև զոհված ազատամարտիկների հարազատների միությունների հետ «Հանուն Արցախի» երիտասարդական հասարակական կազմակերպությունն արդեն 2 տարվա համագործակցության պատմություն ունի: Կազմակերպությունը ստեղծման օրից տարաբնույթ միջոցառումներով փորձում է փոքր-ինչ մեղմել Արցախ-



յան ազատամարտում որդի կորցրած և անհայտ ճակատագրերի արժանացած ազատամարտիկների մայրերի վիշտը: «Հանուն Արցախի» ՀԿ նախագահ Գոռ Բալասանյանը նախ շնորհավորեց բոլորի գալիք նոր տարին բարեմաղթելով կանաչ ճանապարհ, քաջ առողջություն, հաջողություն և խաղաղ ու անամպ երկինք:

Խոստանում ենք Ձեր տղաների կատարած աշխատանքը գնահատել, պատվով շարունակել և սերնդեսերունդ փոխանցել,- հավելեց նա:

ԱԿԱՀՄ նախագահ Վերա Գրիգորյանը նշեց, որ երիտասարդներն ապագան կերտողներն են և նրանց հետ ԱԿԱՀՄ անդամները մեծ հույսեր են կապում: Համոզված ենք մեր հույսերը կարդարացվեն,- ասաց նա ավելացնելով այստեղ հավաքվածներս ունենք միմիայն մի երազանք, թող այս տարի բացահայտվի մեր պապիկների, հայրիկների, եղբայրների, որդիների ճակատագրերը:

«Հանուն Արցախի» հասարակական կազմակերպության նախաձեռնությանն այս անգամ միացել էին նաև Ազգային ժողովին կից նորաստեղծ երիտասարդական խորհրդարանի անդամները: Երիտասարդ պատգամավորները բարձր են գնահատում Միության հայրենանվեր գործունեությունը, հատկապես մատաղ սերնդի դաստիարակության գործում:

Անհայտ կորած ազատամարտիկների հարազատներից սովորելու շատ բան ունենք, որովհետև նրանք դիմացել են այդ ցավին ու փորձել են ապրել, աշխատել ու ստիպել, որ կյանքն այլ աչքով իրենց նայի: Մենք նույնպես պետք է լինենք նրանց նման ուժեղ,- նշեց ԼՂՀ ԱԺ-ին կից երիտասարդական խորհրդարանի պատգամավոր Արմինե Վարդանյանը:

Միջոցառման կազմակերպիչները վերջում վստահեցրեցին, որ նման հանդիպումները շարունակական բնույթ կկրեն:

**Լուսինե ԱՂԱԶԱՆՅԱՆ**

«Սրբեփանակերպ», 20 հունվար 2014թ.

## ԱԿԱՀՄ ՀՅՈՒՐՆ ԷՐ ԼՂՀ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀԸ

2015թ. փետրվարի 6-ին անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միության թանգարանը կրկին մարդաշատ էր: Միության անդամների և զոհված ազատամարտիկների հարազատների միության պատվիրակության հետ հանդիպեցին արհմիությունների ֆեդերացիայի ներկայացուցիչները՝ նախագահ Արա Ղահրամանյանի գլխավորությամբ: Առիթն անհայտ կորած ազատամարտիկների սոցիալապես անապահով ընտանիքներին աջակցելու անհրաժեշտությունն ու պատրաստականությունն էր: Մինույն ցավի շուրջ համախմբված ընտանիքներն այսօր էլ ունեցած դժվարությունները փորձում են միասին հաղթահարել:

ԼՂՀ անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միության նախագահ Վերա Գրիգորյանը ներկաներին շնորհակալություն հայտնեց հրավերն ընդունելու համար նշելով.

Մեր երկրում կան այնպիսի սրտացավ մարդիկ, ովքեր փոքր-ինչ գումար են հատկացնում անհայտ կորած և զոհված ազատամարտիկների հարազատներին բժշկվելու, գոյությունը պահպանելու համար: Մոտ օրերս մենք կայցելենք նաև Մարտակերտի և Հադրութի շրջաններ, որտեղ ունենք 28 առողջական խնդիր ունեցողներ, ոմանք՝ անկողնուն զամված, ոմանք նոր վիրահատված:

ԱԿԱՀՄ նախագահը բարեխիղճ վերաբերմունքի համար շնորհակալություն հայտնեց նաև սոցապ նախարարությանը:

Միջոցառմանը հրավիրել էինք նաև ԼՂՀ առողջապահության նախարար Հարություն Քուշկյանին, բայց ԼՂՀ տարածքից դուրս գտնվելու պատճառով չկարողացավ ներկայանալ, չնայած, որ նրա հետ քննարկելու շատ հարցեր ունեինք,- հա-

վելեց ԱԿԱՀՄ նախագահ Վերա Գիրգորյանը:

Արհմիությունների ֆեդերացիայի նախագահ Արա Ղահրամանյանը նշեց.

Շնորհակալություն և անհայտ կորած ազատամարտիկների և զոհված ազատամարտիկների հարազատների միությունների. դուք կարողանում եք պատվով լուծել ձեր առջև ծառայած բոլոր խնդիրները: Հավելենք արհմիությունների ֆեդերացիան արդեն 10 տարի է, ինչ գործում է Արցախում: Այսօրվա դրությամբ ունենք 5 ճյուղային, 8 քաղաքային արհմիություններ: Եթե ամփոփելու լինենք վերջին 5 տարիների կատարած աշխատանքը ԼՂՀ արհմիությունների ֆեդերացիան ստացել է 6275 դիմում-բողոք, որից 30 տոկոսը կազմել են աշխատանքային օրենսգրքի խախտումները, և որոնցից 19 հոգու վերականգնել ենք աշխատանքի: Արհմիությունները պաշտպանում են նաև իրենց անդամների իրավական, տնտեսական, սոցիալական շահերը տարբեր առյաններում ինչպես նաև դատարանում,- նշեց ԼՂՀ արհմիությունների ֆեդերացիայի նախագահ Արա Ղահրամանյանը:

Վերջին 5 տարիների ընթացքում արհմիությունների աշխատակիցները, համապատասխան աշխատանքային պլանի համաձայն, ստուգել են 2472 կազմակերպության կատարած աշխատանքներ:

Ամենաշատ բողոք-դիմումներն աշխատանքային օրենսգրքի խախտման մասին են: Իրականացրել ենք 6364 իրավաբանական կոնսուլտացիաներ, որոնք կապված են աշխատավարձերի ուշացման, ինչպես նաև անաշխատունակության քերթիկների տրամադրման ու ստացման հետ: Մենք ունենք նաև հատուկ հանձնաժողով, որը զբաղվում է ժամկետանց սննդի, գնաճի և մմանատիպ այլ հարցերով: Աշխատանքային պլանի համաձայն, համապատասխան կառույցների հետ միասին, ժամանակ առ ժամանակ այցելություններ ենք կա-

տարում տարբեր հացաթխման կետեր, խանութներ, ստուգում ապրանքների պիտանելիությունը և այլն: Վերջին 5 տարվա կտրվածքով 797 ստուգում ենք կատարել,- մեջբերեց Արա Ղահրամանյանը: Արհմիությունները պաշտպանում են մարդկանց շահերը, իրավունքները: Վերջին 5 տարիների ընթացքում 2416 մարդու հնարավորություն է ընձեռվել հանգստանալ Ջերմուկում, Արզնիում, այս թվում ներառվել են նաև և զոհված, և անհայտ կորած ազատամարտիկների հարազատներ, բարեկամներ: Արհմիությունները ֆինանսական օգնություն են ցուցաբերել 28 հաշմանդամ երեխաների:

Վերա Գրիգորյանը համառոտ ներկայացրեց ԼՂՀ անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միության անդամներից մեկին, ով 3-րդ կարգի հաշմանդամ է, հիվանդ եղբորն է խնամում, ընդ որում այդ ընտանիքն ամսեկան 25.000 դրամով է գոյատևում: Խոսքը Ռոբերտ Բաբայանի մասին է: ԼՂՀ անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միության անդամներն ու Վերա Գրիգորյանը ԼՂՀ արհմիությունների ֆեդերացիայի նախագահ Արա Ղահրամանյանին խնդրեցին Ռոբերտ Բաբայանին տեղավորել աշխատանքի:

**Լուսինե ԱՂԱԶԱՆՅԱՆ**  
«Մրեփանակերպ»  
13 փետրվարի 2015թ.

## ՉԵՎԱՎՈՐՎԵՑ ԼՂՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ



ԼՂՀ պաշտպանության նախարարի փետրվարի 24-ին ստորագրած հրամանով ստեղծվել է ԼՂՀ պաշտպանության նախարարին առընթեր հասարակական խորհուրդ: Խորհրդի կազմում ընդգրկված

են գերատեսչությունների, քաղաքական կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների և Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի ներկայացուցիչներ:

Հասարակական խորհրդի գործունեությունը նպատակաուղղված է Պաշտպանության բանակի ստորաբաժանումներում զինծառայողների կենցաղի, միջանձնային հարաբերությունների, նրանց իրավունքների պաշտպանության կարգավորմանը: Այն բազմակողմանի համագործակցություն է ծավալելու ԼՂՀ պաշտպանության նախարարության, Պաշտպանության բանակի շտաբի բաժինների, ԼՂՀ պետական ու գործադիր իշխանության մարմինների, քաղաքական կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների հետ:

Հասարակական խորհրդի հիմնական խնդիրներն են ՊԲ զորամասերում իրավակարգի և օրինականության ամրապնդումը, մարդու իրավունքների և արժանապատվության լիարժեք պաշտպանությունը, առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի, զինծառայողների հայրենասիրական դաստիարակության ապահովումը: Նրա գործունեությունը նաև ուղղված

պետք է լինի պայմանագրային հիմունքներով զինծառայողների ընտանիքների սոցիալ-կենցաղային պայմանների բարելավմանը, նրանց քաղաքացիական իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը: Խորհուրդն անմիջական մասնակցություն կունենա զորակոչի կազմակերպման գործընթացում արդարության սկզբունքի պահպանման, զորակոչիկների խախտված իրավունքների վերականգնման հարցերում, անմիջական վերահսկողություն պետք է սահմանի զորամասերում զինծառայողների ծնողների և հարազատների այցելության, նրանց դիմավորման և իրենց որդիների հետ տեսակցության կազմակերպման նկատմամբ: Խորհրդի անդամները կմասնակցեն ՊԲ շարքերից զորացրվող ժամկետային անձնակազմի շրջանում ՊԲ հավաքակետում անցկացվող հարցումներին նպատակ ունենալով բացահայտել զորամասերում առկա սոցիալ-կենցաղային և միջանձնային բնույթի խնդիրները: Պայմանավորվածություն ձեռք բերվեց յուրաքանչյուր եռամսյակը մեկ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ անհապաղ ԼՂՀ պաշտպանության նախարարին ներկայացնել ՊԲ զորամասերում տիրող ընդհանուր իրավիճակի և առկա հիմնախնդիրների վերաբերյալ վերլուծություններ և տեղեկություններ:

Հասարակական խորհրդի աշխատանքները համակարգող, ՊԲ հրամանատարի ԱՀՏԱ գծով տեղակալ, գեներալ-մայոր Վարդան Բալայանը հասարակական խորհրդի անդամների հետ հանդիպման ժամանակ նշեց, որ բանակն ունի բարոյական առողջացման կարիք, և հույս հայտնեց, որ խորհրդի անդամների ջանքերով կստեղծվի առողջ մթնոլորտ: Նրա կարծիքով զինվորականի շահերը պետք է լինեն ամեն ինչից վեր, յուրաքանչյուր գործողության հիմքում դրված լինեն վստահությունն ու հավատը:

Հանդիպելով հասարակական խորհրդի անդամների հետ

ԼՂՀ պաշտպանության նախարար, ՊԲ հրամանատար, գեներալ-լեյտենանտ Մովսես Հակոբյանն ասաց, որ խորհրդի ստեղծման հիմնական նպատակներից մեկն էլ այն է, որ հասարակության բոլոր շերտերը ներգրավվեն նրանում, բանակի խնդիրները դիտվեն ավելի սթափ աչքով, ինչը հրամանատարությանը հնարավորություն կտա առավել անկողմնակալ որոշումներ կայացնել: Պաշտպանական գերատեսչության ղեկավարը հորդորեց լինել անաչառ, օգնել բանակին ու նրա հրամանատարությանը արմատավորելու դրականը և համատեղ ջանքերով ձերբազատվել բացասական երևույթներից: Մ. Հակոբյանի հավաստմամբ իրենք հարգելու են հանրային բոլոր շերտերը ներկայացնող խորհրդի անդամների կարծիքը և անելու են հնարավորը բարձրացված հարցերին դրական լուծում տալու համար:

Հանրային խորհրդի նորանշանակ անդամները, շեշտելով խորհրդի գործունեության կարևորությունը, իրենց հերթին վստահեցրին, որ, համախմբելով ուժերը, հասնելու են նրան, որպեսզի խնդրահարույց բոլոր հարցերն արագ ու արդյունավետ լուծում ստանան: Նրանք խոստացան հաղթանակներն ու ձեռքբերումները շարունակական դարձնելու համար օգնել, աջակցել ու սատարել Պաշտպանության բանակին: Խորհրդի անդամների կողմից եղան նաև գործնական այլ առաջարկություններ:

ԼՂՀ պաշտպանության նախարարին առընթեր հասարակական խորհրդի նախագահ ընտրվեց ԱրՊՀ ուսանողների և հասարակայնության հետ տարվող աշխատանքների գծով պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը, իսկ փոխնախագահ՝ ԼՂՀ «Մայրություն» ՀԿ նախագահ Հասմիկ Միքայելյանը:

***Միրվարդ ՄԱՐԳԱՐՅԱՆ***

*«Ազատ Արցախ», 26 փետրվարի 2015թ.*

## ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ



«ԼՂՀ անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միություն» ՀԿ-ն հասարակական դաշտում առանձնանում է իր նախաձեռնողականությամբ ու ակտիվությամբ:

Ընթացիկ տարում ևս Միությունը

հասցրել է լինել հանրապետության շրջաններում և սոցիալական օգնություն տրամադրել 28 ընտանիքների:

Առաջին անհրաժեշտության պարենային ապրանքները Միությանն է տրամադրել ԼՂՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարությունը:

Ըստ ԱԿԱՀՄ նախագահ Վերա Գրիգորյանի կան անկողնուն գամված 84 հիվանդ, ովքեր իսկապես կարիք ունեն օգնության ու աջակցության: Հունվարի 15-16-ը մեկնարկած ծրագրի շրջանակներում ԱԿԱՀՄ վարչության մի խումբ անդամներ այցելել են Ստեփանակերտում՝ 17, Մարտակերտում՝ 6, Ասկերանում՝ 2, Հաղրություն՝ 4, Մարտունում՝ 2 և Շուշիում՝ 1 ընտանիքների: Միության նախագահի հավաստմամբ՝ սոցիալական ուղղվածության ծրագիրը լինելու է շարունակական, և տարվա ընթացքում իրենք կհասցնեն լինել բոլոր ընտանիքներում:

Մարտի 3-ին ԱԿԱՀՄ հուշաթանգարանն իր հարկի տակ էր հավաքել ԼՂՀ զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների մի մեծ կազմ: Միջոցառման նպատակն էր խրա-



խուսել բոլոր այն լրագրողներին ու նրանց ղեկավար կազմին, ովքեր Միության ստեղծման օրից առաջօր համագործակցում են կազմակերպության հետ:

Բացման խոսքում պատմական գիտությունների թեկնածու, «Կաճառ» գիտական կենտրոնի տնօրեն Սիեր Հարությունյանը, խրախուսելով ԱԿԱՀՄ նախագահի լրագրողների վաստակը գնահատելու նախաձեռնությունը, նշեց, որ լրագրողների՝ առաջին հայացքից աննկատ, բայց իրականում ի շահ երկրի, ժողովրդի ու պետության ամրապնդման կատարվող աշխատանքն արժանի է ամենայն ուշադրության: Ըստ Մ. Հարությունյանի 2015թ. մեր ժողովրդի բոլոր ձեռնարկումները լինելու են Հայոց մեծ եղեռնի 100-րդ տարելիցի համապատկերին ոչ թե սգալու, այլ հաստատուն կերպով մեր լինելությունը, անհողորդ կամքն ու վճռականությունն արտահայտելու միջոցով:

Բարձր գնահատելով ԱԿԱՀՄ գործունեությունը Մ. Հարությունյանն ասաց, որ այն մի նրբագիծ է ավելացնում մեր նորագույն պատմությանը, իմաստավորում անհայտ կորած ազատամարտիկների հայրենիքին մատուցած ծառայությունը, կրթելով ու դաստիարակելով հերոսներին արժանի սերունդ ու արժանի փոխարինողներ:



Խոսելով իր նախաձեռնության մասին Վերա Գրիգորյանն Արցախի զանգվածային լրատվության դաշտից առանձնաբերեց անուններ, ովքեր եղել են Միության կողքին նրա ստեղծման առաջին օրվանից և առաջօր էլ շարունակում են սատարել:

Խոսելով իր նախաձեռնության մասին Վերա Գրիգորյանն Արցախի զանգվածային լրատվության դաշտից առանձնաբերեց անուններ, ովքեր եղել են Միության կողքին նրա ստեղծման առաջին օրվանից և առաջօր էլ շարունակում են սատարել:

րել կազմակերպությանը:

Պարզևների արժանացած լրագրողները շնորհակալական խոսքեր ուղղեցին Միության նախագահին, և նրան ու նրա բախտակից մայրերին ու հարազատներին ցանկացան կամք ու համբերություն իրենց անհայտ կորած հարազատների դարձին սպասելու ճանապարհին:

Լրագրողները հավաստիացրին, որ կիսում են բոլոր նրանց



ցավը, ում զավակների ճակատագիրն առաջօր ծածկված է անհայտության քողածածկույթով: Բանաստեղծներ Դավիթ Միքայելյանն ու Ռոբերտ Եսայանը ընթերցեցին անհայտ կորած ազատամարտիկներին ձոնված իրենց բանաստեղծություններից, իսկ դպրոցական Անահիտ Մարտիրոսյանը հանդես եկավ հայրենասիրական երգի կատարմամբ:

ԱԿԱՀՄ նախագահի կողմից նվերների, պատվոգրերի ու շնորհակալագրերի արժանացան նաև հասարակական որոշ կազմակերպությունների ղեկավարներ, անհայտ կորած ազատամարտիկների հարազատներ:

**Սիրվարդ ՄԱՐԳԱՐՅԱՆ**

«Ազար Արցախ», 05.03.2015թ.

## ԱՐԺԵՎՈՐՎԵՑ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՎԱՍՏԱԿԸ

Մարտի 8-ի նախօրեին հետաքրքիր նախաձեռնությամբ հանդես եկավ ԼՂՀ ԱԿԱՀՄ ՀԿ նախագահ Վերա Գրիգորյանը ըստ արժանվույն գնահատելով արցախյան լրագրողների վաստակը, ովքեր առավել արդյունավետ կերպով են համագործակցում Միության հետ: Համագործակցություն, որը ծառայում է ի շահ մեր ժողովրդի և ի նպաստ մեր պետականության ամրապնդման: Վերջինս շնորհակալություն հայտնեց լրագրողներին իրենց նվիրական աշխատանքի համար հատկանշելով Միության հետ որդիաբար համագործակցող Արցախի հանրային հեռուստատեսության 2 աշխատակիցների կատարած աշխատանքը Հրայր Ավետիսյան և Արսեն Առստամյան:

Հանդիպումը վարում էր «Կաճառ» գիտական կենտրոնի տնօրեն Սիեր Հարությունյանը, ով իր խոսքում մասնավորապես նշեց, որ լուսաբանելով ԱԿԱՀՄ և մյուս հասարակական կազմակերպությունների գործունեությունը, արցախյան ՁԼՄ-ների ներկայացուցիչներն ուրույն տարեգրություն են կերտում մեր նորագույն պատմության էջերում ոգևորելով նրանց հետագա շարունակության ակնկալիքով, իմաստավորում նրանց հայրենիքին մատուցած ծառայությունը, կրթում ու դաստիարակում երիտասարդ սերնդին:

ԱԿԱՀՄ նախագահ Վերա Գրիգորյանը «Հայրենիք և հավատ» հուշամեդալով, պատվոգրերով և շնորհակալագրերով պարգևատրեց մի շարք լրագրողների և նվերներ հանձնեց անհայտ կորած ազատամարտիկների հարազատներին, վերջիններս իրենց շնորհակալական խոսքեր հղեցին իրենց որդիների գալստին անհամբեր ու կարոտով սպասող մայրերին ի դեմս Վերա Գրիգորյանի: «Հայրենիք և հավատ» մեդալով պարգևատրվեց «Վեստնիկ» հեռուստաժրագրի խմբագիր

Մեյրան Կարապետյանը, «Հայրենիք» թերթի գլխավոր խմբագիր Դավիթ Միքայելյանը, «Մունետիկ» թերթի գլխավոր խմբագիր Նվարդ Ավագյանը, «Հայրենյանց պաշտպան» թերթի գլխավոր խմբագիր Ռոբերտ Եսայանը, «Ազատ Արցախ» թերթի լրագրողներ Նվարդ Մողմունյանը, Լաուրա Գրիգորյանը, Սիրվարդ Մարգարյանը, «ԼՂՀ պատերազմի և աշխատանքի վետերանների միություն» ՀԿ նախագահ Սերգեյ Բարսեղյանը, հետմահու՝ «Կարկաչ» հեռուստառադիոյի հեղինակ Մելորա Բաղդասարյանը: Սերգեյ Բարսեղյանը իր սրտի խոսքը հետևյալ կերպ արտահայտեց.

Թող այսպիսի պարզևների ու նվերների արժանանան նաև նրանք, որոնց գալստին տարիներ ի վեր սպասում ենք. թող տուն վերադառնան մեր հերոս տղաները:

Պատվոգրերով պարգևատրվեցին Արցախի հանրային հեռուստառադիոընկերության տնօրեն Արթուր Ներսիսյանը, «Օր» լրատվական ծրագրի գլխավոր խմբագիր Արսեն Առստամյանը, գլխավոր ռեժիսոր Հրայր Ավետիսյանը, գլխավոր օպերատոր Սրտավազ Գրիգորյանը, «Օր» լրատվական բաժնի հաղորդավար Գագիկ Խաչատրյանը: Շնորհակալագրեր հանձնվեցին Արցախի հանրային հեռուստառադիոընկերության մի խումբ աշխատակիցների, ԼՂՀ «Մայրություն» ՀԿ նախագահ Հասմիկ Միքայելյանին, «ՀՕՄ-ի Արցախի Միավոր» ՀԿ ատենապետուհի Արմինե Հարությունյանին, «Հայկի սերունդ» ՀԵԿ նախագահ Արմինե Պետրոսյանին: Նվերներն ինքնատիպ էին. բաժակներ «Սպասեցեք, մենք կգանք» գրությամբ և ԱԿԱՀՄ խորհրդանշանով, դրանք հանձնվեցին անհայտ կորած ազատամարտիկների մի խումբ հարազատների:

Հանդիպումը եզրափակվեց Արաբո Իսպիրյանի «Կարոտ» երգի ունկնդրմամբ:

**Արևիկ ԲԱԲԱՅԱՆ**

*«Մրտիսանակերտ», 6 մարտի 2015թ.*

## ՄԱՐՏԻ 8՝ ՏՈՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ, ՏՈՆ ԲԱԶՄԱԽՈՐՀՈՒՐԳ



Յուրաքանչյուր տարվա այս օրը տղամարդիկ հատուկ ուշադրություն են հատկացնում կանանց, ծաղիկներ ու նվերներ տալիս նրանց, տոնական սեղանի շուրջ հատուկ բաժակ բարձրացնում նրանց պատվին: Բայց տարին, բարեբախտաբար, միայն Մարտի 8-ից չի կազմված...

Տոնը գալիս, անց է կենում, և նորից սկսվում է մեր առօրյա կյանքն՝ իր բազում հոգսերով ու խնդիրներով: Մենք՝ կանայք, կարծում ենք, պատվով ենք գլուխ հանում դրանից, «մենք» ասելով առաջին հերթին նկատի ունեն հայ և հատկապես արցախահայ կանանց, ովքեր անցել են համազգային պայքարի բովով թիկունք և ոգևորիչ ուժ դառնալով տղամարդկանց: Հնուց անտի հայ կինը միշտ էլ նեցուկ է եղել տղամարդուն, կողք կողքի, զենքը ձեռքին, տղամարդու հետ դիմադրել է թշնամուն: Ավարայրում տղամարդկանց կողքին թշնամուն եղաններով խոցում էին խիզախ հայուհիները, պատմիչ Եղիշեի լեզվով ասած՝ տիկնայք փափկասունք Հայոց աշխարհի...

Եվ միթե՞ նույնը չէր մերօրյա ազգային-ազատագրական շարժման ու նրան հաջորդած Արցախյան պատերազմի ժամանակ, մի՞թե բարձր ամբիոններից չհնչեց արցախուհու՝ հայրենյաց դատի պաշտպանի ձայնը: Եվ քանի-քանի հայտնի թե անհայտ հայ կանայք, զենքը ձեռքներին, մտան խրամատ, քանի-քանի գթության քույրեր էին առաջին օգնության պայուսակով գնդակների տարափի տակ վիրավոր զինվորի վերքը

կապել, նրան կրակի գոտուց հանել: Հիշենք Աիդային, Մարգարիտին, Անահիտին, Ստալինային, Քանաքարային... Շատերին: Այսօր, երբ տղամարդիկ բաժակ են բարձրացնում «թույլ սեռի» ներկայացուցիչների պատվին, մենք պետք է, այո, երախտագիտության այդ «մեղրը» ոչ միայն ինքներս վայելենք, այլև փոխանցենք նրանց, ովքեր այսօր կենդանի թե նահատակ, հայրենիքի և ազգի համար բախտորոշ պահին եղել են առաջին շարքում:

Անշուշտ, կինն է օջախի ջերմությունը պահողը, ընտանեկան նավն անվտանգ պահողը, երեխաներին խնամելու և ճիշտ դաստիարակություն տալու գործում ամուսնու գլխավոր թիմակիցը: Եվ հազար անգամ փառք ու պատիվ այն կանանց, ովքեր ընտանեկան հարկի տակ, ի վերջո՝ հայրենիքի համար, հերթափոխ սերունդ են մեծացնում՝ ճակատագրի կամոք երբեմն առանց ամուսնու: Գուցեն մեզ իզուր են «թույլ սեռ» անվանում, քանզի երբ պահը գալիս է մենք կարողանում ենք ուժեղ լինել:

Ես դա գիտեմ ոչ թե լսածով կամ կարդացածով, այլ՝ սեփական փորձով. քսանից ավել տարի սպասում եմ անհայտությունից միակ որդուս վերադարձին... Եվ այն հասարակական կազմակերպությունում, որի նախագահն եմ մեկուկես տասնյակ տարի, ինձ նման հարյուրավոր կանայք կան, որոնք նույնպես դիմակայում են կյանքի հարվածներին և, ուրախանալով այսօրվա ազատ ու անկախ հայրենիքի համար՝ ըմբռնումով են վերաբերվում կյանքի անցած ու ներկա դժվարություններին, մտահոգվում ոչ այնքան մի կտոր հացի, որքան՝ հարազատ երկրի ապագայի, նրա առջև ծառայած մարտահրավերները հաղթահարելու մասին...

Շնորհավոր բոլոր կանանց Մարտիության տոնը:

**Վերա ԳՐԻԳՈՐՅԱՆ**  
*ԼՂՀ ԱԿԱԶՄ նախագահ*

## ՈՉ ՄԻ ԵՐԿԻՐ ԼԻԱԶՈՐՎԱԾ ՉԷ ԽԱՆՏԵԼՈՒ ԳԵՐԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԺՆԵՎԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՆ

### Իսկ Ադրբեջանը խախտում է:

Ադրբեջանն իրեն վերապահում է այդ ոչ մի տեղ չգրված «օրենքը»՝ դրանով իսկ համաշխարհային հանրությանը ցուցելով իր անմարդկային դեմքը:

Դա տևում է արդեն տասնամյակներ, որովհետև նույն ՄԱԿ-ն ինքը և մյուս համապատասխան միջազգային ատյաններն ու աշխարհի ուժեղ պետությունները չեն գործադրում քա-



վականաչափ ջանքեր՝ միջազգային իրավունքի շրջանակում քաշելու Ադրբեջանի սանձը, նրան ստիպելու նախ՝ մարդկայնորեն վերաբերվել գերիներին, նրանց կտտանքների չենթարկել քանտերում և ազատագրկման մյուս վայրերում, ու երկրորդ՝ դրսևորել բարի կամեցողություն՝ նույն օրենքի շրջանակներում ազատ արձակելով նրանց:

Մարդկությունը որքան հիշում է իրեն՝ եղել են անհաշիվ պա-

տերազմներ: Եվ կողմերը ոչ միայն վերջնական հաշտեցումից, այլև ժամանակավոր հրադադարից և անգամ առանձին վերցված ճակատամարտերից հետո փոխադարձաբար վերադարձրել են գերիներին, ծայրագույն պարագայում՝ զոհերանց դիակը...Ե՛րբ պիտի իրենց աղբբեջանցի կոչող անդրկովկասյան թուրքերի ուղեղին էլ հասնի այդ ճշմարտությունը: Ղարաբաղյան պատերազմից անցել է արդեն քսանմեկ



տարի, իսկ մեր գերի տղաները դեռ տառապում են օտարի բանտում: Բնական է մտածել, որ նրանց մի մասը կարող է տարիներով կրած զրկանքների ու չարչարանքի հետևանքով արդեն մահացած լինել: Հակառակորդի զնդաններում հայերի նկատմամբ գործածվող տանջահարության մեթոդների մասին մեկ անգամ չէ, որ անձամբ լսել են այդ դժոխքից հրաշքով ազատված մեր նվազաթիվ հայրենակիցներից...

Աղբբեջան, ի վերջո, պետք է հետևի քաղաքակիրթ երկրներին և հասկանա, որ չեն լինում պատերազմներ՝ առանց գերի-



ների, ինչպես նաև այն, որ երիտասարդները ռազմաճակատ են մեկնում տվյալ երկրի զորակոչի համաձայն, քանզի դա քաղաքացու, թուրք լինի նա, հայ, ռուս թե ամերիկացի, պարտքն է պետության հանդեպ: Որեմն, երբ ստորագրվում է հրադար, գերիներին պահելն այլևս անմարդկային քայլ է պահողի կողմից: Ի՞նչ աստիճանի դաժան պետք է լինես, որպեսզի նույնիսկ պատանդներին (ասել է թե՛ քաղաքացիական անձանց, օկուպացվող տարածքի խաղաղ բնակիչներին) դժոխքում տարիներ տառապելուց հետո անգամ թույլ չտաս վերադառնալ տուն...

Միջազգային պատկան կազմակերպությունները պետք է բազմապատկեն իրենց ուժերը և հնարավորություն ստեղծեն փրկելու այդ մարդկանց կյանքի գոնե վերջին տարիները... Մի՞թե քեզ մայր չի ծնել, Իլիհամ Ալիև, քեզ իսպա՞ն հասկանալի չեն մայրերի տառապանքն ու աղերսանքը, ինչո՞ւ բարի կամք չես դրսևորում՝ ազատություն շնորհելու ջանքերի վան տարիքում ձեր բանտերը տարված և այնտեղ արդեն ծերացող գերիներին, ո՞ր իրավունքով ես քեզ վեր դասում իրավականորեն անբազրված միջազգային օրենքներից;

Ասում են՝ մարդը հասարակությունից դուրս... կամ աստված է, կամ՝ գազան: Հատկապես ձեր պարագայում, արդեն համոզված կարելի է ասել, առաջինի մասին խոսք չի կարող լինել: Ուրեմն՝ մնում է երկրորդը ... Դուք համառորեն չեք ուզում անցած պատերազմի գերիներին ու պատանդներին ազատ արձակել: Ինչո՞ւն եք տեսնում պատերազմական իրադրությունում հայտնված մարադացի փոքրիկ աղջկա կամ ութսունամյա ծեր մարդու մեղքը: Դուք նրանց խղճալ ու խնայել չեք պատրաստվում, բայց համարձակվում եք երրորդ կողմի միջամտությամբ ձեր այսօրվա հանցագործ, խաղաղ օրով ուրիշի երկիր թափանցած և անմեղ մարդկանց սպանած, օրինական դատ-դատարանով դատված, դիվերսանտներին մենք

թույլ տանք Ադրբեջան վերադառնալ: Լկտիության ի՛նչ աստիճան:

Հայկական կողմը բազմիցս է բարի կամք դրսևորել գերինների նկատմամբ, այդ մասին հայտնի է բոլորին, բայց հո չի՛ կարելի գոլ խփել՝ գնդակն անընդհատ ուղարկելով ...դեպի սեփական դարպասը: Հասկացեք, վերջապես, որ ընդերքի նավթն էլ անսպառ չէ... Կգա ժամանակ, երբ Ադրբեջանն այլևս չի ունենա նավթադուլարներով աշխարհի ուժեղներին կաշառելու միջոց, և այդ դեպքում, անհասկացողների պարոն անհասկացող նախագահ, ձեզ վրա կծանրանա ոչ միայն հայ մայրերի, այլև ոտքի տակ սոցիալական հողը վերջնականապես կորցրած ձե՛ր իսկ ժողովրդի թուքն ու անեծքը...

Գերինների պաշտպանության միջազգային օրվա հերթական այս տարեդարձին ես, որպես անհայտ կորած ազատամարտիկների միության նախագահ և պատերազմում որդուն անհայտկորցրած մայր, իմ ու բախտակիցներիս անունից դիմում եմ գերինների հարցերով զբաղվող՝ միջազգային բոլոր կազմակերպություններին՝ գերինների որոնման ուղղությամբ ավելի գործնական, ավելի արդյունավետ ջանքեր գործադրելու, ազատագրված մեջ նրանց պայմանները բարելավելու և որպես տրամաբանական ավարտ՝ նրանց տունդարձն ասպահովելու կոչով:

**Վերա ԳՐԻԳՈՐՅԱՆ**

«Ազատ Արցախ»

11 սպրիլ 2015թ.

## ԿՅԱՆՔԻ ԵՎ ՄՇՏԱՍԹԱՓՈՒԹՅԱՆ ԿՈՉՈՂ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

Ժողովրդի պատմական հիշողությունն անչափելի է ու անկշռելի: Այն անպատկերացնելի ներուժ է կրում իր մեջ, որովհետև հավաքական հիշողություն է:

Ի թիվս շատ պատմական իրադարձությունների՝ այդ հիշողությունն է, որ 1988 թվականին արցախահայությանը դուրս բերեց հրապարակ... Որովհետև իր մեջ «հնանալու-չորանալու» անենթակա՝ պահում է Ավարայրում ու Դեր-Չորում հայության թափած արդար ու անմեղ, և ընդհանրապես՝ բոլոր ժամանակներում, մեր ազգի նահապետ Հայկից սկսած մինչ այսօր (այսօր էլ՝ հայ-ազերական սահմանի վրա մեր դիրքապահ տղաների մեկ-մեկ հեղվող) հայկական արյունը...

Ազգի պատմական հիշողության դեմ տարածության ու ժամանակի անզորության ապացույցն է այն իրողությունը, որ Հայրենիքում լինի թե մերձակա ու հեռավոր Սփյուռքում՝ հայերս խաչքարեր և այլ հուշարձաններ ենք կանգնեցնում Հայոց ցեղասպանության, կամ այլ ձևակերպմամբ՝ Մեծ եղեռնի, զոհերի հիշատակին: Հիշատակին՝ միլիոնավոր մեր նահատակների՝ տղամարդկանց ու կանանց, ծերերի և մանուկների...Թուրքի յաթաղանը չի խղճացել անգամ վերջիններս, որովհետև այն բանեցնող ձեռքը եղել է արյան ծարավ գազանի՝ բորենու ձեռք:

Կա<sup>օ</sup> էլի ժողովուրդ, հայերից ու հրեաներից բացի, բայց հատկապես՝ հայերից, որ ցեղասպանվի այնքան այնքան պերմանենտ, շարունակական այնքան, որ եղեռները միմյանցից տարբերելու համար կոչի հատուկ անուններով՝ «Ադանայի կոտորած», «Մեծ եղեռն», «1920թ. Շուշիի մեծ հրդեհ ու համակոտորած», նույն թվականի, ապա և, 70 տարի

անց՝ 1990թ. «Բաքվի ջարդեր»՝ «Մումգայիթյան ցեղասպանության» սահմուկեցուցիչ նախանմուշով, «Մարաղայի ողբերգություն»... Երակներունդ մեկեն վառվում է կարմիր հեղուկը, երբ հիշողության ընդարձակ դաշտից մի պահ պոկվելով՝ դեպի քեզ է գալիս այդ ամենը...

Հաճախ ասվում է, թե եթե ցեղասպանություն գործած իշխանության իրավահաջորդները ներողություն խնդրեն... Ոչ, չեն ուզում ձևակերպման միտքը կռահվող ավարտին հասցնել, դրա փոխարեն ուզում են հարցնել. եթե ներողություն խնդրեն՝ ի՞նչ, մորթվածները, խարույկին հանձնվածները, սեփական երեխաների աչքի առջև բռնաբարվածները... կվերակենդանանան, կհառնեն գերեզմաններից դեռ չկարգված այն հայ երիտասարդները, որոնք ազգին միլիոնավոր զավակներ էին պարզելու՝ եթե չսպանվեին... Ցեղասպանությունների երկար շղթայում հայ ժողովրդի կորուստը միայն պատմական հողերի և նահատակվածների թվի մեջ չէ, այլև համիդների ու թալիաբների հրամանով չծնված մեր՝ կրկնակի միլիոնավոր մանուկների... Մենք շատ բազում միլիոններ պետք է լինեինք այսօր, և մարմինն էլ մեր երկատված չպետք է լիներ Հայրենիքի և Մփյուռքի միջև: Դեռ փառք Ամենակարողին, որ գոնե մեր հոգին ու ոգին թողեց ամբողջական, չերկատեց՝ մարմնի պես: Այդ ամբողջականությունը փրկեց մեզ Արցախյան գոյամարտում և պատերազմում, որտեղ ուս-ուսի կռվում էին դարաբաղցին ու ջավախեցին, լոսանջելեսցի և մարսելցի հայորդիները, մշեցու, սասունցու հայաստանաբնակ ժառանգները... Կովեցին և ապահովեցին Հաղթանակ՝ տխրահռչակ «աղբերջանական ֆակտորի»՝ դեմ դնելով Սասունցի Դավթի հավլունի թուրը...

Ցեղասպանության դեմքն ահավոր է:

Չեն կարողանում մոռանալ մի դեպք, որը տեղի ունեցավ 14 տարի առաջ՝ 1999 թվականին, մեր՝ ԼՂՀ Անհայտ կորած

ազատամարտիկների հարազատների միության, գրասենյակում:

...Մուտքի մոտ կանգնած էր վաղաժամ ճերմակած (դա երևում էր դիմագծերից), համեմատաբար երիտասարդ մի կին, որն ասես փնտրում էր ինչ-որ մեկին: Ինձ տեսնելով՝ հարցրեց. «Չգիտեմ՝ ճի՞շտ եմ եկել... Ինձ անհայտ կորածների կոմիտեն է պետք»: Ներս մտանք, տեղավորվեցինք, ներկայացրեց իրեն.

- Ես Լենա Սաֆարյանն եմ: Ռուսաստանից եմ եկել: Եկել եմ մի անգամ էլ տեսնեմ մեր Ղարաբաղը... Հողե՛մ թուրքերի գլուխը, գերության մեջ գիտե՞ք մեզ ինչ էին ասում՝ Ղարաբաղը չկա, Մարաղայի օրն են գցել...

Ես մարաղացի եմ՝ Հին Մարաղայից: Այն սև օրը՝ 1992 թվի ապրիլի 10-ին, զոհի «թեկնածու» էի. հոշոտված ընկած էի դիակների արանքում, գիտակցությունս կորցրած: Չգիտեմ ինչպես՝ մարմինս անկապ շարժվել է, և թուրքերը նկատել են, որ շունչս դեռ չեմ փչել, վերցրել տարել են: Երանի՛ չէր մեռած լինելի... Հետագա չարչարանքներից կազատվելի: Մինգեչաուր տարան, հետո էլ Բաքու: Կներեք, պատմել չեմ կարողանում, մարմինս դող է բռնում, սիրտս՝ խառնում էն տարիներին տեսած-զգացածս հիշելուց... Էստեղ տղամա՞րդ կա... Չէ՞... դա լավ է, խոսելու տեղ ցույց կտամ մարմինս, այն ավելի լավ կպատմի գլխովս անցածի մասին...

Նա կրծքի կողմից բարձրացրեց բլուզը և... քիչ էր մնում՝ աչքերս մթնեին: Կրծքի պտուկները չկային: Սրիկաները վառած ծխախոտով բազմանվազ այնքան էին դրանք այրել, որ բան չէր մնացել:

- Ասում էին՝ նրա համար, որ, բան է էլի, եթե ձերոնց հանկարծ հաջողվի գտնել ու գնել քեզ (եղ «գնելն» էլ լավ շեշտում էին) ու երեխա ունենաս՝ չկարողանաս կերակրել նրան...

Կոնքուհետույքին՝ խաչեր, դաջված նույն «մեթողով»...

- Եղբայրներս Կրասնոդարի երկրամասում են ապրում: Երկար փնտրելուց հետո իմացան տեղս և թուրքի հետ փոխանակեցին... Գիտե՞ք ինչ էի ուզում իմանալ. ձեր ցուցակներում Չարիֆա ու Նազիլյա կա՞ն:

Չարմացա.

- Ի՞նչ Չարիֆա, ի՞նչ Նազիլյա... Դրանք թուրքի անուններ են...

- Չէ է՛, հայերի մասին եմ հարցնում: Հայեր են: Ուրեմն՝ չկա՞...

Նա ընդամենը 3 ժամ ժամանակ ուներ, ու ես շտապեցի զանգել հեռուստատեսության ղեկավար Գարիկ Գրիգորյանին, որպեսզի հեռուստաօպերատոր ուղարկի՝ Լենային նկարահանելու, սակայն պարզվեց, որ ազատ կամեր չկա, արտագնա՝ օբյեկտներում էին: Չանացի զոնե լուսանկարիչ Ռուդիկին բերել՝ նա էլ քաղաքից դուրս թաղման էր...: Մի խոսքով՝ «նատուրալով ֆիքսել» գերությունից ազատված կնոջը չհաջողվեց, բայց նա իր նկարը (մյուս անհրաժեշտ տվայլներով հանդերձ) թողեց մեզ մոտ: Երբ մտանք թանգարան, ու սկսեց դիտել նկարները, հանկարծ մատը մեկնեց նրանցից երկուսի կողմն ու գոչեց.

- Բա ասում եք՝ չկա՞ն... Ահա՛ Չարիֆան... Էս էլ Նազիլյա՞ն է... Գիտե՞ք ինչքան համարձակն են: Հատկապես՝ Չարիֆան:

Բառ չէի գտնում՝ արձագանքելու: Ոտից գլուխ ցնցված էի: Այդ կինը մատը տարել դրել էր սառնադրյուրցի Չինա Գրիգորյանի և դահրագցի Նադյա Բադդասարյանի նկարների վրա. երկուսն էլ անհայտ կորել էին գյուղի պաշտպանության դաժանագույն մարտի ժամանակ. Չինան՝ զենքը ձեռքին, Նադյան էլ՝ բուժքույր ...

Այժմ ավելի՛ քան երբևէ, երբ մեր թիկունքում են երկրորդ հայկական հանրապետության գոյության՝ երկու տասնամյա-

կից ավել տարիները, հայի ոգուն անպարտելիություն է պարտավորեցնում Արցախյան պատերազմում ձեռք բերված հաղթանակը: Այն հայոց բոլոր՝ Մեծ թե «փոքր», եղեռնների դեմ մեր վրիժառության առաջին շոշափելի ապացույցն է և արդյունքը, որը, եթե անհրաժեշտ լինի, վերջինը չի լինի... Թուրքն անգոր է մեզնից խլելու մեր գոյատևելու և հարատևելու իրավունքը: Մենք մշտապես վերընձյուղվելու ենք մեր մաքուր ու արդար արմատի վրա:

Այնպես՝ ինչպես վերընձյուղվեց անհայտ կորած ազատամարտիկ (ի դեպ՝ նույնպես մարադացի) Լյովա Երեմյանի ընտանիքը: Լյովան կռվում էր «Արաբո» ջոկատում՝ և դրանով ասված է ամեն ինչ: Եղբայրը՝ Բորիսը զոհվել է... Նրանց մայր Նորան ու Լյովայի կինը՝ Ստելան նոր տունուտեղի տեր են դարձել Շուշիում, պահել մեծացրել Լյովայի թողած երեք փոքրիկներին, որոնք իրենք էլ հիմա գերդաստանի շարժը դեպի հավերժ կրկնվող վաղվա օրը տանող հայրեր են...

Նորա մայրիկն անհրաժեշտ առիթներով հաճախ է լինում մեր գրասենյակում, ու երբ պատմում է, թե ինչպես է իր՝ արդեն ծեր կեսրոջ, մասին հոգ տանում Ստելա հարսը, նաև՝ թե ինչպես են նրա օրինակին հետևում տան հարսիկները (թոռների կողակիցները), ուզում ես գոչել՝ Տե՛ր Աստված, թող այդպիսին էլ մնան հայ տղամարդու խիզախ և հայ կնոջ ավանդապահ էությունները, քանզի նաև դրա՛ մեջ պետք է տեսնել Հայոց ցեղասպանության դեմ Հայոց պատասխանը և պատմական հիշողության խորհուրդը խորին՝ «Ողբամք մեռելո՛ց, կոչենք ասարողա՛ց»:

**Վերա ԳՐԻԳՈՐՅԱՆ**  
ԼՂՀ ԱԿԱԶՄ հ/կ նախագահ

## ՄԵՐ ՑԱՎԻ ՏԵՐՆ ԵՆՔ ԵՎ ԿՈՐՑՐԱԾԻ ՊԱՀԱՆՁԱՏԵՐԸ

Մենք, այսինքն՝ համայն հայ ժողովուրդը՝ նրա ո՛ր հատվածը կամ անգամ մեկ միավորը որտեղ էլ ապրելիս և ապրելու լինի...

Ապրիլի 24-ը... մեզ համար մեծատառով գրվող Յավի խորհրդանիշ դարձրած Օսմանյան կայսրության իրավահաջորդ Թուրքիան պարտավոր է ճանաչել և ընդունել Հայոց ցեղասպանությունը՝ դրանից բխող իրավական հետևություններ



րով հանդերձ: Ճանաչումը, որպես ապաշխարումի առաջին քայլ, գուցե թե մասամբ կմաքրի հակամարդկային կրքերի տեր թուրքերի դեմքին իրենց իսկ իշխանության դաջած՝ «1915 թվական»-ի սև խարանը... Դա է պահանջում Արևմտահայաստանում համատարած կոտորածի ենթարկված, սիրիական անապատներում դանդաղ մահվան դատապարտված մեկուկես միլիոն հայերի (Եվրոպայում առաջին, Հյուսիսային և արևմտյան Ասիայում երկրորդ դար առաջ, ցեղասպանության անմեղ զոհերի) հիշատակը: Աննախադեպ ոճրագործության գոնե 100-րդ տարելիցին...



Նորմալ մարդը երբ անգամ մի հավ է մորթում, շտապում է արագ մաքրել ձեռքի արյունը՝ ոչ միայն էսթետիկական տեսքի, այլև այդ չնչին, բայց շնչավոր գոյին Աստծո տված կյանքից զրկելու մտքից ու հեղած արյունից... Խիղճն ազատելու համար: Որովհետև արյան տեսքից միայն զազանն է, որ իրեն վատ չի զգում: Չարմանալ կարելի է, թե Թուրքիան ինչպես է համակերպված ապրում իր արյունոտ խղճի հետ: Եվ թե ինչո՞ւ է ապաշխարումն այդչափ անըմբռնելի թուրք տարրի համար:



Հրեաներին «դրսում» ողջակիզած Գերմանիան վաղուց է ընդունել իր սխալն ու ոչ միայն ներողություն խնդրել, այլև նյութականապես հատուցել պատճառած վնասը: Ինչո՞ւ գերմանացիների ներկայիս սերունդն իրեն պարտավորված կզգա նախնյաց գործած մեղքի համար, իսկ մեզ մե՛ր իսկ հողում մորթած թուրքերը՝ ոչ: Արդյո՞ք փաստը չի հուշում այն մասին, որ վերջիններիս մոտ արյունահեղման և ուրիշի հող ու կյանքին բռնի տիրանալու հակումը պաթոգենեզի մակարդակ ունի...

Անպատժելիությունը ծնում է նոր հանցագործություն. սա նոր միտք չէ և ապացուցված է, ցավոք, անհաշիվ օրինակներ

րով: Եթե չլիներ Ադանայի ջարդը, չէր լինի գուցե և Գեր-Չորը, չլիներ Մեծ եղեռնը՝ չէին լինի գուցե Բաքվի հայերի կոտորածը, Շուշիի հայկական թաղամասի հրո ճարակն ու բնակչության սրիքաշումը, մեր օրերում՝ Սումգայիթյան ցեղասպանությունը, Գետաշենի և Շահումյանի շրջանների հայազտումը, Շուշիի երկրորդ, հայաթափումը, Մարաղայի ողբերգությունը, որը ցեղասպանության ավելի քան տիպական օրինակ էր... Չէր լինի այդ ամենը՝ եթե ի սկզբանե պատժված լինեին այդ ոճրագործությունների կազմակերպիչներն ու ի կատար ածողները:



Միակ ուժը, որ ցանկացավ ու կարողացավ ազատագրելու մեզ վերադարձնել մեր քաղաքն ու յոթանասուն տարի բռնակալի աքցանում հայտնված Արցախ աշխարհի գոնե այսօրվա մասը՝ ԼՂՀ սահմաններով, դա մեր բանակն էր՝ իր թիկունքում ունենալով ամբողջ հայ ժողովրդին՝ Հայաստանով ու Սփյուռքով հանդերձ:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին մենք ասում ենք՝ Թուրքիա, ի հեճուկս քո թափած ջանքերի՝ մենք կանք ու

պահանջատերն ենք մեզնից բռնախլվածի: Կանք՝ որպես ներկայացուցիչները քո ոճրագործ էության, դատավորները քո անմաքուր խղճի: Անցած հարյուր տարին ապաշխարելու լավ հնարավորություն էր քեզ համար՝ չօգտագործեցիր, բայց երբ վրա հասնի հատուցման պահը (ինչպես՝ այսօր չենք կարող ասել, բայց այն լինելու է՝ վաղ թե ուշ), առաջինը քեզ կդատապարտի քո իսկ երիտասարդ սերունդը՝ չուզենալով իր վրա առնել նախնյաց հեղած ու՝ չորանալու ենթակա արյան անեծքն ու ծանրությունը...

Իսկ գիտե՞ն, արդյոք, թուրքերը մեր հարատևության գաղտնիքը: Գիտե՞ն, որ դա հային ի վերուստ տրված՝ լույսն է, հոգու և մտքի բարեցույց, աշխարհաշեն լույսը, որը մեզնից չխլեց անգամ յաթաղանը, որն ուղեկցում էր մեզ գաղթի դժոխային ճանապարհներին: Մեր արքայալ կանայք մարդակուլ անապատով քայլում էին՝ սուրբ Ավետարանը ծոցներում թաքցրած... Ահա թե ինչու Մատենադարան ունենք հայերս, մատենադարան, որի կրկնակն, ի դեպ, շուտով կյանք կառնի Արցախի Հանրապետությունում...

Եվ էլի մենք հավերժի ճամփորդ ենք, որովհետև Դեր-Չորի ավազներում թաքնված՝ միայն գլուխը դրսում պահող, թուրքի ձեռքով լեզուն հատված տասը տարեկան հայ մանուկը հետևից եկող հայ արքայալների հերթական խմբին լեզվով չկարողանալով հայտնել իմացածը, գլխի շարժումներով զգուշացնում էր առջևում սպասող վտանգի մասին՝ ցուցելով, թե որ կողմում են դարանակալած թուրք զինյալները...

Հազար անգամ ճիշտ է ասել հայ ժողովրդի օտարեկրացի մեծ բարեկամը, թե՛ հնարավոր չէ՛ սպանել մի ժողովրդի, որը չի ցանկանում մեռնել... Ընդունեք դուք Հայոց Ցեղասպանությունը թե ոչ, մենք եղել ենք, կանք ու կլինենք, թուրքեր...

**Վերա ԳՐԻԳՈՐՅԱՆ**

«Ազար Արցախ»

16.04.2015

## ՍՊԱՍՈՒՄԻ ՑԱՎ



Կան երևույթներ, որոնք անձնական են, երևույթներ, որոնք ազգային են և երբեմն էլ համամարդկային: Այդպիսի ազգային ու համամարդկային դաժան ոճիք է

Եղեռնը, պատերազմները, որոնք ժողովրդներին բերում են գրկանք, տառապանք, նվաստացում ու կորուստ:

Այսօր համայն հայությունն ու աշխարհի հումանիստ հասարակայնությունը խնկարկում է Հայոց Մեծ Եղեռնի 100-ամյա տարելիցը:

Խոնարհվենք ու հիշենք, որ աշխարհում Հայաստանից մեծ Դեր-Չորի անապատ-գերեզմանը կա, ուր անթաղ շիրիմների հոգիները դեռ դեզերում են տիեզերքում և չեն արժանանում անդրշիրիմյան հանգստի, և այն աշխարհի մեղքերի մեղքն է՝ ու ապտակ առաջադեմ մարդկության քաղաքակրթության դեմքին:

Այսօր Արցախ աշխարհում և համայն հայության մեջ կորուստի մեծ ցավ կա նաև մեր զոհված ազատամարտիկների, ֆիդայի-հայրուկների ու անհայտ կորած հայորդիների համար: Եռարլուրն ու Արցախի հուշահամալիրն ամփոփում են զոհյալների բողոքն առ Աստված, որը դարձել է Նարեկյան աղոթք ու դաս ու դասագիրք սերունդների համար: Չոհերի շիրիմները դարձել են սրբատեղի, ուր այցելում են վշտահար

մայրերը և հոգու կարոտն ու նվիրումը պարպում այնտեղ: Սակայն կա մի այլ տառապյալ շերտ, որի համար պատերազմը մինչ այսօր չի ավարտվել: Նրանք մայրեր են, զավակներ, կանայք, որոնց աչքը ճամփին է և սպասումի ցավը զնալով ահագնանում է:

Աննկարագրելի վշտով ու կարեկցանքով իր բախտակիցների համար աննկարագրելի ծառայություն է մատուցում «Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միություն» որդեկորույս նախագահը՝ Վերա Գրիգորյանը:

Նրա անունն այնքան հանրահայտ ու պատկառելի է, որ չեն փորձի նոր գծերով ներկայացնել նրան ու այն կազմակերպությունը, որի հիմնադիրն ու շինարարը հենց ինքն է՝ մայրամուռն զավով ապրող այդ Տիկինը:

Ջորություն, կամք ու հավատ ցանկանք այս կազմակերպության անդամներին, որդիների վերադարձին սպասող բոլոր մայրերին, կանանց, զավակներին, որոնցից շատերն իրենց հայրերին ճանաչում են պատից կախված շրջանակված լուսանկարից:

Փառք ընկածներին, սպասում անհայտ կորածներին, հզոր կամք մեզ՝ ապրողներին:

Շենացներք մեր երկիրն ու պետականությունը և այս կլինի մեր լավագույն նվերը նրանց հիշատակին:

**Արզիկ ՄԽԻԹԱՐՅԱՆ**

*ԱրՊՀ պրոֆեսոր, հոգեբան,  
ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ  
17.04.2015թ.*

**ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ**

Խմբագրի խոսք..... 3

Բերկրանք և հաջողություն՝ բոլոր-բոլորին ..... 5

Հին ու նոր տարվա սահմանագծում ..... 8

Դառն ու դաժան ճակատագրեր .....10

Նվիրված Շուշիի ազատագրման 20-ամյակին ..... 15

Նրանց հիշողության մեջ առաջին ու վերջին  
մարտերը չեն միայն... ..... 17

Կանգնած ենք բանակի թիկունքում ..... 21

Նպաստել զինձառայողների ռազմահայրենասիրական  
դաստիարակությանը ..... 23

«Միրում ենք, հայրենիք» ..... 26

Կարդացվում է սիրով ու ... ցավով ..... 36

«Միրում ենք, հայրենիք» ..... 39

«Միրում ենք, հայրենիք» ..... 41

«Միրում ենք, հայրենիք» .....43

Տոնական միջոցառումների շրջանակում ..... 47

Երեխաները մեր ապագան են .....49

Շնորհավորանքներ երեխաներին՝ ԱԿԱՀՄ-ում ..... 51

«Ես սիրում եմ քեզ, հայրենիք» ..... 53

Ամենայն վճռականությամբ պիտի շարունակենք  
սկսած գործը. սա է օրվա խորհուրդը ..... 56

Տառապանքը, հիրավի, ազգություն չի ճանաչում ..... 60

Ոգեկոչելով պատերազմից տուն չդարձած  
հայրողիների հիշատակը ..... 61

Հույսն ու հավատը դեռ չեն հոգնել .....64

Քանի դեռ զինվորդ կլինի յուրաքանչյուր զավակդ,  
դու անպարտ կլինես, հայրենիք ..... 66

Հունգարիան պետք է ուղղի իր սխալը, մարդասպանը՝ լիովին կրի պատիժը .....	73
Մեղալը՝ սփոփանք հարազատներին .....	76
Մեղալների պարզևատրման արարողություն ԱԿԱՀՄ-ում .....	79
Ոչ ոք չի մոռացվել .....	81
Դուք հայտնի անուն, սակայն անհայտում .....	83
Ամանորյա հանդես՝ անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միությունում .....	86
Քառասուն տարի՝ «նավի» վրա .....	88
Մի նկարի պատմություն .....	92
Հույսը ճանապարհին .....	97
Մայրաքաղաքում նշվեց հայրենիքի համար նահատակվածների և անհայտ կորած ազատամարտիկների հիշատակի օրը .....	101
Հույսի ու սպասումի քսան տարիներ .....	104
Սպասումի երկար ճանապարհ .....	110
Ինչքան էլ երկարի սպասումը, հույսն ու հավատը մնալու են անսասան .....	112
Գիտելիքը զենք է, որը կրակում է և՛ կարճ, և՛ երկար տարածության վրա .....	117
Մեր գլխավոր տոնը .....	120
ԼՂՀ ԱԿԱՀՄ -ն 15 տարեկան է .....	123
«Երկու ճակատի զինվորը». այս անգամ՝ ոստիկանների սխրագործությունների մասին .....	127
Միջոցառում նվիրված «անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միության» 15-ամյակին .....	133
Գիրք, որ հոգու պահանջ էր ու հոգու պարտք .....	138
ԱԿԱՀՄ հասարակական կազմակերպությունը 15 տարեկան է .....	142
Այստեղ մեզ է փոխանցվում նրանց մարտական ոգին .....	143

Արցախյան ազատամարտին ԼՂՀ ոստիկանության մասնակցության վերաինաստավորումը .....	147
Ամանորյա միջոցառում ԱԿԱՀՄ հուշաթանգարանում .....	149
Միջոցառում՝ օրվա հրամայականով .....	152
Կայացավ Ռոբերտ Բաբայանի «Արմատների երթը» գրքի շնորհանդեսը .....	156
Գիրքը՝ ռազմահայրենասիրական դաստիարակության միջոց .....	159
«Ինձ բացակա չդնեք...» .....	163
Նվիրված Կարոտ Սկրտչյանի 50-ամյակին .....	170
Ավանդական մրցանակաբաշխություն .....	172
Փոխըմբռնման մթնոլորտում .....	175
Վերադարձի սպասումով .....	178
Նրանք հերոսներ են .....	180
Հանդիպում ԼՂՀ ԱԺ նախագահ Աշոտ Դուլյանի հետ .....	184
Հայրենիքի պաշտպան՝ օրենքի և կարգուկանոնի պահապանները .....	188
«Հանուն Արցախի» ՀԿ-ն հանդիպում ունեցավ ԱԿԱՀՄ անդամների հետ .....	191
ԱԿԱՀՄ հյուրն էր ԼՂՀ արհմիությունների նախագահը .....	193
Ձևավորվեց ԼՂՀ պաշտպանության նախարարին ամրնթեր հասարակական խորհուրդ .....	196
Համագործակցության շրջանակներում .....	199
Արժևորվեց լրագրողների վաստակը .....	202
Մարտի 8՝ տոն անվանական, տոն բազմախորհուրդ .....	204
Ոչ մի երկիր լիազորված չէ խախտելու գերիների մասին Ժնևի կոնվենցիան .....	206
Կյանքի և մշտասթափության կոչող հիշողություն .....	210
Մեր ցավի տերն ենք և կորցրածի պահանջատերը .....	215
Սպասումի ցավ .....	219



## ՎԵՐԱ ԱՐՄՈՅԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

### ՎՇՏԻ ԵՎ ՀՈՒՅՍԻ ԽԱՉՄԵՐՈՒԿ

*Հեղինակն իր երախտագիտությունն է հայրնում գրքի հովանավոր  
ԱրՊՀ պրոֆեսոր, հոգեբան, ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ,  
ԼՂՀ ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի  
նախագահ Արզիկ Մխիթարյանին*

Խմբագիր՝  
Սրբագրիչ՝  
Համակարգչային շարվածքը՝  
Էջադրումը՝  
Կազմի ձևավորումը՝

Ռոբերտ Եսայան  
Իրինա Մարտիրոսյան  
Լուսինե Մարտիրոսյանի  
Թամար Հարությունյանի  
Մերի Դրավյանի

Թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ, չափսը՝ 60x84<sup>1/16</sup>,  
ծավալը՝ 14 տպ. մամուլ+16 էջ ներդիր, տպաքանակը՝ 1000:

Տպագրվել է «Դիզակ պլյուս» հրատարակչության տպարանում  
Հ.Հակոբյան, 25  
Ստեփանակերտ-2016